ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԵԿՅԱՆ

ԳԱՂԱՍԱՐ

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐ

6599

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ – 1981

ՊՐՈՒՍԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

72 Ар 1 ինդեքս ԳՄԴ 85. 101(2Հ)1
Ու 38

Հրատարակման է երաշխավորել ՀՍՍՀ ԳԱ
արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդը

Գրախոս՝ ճարտարապետության -
թեկնածու Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Մասն. խմբագիր՝ բանասիրական գիտ. թեկնածու՝ Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Ուլուբաբյան Բ. Ա.
Ու 38 Գանձասար։—Եր.։ Հայաստան, 1981.— 168 էջ, նկ., 18 թ. նկար։

Աշխատության մեջ տրված է միջնադարյան Հայաստանի նշանավոր պատմաճարտարապետական հուշարձան Գանձասարի համալիրի ստեղծման պատմությունը և ճարտարապետական նկարագիրը։ Ներկայացվում են նաև հուշարձանի որմերին ու դերեզմանաքարերին փորագրված բոլոր արձանագրությունները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում որպես Հայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության ստույգ աղբյուրներ։

Գիրքը նախատեսվում է հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար։

Ու $\frac{0501000000}{701\ (01)\ 81}$ 50—81

72 Ар 1 ինդեքս ԳՄԴ 85.101 (2Հ)1

© «Հայաստան» հրատարակչություն, 1981

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

XII դարի վերջից մինչև XIII դարի առաջին երեսնամյակը, ընդամենը 50—60 տարի, Հայաստանի բազմադարյան պատմության մեջ նշանավորվել է իբրև մի ժամանակաշրջան, երբ քաղաքական նպաստավոր մթնոլորտում վերստին փթթել են ժողովրդի ստեղծագործ ուժերը և տվել նյութական ու հոգևոր մշակույթի այնպիսի հուշարձաններ, որոնք, հանդիսանալով նախընթաց զարգացման նոր աստիճանը, միաժամանակ դասական օրինակներ պիտի մնային հետագա դարերի համար։

Այս երևույթն առանձնահատուկ ցայտունությամբ արտահայտվել է ճարտարապետության բնագավառում։ Հաղպատի, Սանահնի, Հառիճի, Դադիվանքի ու Հաղարծնի համալիրներում կանգնեցված նոր շենքերը, Գոշավանքն ու Մակարավանքը, Գեղարդավանքն ու Կեչառիսը և շատ ուրիշ հոյակերտներ, որոնք այս կարճատև, բայց աննախընթաց ծաղկումի փայլուն արգասիքներն էին, վկայում են հայ ժողովրդի շինարարական հանճարի անսահման հնարավորությունները։

Թվարկված հուշարձանների շարքում յուրահատուկ տեղ է գրավում Գանձասարի վանքը։ Մեր մշակույթի պատմության հմուտ գիտակներից մեկի՝ Ա. Լ. Յակոբսոնի կողմից իրավամբ այն գնահատվել է որպես վերոհիշյալ ժամանակաշրջանի «հայկական ճարտարապետության հանրագիտարան», որի մեջ իրենց մարմնավորումն են գտել «հայ ճարտարապետների բոլոր լավագույն նվաճումները»։

Սակայն Գանձասարը, լինելով հայ ճարտարապետական հանճարի նվաճումների ստեղծագործական կիրառման մի հոյակապ օրինակ, միաժամանակ և հատուկ փուլն է նշանավորում Արցախ-

Ղարաբաղի ճարտարապետական ու քանդակագործական բազմադարյան կյանքի, որը, ցավոք, առ այսօր մասնագիտական քննության չի ենթարկվել, եթե չհաշվենք հատուկենտ թռուցիկ փորձերը։

Մատենագիտական տեղեկություններով հաստատվում է, որ քրիստոնեության մուտքով պայմանավորված եկեղեցաշինության բուռն ընթացքի մեջ, Հայաստանի տարբեր նահանգների շարքում, Արցախը գրավել է առաջնակարգ տեղերից մեկը։ Ամարասի վանքը, որի հիմնադրողը Գրիգոր Լուսավորիչն է եղել, իսկ շինող-ավարտողը՝ նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսը, այս նահանգի վաղագույն եկեղեցական ճարտարապետական կոթողներից մեկն էր, բայց ո՛չ միակը, քանի որ պատմական աղբյուրների հաղորդումների համաձայն՝ Ամարասի հետ համարյա միաժամանակ կառուցվել են Դադիվանքն ու Հուրեկը Խաչեն գավառում, Կատարո վանքն ու Գտիչը՝ Դիզակում։ Իսկ V դարի վերջում Արցախ-Ուտիքյան հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտը, ըստ ժամանակագրի թերևս մի փոքր չափազանցված տեղեկության, իր գահակալության շատ կարճ շրջանում կառուցել է տվել տարվա օրերի թվով վանքեր ու եկեղեցիներ։

Վաչագան թագավորի կառուցածից ոչինչ չի պահպանվել, բացի այն մատուռից, որը նա կանգնեցրել է Ամարասում, Գրիգորիս եպիսկոպոսի գերեզմանի վրա։ Եվ սա էլ պատմական Հայաստանի ամբողջ տարածքում պահպանված վաղ-քրիստոնեական շրջանի այն սակավաթիվ հուշարձաններից է, որոնք մոտավոր գաղափար են տալիս այդ շրջանի հայ ճարտարապետության շինարարական ու հարդարանքային արվեստի մասին[1]։

Հետագա պատմաշրջանի Արցախական աշխարհի ճարտարապետական հուշարձաններից, հատկապես եկեղեցական շինություններից ևս շատ քիչ բան է մնացել, և այս էլ այն պատճառով, որ, նախ, XI—XII դարերում սելջուկ թուրքերը հիմնահատակ ավերել են այդ շինություններից լավագույնները։ Ապա, XII դարի վերջի ու XIII դարի առաջին կեսի շինարարական եռուզեռի մեջ, վանական համալիրների վերափոխումների ու կառուցումների ընթացքում իսպառ վերացել են նրանց վերջին մնացորդները. մինչդեռ մատենագրական ու վիմագրական հավաստի տեղեկություններից հայտնի է, որ, իբրև

[1] Այս հուշարձանի մասին հանգամանորեն տե՛ս Մ. Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետական համալիրը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 5։

կանոն, բոլոր նոր վանքերն ու եկեղեցիները կանգնեցվել են հների տեղում։ Այդպիսի կառուցումներ եղել են բոլոր թեմերի առաջնորդարաններում։ Սակայն, բարեբախտաբար, հին շինությունների մասին մենք գաղափար ու պատկերացում ունենք ոչ միայն գրավոր աղբյուրների հաղորդած տվյալներից, այլև նույն այդ շինությունների այն անկորնչելի մասունքներից, որոնք պահպանվել են հենց իրենց տեղերում հետագայում կատարված կառուցումների մեջ։ Եթե Վաչագան Բարեպաշտի կառուցած մատուռը, որպես սրբազան կոթող, միշտ էլ պահպանվել է Ամարասում քանիցս վերակառուցված կաթողիկե տաճարի ներսում, ապա ուրիշ տեղերում հին շենքերի մնացորդները (զարդաքանդակներ, վիմագրերի մնացորդներ, նաև մշակված անգիր քարեր ու խաչարձաններ) խնամքով տեղադրվել են նորակերտների ակնառու մասերում։ Այդպիսի օրինակներ ունենք Խաչեն նահանգի Խաղավանքում ու Դադիվանքում, Հուրեկում ու Եղիշե առաքյալի վանքում։

Այս իրողությունը և հատկապես սրա արցախյան կոնկրետ դրսևորումները կարող են մասնագիտական լուրջ ուսումնասիրության։

Հարկ է նշել, որ, եթե Գանձասարն իր ճարտարապետական հորինվածքով հանդիսանում է հայ ժողովրդի արցախյան հատվածի շինարարական այս շուրջ հազարամյա կյանքի պսակը, ապա նրա քանդակագործական հարուստ հարդարանքի համար ևս հող ու հենարան է եղել, ամենից առաջ, տեղական կյանքը։ Գանձասարի բարձրաքանդակներում այնպես շքեղ ու բազմազան արտացոլված հոգևոր ու աշխարհիկ թեմաները լայնորեն տարածված էին բուն Արցախի գավառներում կանգնած եկեղեցական ու աշխարհիկ շինություններում և առանձնակի բազմազանությամբ՝ խաչքարերում։ Հիշենք մեր դարի սկզբին այս խաչքարերի բարձրաքանդակների ուսումնասիրությամբ զբաղված Հովսեփ Օրբելու հիացական հավաստիացումը։ Նա գրել է. «Մարդկանց պատկերաքանդակներով խաչքարեր առաջին անգամ հայտնաբերվել են Հայաստանի այն մասում, ուր առհասարակ բարձրաքանդակներով զարդանախշելը շատ է սիրված, ուր տաճարների պատերին, Հայաստանի մյուս մասերում ևս սովորական կտիտորական խմբերից բացի, հանդիպում են բավական խոշոր բարձրաքանդակ պատկերներ,— իսկ դա Խաչե՛ն է»[1]։

Արցախ-Խաչենի քանդակագործական արվեստի ծաղկումն իրա-

[1] И. А. Орбели, Избранные труды, Е., 1963, стр. 196.

կանություն էր ինչպես նախորդ դարերում, այնպես էլ XIII դարի սկզբին, երբ հիմնովին վերակառուցվում էր Գանձասարը։ Ուստի այս վանական համալիրի հարդարանքի նախօրինակները փնտրելիս ևս առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել նրա անմիջական շրջապատի վրա։

Այսպիսով, Գանձասարը, լինելով հայկական ճարտարապետության և քանդակագործական արվեստի բուռն ծաղկման մի շրջանի՝ XII դարի վերջի ու XIII դարի առաջին կեսի հանրագիտարանն ու ամենափառահեղ կոթողներից մեկը, միաժամանակ Արցախ-Խաչենի ճարտարվեստի պսակն է ու գերագույն արտահայտությունը՝ կանգնած իրեն ծնած ու սնած բարեբեր հողում։ Եվ, բնականաբար, նրա ուսումնասիրությունը կպարզի ոչ միայն հայ ճարտարապետական արվեստի մի հարուստ դրսևորումի մանրամասները, այլև այն խոշոր ներդրումը, որ Արցախ-Խաչենն է կատարել համազգային մշակույթի գանձարանում։

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՄԱՍԻՆ

Գանձասարի վանքի մասին գրավոր առաջին վկայությունը X դարի կեսից է և պատկանում է Ամենայն հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու գրչին։ Իմանալով, որ իր օրերում Հայոց եկեղեցին սողոսկած քաղկեդոնականությունը թափանցել է նաև Սյունյաց ու Աղվանից թեմերը, Անանիա կաթողիկոսն ուղևորվում է Սյունիք ու Արցախ, իջևանում Խաչենում, գումարում եկեղեցական ժողով, որին, ի շարս Արցախ-Ուտիքյան մյուս հոգևոր առաջնորդների, ներկա է լինում նաև «Հայր Սարգիս Գանձասարու վանական»[1]։

Անանիա կաթողիկոսի այցն Արցախ-Խաչեն տեղի է ունեցել մինչև 949 թվականը կամ թերևս հենց այդ թվականին[2]։ Այս ուղևորությունը հետագայում նկարագրել է ինքը՝ Անանիա կաթողիկոսը, որը, դժբախտաբար, չի նշել, թե Խաչենի ո՞ր վայրում են իրեն դիմավորել երկրամասի տերերը, ո՞րտեղ է գումարվել հոգևոր ժողովը, որը և դատապարտել է քաղկեդոնականացած «Գագիկ կարծեալ եպիսկոպոսին», ո՞ր վանքում էր գիշերում ինքը, երբ պատահաբար ծանոթացավ Աղվանքի պատմության ձեռագրին և այլն, և այլն։

Այս ուղևորության առթիվ մեզ հետաքրքրող կարևոր մանրամասնությունները հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը՝ պատմելով, որ Անանիա կաթողիկոսը ժողով է գումարել Արդախ վայրում և գիշերել է Գանձասարի վանքում։

Անանիա կաթողիկոսի թղթի ու Ստ. Օրբելյանի պատմության

[1] Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապաստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն. «Արարատ», 1897, էջ 134։

[2] Անդ, էջ 139։

հաղորդած տեղեկությունները միավորելով՝ ստանում ենք հետևյալ պատկերը. կաթողիկոսը Խաչեն էր եկել ոչ միայն քաղկեդոնականության առաջն առնելու, այլև հակահարված տալու անջատարար այն տրամադրություններին, որոնց կրողները հայտարարում էին, թե, իբր, Աղվանից եկեղեցին ամենահինն է Հայոց կաթողիկոսի մականի ներքո գտնվող բոլոր թեմերից, հետևապես և պետք է ունենա առանձնահատուկ բարձր իրավունքներ, ընդհուպ մինչև հայրապետի ընտրությունն առանց Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից ձեռնադրվելու։ Նրանք պնդում էին, թե ունեն «Աղվանքի պատմություն» անունով մի ճշմարիտ մատյան, որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացված են Աղվանից եկեղեցու գերագահությունն ու առանձնաշնորհների իրավունքը հաստատող հանգամանքները։ Անանիա կաթողիկոսը պահանջել էր ցույց տալ այդ մատյանը, իսկ նրանք հրաժարվել էին ու թաքցրել։ Իսկ հետո նա Գանձասարում գիշերային ընթերցանության համար գիրք էր խնդրել եկեղեցապահից, և վերջինս նրան էր տվել՝ «գիրք մի որպէս թէ Յովհաննու Ոսկեբերանի»։ Կաթողիկոսը ծանոթացել էր ձեռագիր մատյանին և պարզել, որ այն հենց «էր պատմութիւնն Աղուանից»[1]։ Դրանից հետո իր կարդացած պատմության արժանահավատ տեղեկություններով Անանիա Մոկացին հերձվածող ընդդիմախոսներին մերկացրել է, ապացուցելով, որ նրանք ստում են, և Աղվանքի եկեղեցին բոլոր ժամանակներում Հայոց ընդհանուր լուսավորչական եկեղեցու մի թևն է հանդիսացել, և նախ նրա առաջին եպիսկոպոսները, ապա և կաթողիկոսները միշտ էլ ձեռնադրվել են Ամենայն հայոց կաթողիկոսների կողմից[2]։

Ստ. Օրբելյանի պատմածից այնպես է ստացվում, թե Արդախը նույն Գանձասարն է, կամ, համենայն դեպս, Արդախ է կոչվել այն վայրը, ուր գտնվում է Գանձասարի վանքը։ Այլապես կաթողիկոսն ինչո՞ւ պետք է մի տեղ ժողով աներ և գիշերեր միանգամայն ուրիշ վայրում։ Սակայն Անանիա կաթողիկոսի թղթի համաձայն դրանք պետք է իրարից տարբեր լինեին, քանի որ ժողովին մասնակցում էին ինչպես «հայր Սարգիս Գանձասարու վանական», այնպես էլ «տէր Յովհաննէս Աթախայ եպիսկոպոս»[3]։ Եթե Գանձասարի վանքը գոյություն ուներ, դժվար թե նրա կողքին գտնվող եպիսկոպոսանիստը կոչվեր մի այլ անունով, ինչպես Աթախն է կամ Արդախը։ Նկատի առնելով, որ Աթախ կամ Արդախ տեղանունն անհայտ է այլուստ (գուցե և դրանք նույն անվան տարբեր ձևե՞րը չեն), հարցը թողնում ենք առկախ։ Հնարավոր է, որ Արդախ-Աթախը առավել հին ձևն է հետագայի «Հայթերք»— «Հաթերք»-ի, որ երկու դար հետո Խաչենի իշխանաց իշխանի նստավայրի անունն է եղել[1] և, անշուշտ, նման դեր է ստանձնել ո՛չ միանգամից։

Անանիա Մոկացու վկայությունից կարելի է ենթադրել, որ Խաչենում իրեն դիմավորող Գրիգորը ևս եղել է իշխանաց իշխան «...ընդ առաջ եղև մեզ մեծ և փառաւոր... տէր Գրիգոր իշխանն... Եւ նոյնժամայն հրովարտակս գրէր յամենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման առնել ժողով հանդերձ մեօք ի տան իւր ի Խաչեան գաւառի»[2]։ Միայն Արցախ-Խաչենի գահերեց իշխանը կարող էր հրովարտակ հղել «յամենայն գլխաւորս աշխարհին» և նրանց ժողովի հավաքել։

Իսկ եթե Արդախ-Աթախի ու Հայթերք-Հաթերքի նույնության մասին մեր ենթադրությունը ճիշտ է, ապա անհնար է պատկերացնել, թե Թարթառի ձախ ափին գտնվող Հաթերքում ժողով գումարող կաթողիկոսը վեր կկենար ու գիշերելու կգնար Գանձասար, որը գտնվում է Խաչենագետի ափին, լեռնային խորդուբորդ ճանապարհով մոտ 15—20 կիլոմետր Հաթերքից հեռու։

Ամեն պարագայի՝ մեզ համար կարևորը վերոհիշյալ տեղեկություններից կատարվող կոնկրետ հետևությունն է. X դարի առաջին կեսին Գանձասարի վանքն արդեն գոյություն ուներ։ Դեռ ավելին. այն Արցախի ու Հայոց Արևելից կողմանց այնքան նշանակալից հոգևոր կենտրոններից էր, որ իր ներկայացուցիչն էր ուղարկել Ամենայն հայոց կաթողիկոսի գումարած շատ կարևոր ժողովին։

Հաջորդ հավաստի խոսքը Գանձասարի վանքի ու նրա դերի մասին հաղորդում է Մխիթար Գոշը, որի տեղեկությամբ հաստատվում է Գանձասարի բարձր դիրքը Խաչենում։ Նկարագրելով XII դարի 40-ական թվականներին Արցախի իշխանության պայքարը բռնագրավիչ սելջուկ թուրքերի դեմ, Մխիթար Գոշը վկայում է, որ իշխանական այս տան շատ ներկայացուցիչներ նահատակվել են անհավասար պայ-

[1] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 279։

[2] Օրբէլեան, էջ 279։

[3] «Արարատ», 1897, էջ 134։

[1] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 71—73 «... ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ և որդւոյ նորա Վախտանգայ, ի դղեկին որ անուանի Հայթերք, գլխաւորի այլոց իշխանաց»։

[2] Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի, էջ 134։

քարում։ Նահատակվածներից են եղել Խաչենի իշխանազունները և Գրիգոր իշխանը, որին «զկնի ամի միոյ առեալ բերին ի վանքն անուանեալ Գանձասար, որ էր տապանատուն նախնեաց նորա, և անդ թաղեցին զնա»[1]։

Գանձասարի հինավուրց վանքի տեղում նոր վանքի կառուցման պատմությունը հանգամանորեն ներկայացրել է Կիրակոս Գանձակեցին։ Ճիշտ է, նա չի ասում, թե նորը կառուցվել է այն հին եկեղեցու տեղում, որը գոյություն է ունեցել առաջներում իբրև գավառի եպիսկոպոսարան։ Սակայն հաղորդում է, որ Գանձասարը հնում էլ տապանատուն է եղել Ներքին Խաչենի իշխանական տան համար։ Իսկ իշխանական գերդաստանների տապանատներ, ինչպես հայտնի է, լինում էին նրանց հովանավորության տակ գտնվող առավել աչքի ընկած վանքերի գավիթները։ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ, երբ Գանձասարի նոր վանքը կառուցող Հասան-Ջալալը նահատակվեց Ղազվինում, որդին՝ Աթաբակը (Իվանեն) նրա նշխարները տեղափոխեց հայրենիք և թաղեց «ի վանքն Գանձասար ի գերեզմանս հարց իւրոց»[2]։ Նշանակում է, Կիրակոս պատմիչին ևս հայտնի էր, որ ինչպես Մխիթար Գոշի վկայությունից գիտենք, Գանձասարի վանքի գավիթը գերեզմանատուն է հանդիսացել տեղի իշխանական տոհմի ներկայացուցիչների համար։

Գանձասարի վերակառուցման (ավելի ճիշտ՝ ի նորո կառուցման) նախաձեռնողը և իրականացնողը, ըստ աղբյուրների միահամուռ վկայությունների, եղել է Ներքին Խաչենի տեր և ամբողջ Արցախ-Խաչենի իշխանաց իշխան Հասան-Ջալալը։

Կիրակոս պատմիչի տեղեկությամբ՝ Հասան-Ջալալը «Շիննեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յորինուածով գմբեթարդ երկնանման տաճար... ի վանքն, որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանաբերդոյ, ի տեղի շիրմի իւրեանց, և յոլով ամս աշխատ եղեն ի նման»[3]։

Ուրեմն, Հասան-Ջալալի կառույցը մի եկեղեցի էր Գանձասարի վանքում (վանական համալիրում)։ Բայց այժմ հիշյալ եկեղեցուց և հետագայում նրան կից կառուցված գավթից բացի ուրիշ ոչ մի եկեղեցական շենք կամ շենքի պահպանված հետք չկա, որպեսզի մտածենք, թե Հասան-Ջալալը վանական համալիրին գումարել է մի նոր

[1] Մխիթար Գոշ, Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 387։

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 392։

[3] Անդ, էջ 269—270։

եկեղեցի։ Այդպիսի եկեղեցական շենքի մասին մատենագրական կամ վիմագրական ոչ մի տեղեկություն էլ չկա։ Հետևապես, մնում է մըտածել, որ Հասան-Ջալալն իր եկեղեցին կառուցել է հնի տեղ, այսինքն՝ նորը կառուցելու համար հինը քանդել է հիմնովին։ Առհասարակ ընդունված էր նոր եկեղեցիները կառուցել հին սրբությունների, ավանդույթով կարևոր սրբատեղի համարվող վայրերում։ Ներկա դեպքում Հասան-Ջալալը եկեղեցի է կառուցել հնի տեղում, մի հին եկեղեցու, որը Խաչենի կարևորագույն սրբավայրերից մեկն է եղել (նրանից ավելի հին ու մեծ սրբատեղին Դադիվանքն էր), ինչպես նաև տոհմական տապանատունը իր իշխանության։ Ավելորդ է ասել, որ այս դեպքում նա եկեղեցին այնպես պիտի կառուցեր, որպեսզի նախկին տապանատունը մնար նորի հատակագծից դուրս, նրա արևմտյան մասում՝ կառուցվելիք գավթի տեղում։

Կիրակոսն ասում է՝ «յոլով ամս աշխատ եղեն ի նման»։ Մենք գիտենք, թե քանի տարի է եղել այս «յոլով ամս»-ը՝ 1216—1238 թվականները։ Ճարտարապետական մի այդպիսի կառույց ավարտելու համար սա բոլորովին էլ շատ մեծ ժամկետ չէ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ շինարարությունը պարբերաբար ու տևական ժամկետներով կանգ պիտի առներ այն պատերազմների պատճառով, որոնց մեջ էր քաշված և Խաչենը։ Ջալալ-Էդդինի հորդաների արշավանքը դարի 20-ական թվականներին, թաթար-մոնղոլների ավերիչ առաջին ասպատակությունները այդ ժամանակ, երկրորդը՝ 1231/2 թվականին, ապա և Արևելյան Հայաստանի վերջնական նվաճումը նրանց կողմից 1236 թվականին։ Այս պարբերական կռիվների ու ավերումների պայմաններում, այնուամենայնիվ, կառուցվեց Գանձասարը՝ իբրև անառարկելի վկայություն այն իրողության, որ հայ ժողովրդի շինարար ձեռքը ճակատագրի բերած բոլոր արհավիրքների պայմաններում էլ կառուցել է, որովհետև կառուցելը եղել է նրա անկողոպտելի կոչումը։

1238 թ. ավարտված Գանձասարի վանքի օծումը տեղի է ունեցել 1240 թ., «յաւուր մեծի տօնի Վարդավառին» (հուլիսի 22-ին, կիրակի)։ Ականատես Կիրակոս պատմիչի վկայությամբ՝ Հասան-Ջալալը կազմակերպել էր մեծահանդես նավակատիք, որին ներկա էին՝ Աղվանքի կաթողիկոս Ներսեսը՝ բազում եպիսկոպոսներով, «մեծ վարդապետն Վանական յոլով բարունիւք» և Հայաստանի ուրիշ շատ վանքերի առաջնորդներ ու հոգևորականներ։ Եվ այսպես «օրհնեցին զեկեղեցին բազում քահանայիւք, որ ասէին զթիւ երիցանցն եօթն հարիւր»։ Օծու-

մից հետո տրվեց ճոխ ճաշկերույթ։ Հասան-Ջալալն անձամբ ինքն իր ձեռքով էր հյուրասիրում հրավիրվածներին։ Ապա «տուրս տուեալ ըստ իւրաքանչիւր պատուոյ առատութեամբ՝ արձակէր ամբոխն»[1]։

Համարյա անեղծ պահպանվել է վանքի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրությունը՝ փորագրված տաճարի ներսում, հյուսիսային պատի վրա, բաղկացած 27 տողից, ամբողջ պատի լայնությամբ, գմբեթատակի գոտու եզրից մինչև դռնագլուխը։ Այնտեղ խոսում է ինքը՝ Հասան-Ջալալ Դոլան (Դալա)՝ «բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, թագաւոր Խաչենաբերդի յոքնասահման նահանգաւք», և պատմում է, որ հայրը վախճանվելիս իրեն ու մորը՝ Խորիշահին, անդարձ կտակել է «զի շինեսցուք եկեղեցի ի գերեզմանատան հարց մերոց ի Գանձասար», որի կառուցումն սկսեցին ՈԿԵ (1216) թ. և երբ հասան արևելյան լուսամուտին («ի խփել լուսամտին արևելից»), մայր Խորիշահը կրոնավորելու գնաց Երուսաղեմ, այդ էլ արդեն երրորդ անգամ, խարազանազգեստ երկար տարիներ ճգնեց Հարության տաճարի դռանը, այնտեղ էլ «հանգեաւ ի Քրիստոս լուսո վկաութեամբ եւ անդէն պահեցաւ»[2]։ Իսկ ինքը՝ Հասան-Ջալալը, կառուցեց տաճարը և ավարտեց ՈՁԷ (1238) թ. «գաւտեւորեալ ամենազան ձեւով պատկերազան յաւրինակերտ գմբեթազարդ յաւրինուածաւք»։ Եվ իր հոժար կամքով հոգաց միաբանության պետքերը՝ վանքին նվիրելով Մաշեղ, Հարշանտուս (գյուղերը) իրենց շրջակայքով, «Ա (1) լուծ Խաչենաձոր, Նորաշինկան գետն» և այլ վայրեր, արծաթեղեն խաչերի, գրքերի, մասունքների, նշխարների հետ միասին, ինչպես նաև «պատուական եւ ձուլածո ամենայն» սպասքեղեն և ուրիշ երևելի զարդեր։ Ապա եկեղեցիները հարկերից ազատ հայտարարեց և Գանձասարի առաջնորդ տեր Վարդանի ու միաբանության կամքով նշանակեց պատարագներ. ավագ սեղանն ամբողջ տարին իրեն՝ Հասանին, «զատիկն իւր ճրագալուցովն»՝ հայր Վախտանգին, Աստվածածնի Գ(3) օրը՝ մայր Խորիշահին, «յայտնութիւն իւր ճրագալուցով»՝ եղբայր Զաքարեին, ավագ սեղանը, որ իրենն է, «Աստուածածնէն մինչ ի Խաչն»՝ իր պապ Հասանին, «յիսնակամտէն մինչ ի յայտնութիւն»՝ Մամքանին (իր տիկնոջը), «յութօրէից ելիցն մինչ

[1] Կիրակոս, էջ 270։

[2] Կիրակոսը տեղեկացնում է, որ Խորիշահը Երուսաղեմում ճգնելիս «Զարմացուցանէր զամենայն տեսողսն եւ զլսողսն. քանզի ծախեալ զամեայն գոյս իւր՝ զոր ունէր, յաղքատս եւ ի կարոտեալս՝ նման Հեղինէի, կնոջն Աբգարու, և ինքն ձեռագործաւ իւրով կերակրէր» (անդ, էջ 268)։

առաջաւորն»՝ հասարակաց անհիշատակ, բարեկենդանի Ա (1) շաբաթը՝ իր եղբայր Դոլին (Դալին), Ա (1) շաբաթը՝ քույր Մարինային, «աղուհացից շաբաթ կիրակէքն»՝ եղբայր Իվանէին, «զատկէն մինչ յԱստուածածինն եւ ի Խաչէն մինչ յիսնակամուտն ինձ՝ Հասանա»։

Վերջում հայտնվում է նաև, որ «Անտոնի տանին Ա (1) աւրժամ Յովասաբ միակեցին է կամաւն Մեծին Հասանա»։

Հր. Աճառյանի կարծիքով՝ այս Հովասափ միակյացը (ճգնավոր) ինքն է գրել ու փորագրել արձանագրությունը, այլ խոսքով՝ սույն հիշատակագրությունը պետք է դիտել նաև որպես նրա ստորագրությունը[1]։

Գանձասարի վանքը հայ միջնադարյան ճարտարապետական մշակույթի ակնառու դրսևորումներից է և չէր կարող չունենալ այդ շրջանի հայ եկեղեցական ճարտարապետության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը՝ գավիթը։ Տաճարը, ճիշտ է, սկզբում կառուցվել է միայնակ և, ինչպես նրա ճարտարապետական արժանիքների վերլուծության ընթացքում կտեսնենք, հենց այդպես էլ նախագծվել է առաջուց։ Սակայն հետագայում նրան գավիթ են ավելացրել, որը, ունենալով իր կիրառության հատուկ նպատակն ու կիսաեկեղեցական-կիսաաշխարհիկ բնույթը, միաժամանակ, յուրահատուկ ճարտարապետական նկարագիր ունի և էապես փոխում է ամբողջ վանական համակառույցի պատկերը։

Մինչև այժմ հարցական է մնում գավթի կառուցման ժամանակը։ Նրան վերաբերող արձանագրության մեջ, որը փորագրված է տաճարի արևմտյան պատին, դրսից (այժմ՝ գավթի մեջ) դռան աջ կողմին, ընդօրինակողները կարդացել են 1266 թվականը. «Թուին ՉԺԵ» և այլն[2]։ Հ. Օրբելին կասկածում էր այդ թվականի վրա, ըստ երևույթին, այն պատճառով, որ արձանագրությունը գրված է Հասան-Ջալալի, իշխանուհի Մամքանի ու նրանց միակ արու զավակ Աթաբակի անուններից, մինչդեռ Ջալալը նահատակվել է 1261 թ., Մամքանն էլ մահացել է նույն թվականին կամ նախորդ տարում[3]։

[1] Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 534։

[2] Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 174։

[3] Կիրակոս, էջ 391, Վարդան Վարդապետ, էջ 152, Մխիթար Այրիվանեցի, էջ 68, «Մանր ժամանակագրություններ» (XIII—XVIII դդ.), հ. Ա., կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 43, Մատենադարանի ձեռ. № 378, էջ 8բ։

Հ. Օրբելին հետագայում կարծում էր, որ գավիթը կառուցել է Հասան-Ջալալը 1261 թվականին[1]։

Արձանագրության բովանդակությունից դատելով՝ Ա. Լ. Յակոբսոնը գտնում է, որ գավիթը կառուցվել է մինչև 1261 թվականը, այսինքն՝ Հասան-Ջալալի կենդանությամբ[2]։

Դեռևս Հ. Օրբելին է նկատել, որ արձանագրությունը սխալ է ընդօրինակված Մակար վարդապետի և մյուսների կողմից։ Այն կարդացվում է ոչ թե «Թուին ԶԺԵ», այլ «Թիւն ԶԺ է»[3], այսինքն՝ արձանագրությունը գրվել է 1261 թվականին։ Կարևոր չէ, որ արձանագրության մեջ հանդես եկող երեք պատվիրատուները՝ Հասան-Ջալալը, Մամքանն ու Աթաբակը 1261 թ. միասին չեն եղել Գանձասարում։ Դեպի Մոնղոլիայի մայրաքաղաք կատարած բաղմամյա ճանապարհորդությունից Մամքանն ու Աթաբակը շուտ էին խաչեն վերադարձել։ Իսկ Հասանը, որոշ ժամանակ Թավրիզում ուշանալուց հետո, հայրենիք էր հասել, երբ կինն արդեն վախճանված էր[4]։ Նշանակում է՝ արձանագրությունը կամ Մամքանն ու Աթաբակն են գրել տվել՝ այնտեղ առաջին տեղում հիշելով նաև իշխանության տնօրեն Հասան-Ջալալին, կամ էլ Հասան-Ջալալն ու Աթաբակն են գրել տվել՝ հիշելով նաև իրենց հարազատին իբրև մի մարդու, որի կենդանությամբ հիմնադրված է եղել գավիթը։

Սակայն, ամեն պարագայի, 1261-ին գավիթը կառուցված-ավարտված չի եղել, որովհետև, հակառակ դեպքում, արձանագրությունը կփորագրեին ոչ թե տաճարի վրա, այլ նորակառույց գավթի որևէ մասում։ Մեր այս կարծիքն առավել հաստատվում է արձանագրության իսկ բովանդակությամբ։ Նրա առաջին մասում (9 տող), ինչպես ասվեց, հանդես են գալիս Հասան-Ջալալը, Մամքանն ու Աթաբակը։ Հետագա յոթ տողերում Աթաբակը խոսում է միայն իր անունից։ Երեքի տված ընծաների թվարկումից հետո գրում է. «Դարձեալ եւ ես Աթաբակս ընծաեցի յաւժարութեամբ ոսկետուի Աւետարան եւ պատուական սուրբ նշան...» և այլն։

---

[1] Տե՛ս՝ **И. А. Орбели.** Надписи Гандзасара и Ղавоцптука, Пгр., 1919 (գրքի տպարանական առանձնատիպ, այսուհետև՝ «Надписи Гандзасара»), стр. 2.

[2] **А. Л. Якобсон,** Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). Сб. в честь акад. И. А. Орбели, М.—Л., 1960, стр. 144.

[3] Надписи Гандзасара, стр. 5.

[4] Մատենադարանի ձեռ. № 378, էջ 8բ։

Պարզ է, որ այս ընծաները վանքին տրվել են գավթի շինարարության ավարտի առիթով, և ավարտն էլ եղել է 1261-ից հետո, երբ ծնողները չկային այլևս, և Աթաբակը միայնակ էր հանդես գալիս որպես Ներքին Խաչենի տեր ու տնօրեն և նվիրատվության հեղինակ։

Այսպիսով, պարզվում է, որ գավթի հիմնադրումը կատարվել է Հասանի, Մամքանի ու Աթաբակի կողմից՝ 1261 թվականին կամ նրանից առաջ, արձանագրության առաջին մասն էլ գրվել է հենց 1261 թվականին, իսկ կառուցումն ավարտվել է 1261-ից հետո, Իվանե-Աթաբակի իշխանության օրոք։

***

Ինչպես վերը տեսանք, Գանձասարի վանքը կարևորագույն հոգևոր կենտրոն էր դեռևս մինչև նոր շենքի կառուցումը։ XIII դարի երկրորդ կեսից նրա դերն ավելի բարձրացավ, քանի որ նրա նախկին դերին (Ներքին Խաչենի իշխանության տոհմական տապանատունն էր և նահանգի եպիսկոպոսանիստներից մեկը) ավելացավ մի նոր արտոնություն։ Ներքին Խաչենի իշխանության պայազատները հովանավորներ լինելուց դարձան վանքի առաջնորդության տնօրենները։ Այս ժամանակից սկսած՝ Գանձասարի հոգևոր առաջնորդներ էին ձեռնադրվում բացառապես իշխանական տոհմի, տվյալ դեպքում՝ Հասան-Ջալալյան գերդաստանի ներկայացուցիչները։ Այս հանգամանքը մեծապես նպաստում էր վանքի հոգևոր-քաղաքական դերի բարձրացմանն ու տնտեսական հզորության ապահովմանը։ Աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներն ամեն կերպ օժանդակում էին վանքի կալվածքների ընդլայնումին, անշարժ ու շարժական գույքի կուտակումներին[1], քանի որ վանքի բոլոր շահույթները պատկանում էին նաև աշխարհիկ իշխանությանը։ Այս ամենի շնորհիվ, անկասկած, բարձրանում էր նաև վանքի՝ որպես երկրամասի հոգևոր-մշակութային կենտրոնի դերը։ Բավական է ասել, որ XIII—XIV դարերից հետո այն Հյուսիս-արևելյան Հայաստանի ամենալուսավոր կենտրոններ-

---

[1] Աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները ոչ միայն իրենք էին նվերներ տալիս վանքին, այլև հաճախ ուրիշներին էին հարկադրում կատարել նվիրատվություններ։ 1271 թ. վանքի առաջնորդ Հովհաննեսը (որդի Իվանեի՝ եղբոր Հասան-Ջալալի) արձանագրություն է թողել այն մասին, որ «Հրամանաւ տեառն Խաչենոն Աթաբակին» իր «հալալ արդեանց»-ով գնել և վանքին է նվիրել «զՎարդանաթաղս, մին չորեցեղն եւ այլ ընծէք» (արձանագրությունը փորագրված է գավթի հյուսիսային պատին դրսից, դռան մոտ։ Տե՛ս սույն գրքի հավելվածի № 78 արձանագրությունը)։

րից մեկն էր, ուր կար հարուստ ձեռագրատուն։ Այնտեղ ստեղծվում էին արժեքավոր նոր ձեռագրեր, որոնք աչքի էին ընկնում ձեռագրական ու մանրանկարչական բարձր արժանիքներով։ Վանքն ուներ առաջնակարգ դպրատուն, որտեղ ուսում առած մարդիկ իրենց արժանի նպաստն էին բերում Խաչենի ու հարևան նահանգների մշակութային կյանքի առաջընթացին։

Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ XV դարից հետո Գանձասարը դարձավ նաև Աղվանքի կաթողիկոսության մշտական անփոփոխ նստավայրը և ամբողջ Արևելյան Հայաստանի հոգևոր ու քաղաքական կյանքի ամենանշանակալից կենտրոններից մեկը։ Ի՞նչ խոսք, որ այստեղ մեծ դեր է ունեցել նաև կաթողիկոսության դինաստիական պատկանելությունը. այս դարի սկզբից արդեն Աղվանքի կաթողիկոսությունը դարձել էր Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալյանների տոհմական արտոնությունը։ Եվ հասկանալի է, որ Գանձասարում նստող Հասան-Ջալալյան կաթողիկոսներն ըստ կարելույն բարվոք վիճակում էին պահում իրենց աթոռանիստը։ Նրանց հոգածության շնորհիվ Գանձասարը դարձել էր հոգևոր և նույնիսկ վարչական խոշորագույն կենտրոն։ Մատենագրական ու վիմագրական բազմաթիվ տեղեկություններով հաստատվում է, որ XV—XVII դարերի՝ հայ ժողովրդի համար ծանրագույն իրականության մեջ անգամ վանքում ոչ մի օր չի դադարել մշակութային եռուն կյանքը։

Հյուսիս-արևելյան Հայաստանի մշակութային և նույնիսկ քաղաքական կյանքում Գանձասարի կշիռը նկատելիորեն բարձրացավ հետագա ժամանակաշրջանում։ XVII դարի իրականությունը ցույց է տալիս, որ այնտեղ համատեղվող աշխարհիկ ու հոգևոր իշխանություններն ազդեցիկ դեր ունեին հարևան գավառների կյանքում։ Ներքին Խաչենի մելիքները, գործակցած տեղի կաթողիկոսների հետ և համարյա բոլոր հարցերում ստանալով նրանց ամենագործուն աջակցությունը, ուղղություն էին տալիս Ղարաբաղի մելիքությունների ազատագրական ձգտումներին։

Պատկերը միանգամայն փոխվում է XVIII դարում։ Այդ արդեն Գանձասարի դարն էր, մի ժամանակաշրջան, երբ Գանձասարն էր հայ ազատագրական շարժման կենտրոնն ու ոգեշնչողը։ Այս տեսակետից այն իր բացառիկ տեղն ունի մեր հոգևոր կենտրոնների շարքում և թերևս դրա համար պարտական է դարասկզբի իր այն լուսավոր աթոռակալին, որը, հանգամանքների թելադրանքով, իրար էր միացնում հոգևոր վեհապետի բարձր ազդեցությունն իր հոտի վրա և միջնադարյան հայ իրականության առաջին դիվանագետներից մեկի ճկուն խելքը՝ այս բոլորի հիմքում ունենալով իր ժողովրդի փրկության ու ազատագրության համար տրոփող մի ազնիվ սիրտ։ «Դա Եսայի կաթողիկոսն էր (գահակալած 1702—1728 թթ.—Բ. Ու.), ազատագրական շարժումների այդ շրջանի խոշոր երախտավորներից մեկը։ Կաթողիկոսանալուն պես նա իր Գանձասարը դարձնում է մի քաղաքական կենտրոն և լեռնային իշխողների մի խորհրդարան, ուր դիվանագիտական հարաբերություններ էին մշակվում և ռազմական ծրագրեր քննվում։ Այդ ժամանակից է, որ Գանձասարն այնքան գեղեցիկ անուն է ձեռք բերում ազատագրական պատմության մեջ...»[1]։

Գանձասարում Եսայի կաթողիկոսի շուրջն էին համախմբված Ղարաբաղի և Սյունիքի հոգևոր ու աշխարհիկ տերերը, որոնք դարասկզբին Իսրայել Օրիի, ապա և Մինաս Վարդապետի միջոցով քանիցս դիմեցին ռուսական ցարին՝ հուսալով նրա փրկարար օգնության վրա։

Հայ մելիքներն ու մյուս իշխանավորները, ժողովրդի անունից «մշտապաղատ բանիւ և բազկատարած հայցմամբ» խնդրում էին Պետ-

[1] Լեո, Հայոց պատմություն, երրորդ հ., Երևան, 1946, էջ 573—574։ Հետագա տողերում Լեոն հիշում է Եսայիի նախորդ կաթողիկոսի անբարյացակամությունը Իսրայել Օրիի ձեռնարկի նկատմամբ՝ Օրիի առաջին այցի ժամանակ («... այն Գանձասարը, ուր մի քանի տարի առաջ այնքան ցուրտ ընդունելություն էր գտել Իսրայել Օրին», անդ, էջ 574)։ Մեծանուն գիտնականը մոռանում է, որ այն ժամանակ Օրին ինչպես Էջմիածնի կաթողիկոսին, այնպես էլ Գանձասարի հայրապետին ներկայացրել էր մի ծրագիր, որի իրականացման համար նախ և առաջ պահանջվում էր հայերի դավանափոխությունը. հայերը պետք է հրաժարվեին միաբնակ-լուսավորչականությունից և ընդունեին կաթոլիկություն, որպեսզի արժանանային Հռոմի պապի և եվրոպական իշխանապետների հոգածությանը։ Եթե միայն արժանանայի՞ն... (տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 270-ից սկսած, հատկապես՝ էջ 327—328, 340— 344)։

Լեոն սույն միջադեպի մասին խոսելիս հիշում է, որ Եսայի կաթողիկոսի նախորդն է եղել Փիլիպոս անունով մեկը, որն, ըստ Օրիի զեկույցի, ուրախությամբ է ընդունել եվրոպական իշխանությունների հովանավորության լուրը։ Սակայն անմիջապես էլ մոռացվել է, հենց որ իմացել է այդ հովանավորությանն ուղեկցվելիք դավանափոխության մասին. «Գանձասարը հրաժարվում էր ճանաչել կաթոլիկ կղերի հովանավորությունը»,— եզրակացնում է Լեոն՝ հենվելով Օրիի զեկույցի տեղեկությունների վրա (Լեո, նույն տեղում, էջ 524, հմմտ. Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПБ, 1898, стр. 51—52 и след.)։ Կարելի է հաստատորեն ասել, որ վստահելի չեն այս տեղեկությունները, քանի որ Գանձասարում Եսայի կաթողիկոսին նախորդել է նրա տոհմակից Երեմիան (1676—1700), իսկ Փիլիպոս անունով կաթողիկոս Գանձասարում չի եղել ոչ նշված ժամանակ, ոչ էլ նախորդ ամբողջ հարյուրամյակում (այս առթիվ տե՛ս նաև՝ Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ, Բ, էջ 283)։

6599

ԳՈՒՍԱՆ ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ռոս Մեծին՝ գալ, փրկել իրենց թուրք և պարսիկ բարբարոսների ահավոր լծից, խոստանում էին կռվել նրա դրոշի տակ, ծառայել նրան հավատարմությամբ, նրա հովանու ներքո. «Յոժար սրտիւ կամիմք ընդ հովանեաւ թեւոց քոց լինել,— գրում էին հայ ազատները,— եթե հաճեսցի տէրութիւն քո ի մեզ, և գթասցիս ի վերայ թշուառութեան մերում, մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարողութեանս, և մեր նահանգիս մէլիքովք մեծամեծովք և փոքրամբք և յորժամ կամեսցի հզոր և մեծ թագաւորդ յաջապարել այսր կամօքն աստուծոյ, յայնժամ զնշան զործոյն խնդրեմք ցուցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա զամենայն հանգամանք երկրիս ծանուսցուք առաջի քո»[1]։

Համանման դիմումներ ու խնդրագրեր Գանձասարի վանքից Ռուսաստան են հղվել սկսած 1701 թվականից։ Դրանք էլ հիմք են դրել հայ-ռուսական դիվանագիտական կանոնավոր փոխհարաբերություններին՝ նշանավորելով միաժամանակ հայ ժողովրդի բախտորոշ կողմնորոշումը դեպի Ռուսաստան[2]։ Բոլոր այդ դիմումների ու երդմնաթղթերի տակ գրված էր՝ «ի դրան մեծի և սուրբ աթոռոյս Գանձասարայ»։ Այնտեղ, Գանձասարում էր խմորվում, ձև ու կերպարանք առնում հայոց ազատագրության գաղափարը, այնտեղից էին ուղղություն ստանում հայոց սղնախների քաջ պաշտպանները՝ օտար բռնակալների դեմ անզիջում կռվելիս[3]։

Ուշագրավ էր, որ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն ու նրա համախոհները, անվերապահորեն կողմնորոշվելով դեպի ռուսական արքունիքը և նրանից սպասելով օգնություն ու հովանավորություն, միաժամանակ իրենց հույսը հիմնականում դնում էին ազատագրական շարժումների, հայ ժողովրդի ներքին բոլոր ուժերը գործի դնելու և ազգային ազատագրությունն ու անկախությունը սեփական ձեռքով կռելու վրա։ Պատահական չէ, որ նրանք նույն դարի

[1] Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964 г., стр. 360.

[2] *Անդ, սկսած էջ 237-ից մինչև էջ 385, նաև նույն ժողովածուի՝* часть II, Ереван, 1967, *էջ 62, 66, 236 և այլն։*

[3] *Ղարաբաղի սղնախների (բերդամրցների) անվեհեր ազատամարտերի մասին հանգամանորեն տե՛ս* Армяно-русские отношения, т. II, ч. II, **Լեո**, *Հայոց պատմություն, III հ., գիրք II, մասն առաջին, գլուխ III,* **А. Хачатрян**, Армянское войско в XVIII веке, Ереван, 1968 *և այլն։*

քսանական թվերին կազմակերպեցին Ղարաբաղի սղնախների հերոսական պաշտպանությունը հայ մելիքական տների գլխավորությամբ և Սյունիքի ու Կապանի հայտնի ազատագրական շարժումը Դավիթ-Բեկի ղեկավարությամբ։

Ինչպես այս մարտերում, այնպես էլ ազգային-ազատագրական հետագա շարժումներում դարձյալ վիթխարի կազմակերպչական դեր էր խաղում Գանձասարը։ Դարի երկրորդ կեսին բորբոքված ինքնապաշտպանական կռիվներում ու դիվանագիտական հարաբերություններում, որոնք հիմնականում ուղղված էին Ղարաբաղ խուժած և այնտեղ խանություն հիմնած քոչվորության ոտնձգությունների և հին թշնամիների՝ Պարսից ու Օսմանյան բռնակալների դեմ, եռանդուն գործունեություն էր ծավալել Եսայու կրտսեր տոհմակից Հովհաննես Հասան-Ջալալյան կաթողիկոսը։ Այդ նրա գլխավորությամբ էր, որ 1783 թ. գրվեց Ղարաբաղի վեց մելիքների, հոգևոր առաջնորդների, ինչպես նաև հարևան Ղարադաղի ներկայացուցիչների համախոսագիրը ռուսական ցարին։ Այս անգամ գործի միջնորդ էր եռանդաշատ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ Գործն այնքան բարեհուն ընթացք էր ստացել, և ղարաբաղյան իշխանապետներն այնքան վստահություն էին ներշնչում արքունիքին, որ շուտով Կովկասի կառավարիչ և զորքերի հրամանատար գեներալ Պավել Պոտյոմկինն ստանում է հետևյալ հրամանագիրը. «Շուշու Իբրահիմ խանին պետք է պաշտոնանկ անել, որովհետև Ղարաբաղն այսուհետ պետք է կազմի անկախ, բացի Ռուսաստանից ոչ ոքի չենթարկված մի երկիր։ Ամեն ջանք գործ դրեք, որպեսզի այս նոր երկիրը կազմակերպվի ժողովրդի համար ամենաշահավետ կերպով։ Այս միջոցով ուժեղ հայկական նահանգները կհետևեն այս օրինակին»[1]։

Ղարաբաղի այդ նորաստեղծ իշխանությունը պետք է հիմք դառնար ապագա հայկական միասնական պետության համար։ Իշխան Պոտյոմկինը՝ Եկատերինայի թագավորության փաստական տնօրենը, թագուհուն գրել էր, թե «Այդպիսով կվերանորոգվի մի քրիստոնեական պետություն՝ համաձայն մեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մելիքներին»[2]։

Շիշտ է, հայ ժողովրդի համար վիթխարի բախտորոշ նշանակու-

[1] **Н. Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, т. II, СП, 1886, стр. 29.

[2] *Անդ, էջ 31։*

թյուն ունեցող այս ծրագիրը չիրականացավ։ Նրա դեմ դաժանորեն կանգնած էին մահմեդական հարևանների խաթարիչ կամքն ու գործնական, միշտ ճարպիկ ու ճկուն քաղաքականությունը։ Ամենակարևորը՝ ռուսական արքունիքի ծրագիրը և կոնկրետ շահն այդ պահին չէին համընկնում։ Սակայն Գանձասարի արծարծած հարցն այն աստիճան բորբոքել էր հյուսիսի մեծ միապետությանը, որ այն փորձում էր վերջնականապես և արմատականորեն լուծել հայ ժողովրդի քաղաքական վիճակի հարցը և դրա համար նույնիսկ գործնական քայլերի էր դիմում։

Այս թռուցիկ ակնարկից իսկ ակնհայտ է Գանձասարի վանքի խաղացած ակնառու դերը ինչպես Հայոց Արևելից կողմանց, այնպես էլ ամբողջ Հայոց քաղաքական ու մշակութային կյանքում։ Այդ դերը շարունակվեց ավելի քան հինգ հարյուրամյակ՝ մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։ Այս շրջանից սկսած՝ Գանձասարն աստիճանաբար զրկվում է իր հոգևոր բարձր ազդեցությունից, որովհետև 1815 թ., Ամենայն հայոց կաթողիկոսության միջնորդությամբ, ցարական կառավարությունը վերացնում է Գանձասարի կաթողիկոսությունը՝ փոխարենն արտոնելով միտրոպոլիտական իրավունք[1]։

Առավել վատթար հարվածն այն եղավ, որ հետագայում էլ միտրոպոլիտությունը տեղափոխվեց Շուշի։ Այստեղ փոխադրվեցին Արցախական աշխարհի խոշորագույն հոգևոր կենտրոնի հարուստ ձեռագրերն ու հին օրերի փառավոր հիշատակները, և վանքը համարյա ամայացավ՝ մնալով վաղեմի փառքի լուսապսակի մեջ։ Եվ զարմանալի չէ, որ XIX դարի վերջերից մնացած գրավոր վկայություններում և հատկապես տեղագրական երկերում Գանձասարը ներկայացվում է իբրև հազիվ իր գոյությունը պահող մի մենաստան, ճարտարապետական բացառիկ մի հուշարձան, որին սպառնում է անխուսափելի քայքայումը բնական ավերածություններից։

[1] Հ. Շահխաթունեանց, Բ, էջ 349։

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան Հայաստանի վանական համալիրները մեծ մասամբ կառուցվել են լեռնագագաթներին, ժայռերի վրա, անտառների անմատչելի խորխորատներում և այդ ո՛չ միայն նրա համար, որ աստվածառաք աղոթքները հեշտ հասնեն տեղ, այլև որպեսզի եկվոր ավերիչ բռնակալները՝ հայ ժողովրդի պատմության այդ մշտաներկա ուղեկիցները, չկարողանան մերձենալ նրանց։ Այդ հուշարձանները, իրենց ճարտարապետական ձևերով ու արժանիքներով տարբեր իրարից, ունեն մի անխախտ ընդհանրություն՝ անխզելի կապն ու միասնությունը շրջապատի հետ։ Նրանցից յուրաքանչյուրը դիտողին, ամենից առաջ, շլացնում է այդ կապի ու միասնության կատարելությամբ։ Եվ քանի որ վանական համալիրները մեծ մասամբ կառուցվել են բնության գրկում, լեռնագագաթներին, ժայռերի վրա ու անտառապատ խորխորատներում, այստեղից էլ՝ մեր շինարար-ճարտարապետների բուռն ձգտումը կապվելու մայր բնությանը, իրենց կառույցները մայր բնության մի բաղկացուցիչը դարձնելու, նրա կախարդական պատկերի մի նոր ու անկրկնելի մանրամասը հյուսելու համար։ Միշտ այսպես է ստեղծվել մարդ-արարչի և մայր-բնության հավերժական երկխոսությունը։

Գանձասարի ճարտարապետներն ու շինարարները կատարելապես տիրապետել են այս երկխոսությունն ստեղծելու կախարդական արվեստին։ Նրանց կերտած վանքն այնպես հյուսված-ձուլված է լեռնաստանի զարմանահրաշ բնությանը, որ թվում է՝ չլիներ վանական համալիրը, հմուտ աչքն անպայման պիտի նկատեր նրա բացակայությունը։

Հայկական բարձրավանդակը հյուսիս-արևելքից եզերող Փոքր Կովկասի կանաչափառ լեռնապարից մի լեռնաբազուկ կախվում է խա-

չենաձորի վրա։ Գանձասար է կոչվում այն, որովհետև իր խորքում ունի արծաթահանք։ Այս լեռնաբազկի գագաթին, Խաչենահովտի բոլոր կողմերից տեսանելի և ակնառու, կանգնած է Գանձասարի վանքը։ Այն կառուցված է տեղական մուգ վարդագույն տուֆից, որը հարյուրամյակների ընթացքում մուգ շագանակագույն է դարձել և համատարած կանաչության ֆոնին առավել ընդգծված երևում է իր ճարտարապետական ամբողջ կերպարանքով։

Վանական համալիրը (տե՛ս նկ. № 1) բաղկացած է Հովհաննես



Նկ. 1. Գանձասարի համալիրի հատակագիծը (չափագրություն Մ. Մ. Հասրաթյանի)։

Մկրտիչ եկեղեցուց, գավթից, բնակելի խուցերից, տնտեսական շինություններից և երկհարկանի դպրոցական մի շենքից, որը կառուցվել է XIX դարում։ Հավանաբար գոյություն են ունեցել նաև ուրիշ մասնաշենքեր, ինչպես վեհարանը, գրչատունը և այլն։ Սակայն XIX դարի առաջին քառորդից, այսինքն՝ Գանձասարում նստող կաթողիկոսության վերացումից հետո, վանական կենտրոնի անշուքացման հետ միասին, ավերվել ու անհետացել են նաև այդ շինությունները։

Գանձասարի վանքի համալիրը գտնվում է խանգարված քառակուսի հատակագիծ ունեցող շրջապարսպի ներսում (նկ. 1)։ Տաճարն իր գավթով կանգնած է պարսպափակ տարածության կենտրոնում, ավելի մոտ հարավային պարսպապատին։ Խուցերը ձգվում են պարսպի հյուսիսային պատի երկարությամբ, իսկ դպրոցական շենքը՝ կիսավեր վիճակում՝ արևելյան պատի տակ։ Պարսպի ներսի տարածությունը հարթ է, սակայն հյուսիս-արևելյան ու արևելյան կողմերում թեթևակի թեքություն ունի, որի պատճառով էլ այս կողմերում պարիսպը նաև հենապատի դեր է կատարում։ Պարիսպը երեք մուտք ունի. հարավային, փառահեղ կամարով շքամուտքը, երևի հնում հիմնականը, որն այժմ փակված է խուլ պատով, արևմտյան փոքր դռնով մուտքը, որն այժմ գործում է, և արևելյան դուռը, որն անտառածածկ ձորի վրա դուրս է գալիս օժանդակ շինությունների արանքից և, հավանաբար, ծառայել է գաղտնի ելումուտի համար։

Պարսպի ներսում, տաճարի ու գավթի հյուսիսային պատի տակ փռված են Հասան-Ջալալյան իշխանական տան մեծերի գերեզմանները։ Անկասկած է, որ նրանք այստեղ թաղվել են միայն գավթի ներսում ազատ տարածություն չլինելու պատճառով (քանի որ իշխանական տոհմի տապանատունը գավիթն է եղել)։ Նույնիսկ հյուսիսային պատի տակի տարածությունն էլ չի բավարարել, և, ինչպես վիմագրերից էլ պարզ երևում է, XVIII—XIX դարերում արդեն Հասան-Ջալալյաններն իրենց հանգուցյալներին թաղում էին Վանք գյուղի[1] ընդհանուր գերեզմանոցում, որը փռված է վանական համալի-

[1] Վանք է կոչվում Գանձասարի վանքից 1,5—2 կմ հյուսիս-արևելք գտնվող գյուղը, որը փռված է Գանձասարին կից ձգվող լեռնաբազուկի հարավ-արևմտյան լանջին։ Ավելորդ է ասել, որ գյուղն իր անունն ստացել է վանքից (Գանձասարի)։ «Գյուղիս բնակիչները նախ բնակած են եղել Գանձասար վանքի մոտ, ուր մինչև այսօր մնում են տնաբակերը, ապա փոխադրված են այստեղ» (Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 172)։ Վանք գյուղը հնում բաժանված է եղել երկու թաղի, որոնցից մեկը կոչվում էր Հյունա-հող, մյուսը՝ Գոմա-կալ (անդ)։

րից հարավ՝ անմիջապես պարսպապատի տակից սկսած։ Այս դերեզմանատան արևմտյան եզրին կանգնած է թաղակապ մի շենք, որն, ըստ երևույթին, եղել է ուխտավորների կացարան, կամ թերևս ծառայել է մեռելաթաղի արարողություններին։ Նրա մուտքն արդեն քանդված է և թաղի ու պատի շաղախների մեջ երևում են խաչքարերի-ու հին՝ գիր ունեցող քարերի մշակված բեկորներ։

ՏԱՃԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Հայտնի է, որ տաճարը նախապես կառուցվել է առանձին, առանց գավթի, որը, հետագայում կցվելով արևմտյան կողմից (տե՛ս նկ. № 2), ծածկել է տաճարի գլխավոր ճակատի մեծ մասը՝ միակ շքադուռը և նրա շրջապատի բազմազան հարդարանքը։



2. Վանքի (տաճարի ու գավթի) հատակագիծը (չափագրություն Մ. Մ. Հասրաթյանի)։

Գանձասարի տաճարը հայ ճարտարապետության բազմադարյան պրակտիկայում լայնորեն հայտնի՝ ուղղանկյուն, խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, կենտրոնագմբեթ շինությունների տիպին է պատկանում։ Տաճարը ներքին ու արտաքին համեստ չափերի մեջ (արտաքին չափերն են՝ 11,8×17,4 մ) ունի ճարտարապետական ձևերի մի անկրկնելի վեհություն։ Այստեղ արտահայտություն են գտել կենտրոնագմբեթ դահլիճների տիպի ընձեռած բոլոր ծավալային լուծումները։ Խաչաձև սրահի հյուսիսային ու հարավային թևերը կարճ են, արևելյան թևում ներսից կիսաշրջանաձև աբսիդն է՝ բեմի համար բարձրացված, դարձյալ կիսաշրջանաձև տարածությամբ։



Նկ. 3. Իվանեի որդի Հովհաննես եպիսկոպոսի արձանագրությունը։

Խաչաթևերի արանքներում երկհարկ խորաններն են, որոնց երկրորդ հարկ տանող սանդուղքները կառուցված են պատից ելուստ ունեցող (պահունակային) աստիճաններով։ Աբսիդի կողքերի խորաններն են տանում 6-ական, իսկ արևմտյան պատի երկու անկյուններինը՝ 11-ական աստիճաններ, որոնք ներքևի կողմից մշակված են ստալակտիտի (շթաքարի) եղանակով։ Խորաններից դեպի տաճարը՝ բեմի երկու կողմերին՝ կանգնած են հզոր որմնամույթերը, որոնցից յուրաքանչյուրը կազմված է միմյանց հաջորդող յոթ աստիճաններից։ «Առաջին աստիճանները, ավելի հաստերը, բաղկացած են յոթ համահավասար քարերից. յոթ թիվը ցույց է տալիս եկեղեցու յոթ խորհուրդները»[1]։

Քանի որ խորանները տեղադրված են խաչի հարավային ու հյուսիսային կարճացված թևերում, ստացվել են նեղ ու երկար։ Առաջին հարկի խորանները մուտք ունեն աղոթասրահից և լուսավորվում են արևելյան պատում բացված նեղ լուսամուտներով։

[1] Լեո, Իմ հիշատակարանը, էջ 370։

Առաջինների պես նեղ ու երկար են նաև երկրորդ հարկի խորանաղոթարանները, որոնց մուտքերը սրահից բարձրացող պահունակային սանդուղքներից են, իսկ լուսավորությունը՝ դարձյալ արևելյան պատում բացված նեղ, ներքևիններից առավել փոքր լուսամուտներից։

Արևմտյան ավանդատները լույս են ստանում կողքերից՝ հարավային ու հյուսիսային պատերում բացված լուսամուտներից։ Երկրորդ հարկի ավանդատների համար ևս բացված են այդպիսի լուսամուտներ, որոնք իրենց նախշազարդ երեսակալներով բավականին աշխուժացնում են հարավային ու հյուսիսային պատերի հարթ ու խոշոր զանգվածները։ Դեպի երկրորդ հարկի ավանդատներն են տանում պահունակային սանդուղքները, որոնց ձևավորման մեջ զգալի տեղ է գրավում շթաքարի նախշը։

Տաճարի ներսը մշակված է ճարտարապետական ու դեկորատիվ-քանդակագործական զարմանազան ձևերով, բարձր ճաշակով ու վարպետությամբ։ Քանդականախշերի և առհասարակ հարդարանքի մանրամասներն այստեղ երբեք չեն կրկնում միմյանց, այլ լրացնում-հարստացնում են իրար, ստեղծելով գեղագիտական արտահայտչականությամբ կատարյալ մի ամբողջություն, որի մեջ դժվար է գտնել որևէ թերացում։ Տաճարի ներսում տիրապետող է գոտևորման հին հայկական եղանակների բազմազանությունը։ Դա զգացվում է հատկապես գմբեթատակի տարածության մեջ, ուր առկա են և ուղղահայաց իջնող պարզ նախշերը, և փնջաձև ծանրացած նախշավոր գոտիները, որոնք ասես վերից շրջանակի մեջ են առնում տաճարի կենտրոնական մասը։



Նկ. 4. Տաճարի բեմը։

Խաչի թևերի վրա թռիչք տվող կամարները եռաստիճան են, որոնցից վերինը զարդարված է մանրակամար նախշով։ Կամարաթռիչքները խաչի անկյուններում հենվում են հինգ կիսասյուներից կազմված սյունափնջերի վրա։ Այս կիսասյուներից կենտրոնականը գտնվում է ուղիղ անկյունում, և նրա վրա է հենվում վերին կամարաշերտը, ապա անմիջապես ճյուղավորվելով՝ իր տակ առնում աջ ու ձախ թռչող կամարները։ Կենտրոնական այս կիսասյունը հարևան երկուսի պես հարթ քառանկյունու կեսն է հանդիսանում, սակայն նրա անկյունը մշակված կիսագլանի տեսք ունի։ Ավելի հզոր կիսագլանների տեսք ունեն ծայրերի կիսասյուները։ Թռչող կամարների հիմքերից կազմված անկյուններում բուսական նախշերի քանդակներ կան (տե՛ս նկ. 5), անկյան նեղ մասում՝ արմավենիկներից հյուսված նուրբ ցանց, որը դեպի վեր շարունակվելով ավարտվում է ութթևանի ծաղկած աստղով։ Նրա թևերը ելուզված են նախշուն արմավենիկներով։ Այս նախշերից յուրաքանչյուրի վրա, տաճարի գմբեթատակի գոտու ներքո, տեղավորված է եղել մի բարձրաքանդակ՝ բավական մեծ ելուստով. հարավ-արևմտյան առագաստում խոյի գլուխ է քանդակված,



Նկ. 5. Տաճարի գմբեթատակի քանդակազարդերից։

հարավ-արևելյան ու հյուսիս-արևելյան առագաստներում՝ եզան գլուխ ու արծիվ, իսկ հյուսիս-արևմտյան առագաստի վրա՝ մարդու



Նկ. 6. Խաչքար (XIII դ.)։

գլուխ։ Այս քանդակներն այժմ բավականին մաշված են, և նախնական վիճակների մասին կարելի է գաղափար կազմել մեծ դժվարությամբ։ Նրանց նշանակության կամ գաղափարական բովանդակության մասին խոսք կլինի քիչ հետո։

Տաճարի թմբուկը ներսից կլոր է՝ ութ զույգ կիսասյուների միջոցով բաժանված ութ մասերի։ Կիսասյուներն ավարտվում են խոյակներով, որոնց վրա ելուստաձև կամարներն են դրված։ Այս կամարների զույգերը, իրենց մեկական թևերով հենված սյուների վրա, իրար են գալիս և մյուս թևերով միանում իրար, մարում պատի մեջ։

Թմբուկի լուսամուտները և բեմեզրերի որմնադարակները մշակված են նույն եղանակով։ Նրանց կամարներն իրենց հերթին մանր կամարիկներ ունեն, որոնցով ստանում են հովհարի ձև։

Տաճարի հարդարանքի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում բեմառաջը, որն իրենից ներկայացնում է 1,20×5,0 մ չափսի քառանկյունի՝ առնված լայնշի, նրբաքանդակ զարդերից հյուսած շրջանակի մեջ (տե՛ս նկ. նկ. 4, 7)։ Շրջանակի վերին երիզը թողնված է արձանագրության համար, որը գրված է խոշոր շեղատառերով. «Որք-երկիր-պագանէք ածաղարդ սրբո սեղանոյս զՀասան զորդի Վախտանգա յիշեցէք ի սբ յաղաւթս ձեր աղաչեմք»։ Շրջանակի միջի տարածու-



Նկ. 7. Բեմառաջի զարդաքանդակներից մի հատված։

թյունն ընդգրկում է յոթուկես ռոմբ, որոնք, ինչպես նաև նրանց արանքներում գոյացած եռանկյուն տարածությունները, զարդարված են երկրաչափական նուրբ ու բարդ, հյուսածո զարդանախշերով, որոնք ավարտվում են ռոմբերի կենտրոններում քանդակված գնդիկներով։ Նախշերը դեպի գնդիկը գնալով խորանում են։ Նման թեքություն ունեն նաև եռանկյունները։ Այս թեքությունները, հավանաբար, լուսաստվեր ստեղծելու համար են արված։ Ուշագրավ է, որ ինչպես շրջանակի երիզանախշերում, այնպես էլ ռոմբերի մեջ իշխում է նուրբ ճարտարությամբ հյուսված խաչանախշը, չնայած նրանք (ռոմբերն ու նրանց արանքներում գոյացած եռանկյուններն առանձին-առանձին) և եզրերը չեն կրկնվում որպես զարդաքանդակային միավորներ (նկ. 4)։

Բեմառաջքի այսպիսի զարդաքանդակներով հայտնի են նաև Հառիճի վանքը[1], Մակարավանքը[2], որոնցից հատկապես առաջինի նախշերը (ռոմբերի մեջ ու նրանք իրար միացնող եռանկյուններում), հավանաբար, ելման օրինակ են եղել Գանձասարի ճարտարապետի համար, բայց միայն ելմա՛ն օրինակ, որովհետև նա, ինչպես արդեն Ա. Լ. Յակոբսոնն է նկատել, Հառիճավանքի բեմառաջքի համեմատաբար տափակ նախշերի տեղ քանդակել է ավելի ընդգծված զարդեր[3], ռոմբերի ու եռանկյունիների կենտրոններում դնելով բարձրաքանդակ գնդիկներ, որոնք մի տեսակ հավաքում-փնջում են շրջապատի զարմանազան զարդանախշերը։

Հետաքրքիր զարդաքանդակներով են առանձնանում նաև բեմառաջքի երկու կողմերից բեմ տանող քառաստիճան սանդուղքների երեսները, որոնք ունեն 6-ական (1-2-3) զարդաքանդակ քառակուսի քարեր, յուրաքանչյուրի վրա ինքնահատուկ երկրաչափական նախշեր՝ կենտրոններում դարձյալ ի մի հավաքող-փնջող գնդիկներով։

Եկեղեցու սրահի լուսավորության համար մեկական նեղ ու երկար լուսամուտներ են բացված տաճարի չորս պատերի մեջ։ Արևմտյան պատինը փակվել էր գավթի կցումով։ Սակայն մնացածների լույսն էլ բավարար է, քանի որ նրան գումարվում է գմբեթի թմբուկի նեղ, երկար ու կլոր լուսամուտներից թափվող լույսը։

---

[1] Տե՛ս Н. М. Токарский, Архитектура Древней Армении, табл. № 82.

[2] Անդ, նկ. 81։ Նաև՝ «Դիվան հայ վիմագրության», հատ. VI, Իջևանի շրջ. կազմ. Ս. Ավագյան, Հռ. Ջանփոլադյան, Ե., 1977, էջ 152, 166։

[3] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 147։

Արտաքին ծավալները լիակատար համապատասխանում են մշակված նախագծին. նրանք պարզ ու որոշ ներկայացնում են ներքուստ խաչաձև-գմբեթավոր շենքի հորինվածքը։ Խաչի թևերն ընդգծված են, համամասնությունները մեծացրած ճակատոնապատերով։ Անկյունների մասերը փոքր-ինչ իջեցված են։ Խաչի թևերը ևս ընդգծվում են ոչ այնքան խոր եռանկյուն որմնախորշերով. սրանք թեթևացնում են շինության հսկա զանգվածը և, միաժամանակ, իրենց ստվերներով առանձնացնում և առավել ցայտուն են դարձնում ճակատի հիմնական մասերը։

Շենքը դրված է հնգաստիճան որմնախարիսխի վրա. աստիճանների բարձրություններն են՝ 36, 46, 37 և 32 սմ, որոնց վրա դրված է 37 սմ բարձրության կիսաշրջանաձև գլանիկը։ Տաճարի ճակատները մասնատված են ոչ այնքան բարձր կամարներով, որոնք կազմվում են կրկնակ կիսագլաններով, և սրանք էլ հենվում են զույգ կիսասյուների վրա։ Այս մասնատումը խստորեն պայմանավորված է շենքի ճարտարապետական հորինվածքով. ներքին խաչի թևերը նշված են լայն ու բարձր կամարներով, նրանց կողքերի կամարներն ավելի նեղ են ու ցածր։ Այս կամարաշարերը, սակայն, այնքան էլ բարձր չեն քանդակված և չեն խճողում ճակատի միաձույլ ու տիրական հարթությունը։

Հյուսիսային ու հարավային ճակատները մշակված են իրար նման հնգական կամարներով։ Կենտրոնական, առավել խոշոր ու բարձր կամարներից վեր տեղադրված են ուժեղ ընդգծված խոշոր խաչաքանդակներ։ Ավելի ճիշտ՝ հենց այդ կամարներն ավարտվում են խաչաքանդակներով, որոնք իշխում են ճակատների վրա։ Երկու խոշոր (կենտրոնական) կամարների ճակատներում էլ բացված են նեղ լուսամուտներ՝ նախշազարդ լայն երեսակալներով։ Փոքր կամարներն այն առանձնահատկությունն ունեն, որ եռաթև են (ինչպես Հովհաննավանքը Աշտարակի շրջանում՝ 1217 թ.)։ Ցածի զույգ թևերը համեմատաբար մանր են, միայն մի փոքր ներս ծռված խոյակներից վեր, և իրենց վրա կրում են հիմնական կամարը։

Արևելյան ճակատը ևս հինգ կամարներ ունի։ Կենտրոնականը բարձր է և իր մեջ է ընդգրկել նեղ, ուժեղ ընդգծված լուսամուտը։ Երկրորդ և չորրորդ կամարների ներսի տարածություններում փորված են որմնախորշեր, որոնց վերնամասերը մշակված են ատամնավոր զարդաքանդակներով։ Իսկ առաջինը և հինգերորդը, որմնախորշերի տեղ, կենտրոնից քիչ ցած զարդարված են արմավենիկաձև «հոնքերով»։

Ինչպես հարավային ճակատի, այնպես էլ հյուսիսայինի մեծ կամարների կողքերի երկուական փոքրիկ կամարների ներսում եռանկյուն որմնախորշերը վերևից պսակված են, բացի հովհարաձև մշակումից, նաև ժանեկաձև նախշաքանդակներով։ Մեծ կամարներն աչքի են ընկնում ուրիշ տեսակ զարդաքանդակներով. հարավայինի ներսում, լուսամուտի երեսակալ նախշից վեր, արևի ժամացույց է քանդակված, իսկ հյուսիսային ճակատի նույն տեղում հավերժության խորհրդանշանն է, որը կրկնված է նաև կամարը եզրափակող մեծ խաչի վերին թևի վրա, ուղղակի ճակտոնապատի տակ, այն տարբերությամբ միայն, որ վարի խորհրդանշանի թևերը պտտվում են ժամացույցի սլաքների ուղղությամբ, վերինի թևերը՝ հակառակ։

Թվում է՝ այսպիսի քանդակով է պսակված եղել նաև արևելյան պատի կենտրոնական կամարը, որի վրա այժմ էլ պահպանվում է այդ քանդակի՝ խաչի՞, թե՞ հավերժության նշանի, հիմքը։ Ըստ երևույթին այն մաշված է եղել, և այդ պատճառով էլ վերջին նորոգողներն այլևս չեն վերականգնել։

Տաճարի խաչի թևերի ծայրերին, ճակտոնապատերի անկյուններից վեր գմբեթի մանրակերտներ (մակետներ) են դրված։ Սա XIII դարի եկեղեցիների շինարարության մեջ սովորական երևույթ էր։ Հառիճավանքում, օրինակ, նույն տեղերում դրված են գլխավոր եկեղեցու մանրակերտները։ Դրանից, երևի, պետք է ենթադրել, որ ճարտարապետը, շենքը կառուցելուց առաջ, նման մանրակերտ էր սարքում՝ այժմյան նախագծային միջոցառումների փոխարեն։

Գանձասարում այս չորս մանրակերտներից լավ պահպանված է միայն տաճարի խաչի հյուսիսային թևինը։ Մնացածները տարբեր չափերով մաշվել են, չունեն գմբեթի ծայրին տնկված մետաղյա խաչը, որը հյուսիսայինի վրա դեռևս կա և նրան տալիս է ավարտուն տեսք։ Մանրակերտները, դրված լինելով գմբեթի քանդակազարդ լուսամուտների դիմաց, դիտվում են իբրև նրանց հետ սերտորեն առնչվող մանրամաս։

Ըստ երևույթին ճարտարապետն ու քանդակագործն իրենց առաջ նպատակ են դրել տաճարի խաչի յուրաքանչյուր թևի և գմբեթի՝ նրա վրա բացվող չորս նիստերի հարդարանքով ստեղծել մի ինքնահատուկ ամբողջություն, որն ունի բովանդակության ամբողջականությունն արտահայտող և իրարով պայմանավորված բոլոր մանրամասները՝ իմաստային իրենց կիզակետով, տարբեր հատվածներն ու մանրամասները հավաքող, միասնականացնող գաղափար։

Խոսելով Գանձասարի տաճարի երեք ճակատների կամարային



Տաճարն ու գավիթը հյուսիս-արևելքից։

հարդարանքի մասին, Ա. Լ. Յակոբսոնը հայտնել է այն կարծիքը, թե ճարտարապետական այս կարևոր լուծումը հայկական շինարարական արվեստի հատկանշական գծերից է եղել՝ սկսած հնագույն ժամանակներից և ժառանգվել է Բագրատունյաց թագավորության օրերում (IX—XI դդ.)՝ ինչպես հայ, այնպես էլ վրաց ճարտարապետների կողմից։ Սակայն, գիտնականը գտնում է նաև, որ հետագայում, հատկապես XII—XIII դարերում, հայ շինարարները հրաժարվել են կամարային զարդերից, աղքատացրել հայ ճարտարապետական կառույցների դեկորատիվ հարդարանքը։ Գիտնականը ճարտարապետական լուծման այս ակնհայտ տարբերությունը՝ կամարային հարդարանքից հրաժարվելը, նկատում է իբրև հայոց հակաքաղկեդոնական տրամադրությունների դրսևորում։ XIII դարի հայկական ճարտարապետական մի շարք կառույցներում նկատվող կամարային հարդարանքի առկայությունն էլ նա փորձում է բացատրել որպես մի երևույթ, որը, իբր, պետք է պայմանավորված լիներ այդ կառույցների «պատվիրատուների քաղկեդոնական հակվածությամբ»[1]։ Ա. Լ. Յակոբսոնն այդօրինակ ազդեցության արդյունք է համարում Տիգրան Հոնենցի ու Բախտաղեկի տոհմի տաճարները Անիում, Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Նոր-Գետիկում, հատկապես Հովհաննավանքը Աշտարակի շրջանում, որը կառուցվել է «Հայաստանի կառավարիչ Զաքարե Երկայնաբազուկի վասալ Վաչեի կողմից»[2]։ Այս բոլորից ելնելով էլ, գիտնականը հնարավոր է համարում, որ «Գանձասարի տաճարի կամարազարդարանքն ինչ-որ չափով արտացոլված լինի Խաչենի տերերի արյունակցական ու քաղաքական կապերը Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների հետ»[3]։

Արտաքուստ կարող է հիմնավոր թվալ Ա. Լ. Յակոբսոնի այս կարծիքը, որը, սակայն, այդպես չէ, պարզապես սխալ է և ահա թե ինչու։

Հայտնի է, որ տաճարների արտաքին հարուստ հարդարանքը և

---

[1] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 150։

[2] Անդ։

[3] Անդ։

հատկապես կամարազարդումը հայկական ճարտարապետության բնորոշ հատկանիշներն են եղել սկսած VII դարից (հիշենք Զվարթնոցը, Արթիկի ու Թալինի հուշարձանները) և իրենց հետագա բուռն զարգացումն ու տարածումն են ստացել հաջորդ դարերում։ Ճարտարապետական-քանդակագործական այս իրողության ակնառու օրինակ է Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցին (966 թ.)[1], որի ներքին (բեմի աբսիդում) և արտաքին (հատկապես արևելյան ճակատի) կամարազարդերն առանձնահատուկ տեղ են բռնում ոչ միայն Հայաստանի, այլև հարևան ժողովուրդների ճարտարապետական կյանքում։ Ուշագրավ է, որ Գ. Ռիվոյրայի կարծիքով՝ Սանահնի Ամենափրկիչը Ռավեննայի ճարտարապետության նախատիպերից մեկն է հանդիսացել[2]։

Կամարազարդման ավանդույթը հայ ճարտարապետության համար բնորոշ առանձնահատկություն մնաց նաև հետագայում։ Այն փայլուն կերպով դրսևորված ենք տեսնում Մարմաշենի եկեղեցում, Արգինայի տաճարում և Անիի կաթողիկե եկեղեցում (վերջին երկուսի ճարտարապետ՝ Տրդատ), երեքն էլ կառուցված X դ. վերջին և XI-ի սկզբին։ Հետևապես, Անիի հուշարձաններում (Տիգրան Հոնենցի ու Բախտաղեկի եկեղեցիները) կամ Նոր-Գետիկի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում (XIII դ. սկիզբ) տեղ գտած կամարազարդերը չի կարելի համարել ներմուծված երևույթ, մանավանդ, պայմանավորված քաղկեդոնական միջավայրի ազդեցությամբ։

Եթե այսօրինակ ճարտարապետական մի ավանդույթ, սելջուկ Թուրքերի դժնդակ տիրապետության օրոք կարճատև ընդմիջում տալուց հետո, XIII դարում վերստին ծաղկում է հայկական կոթողային շինարարության մեջ, ապա այսքանը միայն և միայն կարող էր նշանակել, թե այդ նույն դարի հայ ճարտարապետները վերակենդանացրել են նախորդ կարճատև շրջանում ետին պլան մղված հին հայկական ճարտարապետական հարդարանքի ավանդույթը։ Ընդ որում՝ այդ հարկադիր կարճատև «մոռացությունը» ոչ թե հայ ճարտարապետների ու պատվիրատու իշխանավորների հակաքաղկեդոնական տրամադրությունների արդյունքն էր, այլ պարզ հետևանքն այն դաժան իրականության, որ Բագրատունյաց համահայկական թագավորության կործանումից հետո Հայաստան աշխարհի համար ստեղծել էր սելջուկ Թուրքերի աղետաբեր տիրապետությունը։ Այդ պայմաններում հնարավոր չէր կանգնեցնել շատ թե քիչ տանելի ճարտարապետական որևէ կառույց, ո՞ւր մնաց՝ կամարազարդ հարդարանքով տաճար։ XII դարի առաջին երեք քառորդը, մեր պատմիչ-ժամանակագիրների ամենաարժանահավատ վկայությամբ՝ չընդմիջվող ավերի ու կողոպուտների ժամանակաշրջան էր Հայաստանի համար։ Ժողովուրդը, նույնիսկ նրա իշխանավորները գտնվում էին ծայր աղքատության մեջ և ի վիճակի չէին պահպանելու հին օրերի փառավոր ճարտարապետական ավանդույթներն իրենց նորօրյա աղքատիկ կառույցներում։ Իսկ իրենց ճանապարհին ամեն ինչ ավերող բռնագրավիչները նրանց ոչ միայն հնարավորություն չէին տալիս կառուցելու շքեղ շենքեր, այլև պարբերաբար կործանում ու ավերում էին եղած մեծ ու փոքր հուշարձանները։

Այս է միակ պատճառն այն ահավոր իրողության, որ սելջուկյան մռայլ տիրապետության շրջանի Հայաստանում կառուցված որևէ նշանակալից ճարտարապետական հուշարձան անհնար է ցույց տալ այսօր։

Ա. Լ. Յակոբսոնի հիշյալ կարծիքի դեմ ծառացող մյուս կարևոր առարկությունն էլ պատմամշակութային փաստերի առկայությունն է։

Գանձասարը կառուցող Հասան-Ջալալը նախամոնղոլական շրջանում անկախ ու ինքնուրույն իշխանություն ուներ և իրեն կոչում էր «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր խաչխանաբերդի յոքնասահման նահանգաւք»[1]։ Եվ նրա այս ինքնահորջորջումը, որ ուրիշ պարագաներում շատ հավակնոտ կարող էր թվալ, ընդունում էին օտարները, ինչպես և հարևան վրացիք[2]։ Նշանակում է՝ Հասան-Ջալալը ո՞չ Զաքարյան իշխանապետների վասալն

---

[1] **Օ. Խ. Խալբախչյան**, Սանահին, Մոսկվա, 1973, էջ 27.

[2] **G. P. Rivoira**, Architectura musulmana, sue originie suo sviluppo, Milano, 1914, p. 225. *Հմմտ. Հ. Խալփախչյան, նշվ. աշխ., էջ 32։*

---

[1] *Գանձասարի տաճարի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրությունից։*

[2] **Н. Д. Миклухо-Маклай**, Географическое сочинение XIII в. на персидском языке. «Ученые записки Инст. Востоковедения», т. IX, Л., 1954, стр. 204. *Այստեղ հեղինակը՝ Հասան-Ջալալի ժամանակակիցը, վկայում է, որ «Խաչենը դժվարամատչելի մարզ է, լեռների ու անտառների մեջ... Այնտեղ հայեր են բնակվում։ Աբխազի մարդիկ նրանց փաղիշահին կոչում են «թագավոր»։*

էր, ո՛չ էլ որևէ թագավորության ենթական։ Իսկ նրա և հատկապես նրա միջավայրի հակաքաղկեդոնական տրամադրությունները ո՛չ մի ապացույցի կարիք չունեն[1]։

Ա. Լ. Յակոբսոնի կարծիքի համաձայն՝ քաղկեդոնական միջավայրն է եղել ակունքը, և Հովհաննավանքն էլ՝ այն կամուրջը, որով հիշյալ կամարային հարդարանքն անցել է հայերին։ Իսկ սրա պատճառն էլ այդ վանքի պատվիրատուն ու տնօրենն է եղել՝ «Հայաստանի կառավարիչ Զաքարե Երկայնաբազուկի վասալ Վաչեն»։ Բայց չէ՞ որ Զաքարե Երկայնաբազուկը քաղկեդոնական չի եղել, որպեսզի նրա վասալ Վաչեն էլ ընդուներ քաղկեդոնականությունը և տուրք տար քաղկեդոնական միջավայրի ճարտարապետական ազդեցությանը։ Զաքարեին համարյա ժամանակակից և Զաքարեին ու նրա միջավայրը շատ լավ ճանաչող Կիրակոս պատմիչն է վկայել, որ «Զաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանեն հայք»[2]։

Եվ, վերջապես, եթե քաղկեդոնական միջավայրն էր որոշողը, ապա չէ՞ որ այն, նախ և առաջ, իր անջնջելի դրոշմը պետք է դրած լիներ նույն Զաքարյանների կառուցած ու հովանավորած ճարտարապետական հուշարձանների վրա։ Կա՞ այդպիսի դրոշմ։ Բնա՛վ։ Զաքարյան Զաքարեի ու Իվանեի կառուցած Հառիճավանքի ոչ մի ճակատն էլ կամարազարդ չունի։ Այդպիսի ճարտարապետական մանրամասներ չունեն նաև Զաքարյանների հովանավորած վանքերի՝ Հաղբատի ու Սանահնի այն շենքերը, որոնք կառուցվել են նրանց իշխանապետության օրերում։

Միայն Սանահնի Համալիրի Ամենափրկիչ եկեղեցին է, որ հյուսիսային պատի վրա ունի կամարազարդ (ինը կամար), այն էլ կառուցվել է X դարի երկրորդ կեսին, Զաքարեի և Իվանեի իշխանապետությունից ավելի քան երկու դար առաջ։ Այս եկեղեցին շքեղ կամարազարդ ուներ նաև բեմի աբսիդում (տասը կամարով)[3]։ Եվ միանգամայն իրավացի է Հ. Խալփախչյանը, երբ հավանական է համարում, որ հենց Սանահնի այս եկեղեցին իր կամարազարդով պիտի խոր ազդեցություն թողած լիներ ինչպես Մարմաշենի գլխավոր եկեղեցու (983—1029), Անիի Մայր տաճարի (Տրդատի կառուցած, 989—1010), այնպես էլ հետագայում կառուցված համանման հուշարձանների վրա[1]։

Քննության առնված փաստերը ցույց են տալիս, որ տաճարների արտաքին կամարազարդերի առկայությունը XIII դարի հայկական մի շարք ճարտարապետական հուշարձանների վրա (Անիի եկեղեցիներում, Մարմաշենում, Խծկոնքում, Կեչառիսում, Գանձասարում և այլուր) աներկբայելի ապացույց է, որ դա հայ ճարտարապետության հարազատ ավանդույթն է, առանց միջնորդության։ Եվ պարզապես XIII դարի հայ ճարտարապետները, հարազատ մնալով ազգային բազմադարյան ավանդներին, մեկ հարյուրամյակի հարկադիր ընդմիջումից հետո վերստին կիրառեցին և առավել զարգացրին ճարտարապետական մի այնպիսի փառահեղ միջոց, ինչպիսին շենքերի ճակատների կամարազարդումն է։

«Գանձասարի եկեղեցու արտաքին կերպարը, նրա ծավալատարածական ողջ լուծումը և, առաջին հերթին, հարդարանքը՝ ակնհայտ կերպով ցույց են տալիս ճարտարապետի ձգտումը՝ շենքին տալու առավել կոթողային և վեհ տեսք, որ պետք է մարմնավորեր Խաչենի իշխանության հզորությունը և նրա տեր Հասան-Ջալալի բարձր դիրքն ու հեղինակությունը ողջ Հայաստանում»[2]։

ՏԱՃԱՐԻ ՃԱԿԱՏԱԿԱԼ ԽԱՉԱՔԱՆԴԱԿԸ

Գավիթը, ինչպես ընդունված է հայկական ճարտարապետական ավանդույթով, տաճարին կից կառուցվել է նրա արևմտյան կողմում։ Կառուցվել է հետագայում և հասկանալի է, որ այն իր տակ է թողել տաճարի շքամուտքը, ինչպես նաև վերջինիս հարդարանքի մի մասը։ Իսկ այս ամենը նախապես կազմակերպված է եղել արտակարգ բարձրը ճաշակով և համապատասխանել է կառույցի մյուս բարեմասնություններին։ Բավական է հիշել թեկուզ շքամուտքի վերին մասում,

1 Մեր այս տեսակետի օգտին խոսող անհերքելի կռվան կարող է լինել Գանձասարի ու Դադիվանքի հոգևոր առաջնորդների, Հայոց Արևելից կողմանց մտավորականներ Վանական Վարդապետի, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Պատմիչի և մյուս վարդապետների անհաշտ պայքարը քաղկեդոնականության դեմ։

2 Կիրակոս, էջ 166։

3 Տե՛ս Հ. Խալփախչյան, նույն տեղում, էջ 29։

1 Անդ։

2 Բ. Ա. Ուլուբաբյան, Մ. Մ. Հասրաթյան, Գանձասարի վանքը. «Հայկազյան հայագիտական հանդես», հատոր Ե, Բեյրութ, 1974, էջ 100։

հենց անմիջապես ճակտոնակալից սկսվող մեծ խաչի բարձրաքանդակը, որն, անկասկած, տաճարի հիմնական ճակատի ամենափառահեղ զարդն է եղել, հանդիսանալով առհասարակ տաճարի հարդարանքի պսակը։ Ճիշտ է, մեծ խաչերով են պսակվում նաև հարավային ու հյուսիսային ճակատների հարդարանքները։ Հավանաբար, կառույցի հեղինակն արևելյան ճակատի վրա նման շքեղ մանրամասն ավելորդ է համարել՝ մտածելով, որ այդ պատը քիչ է դիտվում։ Չնայած այնտեղ ևս չի զլացել ստեղծելու բարձրարվեստ հարդարանք. հիշենք հնգաթև կամարաշարն իր կիսասյուներով և այլ մանրամասներով։

Սակայն շքամուտքի այս խաչը շահեկանորեն տարբերվում է ինչպես մյուս պատերը պսակող խաչերից, այնպես էլ ուրիշ հուշարձանների համանման զարդերից առհասարակ։ Այստեղ արտասովոր գեղեցիկ են և խաչի նախշերը, և նրա կենտրոնական մասը կազմող սյուժետային քանդակը։ Խաչի թևերը եզերվում են կիսագլաններից կազմված շրջանակներով, որոնց ներսում նախշազարդ տարածություններ են ստեղծված, ապա այդ տարածությունների ներսում ձգվում են թևերի ատաղձը կազմող զարդաքանդակ կիսագլանները։ Գավթի կտրից դուրս երևում է շքամուտքի վերնաճակատի մասը։ Նրանից վեր շրջանաձև հարթաքանդակն է, որի վրա կանգնած է խաչը։ Եվ շրջանաձև հարթաքանդակը, որ, ինչպես ենթադրվում է մասնագետների կողմից, երկրագնդի պատկերն է ներկայացնում, և նրա վրա բարձրացած խաչի ներսի նախշերը՝ ոսկերչական նրբագեղություն ունեն, չեն կրկնված հուշարձանի այլ մասերում։

Խաչի կենտրոնում խաչելության տեսարանն է, և խաչված Քրիստոսի քանդակն իր վրա է առնում հանգույցի դերը։ Քրիստոսի տարածած թևերին թառել են երկու սերովբեներ։ Թևատակերին ծնկաչոք երկու մարդ, ձեռքները վեր պարզած, դեմքերով դեպի նայողը, աղոթում են։ Չի կարելի կասկածել, որ սրանք ևս վանքի շինարարության հովանավորների պատկերներն են՝ նման գմբեթի հովանավորական քանդակներին, թե՛ դեմքերով և թե՛ հագուստ-կապուստով։

Խաչի հորիզոնական թևերի վրա բարձրաքանդակված են իրար դեմ գնացող երկու արծիվներ, որոնց խրոխտորեն վեր պարզված վզերը հատվում են և գլուխ չունեն։ Նրանց անգլուխ լինելը նկատվում է մոտիկից, երբ բարձրանում ես գավթի կտուրը, իսկ ցածից արծիվները երևում են ամբողջական ու անթերի։ Նշանակում է՝ քանդակագործ-վարպետը հմտորեն տիրապետում էր նաև իր արվեստի այսօրինակ նրբությանը[1]։

Նկարագրված խաչ-քանդակը եզակի երևույթ է և իր նմանը չունի XIII դարի հայկական ճարտարապետական կառույցներում։ Այսպիսի ստեղծագործությունների հանդիպում ենք հետագա դարերին վերաբերող հուշարձաններում։ Օրինակ, հայտնի է Սևանից գտնված քանդակը՝ խաչելության տեսարանով, որը Գանձասարի մի տարբերակն է հիշեցնում և թվագրվում է 1448 թ.[2]։

ԳՄԲԵԹԸ

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Հասան-Ջալալը Գանձասարի վանքի տաճարը կառուցել է «գեղեցկազարդ յորինուածովք գմբեթարդ երկնանման»[3]։ Ուրեմն, գմբեթը սկզբնապես տաճար-ամբողջության մասն է կազմել։ Վերանորոգումների մասին խոսող նյութերում ոչ մի խոսք չկա գմբեթի վերափոխման մասին, որն, իհարկե, չի նշանակում, թե վերանորոգման չի ենթարկվել նույնիսկ նրա ծածկը։ Ընդհակառակը, ինչպես հետո կտեսնենք, Գյուլիստանի մելիք Աբովի արձանագրության մեջ կոնկրետ խոսք կա ամբողջ համալիրի ծածկը փոխելու մասին։ Սակայն գմբեթի ճարտարապետական ու քանդակագործական կերպարը էական փոփոխության չի ենթարկվել։ Հետևապես, մենք լիիրավ կարող ենք ասել, որ գմբեթը պահպանվել է իր համարյա նախաստեղծ վիճակով ու մանրամասներով։ Համարյա ենք ասում, որովհետև ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրինակ գմբեթի սյունափնջերի խոյակներն իսկապես ենթարկվել են փոփոխության։ Խոյակներից մի քանիսը, որոնք, հավանաբար, սկզբնականն են, քանի որ բավականին մաշված տեսք ունեն, քանդակազարդ են, և սյունափնջի կենտրոնական կիսասյունից վեր ներկայացնում են հրեշտակի գլուխ՝ շրջանակված բուսական քանդականախշերով։ Այսպիսի պատկերով մի քար-խոյակ՝ կողքերից ջարդված վիճակում՝

[1] Անգլուխ արծիվների բարձրաքանդակներ կան նաև գավթի շքադռան աջ ու ձախ կողմերում։ Այստեղ ևս քանդակագործի հղացումն արդարացվում է. արծիվները դիտվում են իբրև գլուխները խրոխտորեն վեր ձգած պատկերներ։ Վանքեցի մեկը մեզ ասում էր՝ ինքն էլ է նկատել այդ քանդակների անգլուխ լինելը և միամտորեն կարծել, թե դրանք մատաղ արած աքլորների քանդակներ են։

[2] Այս խաչ-քանդակը (աջից ձախ կատարված գրով) այժմ պահվում է Հայաստանի պետական պատմական թանգարանում։

[3] Կիրակոս, էջ 269։

գտնվել է զանգակատան ոտոնդայի տակ (տե՛ս նկար № 7)։ Անկասկած, այս խոյակը, մաշված լինելու պատճառով, հանվել է գմբեթից, սակայն տեղը գրել են առանց քանդակների, հարթ մակերեսներով, հասարակ խոյակ։ Նույնը տեղի է ունեցել նաև մյուս խոյակների հետ, բացի մի 2—3-ից, որոնք և հնարավորություն են տալիս դատելու գմբեթի այս մասերի հատվածների նախնական բարձրարվեստ հարդարանքի մասին։

Չի կարելի չնկատել, որ կառուցող ճարտարապետն ու քանդակագործը, հրաշալի կերպով լուծելով տաճարի ճարտարապետության և հարդարանքի բոլոր հարցերը, միաժամանակ իրենց ուշադրությունը բևեռել են գմբեթի վրա՝ իբրև շինության պսակի, և այդ համակողմանի ուշադրությունից ծնվել է անկրկնելի մի կոթող, որն իր տեսակի մեջ բացառիկ տեղ է գրավում հայ բազմադարյան ամբողջ ճարտարապետության ամենաշքեղ երևույթների շարքում։

Գմբեթն ունի տասնվեց նիստ (տե՛ս նկ. 8), որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է անկյունաձև վերնաճակատով։ Այս վերնաճակատներից կամ ճակտոնապատերից ամեն մեկի անկյունը բարձրացնում է կոնաձև սալապատ ծածկը՝ նրան տալով հովհարի տեսք։

Ծածկի այս ձևը նորություն չէր XIII դարում և բնորոշ էր հայ



Նկ. 8. Գմբեթի գծագիրը (չափագրություն Ա. Լ. Յակոբսոնի)։

ճարտարապետությանը՝ սկսած XI դարից։ Այդ լուծումն ունեն, օրինակ, Մարմաշենի տաճարը[1], Խծկոնքի Սուրբ Սարգիս, Բջնիի Աստվածածին և Ամբերդի եկեղեցիները (բոլորն էլ XI դարից), ինչպես նաև Անիի մի շարք եկեղեցիներ (օրինակ, Կուսանաց անապատի եկեղեցին՝ XIII դ.)[2]։

Տաճարի գմբեթը հուշարձանի պսակը հանդիսանալով հանդերձ, դարձել է նաև նրանից վեր խոյացած, առանձին դիտվող մի հորինվածք, որի վեհությունն ընդգծված է հատկապես նիստերի ուղղահայաց բաժանումներով, ինչպես նաև կողերին բարձրացած սյունափնջերով (երեքական կիսասյուների համադրությամբ)[3], որոնցից յուրաքանչյուրն ունի իր տակդիրը, խոյակն ու խոյակի վերնահարթակը։ Թմբուկի վեհությունն ու մասնատվածությունն ընդգծվում են նաև նիստերը մեկընդմիշտ ձևավորող որմնախորշերով, որոնց միջով դարձյալ վարից վեր ձգվում են զարդանախշ կիսագլաններ՝ իրենց ծայրերին առած տարբեր քանդակներով։ Այս բոլորը, բացի իրենց վերապահված որոշակի դերից, ստեղծում են լույսի ու ստվերի մի հետաքրքիր համադրություն, որով իսկապես առավել ցայտուն է դառնում թմբուկի գեղագիտական տպավորությունը։

Ըստ երևույթին ճարտարապետը նիստերի կոնկրետ բաժանում էլ է կատարել։ Չորս նիստերի (խաչի թևերի ուղղությամբ ձգվածների) մեջ բացված են նեղ, երկարուն լուսանցքներ՝ եզրերի հետաքրքիր զարդանախշերով։ Այստեղ երեսակալները լայն են, ծածկված երկրաչափական կամ բուսական հարուստ զարդերով, երեսակալներից վեր քանդակված են զանազան նախշերով վարդյակներ, (տե՛ս նկ. № 9), բացի արևմտյան՝ գավթի կենտրոնին նայող նիստից, որի լուսամուտից վեր կան այլ քանդակազարդեր, որոնց մասին խոսք կըլինի քիչ հետո։ Մյուս երեք նիստերի զարդերը ևս չեն կրկնվում, հատկանիշ, որ շատ է բնորոշ Գանձասարի ճարտարապետական ու քանդակագործական մանրամասներին։

---

[1] Անդ, Հմմտ. Н. Токарский, Архитектура Древней Армении, էջ 167 (տե՛ս նույն գրքի նկ. 48)։

[2] Տե՛ս «Հայկական եկեղեցիներ», Էջմիածին, 1970։

[3] Ըստ երևույթին «երեքը» ինչ-որ խորհրդանշական իմաստ է ունեցել ճարտարապետի ստեղծագործական պատկերացումներում։ Եթե հոսքյուղ սյան խոյակը ևս երեք գլուխ ունի, և երեք շերտից է կազմված նաև գմբեթածածկի քիվը, որ անկյունների ծայրերով անմիջապես նստում է այդ խոյակների վրա, ապա ինչո՞վ բացատրել այս ճարտարապետական սովորությունը։ Մանավանդ որ երեքի համադրության շատ օրինակներ կարելի է նշել եկեղեցու ճարտարապետական մանրամասներից։ Արդյոք այստեղ գո՞րծ չունենք «սուրբ երրորդության» գաղափարի կոնկրետ դրսևորումների հետ։

Խաչի չորս անկյուններին նայող նիստերից երեքը կենտրոնում փոքրիկ լուսամուտ ունեն. դարձյալ իրարից տարբեր՝ կլոր, խաչաձև և այլն։ Լուսամուտ չունի միայն հյուսիս-արևմտյան անկյունին նայողը։ Նրա կենտրոնում քառաթև մեծ վարդյակ է տեղադրված քառանկյունի նախշազարդի մեջ։ Վարդյակի նախշերը ոսկերչական նրբագեղությամբ հյուսված են իրար։ Վարդյակից վեր ութանկյուն աստղ է, թևերին գեղեցիկ ծաղկաթերթեր։ Վարդյակը համանման, բայց ավելի խոշոր ծաղկաթերթերի բարձրաքանդակ շղթայով, ասես հաստ ցողունով, կապված է նիստի հիմքի ստորին մասի հետ, ուր նախշազարդ տակդիրն է գտնվում։ Խաչի մյուս երեք անկյուններին նայող նիստերի վրա իրարից տարբեր վարդյակների քանդակներ են. հյուսիս-արևելյան անկյունինը կլոր վարդյակի նրբահյուս բարձրաքանդակից վեր ունի ութթևանի աստղ, որի նախշերը տարբերվում են մյուսներից։ Այս վարդյակն ավելի շատ կանոնավոր ութանկյուն է՝ շրջափակված գեղեցիկ քանդականախշերով։



Նկ. 9ա. Գմբեթի նիստերի քանդակազարդերը։

Հյուսիս-արևմտյան անկյանը նայող նիստի զարդաքանդակ քառակուսիից վեր բոլորովին այլ պատկեր է՝ բարձրաքանդակ կիսագունդ (հավերժության նշանի նախշերով)՝ հյուսկեն քանդակազարդ շրջանակի մեջ։

Հիշյալ վարդյակների և հիմնապաստառի դեր կատարող զարդարուն քառանկյունիների համադրության մի կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ նրանք խորությամբ շարունակում են իրար, և





Նկ. 9բ։





Նկ. 14 ա

ցայտունորեն այնպիսի տպավորություն է ստացվում, թե վարդյակը՝ որպես մեկուսի ավարտված մի գեղեցիկ ստեղծագործություն՝ դրվել է քանդակազարդ քառանկյունու վրա։ Այս երկշերտ քանդականախշերը Խաչենի հուշարձաններում լայն տարածում ունեն։ XIII դարի երկրորդ կեսին ստեղծված Դադիվանքի երկու հայտնի խաչքարերի վրա արդեն առկա են երեք շերտի քանդականախշեր[1]։

Գմբեթի թմբուկի զարդաքանդակների շարքում հատուկ ուշադրության են արժանի ճակտոնապատերի տակ գտնվող եռանկյուն տիմպանները, որոնք բոլորն էլ, բացի երկուսից, ծածկված են իրար չկրկնող երկրաչափական ու բուսական հետաքրքիր նախշաքանդակներով և զարմացնում են իրենց մանրամասների արտակարգ մշակվածությամբ ու բարձր արվեստով։

Թմբուկը տաճարից բաժանող և առանձին դիտել տալու իր դերով աչքի է ընկնում նաև նրբաքանդակ գոտին, որ կազմված է վերից վար կախված վարսանդապտղային նախշերի գեղեցիկ հյուսքից։

Թմբուկի քանդակագործական հարդարանքի ամենաակնառու մասը, անշուշտ, կազմում են նիստերի վրա ու ճակտոններում տեղադրված պատկերաքանդակները։ Խաչի արևմտյան կենտրոնին հայող նիստերից վեր, ճակտոնապատի վրա Քրիստոսի բարձրաքանդակն է՝ մինչև գոտկատեղ, նուրբ քանդականախշերի ֆոնի վրա։ Նրանից ներքև, անմիջապես ճակտոնի քիվի տակ, բուսական բարձրաքանդակի մի փունջ կա։ Սրանից վար, երկարուն լուսամուտի շրջանակից վեր՝ Ադամի և Եվայի բարձրաքանդակներն են։ Այս քանդակախմբի լրացուցիչներն են աջ ու ձախ նիստերի որմնախորշերում դրված հովանավորների քանդակները։ Նրանք դրված են քանդակազարդ սյուների վրա և, ձեռքերը վեր պարզած, իրենց գլխներից վեր պահում են մի-մի տախտակ, որոնց վրա եկեղեցիների մանրակերտներն են, հյուսիսային նիստինը՝ գմբեթազարդ կլոր տաճար, հարավայինը՝ խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցի։

Երկու քանդակներն էլ տառացիորեն նման են իրար։ Երկար բեղերով ու ոչ այնքան երկար մորուքով տղամարդ է, փոքր-ինչ ուռուցիկ այտոսկրներով։ Գլխանոցը հավանաբար ծոծրակակալով է և խույրի պես իջնում է վար՝ երեք կողմից պաշտպանելով գլուխը։ Հագին պատմուճա՞ն է, թե՞ վերարկու՝ դժվար է որոշել, քանի որ քանդակը

---

[1] Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի հին մշակույթի մի էջ. «Սովետական արվեստ», 1971, № 8, էջ 48—49։

կտրվում է կոնքից ներքև[1]։ Սակայն պարզ է, որ հագուստը միապաղաղ, մարմնին կիպ կպած իջնում է վար։ Եթե արվեստագետը կոնկրետ մարդու է նկատի առել, որ անկասկած է, ապա երկու քանդակներն էլ ներկայացնում են նույն մարդուն, ամենայն հավանականությամբ՝ վանքի պատվիրատու Հասան-Ջալալին։ Դժվար է համաձայնել Ա. Լ. Յակոբսոնի հետ, որի կարծիքով՝ քանդակներից մեկը Հասան-Ջալալն է, մյուսը՝ նրա որդին. «Երկու կտիտորներից մեկը, հավանաբար, ինքը՝ Խաչենի տեր Հասան-Ջալալն է, Գանձասարի տաճարը կառուցողը։ Մյուս կտիտորն էլ, հնարավոր է, նրա որդին է՝ Վախտանգը, հիշված տաճարի շինարարական արձանագրության մեջ»[2]։

Ենթադրության պես ասված այս կարծիքը չի կարելի ընդունել, նախ, որովհետև տաճարի շինարարությանը վերաբերող միակ ու ընդարձակ արձանագրությունը միայն Հասան-Ջալալի անունից է, և այնտեղ որդու (Աթաբակ-Իվանեի և ոչ թե Վախտանգի) անուն չկա։ Խաչենի գերագահ տերն այնտեղ խոսում է նաև որպես միակ կառուցողը տաճարի։ Ճիշտ է, տրվում է նաև մոր անունը։ Սակայն, մի կողմից՝ ո՛չ որպես հովանավորի, ապա և, հավանական է, այդպիսին լինելու դեպքո՛ւմ իսկ չէր կարող քանդակվել տաճարի պատին։ Ըստ

[1] Ա. Լ. Յակոբսոնը գրում է, թե կտիտորները «նստած են արևելյան ձևով, ոտքները ծալած» (նշվ. աշխ., էջ 251)։ Իսկապես, քանդակների ոտքերը կտրված են ծնկներից վեր, սակայն շատ պարզ երևում է ոճավորված ծալապատիկ նստելու ձևը. պատմուճանը ծալծլված է ծնկներից վեր, և ծալքերն ուղղված են դեպի առաջ։

[2] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 151։ Այստեղ նա Հասան-Ջալալի որդուն կոչում է Վախտանգ, որ թյուրիմացություն է։ Հասան-Ջալալի միակ արու զավակի անունն էր Աթաբակ-Իվանե։ Նրա այս զույգ անունների մասին տե՛ս Մատենադարանի ձեռ. № 378, թ. 8բ—9ա։ Հասան-Ջալալի հիշատակարանում մի տեղ՝ «ես եւ ամուսին իմ Մամքան եւ տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեւելս հիւսիսոյ...», երկրորդում՝ «... պարգևէ [ա ծ] զխաղաղութիւն հոգւոյ և մարմնոյ և միոյ մանկանս իմ Իւանի...»։ Կրկնակ անունը գալիս է քեռու՝ վրաց-հայկական միացյալ թագավորության Աթաբակ Իվանեից։ Հասան-Ջալալի միակ արու զավակի լրիվ անունն ավանդված է միայն Գանձասարի գավթի շինարարական արձանագրության մեջ. «Թիւն:ՉԺ: է||կամաւն ամենակալին այ ես Ջալալ Դաւլայս՝ որդի Վախտանգա կողմնակալ Արցախայ եւ ամուսին իմ Մամքան՝ Թոռն Բաղուց||Թագաւորին եւ հարազատ որդին իմ Աթաբակ Իւան||է, յետ կատարման եկեղեցոյս, հիմնարկեցաք զժամատ||ունս...»։ Այս արձանագրությունը գտնվում է տաճարի արևմտյան պատի հարավային անկյունում, դրսից, «Իվանէ»-ն չեն նկատել նախորդ արտագրողները, իսկ Հ. Օրբելին կարդացել է. «եւ Աննա» (տե՛ս գրքիս հավելվածի արձ. № 3)։

երևույթին այն ժամանակ ընդունված չէր աշխարհիկ կնոջ պատկեր քանդակել կամ նկարել վանական շինություններում։ Մեզ անհայտ է նման որևէ դեպք։ Համենայն դեպս, ճիշտ նույն ժամանակ հարևան վերին Խաչենում Վախտանգ Հաթերքցու այրի Արզու-Խաթունը միայնակ կառուցեց Դադիվանքի գլխավոր տաճարը՝ կաթողիկեն (1214 թ., որ, երևի, հիմնադրության տարին է), սակայն շենքի արևելյան պատի հովանավորական քանդակը ներկայացնում է երկու տղամարդու դիմանկար՝ հավանաբար, Վախտանգի ու երկու տղաներից մեկի կամ էլ երկու տղաների՝ թուրքաց դեմ կռվելիս նահատակված Հասանի ու «կեսարեայ վախճանեալ» Գրիգորի, պատկերները։

Մենք համոզված ենք, որ Գանձասարի երկու՝ իրար հար և նըման կտիտորական քանդակները ներկայացնում են Հասան-Ջալալին։ Ընդունելով այս իրողությունը, կպարզենք նաև, թե այդ կտիտորների՝ վեր բռնած մանրակերտները ո՛ր եկեղեցիներին են վերաբերում, հարց, որ Ա. Լ. Յակոբսոնին իսկապես մտահոգում էր։ Հարավային մանրակերտը խաչաձև, կենտրոնագմբեթ տաճար է ներկայացնում,— դա կասկածից վեր է։ Կարելի է թվել նաև մանրամասներ, որոնք հիշեցնում են Գանձասարի տաճարը. օրինակ, տաճարի ճակատի կենտրոնի մեծ ու կողքերի մանր որմնակամարները (չնայած նմանությունը շատ չէ ընդգծված)։ Երկրորդ հովանավորի պահած մանրակերտը, կարծում ենք, ներկայացնում է Վաճառի եկեղեցին, որը նույնպես Հասան-Ջալալն է կառուցել 1229 թ.[1]։

Երկրորդ ենթադրությունն ընդունելով՝ մենք արդեն այս մանրակերտի հիման վրա կարող ենք մոտավորապես պատկերացնել այժմ գոյություն չունեցող Վաճառի եկեղեցու ճարտարապետական հորինվածքը։ Այն կենտրոնագմբեթ, կլոր շինություն է եղել՝ նման Անիում X—XI դարերում կառուցված կլոր ու կենտրոնագմբեթ եկեղեցիների կերպարին (Աբուղամրենց, Փրկչի, Հովվի եկեղեցիները և այլն)։

X—XIII դդ. հայկական ճարտարապետական հուշարձանների համար հովանավորական քանդակները կամ քանդակախմբերը (մեծ

[1] Հիշյալ եկեղեցու խորանի հյուսիսային պատին կառուցողն արձանագրել է. «Շնորհիւն այ ես Հասան՝ որդի [Վ]ախ[տանգա] եւ Խորիշահի, տէր Խաչենոյ շինեցի զեկեղեցիս... ի թուականս ՈՀԸ» (1229)։ Եկեղեցին նկարագրել է Մ. Բարխուտարյանցը (Արցախ, էջ 184—185)։ Սակայն չենք համարձակվում դրանից որևէ եզրակացություն հանել, որովհետև նույն եկեղեցին մեկ էլ կառուցել (թե՞ վերակառուցել) է Հասան-Ջալալի կին Մամքանը 1251 թվականին (տե՛ս Մամքանի արձանագրությունը՝ «Արցախ», էջ 154)։

մասամբ երկու հովանավոր միասին) սովորական երևույթ էին։ Հայտնի են Հաղբատի Ս. Նշան եկեղեցու արևելյան ճակատին Սմբատ և Կյուրիկե-Բագրատունիների բարձրաքանդակը՝ եկեղեցու մանրակերտի հետ (X դար), Անիի Ս. Գրիգոր զվարթնոցատիպ տաճարի վրա Գագիկ արքայի քանդակը (նույն դար), Սմբատ Տիեզերակալի և Կյուրիկե Ա-ի քանդակը Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու արևելյան պատին (դարձյալ X դար), Հառիճավանքի վրա Զաքարե և Իվանե Զաքարյանների, ինչպես նաև վերը նշված Դաղիվանքի կաթողիկեի հովանավորական քանդակները։ Սրանք բոլորն էլ ինչ-որ չափով հիշեցնում են իրար. զույգ պատկերաքանդակներ են և միշտ էլ կենտրոնում բռնած պահում են եկեղեցու մանրակերտը։ Ըստ որում՝ մանրակերտը մեկ դեպքում ցածր է պահվում, մյուսում՝ բարձր, սակայն ամեն պարագայի՝ այն հովանավորի ձեռքին է կամ նրա դիմաց և երբեք էլ իր գմբեթով չի բարձրանում նրա գլխից վեր։ Այդպիսին չէ, սակայն, Գանձասարի քանդակը։ Այն շահեկանորեն տարբերվում է նմանատիպ ստեղծագործություններից, նախ, լուծման ինքնուրույնությամբ. հովանավորն իրենից, իր գլխից վեր բարձրացրել է ամենակալին նվիրված իր կառույցի մանրակերտը։ Հովանավորի դիրքն այստեղ ոգեշունչ է ու վերացած, և այնպե՞ս համահնչուն է պատկերվող իրողությանը, այդ վսեմ նվիրումի հանդիսավոր պահի ոգուն։ Եվ թեպետ պատկերաքանդակի որոշ մանրամասներ սխեմատիկ են ու ոճավորման ենթարկված (չեն պահպանված, օրինակ, գլխի, ձեռքերի ու մարմնի կազմախոսական համաչափությունները), այն իր ընդհանրության մեջ պլաստիկ ցայտուն արտահայտչականություն ունի և դիտողի վրա թողնում է անջնջելի տպավորություն[1]։

[1] Ստ. Մնացականյանը վերջերս հրատարակած իր գրքում հովանավորական այս քանդակախմբի վրա հատուկ ուշադրություն է դարձրել գրելով. «Գանձասարի կոմպոզիցիայի հատկանշական կողմերից մեկը, երբ կտիտորը մոդելը պահել է իր գլխի վերևում, նույնպես եզակի երևույթ է։ Թվում է, թե այստեղ ավարտվում է մոդելների տեղադրման զարգացումը. սկսած VII դարից նրանք այնքան ավելի ու ավելի բարձր դիրք են գրավում ամբողջ հորինվածքում։ Այսպես, Աթենիում կտիտորը մոդելը պահում է առջևում, ներքև իջեցրած ձեռքերի վրա, գոտու մակարդակին։ Աղթամարում, Հաղբատում այն բարձրացել է մինչև կուրծքը, իսկ Գագկաշենում, թեև կտիտորի ձեռքերը մնում են նույն դրությամբ, բայց մոդելի վերին եզրը շատ ավելի բարձր է արքայի գլխից և ակնհայտ է նրա նշանակությունն առանձնակի շեշտելու ձգտումը։ Իսկ Գանձասարում արդեն մոդելն ամբողջությամբ վեր է բարձրացվել և տեղադրվել կտիտորի գլխավերևում» (Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX—XIV դարերում, Ե., 1976, էջ 121։

Այսպես թե այնպես, Գանձասարի կտիտորական զույգ քանդակներն իրենց նիստերի շքեղ ձևավորումով և կենտրոնում Քրիստոսի, Ադամի ու Եվայի, ապա նրանցից վար՝ լուսամուտի ժանեկազարդերի համադրությամբ ճարտարապետական-քանդակագործական առումով կազմում է մի նշանակալից երևույթ, որը «ոչ միայն ինքնատիպ է ու բացարձակապես ինքնուրույն, այլև բացառիկ է. նման ուրիշ ոչ մի հուշարձան չենք կարող ցույց տալ Հայաստանի հողի վրա»,— միանգամայն իրավացի կերպով գրել է Ա. Լ. Յակոբսոնը[1]։

Գմբեթի թմբուկի քանդակագործական հորինվածքը հովանավորների ու նրանց հետ առնչվող այս համադրվածքով չի սպառվում։ Խաչի հարավային թևին նայող նիստից աջ ու ձախ գտնվող նիստերի որմնախորշերում քանդակագործը տեղավորել է կանացի երկու պատկերաքանդակներ (դարձյալ դրված որմնասյուների վրա), որոնք ծունկածալ, ձեռքները վեր պարզած աղոթում են։ Նրանք մարմնով իրար դիմաց են, գլուխներին՝ լուսապսակ, երեսները դարձրած դեպի դուրս[2]։ Այս պատկերաքանդակներին, ուղղակի նրանց գլխավերևներում հովանի են անում մարդկային գլխով արծիվներ, որոնց հուշկապարիկ (сирин) է համարում Ա. Լ. Յակոբսոնը[3]։ Արծիվների մարդկային գլուխները ևս լուսապսակներ ունեն։ Երկու պատկերների միջև եղած նիստի ճակտոնում, անմիջապես ճակտոնապատի տակ, քանդակազարդ ֆոնի վրա Աստվածածինն է մանկան բարուրը հորիզոնական բռնած։ Այս բարձրաքանդակի մանրամասները հարթված են ու ընդհանրացված։ Ինչպես Ա. Լ. Յակոբսոնն է կարծում, քանդակագործը նկատի է առել դիտողի հեռավորությունը. նրան նայել հնարավոր է միայն հեռվից, որի պատճառով էլ քանդակագործը չի ընդգծել պատկերի մանրամասները։

Կանացի այս պատկերաքանդակները եզակի երևույթ են մեր միջնադարյան հուշարձաններում։ Ո՞ւմ է նկատի ունեցել քանդակագործը կանացի երկու պատկերների տակ։ Արդյոք այստեղ գործ ունենք սրբապատկերների՞ հետ, թե՞ շինարարության ժամանակակիցները հանձին այդ պատկերաքանդակների տեսել են իրական ու կոնկրետ անձնավորությունների։ Կարծում ենք՝ լուսապսակները, հատկապես

[1] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 151։

[2] Ստ. Մնացականյանը կտիտորական քանդակներ է համարում նաև այս երկու ֆիգուրները (տե՛ս Ստ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ. ՊԲՀ, 1970, № 3, էջ 200)։

[3] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 152։

արևելյան պատկերինը, որ առավել ընդգծված է, չեն կարող խանգարել, որպեսզի մենք այս պատկերաքանդակների մեջ տեսնենք վանքի հովանավոր-կառուցող Հասան-Ջալալի մերձավորագույն հարազատներին՝ մորն ու կնոջը։ Մայր Խորիշահը, ըստ Հասան-Ջալալի անունից քանդակված շինարարական մեծ արձանագրության «ի խփել լուսամտին արեւելից... կրոնաւորեալ շոգաւ յԵրուսաղէմ երրորդ անգամ եւ անդէն ի դրան Հարութեան խարազանազգեաց ճգնութեամբ բազմամեա ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսո վկայութեամբ եւ անդէն պահեցաւ» (հավելվածի № 1 արձանագրությունից)։

Այս տեղեկությունները հաստատվում են նաև Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, հատկապես Խորիշահի աճյունի վրա իջած սրբբազան լույսի մասին («Եւ անդէն մեռաւ, զոր աստուած փառաւորեաց զփառաւորիչն իւր. լոյս կամարաձև կապեալ ի վերայ գերեզմանին առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս»)[1]։

Եթե վախճանված Խորիշահի վրա սրբազան լույսը կամար է կապել, նշանակում է՝ նա սրբերի շարքն է անցել, և քանդակագործը պետք է ներկայացներ լուսապսակով։

Որ կարելի է ենթադրել, թե աջակողմյան պատկերաքանդակը Խորիշահինն է, ձախակողմյանը՝ Մամքանինը, դա երևում է նաև նրանց արտաքինից։ Մամքանը քանդակված է երիտասարդ, նույնիսկ մանկամարդ կնոջ դեմքով, առույգ ու ձիգ կեցվածքով։ Մինչդեռ Խորիշահի սխեմատիկ մարմնաձևերի մեջ իսկ չի կարելի չտեսնել տարիք առած կնոջը։ Այդ են արտահայտում վարի մասում լցված այտերը, հատկապես կախ ընկած ուսերը և փոքր-ինչ կորացած մեջքը։ Քանդակագործը կարողացել է մի քանի զուսպ մանրամասներով հասնել շեշտված արտահայտչականության[2]։

Ինչ վերաբերում է Մամքանի ու Խորիշահի գլխավերևներում քանդակված պատկերներին, որոնք ներկայացնում են մեկական թևաբաց արծիվ՝ մարդկային գլխով և ցայտուն լուսապսակով, ապա սրանք էլ անկասկած, հրեշտակներ են՝ առնված աստվածաշնչյան թեմաներից և չեն կարող լինել բվահավիկներ, կամ հուշկապարիկներ, ինչպես կարծում է Ա. Լ. Յակոբսոնը[1]։

Նկատի առնելով գմբեթի այս հատվածի հորինվածքը, կարելի է մտածել, որ Խորիշահն ու Մամքանը հրեշտակներին են դիմում, որպեսզի նրանք բարեխոս լինեն իրենց ու Աստվածամոր միջև, որը գտնվում է այս չորս պատկերաքանդակներից վեր, հորինվածքի կենտրոնական մասում՝ նստած դիրքով, Քրիստոսի բարուրը հորիզոնական բռնած։

Արևելյան լուսամուտի զույգ կողքի նիստերի խորշերի վերնամասերում դրված են եղան ու կովի գլուխների քանդակներ։ Հյուսիսային լուսամուտի կողքերին նույն տեղերն զբաղեցնում են թևատարած արծիվները։

Հարկ է ուշադրություն դարձնել, որ թմբուկի քանդակագործական հարդարանքի մանրամասները յուրահատուկ դասավորություն ունեն. խաչաձև տաճարի խաչի յուրաքանչյուր թևի վրա գմբեթի նիստերն ունի լուսամուտ, որի աջ ու ձախ կողմերին զույգ քանդակներ են՝ կոմպոզիցիոն մի ամբողջությամբ. արևմտյան թևի վրա՝ կտիտորները (այս էր տաճարի միակ մուտքի ճակատը), հարավայինի վրա՝ աղոթող կանայք, արևելյանի վրա՝ եղան գլուխներ, հյուսիսայինի վրա՝ թևատարած արծիվներ։

Պարզ երևում է, որ քանդակագործն ու ճարտարապետը բոլոր այս չորս զույգերն էլ առանձին-առանձին սյուժետային-կոմպոզիցիոն ամբողջություններ են դարձրել։ Հովանավորներին, ինչպես տեսանք, իրար էր միացնում Քրիստոսի բարձրաքանդակը՝ Ադամի ու Եվայի հետ միասին։ Հրեշտակներն ու առաքյալները սերտորեն կապված են Աստվածածնի կերպարին։ Այդպես էլ մյուսները... Իսկ բոլորը մեկտեղ ստեղծում են գմբեթի ճարտարապետական-քանդակագործական մի այնպիսի ամբողջություն, որի առանձին հատվածները, ճիշտ է, կարող էին դիտվել նաև անջատ-անջատ, սակայն ամենից առաջ նրանք միասնական ամբողջի հատվածներն են հանդիսանում։

Տաճարն սկզբից ևեթ կառուցվել է առանց գավթի։ Այստեղից էլ՝

---

[1] Կիրակոս, էջ 268։

[2] Ստ. Մնացականյանը կարծում է, որ Խորիշահն ու Մամքանը քանդակված են որպես հովանավորներ, որոնք հանդես են գալիս հավասար իրավունքներով, և դա էլ հաստատված է տաճարի շինարարական արձանագրությամբ (Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 122)։ Սակայն արձանագրությունը գրված է միայն Հասան-Ջալալի անունից, և միայն նա է հանդես գալիս հովանավորի դերով։ Ճիշտ է, նա հիշում է, թե հայրը վախճանվելիս իրեն՝ Ջալալին ու մորը՝ Խորիշահին, կտակել է իրենց տոհմական տապանատանը եկեղեցի կառուցել։ Սակայն կառուցող-ավարտողն ինքն է՝ Խաչենի գահերեց տերը։ Արձանագրության մեջ երկրորդական տեղ ունի նաև Մամքանը՝ Հասան-Ջալալի եղբայրների ու մյուս հարազատների շարքում։

---

[1] Թվում է՝ հիմք չկա գմբեթի ավետարանային մոտիվների մեջ հուշկապարիկ տեսնելու, քանի որ վերջինս հեթանոսական հավատալիքների մարզին է վերաբերում։

այն ցայտուն և միաժամանակ կազմակերպող նշանակությունը, որ ստացել էր հովանավորական կոմպոզիցիան՝ դրված լինելով գլխավոր ճակատին՝ անմիջապես շքադռան բացվածքից վեր։

Ա. Լ. Յակոբսոնն ու Ստ. Մնացականյանը գմբեթի ներսի և դրսի նիստերի վրա քանդակված եղների գլուխներն ու թևատարած արծիվները համարում են միջնադարյան ճարտարապետական կառույցներում լայն տարածում ունեցած պահպանիչ խորհրդանշանների կերպարներ[1]։ Ստ. Մնացականյանը միաժամանակ դիտել է Գանձասարի ու Սանահնի վանքերի մի քանի քանդակների նշանակալից նմանությունը՝ փորձելով այն բացատրել ինչ-որ հավատալիքով։ Ահա թե նա ինչ է գրում այդ առթիվ. «Այստեղ (Սանահնի Աստվածածին եկեղեցում.— Բ. Ու.), եկեղեցու ներսում, գմբեթատակ չորս տրոմպներից ցած տեղավորված են մարդու, խոյի և երկու եղների գլուխներ ներկայացնող բավականին ուժեղ ելուստ ունեցող, համարյա թե կլոր քանդակներ։ Ուշագրավ է, որ քանդակների ճիշտ նույն խումբը (մարդ, խոյ և երկու եղներ), այս անգամ արդեն գմբեթատակ առագաստների վրա, հանդես է գալիս նաև... Գանձասարի տաճարում։ Այստեղ հյուսիս-արևմտյան առագաստի վրա պատկերված է մարդու դիմաքանդակ, հարավ-արևմտյան առագաստի վրա՝ խոյի գլուխ, իսկ հարավ-արևմտյան և հյուսիս-արևելյան առագաստների վրա՝ եղների գլուխներ։ Հետաքրքիր է, որ քանդակներն ունեն ճիշտ և ճիշտ նույն դասավորությունը, ինչ Սանահնի Աստվածածին եկեղեցում, հանգամանք, որը հաղիվ թե պատահական լիներ և անշուշտ կապված է ինչ-որ, դեռևս մեզ լրիվ ոչ հասկանալի ավանդույթի հետ»[2]։

Դժբախտաբար, Գանձասարի վանքի նշված բարձրաքանդակները մեզ են հասել խիստ քայքայված վիճակով։ Անհամեմատ շատ է քայքայված այն բարձրաքանդակը, որ պետք է ներկայացներ մարդու գլուխ։ Գմբեթատակի առագաստի վրա, համեմատաբար տանելի վի-

[1] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 146, 152, Ստ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, էջ 191—192, 200—201։

[2] Ստ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները, էջ 191—192։ Սանահնի վանքի այս քանդակները նկարագրել է նաև Հ. Խալփախչյանն իր շատ ուշագրավ աշխատության մեջ (տե՛ս О. Х. Халпахчьян, Санаин, էջ 24 և հետ.), առանց, սակայն, բացատրելու նրանց դերն ու գաղափարական բովանդակությունը։ Նա այն քանդակների մեջ տեսնում է «կենդանիների (ոլորուն եղջյուրներով ոչխարի, գոմշի ու եղան) և մարդու» գլուխներ (անդ, էջ 24)։

ճակում պահպանված են եղան ու առյուծի գլուխները։ Արծիվը դեռևս ընկալվում է, իսկ մարդու գլխի տեղ առկա է միայն հողմահարված քարի մի երկարավուն ուռուցիկ շերտ։

Սակայն, կարծում ենք, սրանք հարցի էությունը պարզելու համար երկրորդական նշանակություն ունեն։ Կարևորն այն է, որ նշված բարձրաքանդակների շորս թիվը և, մանավանդ, բնորդները (մարդ, առյուծ, արծիվ ու եզ) կապված են հին այնպիսի հավատալիքների ու ավանդույթների հետ, որոնք հայտնի են բանասիրությանն ու փիլիսոփայության պատմությանը և դիտվում են որպես աշխարհի նյութականության վերաբերյալ հին աշխարհի փիլիսոփաների կոնկրետ պատկերացումներ։ Դեռևս հույն փիլիսոփա Էմպեդովկլեսը (մ. թ. ա. 490—430 թթ.), ապա ավելի հանգամանորեն Արիստոտելը (մ. թ. ա. 384—322 թթ.) գտնում էին, որ բնության զարգացումը կատարվում է շորս տարրերի՝ հողի, ջրի, հրի և օդի փոխներգործությամբ։ Այս պատկերացումն է ընկած նաև վաղ միջնադարյան հայ փիլիսոփաների (Եզնիկ Կողբացի, Անանիա Շիրակացի և այլք) աշխարհըմբռնման հիմքում։ Շիրակացին, օրինակ, օտար և հայրենի նախորդների օրինակով կարծում էր, որ աշխարհի հիմքը շորս տարրերն են։ Նա գրել է. «Առաջինն՝ հուր, երկրորդն՝ հողմ, երրորդն՝ հող, չորրորդն՝ ջուր... Այլ երկինք և երկիր և որ միջոցիս են հաստատութիւնք ամենայն, որ ի նոսա, յայս նիւթոց կազմեցան...»[1]։

Շորս տարրերի մասին եղած այս պատկերացումը մտել է մարդկային մշակույթի շատ բնագավառներ, հիմք դարձել արվեստի շատ ու շատ սկզբունքների համար։ Այն իր հիմնավոր տեղն ունի նաև հայ մշակույթի մեջ՝ սկսած հնագույն ժամանակներից։ Աս. Մնացականյանը հայկական զարդարվեստին նվիրված իր հմտալից աշխատության մեջ, ապա և վերջերս հրապարակած մի ուշագրավ հոդվածում հանգամանորեն ցույց է տվել, որ բազմաթիվ ժողովուրդների զարդարվեստի մեջ, իսկ Հայաստանի տարածքում՝ սկսած հենց վաղնջական ժամանակներից, շորս տարրերի հետ կապված պատկերացումները հետաքրքիր շատ դրսևորումներ են ունեցել։[2] Այդ դրսևորումներից, հիրավի, ամենակարևորը քառաթև խաչն է։ Նույն պատկերացման շատ ցայտուն դրսևորումն է նաև երկնային կառքը՝ շորս լծկաններով, որոնք

[1] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տօմար, Երևան, 1940, էջ 3—4։

[2] Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 141—208, հատկապես 185—204։ Նույնի՝ Անիի բանաստեղծ Վարդան Անեցին և նրա Ներբողը. «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 266—275։

սովորաբար լինում են՝ մարդ, առյուծ, եզ և արծիվ։ Հասկանալի է, որ հին մարդիկ այս ընտրության մեջ ևս կոնկրետ իմաստ ու բովանդակություն են դրել։ «Ինչպիսի՞ առավել վեհ կերպարներ կարող էին փոխառնել բնությունից մարդիկ, որոնք փորձում էին գտնել բարձրագույն էակի իմաստության, ուժի և ամենագոյության մասին իրենց պատկերացումների մարմնավորումը։ Ի՞նչը կարող էր ավելի լավ անձնավորել խելքն ու գիտելիքները, քան մարդու գլուխը, ուժը՝ քան առյուծի մարմինը, ամենագոյությունը՝ քան թռչունի թևերը»[1]։ Ավելացնենք. և ի՞նչը կարող էր ավելի լավ մարմնավորել աշխատանքը, կենսական բարիքի ստեղծման գործին բերած անխոնջ մասնակցությունը, քան եզը։ Իսկ եզան փոխարեն եթե երբեմն էլ հանդես է գալիս ցուլի պատկերը, ապա չի կարելի մոռանալ, որ «Ցուլի հեթանոսական պաշտամունքը ոչ միայն ուժի և աշխատանքի, այլև սիրո և բեղմնավորության (հետևաբար՝ դարձյալ կյանքի հարատևության ապահովման.— Բ. Ու.) երևույթների պաշտամունքն էր»[2]։

Քրիստոնեական եկեղեցին այս չորս տարերքի ուժերով ընթացող երկնային կառքի վրա բազմած ներկայացնում էր Քրիստոսին։ Քրիստոսն էր հզոր կառավարը, որն, իբր, սանձել է տարերքը և իշխում է հավերժության վրա։ «Այլ նա աւասիկ իբրև զկառս իմն լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք՝ ի ջերմութենէ, ի ցրտութենէ, ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և զօրութիւն իմն ծածուկ կառաւար, որ զչորս կարգեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուաճէր...»[3]։

Եվ քանի որ կառավարը «զօրութիւն իմն ծածուկ» է, խորհրդավոր ու անտեսանելի մի ուժ, ապա չպետք է համարել պատահական, երբ զարդարվեստի բազմաթիվ ստեղծագործություններում երկնային կառքը շատ հաճախ ներկայացվում է միայն նրա, այսպես կոչված, լծկանների (մարդ, եզ, առյուծ, արծիվ) պատկերներով։ Լինում է և այնպես, որ լծկանների այս դերաբաշխման մեջ փոփոխություններ են կատարվում. հիշյալ հնավանդ պատկերի ամբողջականությունը

[1] Կ. Կերամ, Աստվածներ, դամբարաններ, գիտնականներ, Երևան, 1966, էջ 290։ Հմմտ. Ա.ս. Մնացականյան, Անիի բանաստեղծ Վարդան Անեցին, էջ 269։

[2] Ա.ս. Մնացականյան, նշված հոդվածը, էջ 273։

[3] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 13։ Հմմտ. Ա.ս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 196։

Եզնիկ Կողբացու թվարկած չորս տարրերից ջերմությունը հուրն է, ցրտությունը՝ օդը, ցամաքությունը՝ հողը, խոնավությունը՝ ջուրը։

խաչխտվում է, և նրա փոխարեն հանդես են գալիս՝ մարդ, երկու եզ, մեկ արծիվ, կամ՝ երկու եզ, երկու արծիվ, նաև՝ երկու արծիվ, երկու առյուծ, կամ՝ մեկ եզ, մեկ առյուծ, երկու արծիվ։ Պարսկական մի հին հուշարձանում («Խոսրով Փարվեզի ժամացույցը») երկնային կառքին լծված են միայն չորս եզներ, որոնք տանում են Լուսնի աստվածությանը[1]։ Կիլիկյան Հայտնի Ավետարանի արծաթե կազմի վրա երկնային կառքին լծված են՝ մարդ, խոյ, արծիվ ու առյուծ, և կառավարն է Քրիստոսը[2]։ Իսկ Սևանի Առաքելոց վանքի դռան վրա քանդակված երկնային կառքի լծկաններն են՝ արծիվ, մարդ, առյուծ և եզ[3]։ Վերջինս երկնային կառքի ցայտուն պատկերն է և ցույց է տալիս, թե ինչպես լծկանները կառքում Քրիստոսին տանում են հավերժության ճամփաներով։

Նման օրինակներ կարելի է շատ բերել։ Նրանք առկա են ինչպես ճարտարվեստի հուշարձաններում, այնպես էլ, և առավել ևս, մանրանկարչության մեջ, զարդարվեստի մյուս բնագավառներում։ Դժվար է ասել, թե այս բնագավառներից որի՞ն է պատկանում առաջնության պատիվը։ Կարևորն այն է, որ ժողովրդի գեղարվեստական մտածողության մեջ չորս կենդանակերպարներն ունեն իրենց կոնկրետ դերերը, և դրանք անպայման զուգորդվում են բնության չորս տարերքի ու այս հիմքի վրա ստեղծված մյուս պատկերային երևույթի՝ երկնային կառքի հետ։

Անհրաժեշտ է վերստին հիշել, որ երկնային կառքի տեսարանում (նրա չորս կենդանապատկերներում), ինչպես վերը տեսանք, կարևորը ոչ թե կենդանիների հաստատուն դերաբաշխումն է, այլ քառյակը։ Հավանական է, հուշարձանի ստեղծողից, կոնկրետ միջավայրից ու պայմաններից էր կախված լինում, թե չորս թիվն ինչո՞վ կարող էր լրացվել։ Եվ զարմանալի չէ, որ Սանահնի ու Գանձասարի շինարարները նախապատվություն են տվել «մարդ, եզ, առյուծ ու արծիվ» համադրությանը։ Նրանք այդ լծկաններով են պատկերացրել երկնային կառքը տաճարի գմբեթի ներսում («և զօրութիւն իմն ծածուկ կառաւար»)՝ անկասկած, իբրև իրենց երկրագործական կենցաղի և նրա հետ առնչվող ուժի ու հզորության կոնկրետ դրսևորում։

Գանձասարի ճարտարապետը թմբուկի դրսի մասում, արևելյան ու հյուսիսային նիստերի վրա լծկանների շարքում նորից փոփոխու-

[1] Տե՛ս Ա.ս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 196—197։

[2] Декоративное искусство средневековой Армении, М., 1971, рис. 156.

[3] Անդ, լուսանկար № 166։

թյուն է մտցրել. դարձրել է երկու եզ, երկու արծիվ, զույգ դեպքերում էլ՝ բավական ոճավորած։ Նշանակում է՝ ամեն պարագայի չորս թիվն է կարևորը. լծկանները չորսն են, գմբեթի թմբուկը բաժանված է չորս մասի, և յուրաքանչյուր մասն էլ չորս նիստ ունի։

Մեզ թվում է՝ Գանձասարի վանքի հիշյալ քանդակների այս բացատրությունը միանգամայն ընդունելի կարող է լինել նաև համանման մյուս դեպքերի համար։ Օրինակ, Խաթրավանքում՝ Դոփյան իշխանական տան հոգևոր կենտրոնում, տաճարի կտուրն իրենց վրա պահող չորս սյուների խարիսխներին, հայացքով դեպի մուտքը, ելուստաձև քանդակներ կան, որոնցից երկուսը խոյերի գլուխներ են, երկուսը՝ եղների։ Հայտնի են նման քանդակներ Գեղարդից, Մակարավանքից, Խորանաշատից ու Մշկավանքից[1]։

Երկնային կառքի կրոնական պատկերացումի հետ առնչվող այս քանդակներով չի սպառվում Գանձասարի քանդակագործական հարդարանքը։ Ասվել է, որ արծիվներ կան գավթի շքադռան վերնամասում և տաճարի ճակատի խաչի թևերի վրա, հովազներ՝ գավթի հյուսիսային դռան վերևի երկու կողմերում։ Կարծում ենք, որ սրանք «օժտված» են պահպանիչ զորությամբ։ Մանավանդ, որ, ըստ էության, պահպանիչները պետք է հսկեին մուտքերի վրա, և նրանք իրենց վերապահված հենց այդ տեղերում էլ գտնվում են[2]։

ԳԱՎԻԹԸ

Գանձասարի վանքի գավիթը, ինչպես արդեն նշվեց, կառուցվել է տաճարից ավելի քան երկու տասնամյակ հետո։ Նրա ներսի չափերն են՝ 11,85×13,45 մ.։ Ճարտարապետը ջանացել է այս կառույցին տալ այնպիսի ձևեր, որոնք չնսեմանային բուն հուշարձանի անգերազանցելի ճարտարապետական ու քանդակագործական արժանիքների կողքին։ Երկու զույգ խաչվող կամարներ իրենց վրա պահում են կենտրոնում ստալակտիտե ծածկը, որի վրա բարձրանում է ութանիստ թեթև մի ռոտոնդա-զանգակատուն։

Այս գավիթը ևս ներկայանում է որպես հայկական համանման

[1] Ա. Լ. Յակոբսոն, նշված աշխ., էջ 146։

[2] Տաճարի հարավային պատի դրսի ճակատի խաչի վրա, նրա վերին թևի աբակային (թակաղաղ) քանդակված է կաքավ՝ դուրս պարզած գլխով։ Ամենայն հավանականությամբ, քանդակագործն այստեղ ստեղծել է հուշարձանի հարդարանքի մի ինքնատիպ մանրամաս ևս՝ օգտվելով շրջապատի բնության ընձեռած անսահման հընարավորություններից։

կառույցների մեջ լավագույններից մեկը։ Բավական է հիշել, որ նրանում արտահայտություն է գտել հայ միջնադարյան ժամատնային շինարարության կարևորագույն նվաճումը՝ խաչվող կամարներով հյուսված ծածկ-թաղը, որն այստեղ բավականին մշակված ձև ունի։

Ստ. Մնացականյանն իրավացի է, երբ գտնում է, որ գավիթների և առհասարակ շենքերի՝ խաչվող կամարներով ծածկը հայկական կառուցողական արվեստի XI—XIII դարերի խոշոր նվաճումն է, որը հնարավորության տվեց գավթի կենտրոնն ազատել տարածությունը խաթարող սյուներից, սյուները տանել դեպի պատերը, նվաճել մեծ տարածություն և հզոր կամարների վրա հյուսել բարձրաթռիչք ու եթերային առաստաղ։ Այս պայմաններում արդեն «ներքին տարածությունը հիացնում է միասնությամբ ու ամբողջությամբ, այն լի է օդով ու լույսով և շլացնում է հզոր կամարների՝ թեթևորեն դեպի վեր խոյացող խիզախ գծերով»[1]։

Ճարտարապետական այս լուծումների փայլուն օրինակներն են Հաղբատավանքի մեծ գավիթը (XIII դ. առաջին տասնամյակ), Հոռոմայրի փոքրիկ գավիթը, Մշկավանքի գավիթը, Հաղբատի ու Հաղարծնի սեղանատները։

Գանձասարի գավիթը, ծածկելով տաճարի արևմտյան շքեղ ճակատը, միաժամանակ դարձել է նրա գեղեցիկ լրացումը, ինչպես նաև՝ ինքն արդեն ունի այնպիսի ակնհայտ արժանիքներ, առանց որոնց Գանձասարի վանքը, անկասկած, պետք է համարվեր պակասավոր։

XIII դարում կառուցված գավիթները հայ ճարտարապետական մշակույթի ամենափառահեղ պոռթկումներից են հատկապես իրենց ներքին խիզախ ձևերի շնորհիվ։ Իսկ այս ձևերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում խաչվող կամար-թռիչքների վրա նստած կտուրը, որի լավագույն օրինակն էր Հաղբատի մեծ գավիթը՝ կառուցված Հովհաննես Խաչենեցի եպիսկոպոսի կողմից 1206—1210 թթ.[2], որն իր հետագա կիրառումը գտավ Մշկավանքի, Խորակերտի, Արատեսի, Անիի Առաքելոց եկեղեցու, Գանձասարի գավիթներում և Հաղբատի ու Հա-

[1] Ст. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 79:

[2] Սխալվում են այն գիտնականները, որոնք Հովհաննես Խաչենեցու՝ Հաղբատի առաջնորդության գլուխ անցնելու տարի են համարում 1208 կամ 1209 թվականը։ Հովհաննեսը Հաղբատի վանահայրն էր 1206-ից, Լոռեի հայտնի ժողովից (1205 թ.) անմիջապես հետո։ Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դդ., Ե., 1975, էջ 254—256։

գարծնի սեղանատներում։ Հաղբատի, Գանձասարի ու Մշկավանքի գավիթներն ունեն առավել ընդգծված ընդհանրություն այն տեսակետից, որ երեքի մեջ էլ խաչվող կամարների արևմտյան թևերն իջնում են ոչ թե արևմտյան պատի կամ պատկից սյուների վրա, ինչպես ընդունված էր սովորաբար, այլ հիմք ունեն երկու ինքնուրույն սյուներ, որոնք կանգնած են պատից որոշակի հեռավորության վրա, Հաղբատում՝ երեք մետր, Գանձասարում՝ մոտավորապես նույնչափ։ Արևմտյան պատի և այդ նույն սյուների միջև գոյացել է երկայն մի տարածություն՝ չորս հիմքերի վրա բարձրացած համեմատաբար փոքր կամարներով։ Այս տարածությունը քիչ է լուսավորված, քանի որ գրմբեթի անցքից ընկնող լույսն այստեղ է հասնում աղջամուղջի նման։ Ամենալուսավոր ժամերին իսկ այստեղ տիրական է լինում խորհրդավոր մի կիսախավար, որը և դառնում է յուրատեսակ միջնորմ դրսի ու գավթի՝ հանդիսավոր կերպով լուսավորված տարածության միջև։ Տաճարից դուրս գալիս այդ կիսախավարն ավելի է խորացնում արևմտյան պատի ու սյուների միջև եղած տարածությունը և այնպես է թվում, թե գավիթն արևմտյան մասում շատ է երկար։ Մի խոսքով՝ սյուները, որոնք հիմնականում իրենց վրա պահում են կամարների ու ծածկի ծանրությունը, դրված լինելով գավթի ներսում՝ բոլորովին էլ չեն աղճատում գավթի օգտակար տարածությունը, այլ նրան տալիս են ավելի ակնապարար տպավորություն։

Հայտնի է, որ գավիթները կամ ժամատները, կառուցված լինելով եկեղեցիներին կից, ունեցել են կիսաեկեղեցական-կիսաաշխարհիկ նշանակություն, որովհետև հիմնականում ծառայել են որպես եկեղեցու հովանավոր իշխանների տոհմական տապանատուն, ինչպես նաև աշխարհիկ ու հոգևոր ժողովների հավաքատեղի։ Այս պարագան էլ պայմանավորել է նրա ճարտարապետական ձևերի ու դեկորատիվ հարդարանքի համեստությունը։ Սակայն Գանձասարում շատ կողմերով խախտված է նաև այս ավանդույթը։ Ճարտարապետն ըստ հնարավորին գավթի ներսը հարստացրել է ակնախտիտ լուծումներով, որի շնորհիվ էլ տաճարը դիտողին ոչ մի չափով չի թվում, թե գավթի կառուցողը խնայել է որևէ բան։ Ի՞նչ արժե թեկուզ ծածկի ստալակտիտը (քանդակ-շթաքար), որով հարդարված է ծածկի կենտրոնի երդիկի կլոր անցքի շուրջը՝ կամարների խաչումից ստացված քառակուսի տարածությունը։ Վերևից ընկնող լույսի շարժումներից ադամանդի գունախաղեր են առաջանում ստալակտիտի «բյուրեղներում», այդ խաղերը թույլ արձագանք են տալիս կամարների խաչումից ըստեղծված մյուս հատվածներում և գավթի անկյուններում։ Մանավանդ, որ ճարտարապետն ստալակտիտի փոքրիկ հատվածներ է դրել գավթի արևմտյան պատի ու սյուների միջև ընկած տարածության, առաստաղի տարբեր հատվածներում, ինչպես և պատկից սյուներից վեր կամարների տակդիրների վրա և լույսի ու ստվերի հետաքրքիր համադրություններ ստեղծող քանդակներով է զարդարել սյուներն ու պատկից կիսասյուները, նրանց խարիսխներն ու խոյակները, որմնախորշերի կամարներն ու պատերի անկյունները։

Գավթի արևմտյան պատի մոտ կանգնած երկու սյուները 16 նիստանի են՝ զարդարված բուսական ու երկրաչափական նախշաքանդակներով։ Ներքևում սյունը գոտևորում է խաղողի ողկույզների մի ամբողջ շրջան։ Խոյակները և հատկապես կամարների տակդիրները զարդարված են զանազան քանդակներով։ Կամարների հիմքերում գեղեցիկ խաչեր են քանդակված, որոնք, հավանաբար, հետագայի գործեր են՝ կապված նվիրատվությունների հետ։

Պետք է նկատել, որ գավթի ճարտարապետը, անկասկած, նույն ինքը՝ տաճարի հեղինակը, կամ նրա ավանդները հարգող մեկը, այստեղ ևս պահպանել է տաճարի սյուների ու կիսասյուների եռաստիճան փնջաձևերը, ինչպես նաև 16 նիստերի համադրությունը։

Հասկանալի է, որ գավթից տաճար տանող դուռը, կառուցապատված-ձևավորված է եղել տաճարի հետ միասին։ Այն հասարակ շքադուռ է համարված Ա. Լ. Յակոբսոնի կողմից[1]։ Սակայն հասարակն այն ածականը չէ, որով կարելի էր բնութագրել տաճարին իսկապես արժանի, բարձրաճաշակ քանդակների հարդարանքով փայլող շքադուռը։ Իրավացի չէ հարգելի գիտնականը, երբ դռան ճակատամասի (կամարատակի տարածության-տիմպանի) քանդակազարդվածները համարում է աստղեր՝ ռոմբաձև սրունքներով[2]։ Իրականում ճակատամասը զարդազարդված է հավասարակողմ ութանկյուն նախշերով, որոնց մեջ քանդակված են քառաթև խաչեր։ Խաչերի թևերը համադրված են հարևան զարդագների ներսում եղած խաչերի թևերի հետ և, այսպիսով, ստեղծվել է թևավոր խաչերի մի ամբողջ երամ։ Դռան կամարը զարդարված է հյուսկեն նախշերով, մի ոճ, որ բնորոշ է XIII դարի մեր շատ կառույցներին (Հաղբատի մեծ գավթի դուռը, Գեղարդավանքի գլխավոր եկեղեցու հարավային շքամուտքը և այլն)։

---

[1] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 155։

[2] Նույն տեղում։

Մուտքը, կամարի հետ միասին, վերևից առնված է քառակուսի մի ելուստի մեջ, որի կողքերին քանդակված են մանր ու գեղեցիկ խաչեր (ամենայն հավանականությամբ սրանք ևս հետագայի գործեր են)։

Շքամուտքի երկու կողմերից, նրա եզրերի հետ ստեղծված կուռ համադրությամբ, բարձրանում են հաստահեղույս քանդակազարդ երկու որմնասյուներ (դրսից երեքական կիսասյուների փնջերով), որոնք իրենց վրա պահում են բարձրաթռիչք կամարների արևելյան թևերը։

Հետագայում տաճարին ավելացված գավիթը, ինչպես վերը տեսանք, դիտողի աչքից ծածկել է տաճարի շքամուտքը, խճողել արևմտյան ճակատի մեծ խաչաքանդակի ամբողջականությունը։ Եվ այս կորուստը մասամբ հատուցելու համար գավթի շինարարը տաճարի մուտքից վեր, գավթի բարձրաթռիչք կամարների միջոցով արևելյան մասում գոյացած հատվածի կենտրոնում դրել է հիշյալ խաչաքանդակի կրկնակը՝ առանց խաչելության տեսարանի։ Ուշագրավ է, որ այս խաչաքանդակը բնագրի կրկնությունն է ոչ միայն չափսերով, այլև քանդակազարդերով։

Գավթի ծածկը քառաթեք է՝ հյուսված իրար ագուցվող քարե աղյուսներով։ Դրանք, անկասկած, արդյունք են հետագա նորոգումների, որոնց մասին խոսք է լինելու իր տեղում։ Իսկ ծածկանյութի նախնական վիճակի մասին այժմ դժվար է կոնկրետ խոսք ասել։

Գավթի կտուրի կենտրոնում կանգնած է ութանիստ մի զանգակատուն, որի ներքո կլոր լուսանցք է՝ բացված ներսի կողմից ստալակտիտազարդ տարածության կենտրոնի վրա։

Ստ. Մնացականյանի կարծիքով՝ այս զանգակատունը հետագայի կառուցվածք է։ Ճիշտ է, նա չի ասում, թե ե՞րբ է կառուցվել, այլ՝ կառուցվել է հետագայում[1]։ Սակայն չի կարելի այդ կարծիքը չընդունել՝ նկատի առնելով զանգակատան անշուք հարդարանքն ու ճարտարապետական միջակ մակարդակը, որոնք միանգամայն անհարիր են հուշարձանի փառահեղ կերպարին։

Զանգակատուն-ռոտոնդայի հարավային սյան խոյակի վրա քանդակված է «1907 թ. ԱԳ»։

Պետք է ենթադրել, որ սա էլ հենց զանգակատունը կանգնեցնողի արձանագրությունն է՝ թվականով և կանգնեցնողի (թերևս՝ վարպետի) անուն-ազգանվան սկզբնատառերով։ Ուրեմն, զանգակատունը կառուցվել է 1907 թ., այն նորոգման ժամանակ, որը Հ. Օրբելին կոչել է բարբարոսական[1]։

Իսկ առաջներում ի՞նչ է եղել այս զանգակատան տեղում, կառուցողը կամ վերակառուցողը ի՞նչ է փոխել ու ի՞նչ է թողել նրանից։ Այս հարցին պատասխանել կարելի է ենթադրաբար, քանի որ հին ռոտոնդայից պահպանվել են միայն առանձին բեկորներ, որոնք և հնարավորություն են տալիս մոտավոր պատկերացում կազմելու ամբողջի բարձր արժանիքների մասին։

Ռոտոնդայի սյուներն ու կամարները, այսինքն՝ բոլոր մշակված մասերը, կառուցված են շուտ քայքայվող շեչաքարով, որը, հավանորեն, բերվել է Դադիվանքի մոտերքից։ Հին Խաչենի այս վայրում է միայն, որ շեչաքար կա և առատորեն օգտագործվել է իբրև շինանյութ։ Նույնիսկ Արղու-խաթունի կառուցած կաթողիկե տաճարը կանգնեցվել է հիմնականում այդ քարով։ Իսկ Գանձասարի զանգակատան մի այլ, թերևս ավելի գեղեցիկ օրինակը առկա է Դադիվանքում. այն կանգնած է վանական համալիրի արևմտյան եզրին՝ իբրև վանքի երկու փառահեղ խաչքարերն իր մեջ առնող մատուռի գեղարվեստական պսակը[2]։ Ճիշտ է, այստեղ այն չորս սյուն ունի՝ Գանձասարի ռոտոնդայի ութ սյան փոխարեն։ Սակայն ճարտարապետական մյուս մանրամասներով նրանք իրար նման են և կարելի է ենթադրել, թե Գանձասարի նորոգող-վերակառուցողը Դադիվանքի զանգակատունն է ընդօրինակել։

Ռոտոնդայի ծածկի սալերը Գանձասարի քարից են՝ գեղեցիկ և դիմացկուն։ Նույն քարից է նաև սյուներից մեկի խոյակը՝ ստալակտիտով զարդարած, որ ոչ մի կերպ չի խոսում անարվեստ մշակում ունեցող մյուս խոյակների հետ։

Ռոտոնդայի տակ, նրա արևելյան մասում, երկու քարից բաղկա-

[1] Ст. Мнацаканян, Архитектура армянских притворов, стр. 133.

[1] И. Орбели, Надписи Гандзасара, стр. 2.

[2] Մակար Բարխուտարյանցի օրոք խաչքարերը գտնվելիս են եղել համալիրի արևելյան մասում կառուցված մատուռներում (տե՛ս Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 208, ծան. 1), իսկ Հ. Օրբելին 1909 թ., և նրանից մի քանի տարի հետո էլ Մեսրոպ Մագիստրոսը նույն խաչքարերը տեսել են այժմյան տեղում (И. Орбели, Армянские надписи Гандзасара, ձեռագիր տետրակի՝ Դադիվանքի արձանագրությունների բաժին, Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 88բ)։ Հետևապես, Դադիվանքի երկու հայտնի խաչքարերը մատուռներից զանգակատան երկրորդ հարկն են փոխադրվել 1895 ու 1909 թվականների միջև։

ցած պատվանդանի վրա կա մի այլ քանդակազարդ խոյակ, որի երեսները մշակված են գեղեցիկ նախշերով։ Հավանական է, որ ստալակտիտազարդ խոյակը և այս քանդակազարդ քարն իր պատվանդանով՝ մնացորդներն են գավթի այն հին զանգակատան, որը, հենց այս մնացորդներից դատելով, եղել է մի շքեղ հորինվածք՝ համապատասխան ինչպես տաճարի գմբեթին, այնպես էլ գավթի հյուսիսային ու արևմտյան ճակատների քանդակներին, որոնց հոյակապ մանրամասների հետ մի անհարմար հակադրության մեջ է գտնվում այժմյան ռոտոնդան։

***

Գավթի արտաքին հարդարանքը զիջում է ինչպես նրա ներքնամասին, այնպես էլ առհասարակ տաճարին։ Սրբատաշ քարի խիստ ընդգծված հարթությունը միայն տեղ-տեղ է խանգարվում։ Գավիթը դրված է մոտ 1,5 մետր բարձրություն ունեցող գետնախարիսխի վրա, որը եզերվում է 37 սմ. լայնությամբ կիսագլանով։ Հյուսիսային ու արևելյան ճակատներում այս կիսագլանը բարձրանում է՝ շրջանակներ կազմելով շքամուտքերի համար։ Հյուսիսային մուտքի դռան այս զուսպ շրջանակի վերին զույգ եզրերը պաշտպանում են իրար դեմ գնացող հովազների (թե՞ վագրերի) երկու բարձրաքանդակներ։ Աջակողմյան հովազի առաջ վեցաթև աստղի բարձրաքանդակ է դրված։ Հիմա դժվար է որոշել՝ այս կենդանական խորհրդանշանները տեղական որևէ կոնկրետ բովանդակությո՞ւն են ունեցել (ասենք՝ Հասան-Ջալալի իշխանության տոհմական զինանշա՞ն է եղել), թե՞ ճարտարապետը պարզապես տուրք է տվել այդ ժամանակի արվեստի մեջ բավականին տարածում գտած սովորությանը, երբ նման կենդանական քանդակներ էին դնում շենքերի վրա Մերձավոր արևելքի երկրներում, Եվրոպայի արևելյան մասում և հատկապես Բյուզանդիայում ու Հայաստանում[1]։

Մուտքից վերև, ուղիղ ճակտոնի տակ նեղ ու երկար մի լուսամուտ կա, որի ուռուցիկ շրջանակը վերին նիստում ձվաձև բարձրանում է՝ գոյացնելով բուսական զարդ։

Հարավային պատի հարթությունը խանգարվում է զույգ նեղ լուսամուտներով, որոնց վրա երկու կիսաշրջանով միասնական մի ճակտոնանախշ է անցնում՝ ծայրերից արմավենիկների նախշաքանդակով, և մեկ էլ նրանցից արևելք՝ մի հատ կլոր լուսամուտ, որի քառակուսի շրջանակն այժմ համարյա քայքայված է։

Գանձասարի հուշարձանի ճարտարապետական-քանդակագործական հրաշալիքներից է գավթի արևմտյան ճակատը, հատկապես շքամուտքը՝ իր արտակարգ փառաշուք զարդերով, որոնց դերն է, հավանաբար, այցելուի ուշադրությունը կտրել շրջապատից, թերևս՝ նաև աննկատելի դարձնել գավթի մյուս մասերի հարդարանքի պակասը։ Այդ նպատակով էլ շքադռան հարդարանքի բոլոր մանրամասներն ընդգծված են։ Ստեղծված են լույսի և ստվերի խիստ ցայտուն գծեր, որոնք դիտողի հայացքն առնում են իրենց վրա՝ հարուցելով բարձր գեղագիտական տրամադրություն։ Կիսագլանաձև հաստ գոտին, եթե հյուսիսային եզրերից բարձրանալով՝ դառնում էր նրա հասարակ շրջանակը, առանց քանդակազարդերի, ապա այստեղ նրա ստեղծած շրջանակն աչքի է ընկնում, առաջին հերթին, հենց իր զարդաքանդակներով։ Կիսագլանի շրջանակի յուրաքանչյուր 40 սմ. տարածության վրա մի քանդակազարդ է տեղադրված՝ կլոր, վարդյակաձև, քառակուսի, քառանկյունի, որոնցից ոչ մեկը չի կրկնվում։ Դրանց մանրամասները կատարված են ժանեկագործական նրբությամբ, ամենատարբեր նախշերի հմայիչ խաղերով։ Այս նախշերն էլ շրջանակի ճնշող զանգվածային տեսքի հետ հակադրություն կազմելով՝ ստեղծում են նուրբ ու մտերմիկ տպավորություն։ Շրջանակն իր մեջ է առել շքադուռը և նրանից վեր բացված փոքրիկ ուղղանկյուն լուսամուտն ու վերջինիս երկու կողմերին քանդակված զույգ արծիվները։

Շքադռան ճարտարապետական-քանդակագործական բարձրարվեստ կատարումն արդեն նկատվել է ուսումնասիրողների կողմից[1]։ Այստեղ բացառիկ նշանակություն ունի դռան երկրորդ, ավելի լայն շրջանակը, որը բաղկացած է երկու մասից՝ ելուստը և պատի հարթության հետ անկյուն կազմող մասը (տե՛ս նկ. 10)։ Առաջինը բարձրանում է մինչև դռան ճակատի կամարից վեր, լուսամուտի մակարդակը, փակում արծիվների համար «թառ» դարձած ելուստ-քարերը։ Լուսամուտն էլ փաստորեն կազմում է այդ շրջանակի վերին ոճավորված եզրը։ Բարձրացող երիզների վրա քանդակված է սրտաձև-բու-

[1] Ա. Լ. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 156։ Գիտնականին հայտնի է, որ Գեղարդում քանդակված հովազը Խաղբակյան իշխանության զինանշանն է եղել։

[1] Ստ. Մնացականյան, նշվ, աշխ., էջ 60—61, Ա. Լ. Յակոբսոն, նշվ, աշխ., էջ 156։



Նկ. 10. Գավթի արևմտյան դռան աջ և ձախ կողմերի զարդանախշերից։

սական նախշերի մի երկար շարք։ Սրանք վարսանդապտղային խորհրդանշանի հայտնի զարդերից են, սակայն նույնիսկ այս՝ արտաքուստ հար և նման սրտիկների մեջ քանդակագործն աշխատել է ստեղծել նախշերի ամենատարբեր հյուսվածքներ, որոնց շնորհիվ էլ մանրազնին դիտողը նկատում է, որ այդ միանման քանդականախշերը նաև տարբեր են իրարից։ Վերևում երկու երիզներն էլ ավարտվում են հիշյալ ելուստներով, որոնց վրա հանդիսավոր կանգնած են բարձրաքանդակ արծիվները։ Ինչպես արդեն ասվել է, Ստ. Մնացականյանի համոզմամբ՝ դրանք վանքի պահապան-խորհրդանշաններն են և իրենց ավանդական արմատներն ունեն հին դարերում[1]։

Դռան երիզի ներքին՝ դեպի ներս թեքված մասը ևս բարձրանում է մինչև արծիվների «թառը» և ծածկված է համատարած ժանեկաձև ու բարձրարվեստ քանդակազարդերով, որոնց մեջ իշխող դեր ունի վեցաթև աստղը։ Սակայն աստղամիջի տարածության նախշերն այն-

[1] Ստ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները, էջ 200։



Գանձասարի վանքը հարավից (առաջին պլանում՝ գերեզմանոցը)։

պես բազմազան են ու երփնազարդ, որ այս՝ շուրջ երեք տասնյակ աստղերի մեջ անհնար է գտնել երկու իրար նմանները։

Դռան ուղղանկյուն քառանկյունին երեք կողմերից երիզված է արմավենիների բարձրաքանդակներից ու դրանք շրջափակող երկրաչափական զարդերից հյուսված շղթայով։

Այս եզրանախշերից հետո գալիս են երկու սյուներ (երեք կիսասյուներից կազմված երկու փնջեր)՝ գեղեցիկ ձևավորված տակդիրներով ու խոյակներով, որոնք իրենց վրա պահում են եռաշերտ կամարը՝ զարդարված վերին պարանահյուս զարդարանքն ունեցող կիսագլանով, մի երկթեք շերտով, ապա մի շարք արմավենիկների զարդաքանդակներով։

Կամարների տակդիրների վրա փոքրիկ խաչեր են քանդակված։

Ճակատի կիսաշրջանն արդեն մի այլ նորույթ է ներկայացնում. այստեղ բազմերանգ քարերից կազմված դրվագազարդեր են, որ ստեղծում են գույների մի ակնախտիտ խաղ։ Դեղնավուն քարի բաց ու մուգ շրջանագծերի ու կիսաշրջանագծերի իրար ագուցված դրվագազարդերը վարդագույն քարի ֆոնի վրա ծիածանի երանգախաղ են անում[1]։ Հասկանալի է, որ «ցանկանալով խուսափել քանդակազարդի ծանրաբեռնումից[2], Գանձասարի գավթի ճարտարապետն ...օգտագործել է գեղանկարչական հարդարանքի եղանակը, գունային հարդարանքը»[3]։

Հաղբատի, Մշկավանքի ու Գանձասարի գավիթների ճարտարապետական առանձնահատկությունների որոշակի նմանությունը և, հավանաբար, հենց այն պարագան, որ խաչվող կամարներից գոյացած արևմտյան լրացուցիչ մասը ուրիշ եկեղեցիներում չկա, Ա. Լ. Յակոբսոնին հուշել են ենթադրելու, թե այդ երեք գավիթներն էլ միևնույն ճարտարապետի ստեղծագործություններն են հանդիսանում։ Իր այս ենթադրության համար գիտնականը կողմնակի, բայց կարևոր կռվան է համարում, որ, իբր թե, Հասան-Ջալալը կնոջ կողմից

---

[1] Ստ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները, էջ 200։

[2] Լեոն այս դրվագազարդերը համարում էր «նկարված... լուսինը իր բոլոր փոփոխություններով» (տե՛ս Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, էջ 365), որ միայն գեղարվեստական համեմատության արդյունք է։

[3] Ա. Լ. Յակոբսոն, նշված աշխ., էջ 158։

Բազմերանգ քարերով դրվագազարդված է նաև Մակարավանքի գլխավոր եկեղեցու շքամուտքի ճակատը (տե՛ս Ի. Էլլարյան, նշվ. աշխ., նկ. 41))։ Սակայն այնտեղ զարդը հյուսված է քարի քառակուսի սալիկներից։

բարեկամ է գալիս Հաղբատի տերերին։ Մամքանը «եղել է Հաղբատի իշխան Զարեհի քույրը և այնտեղ էլ հետագայում թաղվել է,— գրում է Ա. Լ. Յակոբսոնը։— Բնական է ենթադրել, որ հենց այնտեղից է Գանձասար հրավիրվել ճարտարապետը»[1]։

Ա. Լ. Յակոբսոնը Մամքանի ու Հաղբատի տերերի արենակցության մասին իր վարկածի համար հղում է Հասան-Ջալալի մասին Հ. Օրբելու գրած աշխատությանը, որի թյուրիմացությունն այս հարցում՝ մենք ցույց ենք տվել մի այլ առիթով[2]։ Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Մամքանը ո՛չ Հաղբատում է թաղված, ո՛չ էլ առհասարակ որևէ առնչություն է ունեցել Հաղբատի տերերի հետ։ Իրեն վերաբերող բոլոր աղբյուրներում նա կոչված է թոռ կամ դուստր «Բաղաց թագաւորին»[3], իսկ Բաղքը գավառ էր Մեծ Սյունիքում։

Սակայն անկախ այս հանգամանքից, դժվար թե 1206—1210 թթ. կառուցված Հաղբատի մեծ գավթի ճարտարապետը հասցրած լիներ նաև 1260-ական թթ. կառուցել Գանձասարի գավիթը։ Չնայած Հաղբատի մեծ գավթի պատվիրատու-կառուցողը՝ Հովհաննես եպիսկոպոսը, խաչենեցի էր, սերված Հասան-Ջալալի Առանշահիկ տոհմի Ծարա ճյուղից[4]։

Այսօրինակ նմանություններից կամ ոճական առնչակցությունները չի կարելի հանգել նման եզրակացությունների, որովհետև հակառակ պարագայում այն տպավորությունը կարող է ստեղծվել, թե գոնե XII դարի վերջից մինչև XIII դ. վերջը Արևելյան Հայաստանի տարածքում կառուցված վանական համարյա բոլոր լավագույն շինություններն էլ դուրս են եկել միևնույն ճարտարապետի ձեռքի տակից։ Օրինակ, ի՞նչպես չի կարելի չնկատել Հառիճավանքի (1204 թ.) և Գանձասարի տաճարի սերտ առնչությունը ճարտարապետական մի շարք այնպիսի կարևոր խնդիրների լուծման հարցում, ինչպիսիք են նրանց գմբեթների ընդհանուր ուրվագիծը, լուսամուտների ու սրանց երեսակալների ձևերը, զարդաքանդակներից շատերի, հատկապես բեմառաջքի զարդանախշերի, դեպի խորանները տանող պահունակային սանդուղքների նմանությունները։ Ուշադիր քննությունը շատ նմանություններ երևան կհանի, մի կողմից, վերոհիշյալ հուշարձանների և, մյուս կողմից, նույն ժամանակի ուրիշ կառույցների միջև։ Սակայն այսքանը ոչ մի չափով չի կարող նսեմացնել Գանձասարի ճարտարապետական կերպարի ինքնուրույնությունն ու բացառիկ ինքնատիպությունը, որովհետև, նախ, վերոհիշյալ առնչակցությունները ոչ թե նույնօրինակության արտահայտություններ են, այլ ապացույց նույն ազգային ու մշակութային պատկանելության։ Ինչպես մեծանուն Լեոն է նկատել, Գանձասարը հիանալի կերպով դարի հայ ճարտարապետական վսեմ ավանդները, նուրբ ճաշակն ու հոյակապ ձևերը տեղափոխում էր Խաչենի լեռնաստանը և «դրանով ցուցադրում էր նաև, թե որքան սերտ կապ կար այդ երկրների (Հայաստանի տարբեր մարզերի.— Բ. Ու.) մեջ և որքան հզոր էր այն միությունը, որ արհամարհելով բոլոր աշխարհագրական ու քաղաքական արգելքները, կուլտուրական ստեղծագործությունը հաստատուն էր պահում հայ ժողովրդի զանազան մասերի մեջ»[1]։

* * *

Գանձասարում օժանդակ շինությունները տեղադրված են շրջապարսպի հյուսիսային ու արևելյան երկարությամբ։ Հյուսիսային պատին կից բնակելի սենյակներն են՝ ութ խուցեր։ Սրանցից յուրաքանչյուրի ներքին չափերն են 2,9×2,5՝ ամենայն հավանականությամբ՝ նախատեսված միայն մեկ հոգևորականի համար։ Պատերը կանգնած են սրբատաշ ու կիսամշակ քարերի զուգորդումով։ Ծածկը թաղակապ

[1] Ա. Լ. Յակոբսոն, Նշված աշխ., էջ 154։

[2] Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 209։

Հ. Օրբելու այս կարծիքի համար հիմք է հանդիսացել Ռ. Երզնկյանցի մեջբերած հետևյալ անստույգ արձանագրությունը. «Մամքան Շուշանիկն է, քոյր Զարեհ իշխանին Հաղբատա, թոռն Բաղաց թագաւորի, կին Ջալալ իշխանին Խաչենայ» (Ռ. Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ Ս. Նշանի, Վաղարշապատ, 1886, էջ 54)։

Պարզ երևում է, որ Ռ. Երզնկյանցը ոչ թե ճշգրտորեն ընդօրինակել է արձանագրությունը, այլ պատմել է այն իր հասկացած ձևով, և ստացվել է հակապատմական տեղեկություններ պարունակող մի շարադրանք։ Մինչդեռ Հաղբատի արձանագրություններում հիշատակվող միակ Մամքանը վանքի առաջնորդ Համազասպի («Ի քաղաքէն Անւոյ», Կիրակոս, էջ 99) եղբայր Գրիգորի կինն է (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 177—178. «Ես՝ Գրիգոր, եղբայր Համազասպա՝ առաջնորդի սուրբ ուխտիս Հաղբատա... ապաւինեցա ի սուրբ Նշանս... սահմանեցին... Բ պատարագ Մամքանա՝ իմ կենակցին»)։ Կ. Ղաֆադարյանի գրքի («Հաղբատ»-ի) ցանկում Մամքանը թյուրիմացաբար համարված է «Թաղիադինի որդի Սարգսի կինը» (անդ, էջ 280)։ Այնինչ Թաղիադինի որդի Սարգիսն արձանագրության մեջ հիշատակված է իբրև մի մարդ, որից Գրիգորը գնել է իր «հոգո բաժին գեղն» (անդ, էջ 177)։

[3] Բ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 184, 185 և այլն։

[4] Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 50—85։

[1] Լեո, Սահմանավեճեր, Թիֆլիս, 1919, էջ 147։

է։ Բակի վրա են բացվում դռները և լուսամուտները։ Յուրաքանչյուր խուց, դռան հետ միասին, ունի մեկ մեծ լուսամուտ՝ անմիջապես դրսի կողքին, և մեկ փոքրը՝ դռան վերևում։ Վերջինս ծառայել է նաև իբրև օդանցք։ Խուցի ներսի հարդարանքի էական տարրերն են կամարակապ բուխարիկը և «պատրհան»— պահարանը։

Պետք է կարծել, որ խուցերի այս փոքր քանակը (8) հատկանշական է վանքի գործունեության վերջին շրջանի համար, երբ կաթողիկոսության վերացմամբ սոսկ մի թեմի առաջնորդարան դարձած վանքն այլևս չուներ նախկին բազմանդամ միաբանությունը։ Կաթողիկոսության ժամանակներում պետք է որ վանական համալիրում մի հսկայական բաժին կազմեին բնակելի շինությունները։ Հավանաբար, վերջին շրջանում ավելորդ լինելով՝ նրանց մի մասը քանդվել է, և հներից մնացել են միայն այս փոքրիկ խուցերը։

Խուցերից դեպի արևելք, նրանց կից կառուցված է վանքի սեղանատունը։ Այն կառուցվել է 1689 թ. Երեմիա կաթողիկոսի կողմից։ Ունի մեծ օջախ-բուխարիկ։ Թաղակիր երկու կամարներով ծածկը բաժանվում է երեք մասի։ Կամարները չեն հասնում հատակին, այլ հատակից մոտ մեկ մետր բարձրության հասնելով՝ հանգչում-մարում են պատերի մեջ։ Ըստ երևույթին պատերի ամբողջ երկարությամբ դրված են եղել փայտե նստարաններ, որոնք այժմ չկան։ Սեղանատունն արտաքին հարդարանքի տարրեր չունի, եթե չհաշվենք սրբատաշ պատերը և մուտքը երիզող գալարաձև կիսասյունները։

Սեղանատանն արևելքից կցված է մառանը՝ դարձյալ թաղակապ, արտաքուստ սրբատաշ, լուսամուտի աջ ու ձախ կողմերին՝ թռչունների բարձրաքանդակներով։ Մառանից դեպի սեղանատուն տանող դռան համար ճակատակալ քարի տեղ ծառայում է մի հին, գեղեցկաշեն խաչքար, որն առաջինը նկատել և արձանագրությունն էլ արտագրել է Հ. Օրբելին։

Մառանի կողքին, հյուսիս-արևելյան անկյունում այժմ էլ պահպանվում է վանքի գոմը, գյուղական գոմերի տիպիկ օրինակով կառուցված մի շինություն, որը մուտք ունի դրսից՝ պարսպի արևելյան պատի հյուսիսային եզրից։

Պարսպի արևելյան պատի մի մասի (հյուսիսային) տեղ ծառայում է դպրոցական շենքի դրսի պատը։ Այս շենքը ձգվում է հյուսիսից դեպի հարավ։ Դեպի արևելք բացված է եղել փայտե պատշգամբը։ Փայտից են եղել նաև երկրորդ հարկի հատակն ու ծածկը, որոնք այժմ չկան։

Պարիսպը կառուցված է տեղական անմշակ որձաքարից։ Ունի միջնադարյան հայ վանական շատ համալիրների համար սովորական պաշտպանական կառուցվածքներ՝ աշտարակ, բուրգ, դիտանոց։ Ըստ երևույթին պատճառն այն է, որ վանքի հարևանությամբ կանգուն են եղել Ներքին Խաչենի իշխանության հզոր բերդամրոցները՝ Խոխանաբերդն ու Դարբասները, և վտանգի պահին իսկույն վրա են հասել նաև զինական ուժերը, որոնց առաջին պարտքն է եղել պաշտպանել իշխանական տոհմի տապանատունն ու հոգևոր խոշորագույն կենտրոն Գանձասարը։

ՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

Ճարտարապետական խոշոր համալիրների ու նշանակալից հուշարձանների երկարակեցությունը կարելի է ապահովել միայն նրանց նկատմամբ ցուցաբերած չընդհատվող հոգատարությամբ։ Այդ հոգատարության ամենակարևոր արտահայտությունն է նրանց նորոգումը, որ կարող է լինել տարբեր չափերով։ Գանձասարն իր գոյության յոթ ու կես դարերի ընթացքում նորոգվել է մի քանի անգամ։ Առայժմ հայտնի առաջին նորոգումը կապված է Հասան-Ջալալյան Սարգիս կաթողիկոսի անվան հետ։ Այդ մասին տեղեկացնում է խուցերից մեկում պահպանված հետևյալ անթվական ու քչախոս արձանագրությունը. «Նորոգեցաւ ձեռամբ Սարգիս կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դօլին»։ Ո՞ր Սարգիս կաթողիկոսինն է արձանագրությունը, երբ այդ անունով Հասան-Ջալալյան կաթողիկոս է գահակալել և՛ XVI դարում, և՛ XIX-ի սկզբին։ Արձանագրությունն առաջին անգամ արտագրել է Հովսեփ Օրբելին և, քանի որ լրացուցիչ ոչ մի տեղեկություն չի ունեցել, թյուրիմացությունների մեջ չընկնելու համար, իր գրքույկում Սարգիս կաթողիկոսի այս նորոգման առթիվ ոչինչ չի նշել։

Սարգսի ինքնությունը և վանքի նորոգման տարին պարզվում են հենց Գանձասարի վանքում ընդօրինակված մի Ավետարանի գրիչ Հայրապետ աբեղայի հետաքրքիր հիշատակարանով։ Գրիչ Հայրապետը նախ արձանագրում է իր ժամանակի աղետները («դառն և ի նեղ ժամանակիս վասն մահուն ուրացան մայրն զորդիս իւրեանց»)[1], ապա նշում է, որ «...գիրեցաւ Աւետարանս ի յերկրիս մերում յԱրցախ, որ է խաչէն կոչի, ի տեղս Մեծարանիս, որ է դուռս Գանձասարայ, որ գլուխն կա սուրբ Յովհաննէս Մկրտչին։ Արդ եղև գծագրութիւն սորա ի թվականութեան հայ տումարիս։Ո։ [1551] մտեալէ։ Եւ յունուվարի Բ (2) աւարտեցաւ ի հայրապետութեան յԱղուանից տեառն Սարգսի մեծի, որ ետ նորոգել ի մեծայհանդէս եկեղեցիս Գանձասար»[1]։ Եթե գրիչը վանքի նորոգումը՝ որպես արդեն ավարտված գործ ներկայացնում է 1551 թ. տարեմուտին (հունվարի 2), նշանակում է՝ նորոգումը կատարվել է նախորդ տարում՝ 1550 թվականին։

Այս նորոգման ծավալի առթիվ տեղեկություններ չկան, ուստի և դժվար է ենթադրել, թե ի՞նչ աշխատանքներ են կատարվել վանքում։ Սակայն վերոհիշյալ հիշատակարանով հաստատվում է, որ նորոգման նախաձեռնողն է եղել Սարգիս կաթողիկոսը՝ «որդի Հատիր-Մելիքին, թոռն Մեծին Սայտունին», որի մի ինքնագիր ընդարձակ արձանագրությունն էլ ունենք 1546 թվականից. այստեղ Սարգիս կաթողիկոսը թվարկում է իր առատ նվերները Գանձասարի վանքին[2]։

1664 թ. գրված մի հիշատակարան պատմում է, որ Գանձասարի Պետրոս կաթողիկոսը վերանորոգչական ու շինարարական եռանդուն գործունեություն է ծավալել իր հովանու ներքո գտնվող թեմերում։ Հնարավոր է, որ նա վերանորոգած լինի նաև կաթողիկոսարանը[3]։ Սակայն հիշատակարանում այդ առթիվ անմիջական վկայություն չկա։

Առայժմ հայտնի երկրորդ նորոգումը կատարվել է Գյուլիստանի մելիք Աբովի ձեռքով 1781 թ.։ Այս առթիվ պահպանվել է Աբովի կամ, ինչպես ինքն էր իրեն կոչում, Աբով յուզբաշու սեփական ընդարձակ արձանագրությունը գավթի դռան ձախ կողմին (տե՛ս նկ. № 8)։

«Ի ՌՄԼ [1781] թուիս կամաւն աստուծոյ, ձեռամբ տեառն Յովհաննէսի կաթողիկոսին ես Ապաւ ուզպաշի՝ որդի մելիք Յովսեփա Թալիշո եւ իմ կենակից Հերիքնազ և որդիք՝ մէլիք Պէկլար եւ մէլիք Ապաւ, մեր հալալ արդեանց շինեցաք սրբոյ աթոռոյս Աղուանից Գանձասարու երկուց եկեղեցաց տանիսն եւ խախտիալ որմունս բաղում աշխատութեամբ՝ յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց...»[4]։

Այս արձանագրությունից պարզ երևում է կատարված աշխատան-

---

[1] Այլուստ հայտնի են պարսկա-օսմանյան երկարամյա պատերազմները (XVI դարում), որոնց ասպարեզը միշտ էլ Հայաստանն է եղել։

[1] Մաշտոցի անվան մատենադարանի ձեռ. № 6513, էջ 280բ—281ա։

[2] Տե՛ս գրքի հավելվածի № 27 արձ.։

[3] Մատենադարանի ձեռ. № 2561, էջ 260ա—262ա։

[4] Տե՛ս հավելվածի № 75 արձ.-ը։

Նկ. 11. Գյուլիստանի տեր Աբով յուզբաշու արձանագրությունը վանքի ծածկի վերանորոգման մասին (1781 թ.)։

քի ծավալը. նորոգվել են տաճարի ու գավթի[1] տանիքները և պատերի խախտված մասերը։ Պարզ է նաև, որ վերանորոգողը Աբով (Ապաւ) հարյուրապետն է՝ իր կենակից Հերիքնազի և որդիներ մելիք Բեգլարի ու մելիք Աբովի հետ։ Հենց Աբով հարյուրապետի անունից էլ գրված է արձանագրությունը («իմ կենակից...» և այլն)։ Նա է, որ գրում է, թե «...ես Ապաւ յուզպաշի... և իմ կենակից... և որդիք... մեր հալալ արդեանց շինեցաք...»։ Եվ սկզբից ևեթ արձանագրության մեջ մտած «ձեռամբ Յովհաննէսի կաթողիկոսին» արտահայտությունը այնքան բան է նշանակում, որ նրա «ձեռամբ» է թույլատրվել կամ օրինականացվել վանքանպաստ արարողությունը։ Սա նույնն է, ինչ վանքերին տրվող նվիրատվություններին վերաբերող արձանագրություններից անպակաս «առաջնորդութեամբ այսինչ եպիսկոպոսի»-ն կամ «հայրապետութեամբ տէր այնինչի»-ն։ Եվ իրավացի չէր Հ. Ոսկյանը, երբ վանքի վերանորոգման պատիվը շնորհում էր Հովհաննես կաթողիկոսին[1]։

Մի նորոգում էլ կատարվել է Բաղդասար միտրոպոլիտի օրոք, մեծ մասամբ նրա ծախսերով։ Ծախսերը հաշվվում են «աւելի քան զհինգ հազար մանէթս արծաթոյ, թէ ի սեպհականութենէ իւրմէ (միտրոպոլիտ Բաղդասարի.—Բ. Ու.) և թէ ի բարեպաշտական նուիրանաց պատուելի ժողովրդոյ»[2]։

Վերջին նորոգումը կատարվել է 1907 թվականին։ Այդ մասին արձանագրություն կա տաճարի հյուսիսային պատի (դրսից) վերնամասում. «1907 թ. նորոգուեց»։ Երևում է, որ գործի գլուխ են կանգնած եղել երկրամասի պատմությունն ու նրա հիշատակները չհարգող մարդիկ. հենց նորոգմանը վերաբերող արձանագրության տակ և հուշարձանի ուրիշ շատ մասերում ոչնչացվել են կամ խաթարվել մի շարք արձանագրություններ։ Իզուր չէ, որ Հ. Օրբելին զայրույթով գրել է, թե «...գավիթը ենթարկվել է բարբարոսական վերանորոգման,

[1] «Երկուց եկեղեցեաց». արձանագրողն սխալմամբ գավիթն էլ է եկեղեցի համարել։ Ուրիշ եկեղեցու մասին չի կարելի մտածել, որովհետև հայտնի է, որ Գանձասարը միայն մեկ եկեղեցի է ունեցել։

[1] Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 68—69. «Հովհաննես Թ Գանձասարի եկեղեցին կը վերաշինե...»։

Հ. Օրբելին էլ վերանորոգող էր ճանաչում Թալիշի Մելիք Հովսեփին. «В 1781 г. кровля притвора обновлена Мелик-Осепом Талышским» («Надписи Гандзасара», էջ 2)։ Մինչդեռ արձանագրության մեջ մելիք Հովսեփը հիշատակվում է որպես վանքը նորոգող Աբով հարյուրապետի հայր. «ես Ապաւ ուզպաշի՝ որդի մելիք Յովսեփա Թալիշու»։ Աբովը 1775 թ. վախճանված մելիք Հովսեփի (Գյուլիստանի տեր) կրտսեր որդին էր։ Ավագը, հետևապես և մելիքության օրինական ժառանգորդը, Բեգլարն էր, որի կենդանությամբ կրտսերը միայն մելիքական զորքերի հրամանատարն էր՝ յուզբաշին։ Մելիք Բեգլարի կարճատև իշխանությունից հետո (նա սպանվել էր դավադիրի գնդակով) գավառի իշխանությունն անցավ կրտսեր եղբայր Աբովին, որն, ըստ երևույթին, առաջին տարիներին չէր հրաժարվում իր զորապետական տիտղոսից։ Հետագայում հայտնի դարձավ Վրաց թագավորի ու Ռուսական արքունիքի հետ վարած եռանդուն բանակցություններով (հանգամանորեն՝ տե՛ս Բաֆֆի, Խամսայի մելիքությունները. «Երկերի ժողովածու», տասներորդ հատոր, Երևան, 1959, էջ 223—230 և հտգ.)։

[2] Ս. Ջալալեանց, Բ, էջ 356։ Տե՛ս նաև Գրիգոր Տեր-Հովհաննիսյանց, Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանցի համառոտ կենսագրությունը. «Փորձ», 1880, № 5, էջ 162։

Գրիգոր Տեր-Հովհաննիսյանցը Մուրացանն է, որը երիտասարդ տարիներին հրապարակած սույն աշխատության մեջ փորձել է տալ ոչ միայն արժանահիշատակ հոգևոր գործչի կենսագրությունը, այլև նրա տոհմի՝ Հասան-Ջալալյան իշխանական տան համառոտ պատմությունը։

ընդ որում արձանագրությունների նշանակալից մասը ոչնչացվել է»[1]։

Ի՞նչ է կատարվել 1907 թ. նորոգման ժամանակ։

Անկախ Հ. Օրբելու զայրույթից, նորոգումը ոչնչացրել է պատմական բազմաթիվ հիշատակներ, արձանագրություններ ու, հավանաբար, նաև քանդակազարդեր, որոնք կարող էին փրկվել կամ այս կամ այն չափով վերականգնվել, եթե, իհարկե, աշխատանքը կատարված լիներ մասնագիտական պատշաճ մակարդակով։

Սակայն և այնպես, չի կարելի մոռանալ նաև այն տխուր վիճակը, որի մեջ վանքն է գտնվել նորոգումից առաջ։ Մենք ունենք ականատես Լեոյի կարևոր տեղեկությունները վանական համակառույցի նորոգումից շուրջ քսան տարի առաջ եղած վիճակի մասին։ Պատմաբանը 1888 թ. իր ճամփորդական հիշատակարանում սրտի ցավով արձանագրել է «այն սարսափելի անհոգությունը, որին մատնված է այդ հռչակավոր, գեղեցիկ շինությունը... որ դանդաղ կերպով ավերվում, փչանում է... Խաչենի երկնքի տակ տեղ չկա, որ բույսը չմեծանա, չզարգանա զարմանալի ուժով... Կարմրախայտ և սրբատաշ քարերից շինած պատերի մեջ արմատ են դրել անհամար բույսեր, որոնք աճելով, մեծանալով, ճեղքում են քարերի արանքը, նրանց հեռացնում են միմյանցից։ Անձրևի և ձյան ջուրը պահվում է այդ բույսերի վրա, մտնում է քարերի մեջ...Վանքի կտուրը, որ շինած է սալ քարերից և միանգամայն անխախտ է մնացել և գեղեցիկ, բարձր գմբեթը, որ հեռու տեղերից այնքան փառավոր է երևում, կանաչով են ծածկված... Հրաշալի է, ուրեմն, վանքի ամրությունը. շինությունը այսպիսի հանգամանքների մեջ էլ ամբողջ է մնացել։ Բայց մի քանի քարեր արդեն դուրս են եկել իրենց տեղերից և թափվելու վրա են. իսկ արևելյան պատի ճակատին նկատելի է մի ճեղք...»[2]։

«Դրսի կողմից վանքի պատերը ծածկված են բազմաթիվ երկար ու կարճ արձանագրություններով, որոնց կարդալը հեշտ չէ և երկար ժամանակ է պահանջում. պատերի վրայով հոսող ջուրը եղծել, փչացրել է շատ և շատ բան»[3]։

Ապա տաճարի ու գավթի ներսի մասին է խոսում. «Ջրի կաթիլներն այստեղ էլ թափվում են անդադար և ապականել են գեղեցիկ առաստաղը, մոայլ կերպարանք են տվել անշուք, զարդ ու զարդարանքից զրկված պատերին և բոլորովին մերկ հատակին։ Ամբողջ տարին կաթկաթելով՝ հատակի վրա լճակներ են կազմել. արդեն լափել, վերջացրել են սյուների քանդակների մի քանի նրբությունները... Այս տխուր, թաց և մռայլ կամարների տակ հավաքված է այնքան շատ բան անցյալից, որ այցելուի հոգին լուռ խոսակցություն է սկըսում այս տեղերի, այս պատերի ու նրանց անկյուններում բարձրացած խավարի հետ»[1]։

Ինչպես։ 1907 թ. նորոգումով փչացվել է վանքի գեղեցկությունների մի մասը և **փրկվել մնացածը։**

Հետագայում այն ոչ մի անգամ չի ենթարկվել նորոգման՝ ո՛չ հիմնական, ո՛չ մասնակի։ Եվ ահա այժմ հնօրյա փառահեղ հուշարձանի համար կրկնվել է այն վիճակը, որի ականատեսն ու արձանագրողն է եղել մեծանուն Լեոն։ Խախտվել են կտուրների սալ-քարերը, ջուր է ծծվում վերևից, որի պատճառով քայքայվել են տաճարի ու գավթի ներսի շատ զարդանախշեր, եղծվել են մի շարք արձանագրություններ։ Դրսի պատերի մեջ զանազան բույսեր, նույնիսկ թփեր են աճել՝ ստեղծելով խարխլող ճեղքեր, հաճախ դուրս մղելով սրբատաշ քարերն ու որմնամասերը։ Եվ այս բոլորը՝ այն մարդկանց աչքի առաջ, որոնք ամեն առիթով կամ անառիթ՝ չեն զլանում հպարտանալ Գանձասարով, նրա փառավոր պատմությամբ ու ճարտարապետական անկրկնելի կերպարով։

---

[1] Надписи Гандзасара, էջ 2:

[2] Լեո, Իմ հիշատակարանը, էջ 364—366։

[3] Անդ, էջ 366։

[1] Լեո, Իմ հիշատակարանը, էջ 369—370։

Այս մանրամասները մեջ ենք բերում, որովհետև այսօր էլ վանքը համանման վիճակի մեջ է, և զարմանալիորեն այնպես է թվում, թե մեծանուն Լեոն հենց այսօրվա վիճակի դեմ էր տրտնջում։

ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գանձասարի վանքը, հայ միջնադարյան ճարտարապետության ու քանդակագործական արվեստի անկրկնելի հուշարձան լինելուց բացի, ունի նաև աղբյուրագիտական վիթխարի նշանակություն։ Նրա որմերին փորագրված շուրջ երկու հարյուր վիմական արձանագրություններն անգնահատելի արժեք են ներկայացնում ինչպես Արցախ-Խաչենի, այնպես էլ առհասարակ Հայաստանի զարգացած ավատատիրության շրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային պատմության համար։ Բավական է հիշել, որ միջնադարյան Հայաստանի ամենակենսունակ վարչաքաղաքական կազմավորումներից մեկը՝ Խաչենի իշխանությունը, որն իբրև այդպիսին՝ ուշ միջնադարի հայկական իրականության մեջ համարյա միակն էր, այստեղ, այս վանքի որմերին է արձանագրել իր տնտեսական ու այլևայլ գործարքներից շատերը, և այդ արձանագրություններն էլ իրենց մեծագույն մասով ցայսօր պահպանվել են անխաթար։

Ճիշտ է, անհետ կորել են նաև արժեքավոր շատ արձանագրություններ։ Այլ կերպ էլ չէր կարող լինել. բաց երկնքի տակ, ենթակա բնության ավերիչ ու ջնջող ուժին, քարերն իսկ մաշվում են ու կորցնում ամենակարևորը՝ իրենց վրայի քանդակներն ու գրերը։ Բնական է նաև, որ վանքի նորոգումների ժամանակ պետք է հանվեին քայքայված, եղծված կամ կիսեղծ գրերով քարերը։ Սակայն Գանձասարում և առհասարակ Խաչենում այս բնական ու համարյա բանական կորուստներին հաճախ գումարվել է նաև անբնական ու աղետավոր ոչնչացումը։ Վիմագրերը բախտի բերումով հաճախ ճակատագրական նշանակություն են ստացել նոր սերունդների համար, և սրանք ջանացել են վիմագիր նյութերը ծառայեցնել իրենց նորօրյա շահերին, «ուղղել-շտկել են», վերաքանդակել իրենց ուզածի պես։ Իսկ

եթե այդ հնարավոր չի եղել, ապա պարզապես ոչնչացրել են իրենց սեփականատիրական շահերի դեմ խոսող այդ վկայությունները։ Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին գիտեր մի այսպիսի տխուր փաստի մասին։ Նա գրել է. «Բավական է՝ անհիթեթ լուր տարածվեր, թե դատարանը Խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը վճռելիս ղեկավարվելու է ոչ միայն ռուսական կալվածատիրական իրավունքի նորմերով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում քերեր XII—XIII դարերի մեկ ու կես տասնյակ արձանագրություն՝ նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապատկան լինելն ապացուցող վավերագրերը»[1]։

Եվ, այսուհանդերձ, Գանձասարի վանքում ու նրա շրջակայքում պահպանվել են բազմաթիվ վիմագրեր, որոնց գիտական բարձր արժեքն անուրանալի է։

Գանձասարի վիմագրերից՝ իբրև աղբյուրագիտական հավաստի նյութից՝ օգտվելու առաջին պատիվը պատկանում է XIII դ. ականավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցուն։ Կիրակոս պատմիչն է եղել, որ առաջին անգամ իր «Հայոց պատմության» մեջ անփոփոխ բովանդակությամբ, բայց մատենագրական մասնակի խմբագրությամբ օգտագործել է Խաչենի երկու հոգևոր կենտրոնների՝ Գանձասարի ու Դադի վանքի կաթողիկե տաճարների կառուցումներին վերաբերող, ինչպես և մի շարք ուրիշ արձանագրությունները։ Այս նյութերը տեղ են գտել նաև Վարդան Վարդապետի, Ստեփանոս Օրբելյանի և ուշ շրջանի մեր ուրիշ պատմիչների երկերում։

Սակայն Գանձասարի վիմագրերն ընդօրինակելուն, ուստի և դրանք իբրև աղբյուրագիտական նյութ գիտական շրջանառության մեջ դնելուն ձեռնարկած առաջին մարդը եղել է Գանձասարի կաթողիկոս և պատմիչ Եսայի Հասան-Ջալալյանցը։ 1718 թ. նա մի ընդհանուր տետրում արտագրել է Գանձասարի, Խաթրավանքի, Խութավանքի (Դադի վանք) և Խաչենի տարածքի այլ եկեղեցիների ու խաչարձանների բազմաթիվ արձանագրություններ՝ նույն տետրում, հենց այդ արձանագրությունների հիման վրա էլ, փորձելով ներկայացնել նաև Խաչենի իշխանության ճյուղերից մեկի՝ Ծարա իշխանական տան տոհմաբանությունը։

Եսայի կաթողիկոսի սույն ձեռագիրը հետագա հետազոտողնե-

[1] Հ. Ա. Օրբելի, Հայկական վիմական արձանագրությունների գիտական նշանակությունը. «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա, Երևան, 1966, էջ XIII։

րից շատերն են տեսել ու օգտագործել։ Այդ առթիվ պահպանվել են հետազոտողների խոստովանությունները[1]։ Սակայն հայտնի չէ, թե այժմ որտեղ է գտնվում այդ ձեռագիրը, կամ՝ արդյոք այն պահպանվո՞ւմ է։ Կարևոր է, համենայն դեպս, որ պահպանվել է ձեռագրի երկու ընդօրինակությունը՝ բավականին բարեխղճորեն կատարված, մեկը՝ Հովհաննես Ղրիմեցու ձեռքով[2], մյուսը՝ առայժմ անհայտ ընդօրինակողի կողմից[3]։

Տետրի մեջ հասած ընդօրինակությունների համեմատությունը առկա բնագրերի (վիմական արձանագրությունների) հետ՝ ցույց է տալիս, թե Հայոց Աղվանքի պատմիչն ու հոգևոր վեհապետը որքան ճիշտ ու անթերի է արտագրել արձանագրությունները, որոնք և անփոփոխ մտել են տեղագրողներ Հ. Շահխաթունյանցի, Սարգիս Ջալալյանցի և այլոց գրքերը[4]։

1821—22 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմը, նախկին գահակալ և այդ ժամանակ արդեն Վիրահայոց թեմի արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու, ինչպես նաև ուրիշ հոգևորականների ուղեկցությամբ, շրջագայում էր Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգները։ Կաթողիկոսական այդ թափորին մասնակցում էին նաև Մեսրոպ սարկավագ Թաղիադյանն ու վեհարանի գրագիր Հովհաննես Ղրիմեցին (կոչված նաև Փոթիշանեցի)[5]։ Կաթողիկոսական շքախումբը,

[1] Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 356—358, Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 200, Հ. Թոփճեան, Յուցակ ձեռագրաց Խաչիկ Դաղեան, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 89, Կարապետ եպիսկոպոս, Դուքանք և Մելիք-Շահնազարյանք. «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, էջմիածին, 1914, էջ 44։

[2] Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր № 9923։

[3] Անդ, ձեռ. № 7821։

Այս ընդօրինակությունը, որը չի ընդգրկում բոլոր այն արձանագրությունները, որոնք կան (ըստ երևույթին լրիվ ընդօրինակություն հանդիսացող) առաջինում, պետք է որ կատարված լինի բնագրից։ Մեջ այս կարծիքին է մղում ձեռագրի առաջին էջը, ուր նշված է կաթողիկոսական կնիքի տեղը։

Այս ձեռագիրը, բանասեր Պ. Հակոբյանի համոզմամբ, ընդօրինակված է «Շահխաթունյանցի համար, 1830-ական թթ.» (Պ. Հակոբյան, Հայկական վիմագրերը և Խաչատուր Աբովյանը. ՊԲՀ, 1971, № 2, էջ 45)։

[4] Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., հ. Բ, էջ 356—382։ Ջալալեանց, հ. Ա, էջ 183—192։

[5] Յովհաննէս Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր Վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, Վիեննա, 1965, էջ 135—136։ Ավելի հանգամանորեն՝ Ալեքսանդր Դ Երիցեանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 189—192 և հտգ.։

Սյունիքը կտրելով, 1821-ի վերջին հասավ «յաշխարհն Արցախու» և «հազիվ ի 15 ամսեանն դեկտեմբերի ժամաներ ի Շուշի հռչակաւոր քաղաք և ամրոց... Եւ եկաց նա (կաթողիկոսը) ի քաղաք անդ, որ առաջի նպատակ էր իւրոյ ճանապարհորդութեան իբրեւ ամիսս ութ... Ելեալ ապա ի քաղաքէ անտի յամսեանն յունիսի 1822 ամի տեառն բովանդակ եղելովքն ընդ իւր, հանդիպէր նախ ի Գանձասար...»[1]։

Հենց այստեղ էլ, հավանաբար, ոչ առանց Ներսես Աշտարակեցու միջամտության[2], Հովհաննես Ղրիմեցին ամենայն բարեխղճությամբ արտագրել է Եսայի կաթողիկոսի տետրը։ Ահա թե այդ առթիվ ինչ է գրել Հ. Ղրիմեցին մեզ հասած իր ընդօրինակության հիշատակարանում. «Յամի տն 1822 յամսեանն յուլիսի մեկին ընդ սրբազան Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում եկեղեցեաց և խաչից հնագոյն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան Հայոց ՌՃԿԷ (1718), զոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ։ Խ. ծ. Յոհաննէս եպիսկոպոս երբեմնի գրագիր սուրբ էջմիածնի»[3]։

[1] Ղրիմեցի, Պատմութիւն..., էջ 135—136։

[2] Հայտնի են բազմերախտ Ներսես Աշտարակեցու մշտարորոք ձեռնարկումները հայկական պատմական հնությունները, հատկապես վիմագրական նյութերը հավաքելու, մեր ժողովրդի կենսագրության այդ անփոխարինելի վավերականները կորստից փրկելու համար։ Պահպանվել են նրա գրավոր հանձնարարականները հոգևորական տարբեր գործիչներին և հատկապես 1825-ի օգոստոսի 31 թվակիր նամակ-հրահանգը՝ ուղղված Սանահնի առաջնորդ Հարությունն Տեր-Բարսեղյանցին (Մատենադարան, Ներսես Աշտարակեցու դիվան, № 166/378)։ Եվ, վերջապես, Եփրեմ կաթողիկոսի՝ Գանձասար հասած շքախմբի անդամ Թաղիադյանցը պատմում է, որ «Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցա ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին (Մեսրովբ Դ Թաղիադեանց վ. ա. սարկաւագ սրբոյ էջմիածնի, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 332)։ Չէր կարող պատահել, որ այսպիսի հանձնարարություն տվողն անտարբեր մնացած լիներ արդեն հավաքված արձանագրությունների տետրի նկատմամբ։ Աշտարակեցու՝ հայկական վիմագրերը ժողովելու ձեռնարկումների մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ս. Բարխուդարյան, Հայկական վիմագրություն. «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա, էջ XVIII—XIX, առանձնապես՝ Պ. Հակոբյան, Հայկական վիմագրերը և Խաչատուր Աբովյանը, էջ 48—54։

[3] Մատենադարան, ձեռ. № 9923, էջ 2ա։

Պ. Հակոբյանը սույն արտագրությունը համարում է կիսատ՝ կատարված Հովհաննես եպիսկոպոս Հովհաննիսյան Մշեցու (նույն ինքը՝ Բագրևանդացի) ձեռքով։ Սա-

Գանձասարի վիմական արձանագրությունների արտագրությունը պետք է որ կատարած լիներ նաև Եփրեմ կաթողիկոսի շքախմբի մյուս մասնակիցը՝ Մեսրովբ սարկավագ Թաղիադյանցը, որն իր ճամփորդությունների գրքում, խոսելով Արցախյան շրջագայության մասին, հաղորդում է հետևյալ աներկբայելի տեղեկությունը. «Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձաքայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչքարս և ի վէմս ապառաժից, սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, զորս և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա, որք յետոյ կորեան»[1]։

Մ. Թաղիադյանցի ընդօրինակություններից ոչինչ չի մնացել[2]։

Հովհաննես Ղրիմեցուց երկու տասնամյակ հետո Խաչենի վիմական արձանագրությունները և առհասարակ նյութական մշակույթի հուշարձանները դարձան Սարգիս Ջալալյանցի բազմակողմանի ուսումնասիրության առարկան։ Հասան-Ջալալյան հինավուրց իշխանական տոհմի շառավիղը Արևելյան Հայաստանում կատարած իր շրջագայության ընթացքում եղել է Արցախի համարյա բոլոր բնակավայրերում, նկարագրել պատմական աղբյուրներում հիշատակվող գյուղերն ու ավանները, վանքերն ու եկեղեցիները, հավաքել իր ժամանակ դեռևս պահպանվող արձանագրությունների մեծագույն մասը, ինչպես նաև վանքերում ու մասնավոր անձանց մոտ պահպանվող ձեռագրերի հիշատակարանները և բազմաթիվ փաստաթղթեր։ Ջալալյանցի արտագրությունները կատարված են ժամանակի պայմանների համեմատ բարեխղճորեն, ուղեգրական տպավորությունները գրված են ոչ միայն փաստական նյութի իմացությամբ, այլև այնպիսի վարակիչ ջերմությամբ ու հայրենասիրական խանդով, որ նրա այդ երկհատորյակն արժանացել է Խաչատուր Աբովյանի ու Հովհաննես Թումանյանի շատ բարձր գնահատականին[1]։

Պետք է նշել, սակայն, որ ո՛չ Հ. Շահխաթունյանցը, որի ձեռքի տակ է եղել Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունը, և ո՛չ էլ Ս. Ջալալյանցը, որը ոչ միայն նշված ձեռագրից է օգտվել, այլև եղել է Գանձասարում ու հնարավորություն է ունեցել բնագրից արտագրելու բոլոր վիմագրերը, չեն հրատարակել կաթողիկոսի արտագրած բոլոր արձանագրությունները։ Եսայի կաթողիկոսի տեսքը, Հովհաննես Ղրիմեցու արտագրության համաձայն, ընդգրկել է Գանձասարի 34 արձանագրության ընդօրինակություն։ Ջալալյանցը տպագրել է 30-ը, իսկ Շահխաթունյանցը՝ միայն 21-ը։

Սարգիս Ջալալյանցից հետո երկար ժամանակ Գանձասարի վիմագրերը չեն արժանացել այնպիսի ուշադրության, որը կարելի լիներ համարել տրամաբանական շարունակությունն արդեն կատարվածի։ Միայն XIX դարի երկրորդ կեսին, ավելի ճիշտ՝ դարի 80-ական թվականներից սկսած այդ ուշադրությունը բորբոքվում է Մակար Բարխուտարյանցի կողմից, որն իրեն նվիրել էր Արցախում ու շրջակա գավառներում հազարամյակներ ապրած հայության բազմադարյան պատմության ու պատմական ամեն տեսակ հիշատակների ուսումնասիրությանը։

Հարկ է նշել, որ Մակար վարդապետի հավաքածուն, որն ընդգրկում է նաև Գանձասարի ու շրջակայքի հուշարձանների բազմաթիվ վիմագրեր, հարուստ է իր նախորդների ընդօրինակությունների համեմատ և ըստ էության առավել վստահելի, քանի որ հավաքողն ավելի լավ էր պատկերացնում երկրամասի պատմությունը, և հենց այս հանգամանքն էլ նրան օգնում էր համեմատաբար ստույգ կարդալու կիսախաթար արձանագրությունները։ Անխոնջ հետազոտողը Հայաստանի պատմությանը նվիրած իր երկհատոր ուսումնասիրության մեջ[2]

կայն այս և Մատենադարանի № 7821 ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ առաջինը ոչ մի բացթողում չունի։ Ապա՝ փաստերը խոսում են այն մասին, որ № 9923 ձեռագրի արտագրությունը կատարվել է Հովհաննես Ղրիմեցու ձեռքով, քանի որ նա եղել է Եփրեմ կաթողիկոսի գրագիր-քարտուղարը (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 92, Հ. Ոսկյան, Ներածություն Ղրիմեցու հիշյալ գրքի, էջ 6. «Էջմիածնեն հովվապետին ուղեկից և օգնական կելլա Հովհաննես Փոթիշանեցի-Ղրիմեցի վարդապետը, որ անոր ձեռնասուն աշակերտն ու նոտարն էր»)։ Եվ, վերջապես, ինքը՝ Ղրիմեցին է ներկայացնում կաթողիկոսական շքախմբի կազմը՝ լրացնելով. «Ընդ որս էր և իմ նուաստութիւն» (Ղրիմեցի, Պատմութիւն..., էջ 135)։ Իսկ ընդօրինակության հիշատակարանում էլ ներկայանում է իբրև «Յովհաննէս եպիսկոպոս երբեմնի գրագիր սուրբ էջմիածնի»։

[1] Մեսրովբ Դ Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն, էջ 332։

[2] Ներսես Աշտարակեցու դիվանին քաջատեղյակ Պ. Հակոբյանը հայտնում է, որ «և՛ Ն. Աշտարակեցու դիվանում, և՛ այլուր որևէ հետք չի մնացել» այդ ընդօրինակություններից, ապա կասկածով հնարավոր է համարում, որ Թաղիադյանցի ջանքերի արդյունքը եղած լինի «Հովհաննես եպիսկոպոս Մշեցուն վերագրվող հավաքածուն» (Պ. Հակոբյան, նշված աշխ., էջ 45, ծան. 1)։ Սակայն, ինչպես վերը տեսանք, նշված հավաքածուն Հովհաննես Ղրիմեցու ընդօրինակությունն է։

[1] Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Պ. Հակոբյան, նշված հոդվածը, էջ 59—63։

[2] Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղվանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, հ. Բ, Թիֆլիս, 1907։

մեծապես օգտագործել է վիմագրերի իր հավաքածուն, որի մեջ ընդգրկված են Գանձասարի 34 արձանագրություններ[1]։

Գանձասարի վիմագրական նյութի իսկական գիտական ընդօրինակությունը (դժբախտաբար, ցայսօր չհրապարակված) կապված է բազմերախտ Հ. Օրբելու անվան հետ։

1909 թ. օգոստոսին, Ն. Մառի երաշխավորությամբ, Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքը Հ. Օրբելուն գործուղում է Խաչեն՝ տեղի հնագիտական նյութերն ուսումնասիրելու համար։ Օրբելին Խաչենում մնում է ընդամենը 17 օր և գրի է առնում շուրջ 270 արձանագրություն. 84-ը՝ Գանձասարի վանքից, 21-ը՝ Վաճառից, Խաչխութից ու Ծմակահող գյուղից, 13-ը՝ Հավապտուկից, 36-ը՝ Կոշիկ անապատից, 37-ը՝ Մեծառանից Ս. Հակոբա վանքից, 11-ը՝ Ջուխտ-խաչ ու Խանչալ-խաչ սրբավայրերից, 35-ը՝ Խաթրավանքից և 33-ը՝ Դադիվանքից։

Այս բոլորը արձանագրություններն Օրբելին իրեն հատուկ բարեխղճությամբ ու խնամքով արտագրել է (բացառությամբ Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունների) փոքր չափսի մի ընդհանուր տետրում, որի տիտղոսաթերթի վրա գրել է. «Армянские надписи Хачена»։ Ըստ երևույթին տետրից անմիջապես շարվածք պիտի կատարվեր տպարանում, քանի որ հենց վերնագրի տակ էլ կա հեղինակի հանձնարարությունը ընտրելիք տառերի ու շարվածքի մյուս հանգամանքների առթիվ։

Ուշագրավ է, որ արձանագրությունների մեծագույն մասը տետրում տեղ է գտել ոչ միայն ընթերցվածքով, այլև ճշգրտորեն այնպես, ինչպես տեղում է՝ տառաձևերի, կցագրերի ու հնագրական այլևայլ առանձնահատկությունների պահպանմամբ։

Այս տետրը գտնվում է ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի արխիվում[2]։ Նույն արխիվում է գտնվում նաև Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունների հավաքածուն՝ արդեն տպարանային սրբագրական արտատպվածքի ձևով։

Բանն այն է, որ Հ. Օրբելին դեռևս 1909 թ. տպագրության պատրաստած առաջին տետրակի ու սույն ժողովածուի հրատարակությունը հետաձգել է տպագրական համապատասխան տառատեսակների բացակայության պատճառով և նրանց վերստին անդրադարձել է 1919-ին՝ որոշած լինելով հավաքած բոլոր վիմագրերը հրատարակել առանձին փոքրիկ ժողովածուներով։ Այդ շարքի առաջին ժողովածուի մեջ մտցրել է Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունները։ Սակայն, ցավոք, այս ժողովածուի հրատարակությունը ևս ինչ-ինչ պատճառներով գլուխ չի եկել, և այն մնացել է որպես սրբագրական արտատպվածք՝ բաղկացած 42 փոքրադիր էջերից, որոնց մեջ ընդգրկված են.

ա) Չորս նախէջ-նախաբան, որոնցում հեղինակը հաղորդում է Խաչենում կատարած իր աշխատանքների մասին, տալիս հայկական վիմագրական նյութի ուսումնասիրության ընդհանուր վիճակի գնահատականը և պարզում մի շարք այլ հարցեր։

բ) Համառոտ պատմական ու ճարտարապետական տեղեկանքներ Գանձասարի վանքի (էջ 1—2) ու Հավապտուկի (էջ 36) մասին։

գ) Գանձասարի 87 և Հավապտուկի 13 արձանագրությունները։

Սրբագրական այս արտատպվածքի միակ լրիվ օրինակը տարիներ առաջ տեղափոխվել է Հայկ. ՍՍՀ ԳԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտը։ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի արխիվում մնում են երկու պակասավոր օրինակներ։ Համեմատաբար քիչ պակասավորից բացակայում է 7 էջ (9, 22, 23, 26, 27, 30, 31)։

1917 թ. հունվարին, Խաչենի վիմական արձանագրությունները տպագրության նախապատրաստելու առթիվ, պատասխանատվության ու պարտքի բարձր գիտակցությամբ Հ. Օրբելին գրել է. «Խաչենի իմ ժողովածուի տպագրությանն եմ ձեռնարկում մի քիչ ծանր զգացումով. արձանագրությունները ես հավաքել եմ շատ վաղուց, երբ ինքս նոր միայն սկսել էի զբաղվել հայկական վիմագրությամբ, և ես առավել, քան ուրիշ որևէ մեկը, գիտակցում եմ ընթերցվածքների վրիպակները՝ նույնիսկ այնտեղ, ուր ես արձանագրությունն արտագրելիս չեմ կասկածել իմ ընթերցածի ճշգրտության վրա...»[1]։

Հարկավ, ավելորդ չէին ականավոր գիտնականի կասկածները. նույնիսկ Գանձասարի ու Հավապտուկի արտատպվածքը, որ համարյա ընթերցողի ձեռքն էր հասել, ունի վրիպակներ ու անճիշտ ընթերցվածքներ, որոնք հենց այս ընթերցվածքին վստահող ուսումնասիրողներին կարող են հանգեցնել թյուրիմացությունների։ Սակայն ամեն

---

[1] Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 173—179։

[2] Մեր ուսումնասիրության ժամանակ (1971 թ. օգոստոսին) այս տետրը թվահամար չի ունեցել, որովհետև գիտնականի արխիվը դեռևս նոր էր կարգավորվում։

[1] Надписи Гандзасара и Հաւոցптука, собрал и приготовил к печати Иосиф Орбели, Петроград, 1919, стр. III—IV.

պարագայի Հովսեփ Օրբելու կատարածը մի շատ շնորհակալ աշխատանք էր՝ արժանի շարունակվելու և զարգացվելու։ Հավաքված նյութի հիման վրա Օրբելին ինքն էր ձեռնամուխ եղել բացելու Խաչենի պատմության ու հին մշակույթի ծալքերը։ Նա այս ուղղությամբ նույնիսկ կատարեց մի հետաքրքիր փորձ. գրեց «12—13-րդ դարերի Խաչենի խաչքարերի կենցաղային բարձրաքանդակները» խորագրով ուսանելի հոդվածը[1], ցույց տալով, թե հայկական հինավուրց այս երկրամասի քարե հուշարձաններն ու վիմական արձանագրությունները որքան հարուստ և բազմազան նյութ կարող են տալ պատմաբանին, հրնագետին, ազգագրագետին ու այլևայլ մասնագետների՝ երևան հանելու մեր ժողովրդի բազմադարյան անցյալն իր բոլոր կողմերով։

Պետք է միայն ափսոսել, որ այս հոդվածը մնաց միակն իր տեսակի մեջ։ Հ. Օրբելին նույնիսկ ժամանակ չունեցավ անդրադառնալու Հասան-Ջալալի մասին հրապարակած իր աշխատությանը, որպեսզի շտկի նրա ակնհայտ թերությունները, որոնք պարզ երևում են հետագայում հենց իր իսկ ձեռքով հավաքած վիմագրական նյութի առկայությամբ[2]։

Գանձասարի և առհասարակ Խաչենի վիմագրական նյութերին ուշադրություն է դարձրել նաև նշանավոր հոգևորական գործիչ ու խոշոր գիտնական Գարեգին Հովսեփյանը։ Նա մեծ ջանասիրությամբ ու քաջահմուտ կերպով հավաքել է Գանձասարի շրջակայքի (Հավապրտուկ, Կոշիկ անապատ, Գեռաքարի հուշարձաններ և այլն) վիմական արձանագրությունները, տարբեր առիթներով մանրակրկիտ քննության ենթարկել Խաչենի տարածքում պահպանված հնադարյան ձեռագրերը և մատենագրական այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Խաչենին ու նրա իշխանական տներին։ Այդ նյութերի մի զգալի մասն օգտագործվել է մեծ գիտնականի «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» կոթողային աշխատության էջերում և հրապարակված է այդ աշխատության երրորդ գրքում[3]։

---

[1] **И. А. Орбели**, Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII—XIII веков. Избранные труды, И. А. Орбели, Ереван, 1963, стр. 196—204.

[2] Ակադեմիկոս Հ. Օրբելու և Խաչենի իշխանության տարածքի պատմական հիշատակների առնչակցություններն առավել հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և Խաչենը (փաստաթղթեր և տեղեկություններ). «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 1, էջ 197—204։

[3] Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 297—466։

Այնուհետև երկար ժամանակ ոչ ոք գործուն ուշադրություն չի ցուցաբերել Գանձասարի վիմագրերի նկատմամբ։ Միայն 1960-ական թվականների սկզբին Հայկ. ՍՍՀ ԳԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի աշխատողների մի խումբ, հայտնի վիմագրագետ Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ, հավաքել է ինչպես Լեռնային Ղարաբաղի մյուս հուշարձանների, այնպես էլ Գանձասարի վիմագրերը։ Սակայն այս, ամենայն հավանականությամբ, արժեքավոր աշխատանքը դեռևս չի հրապարակված։

Ստորև ներկայացնում ենք Գանձասարի վանքում և նրա շրջակայքում պահպանված բոլոր արձանագրությունները՝ նրանց համառոտ նկարագրություններով, մի քանի լուսանկարներով (տե՛ս նկ. № 9 ա, բ, գ, դ) և նրանց վերաբերող անհրաժեշտ տեղեկություններով հանդերձ։

Արձանագրություններին վերաբերող ծանոթագրությունների մեջ աշխատել ենք ցույց տալ նախորդ հրատարակիչների՝ Հ. Շահխաթունյանցի, Ս. Ջալալյանցի, Մ. Բարխուտարյանցի և Հ. Օրբելու կատարած աշխատանքը։ Այս շարքի մեջ մտցրել ենք նաև Հ. Օրբելու գրքույկը, նկատի առնելով, որ այն, թեպետ տպարանից դուրս չեկած ու ընթերցողին չհասած, արդեն ձև ու կերպարանք ստացած է եղել և ըստ ամենայնի պատկերացում է տալիս հեղինակի կատարած ուսանելի հետազոտական աշխատանքի մասին։

Ա. ՎԻՄԱԳՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Նկ. 12. Վանքի փակակալ Ստեփանոսի արձանագրությունը (XIII դ.)։



Նկ. 13. Սասնա Հանդաբերդեցու արձանագրությունը (1271 թ.)։

Նկ. 14. Զալալ Մեծի Թոռ Տուրսունի արձանագրությունը (1493 թ.)։

Նկ. 15. Հատիր-Մելիքի որդի Սարգիս կաթողիկոսի արձանագրությունը։

Բ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳՐԵՐԸ

1. ՈՁԹ (1240) թ.

Գանձասարի կաթողիկե տաճարի շինարարական արձանագրությունն է՝ փորագրված տաճարի ներսում, հյուսիսային պատի ամբողջ լայնությամբ, վերին եզրից մինչև ավանդատան ու ավազանի կամարները։ Բաղկացած է 27 տողից, որից 17-ը՝ հյուսիսային լուսամուտի աջ ու ձախ տարածությունն են բռնում, իսկ 10-ը՝ նրանից ցած եղած մասը։

ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ՝ ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՈՅ ԵՒ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈ
ԱՅՍ ԳԻՐ ԱՐՁԱՆԻ Է, ԶՈՐ ՏՎԻ
ԵՍ՝ ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱ Ա՛Յ ՋԱԼԱԼ ԴԱՒԼԱՅ ՀԱՍԱՆ, ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ, ԹՈՌՆ ՄԵԾԻՆ
ՀԱՍԱՆԱ, ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՅԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԹԱԳԱՒՈՐ ԽԱՒ-
ԽԱՆԱԲԵՐԴԻ ՅՈՔՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՒՔ։ ԶԻ ՀԱՅՐ ԻՄ, Ի ՎԱԽՃԱՆ ԿԵՆԱՅ ԵԼԻՑ

ԻԻՐ ԱՍՏԵԱՅՍ ԱՆԴԱՐՁ ԿՏԱԿԻ ՀԱՍՏԱՏԵԱՅ ԻՆՁ ԵԻ ՄԱԻՐ ԻՄ
ԽՈՐԻՇԱՀԻ, ՈՐ ԷՐ
ԴՈՒՍՏՐ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՍԱՐԳՍԻ, ԶԻ ՇԻՆԵՍՅՈՒՔ ԵԿԵՂԵՅԻ
Ի ԳԵՐԵԶ-
ՄԱՆԱՏԱՆ ՀԱՐՅ ՄԵՐՈՅ Ի ԳԱՆՁԱՍԱՐ, ԶՈՐ ՍԿՍԵԱԼ ՄԵՐ:ՈԿԵ:ԹՎԻՆ
ՀԱՅՈՅ ՅԱՒԳՆՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՐ-
ԱՐԻՆ։ ԵԻ Ի ԽՓԵԼ ԼՈՒՍԱՄՏԻՆ ԱՐԵՒԵԼԻՑ ՄԱՅՐՆ ԻՄ ԿՐԱՒՆԱՒՈՐԵԱԼ
ՁՈԳԱՒ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՐ-
ԲՈՐԴ ԱՆԳԱՄ ԵԻ ԱՆԴԷՆ Ի ԴՐԱՆ ՀԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՐԱԶԱՆԱԶԳԵԱՅ
ՃԳՆՈՒԹԵԱՄԲ ԲԱԶՄԱՄԵԱ
ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԳԵԱՒ Ի ՔՐԻՍՏՈՍ ԼՈՒՍՈ ՎԿԱՈՒԹԵԱՄԲ ԵԻ
ԱՆԴԷՆ ՊԱՀԵՅԱՒ։ ԻՍԿ
ՄԵՐ ԶԲԱԶՄ-
ԱԾՈՒՓ ԿԻՐՍ ԿԵՆՑԱՂՈՅՍ Ի ՄՏԻ ԵԴԵԱԼ ՓՈՅԹ ԳՈՐԾՈ ԱՐԱՐԵԱԼ
ԱՒԱՐՏՈՒՄՆ ԵՂ-
ԵԻ, ՇՆՈՐՀԱՒՔ ԵԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՅԳՈՒԹ ՏԵԱՌՆ : ՈՁԷ :
ԹՎԻՆ՝ ԳԱՒՏԵՒՈՐԵԱԼ ԱՄԵՆԱ-
ԶԱՆ ԶԵՒՈՎ, ՊԱՏԿԵՐԱԶԱՆ ՅԱՒՐԻՆԱԿԵՐՏ ԳՄԲԵԹԱՐԴ ՅԱՒՐԻՆՈՒԱ-
ԾԱՒՔ ԵԻ ՅԱՒԺԱՐ
ՈՒԹԵԱՆ ԿԱՄԱՅ ՄԵՐՈՅ, ՈՐՊԷՍ ՏԵՍԱՆԷ Ա՜Ծ, ՀՈԳԱՅԱՔ ԶՊԷՏՍ
ՄԻԱԲԱՆԻՅ՝ ԳԵՂՈՐ-
ԱՅՍ ՄԱՁԵՂ, ՀԱՐՁԱՆՏՈՒՍ ԲՈԼՈՐՔՈՁՆ, : Ա : ԼՈՒԾ ԽԱՁԻՆԱՁՈՐ,
ՆՈՐԱՇԻՆԿԱՆ
ԳԵՏՆ, ԱՅԳԵՍՏԱՆՍ ԵՂԳԸՆ ԳԵՆԻ, ԶՈՐ ԻՄ ՀԱՅՐՆ Է ՏՎԵԱԼ . .
ՈՅՆ, ԱՐԵԱԹԵՆԻՍՆ, ՈՐ ԵՍ ՏՎԻ ԽԱՁԱՒՔ, ԳՐԱՆԱՒՔ, ՄԱՍԱՄԲՔ
ՆՇԽԱՐԱՒՔ, ՊԱՏՈՒ-
ԱԿԱՆ ԵԻ ԶՈՒԼԱԾՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՍՊԱՍՈՒՑ ԵԻ ՀԱՆԴԵՐՁ ԵՐԵՒԵԼԻ
ԶԱՐԴԻՒՔ Ի ՓԱՌՍ ՔԻ Ա՜Յ
ՄԵՐՈՅ։ ԵԻ Ա՜Վ Ի ՄԵՐ ՅԻ-
ՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՅԻՔՍ ԱԶԱՏ ԵՆ։ ԿԱՄԱՒ Տ՜Ր ՎԱՐԴԱՆԱ
ԱՌԱՁՆՈՐԴԻ Մ՜Բ ՈՒԽՏԻՍ ԵԻ
ՄԻԱԲԱՆԻՅՍ ԳՐԵՅԱՔ
ԺԱՄ ԶԱՒԱԳ ՍԵՂԱՆՆ ԲՈԼՈՐ ՏԱՐԻՆ ՄԵԶ ԵԻ ԶԱՅԼ ԱՄԷՆ ԵԿԵՂԵՅԻՔՍ
ԶԱՏԻԿՆ ԻՐ ՃՐԱԳԱ-
ԼՈՒՅՈՎ ԻՄ ՀԱՒՐՆ Է

ՎԱԽՏԱՆԳԱ, Ա՜ԾԱԾՆԻՆ : Դ : ԱՒՐՆ ԻՄ ՄԱՒՐՆ ԽՈՐԻՇԱՀԻ, ԵԻ
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԻՒՐ ՃՐԱԳԱԼՈՒՅՈՎ
ԻՄ ԵՂԲԱՒՐՆ ԶԱՔԱՐԷԻ,
ԱՒԱԳ ՍԵՂԱՆՆ, ՈՐ ԻՄ Է Յ՜ԱԾԱԾՆԷՆ ՄԻՆՁ Ի ԽԱՁՆ, ԻՄ ՊԱՊԻՆ
ՀԱՍԱՆԱ, ՅԻՄՆԱԿԱՄՏԷՆ ՄԻՆՁ
Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՄԱՄՔԱՆԱ
ԻՄ ԿԵՆԱԿՅԻՆ, ՅՈՒԹԱՒՐԱՅ ԵԼԻՅՆ ՄԻՆՁ ԱՌԱՁԱՒՈՐՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ԱՆՅԻՇԱՏԱԿԱՅ, ԲԱՐԻԿԵՆ-
ԴԱՆԻՆ : Ա : ՇԱԲ-
ԱԹՆ ԻՄ ԵՂԲԱՒՐՆ ԴԱՒԻԼԻՆ, : Ա : ՇԱԲԱԹՆ ԻՄ ՔՈՒԵՐՆ ՄԱՐԻՆՈ,
ԱՂՈՒՀԱՅԻՑ ՇԱԲԱԹ ԿԻՐԱԿԷՔՆ
ԻՄ ԵՂԲԱՒՐՆ ԻՒԱՆԷԻՆ, ԶԱՏԿԷՆ
ՄԻՆՁ ՅԱԾԱ՜ԾԻՆՆ ԵԻ Ի ԽԱՁԷՆ ՄԻՆՁ ՅԻՄՆԱԿԱՄՈՒՏՆ ԻՆՁ ՀԱՍԱՆԱ։
ԱՒՐՀՆԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ
: ՈՁԹ : ԹՎԻՆ
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ՜Ն ՆԵՐՍԻՍԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։ ՀԱՍՏԱՏ
Է ԳԻՐՍ ԿԱՄԱՒՆ Ա՜Յ։
ՈՎ ՀԱԿԱՌԱԿԻ, ՈՍ-
ՈՒՆ ՆՈՐԱ Ա՜Ծ Է ԵԻ ԻՒՐ ՍՈՒՐԲՔ։ ԱՆՏՈՆԻ ՏԱՒՆԻՆ : Ա : ԱՒՐ ԺԱՄ
ՅՈՎԱՍԱԲ ՄԻԱԿԵՅԻՆ Է
ԿԱՄԱՒՆ ՄԵԾԻՆ ՀԱՍԱՆԱ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 371—372, Ջալալեանց, Ա, 183—184, Բարխուտարեանց, 173—174, Օրբելի, 4։

Ծան.— Արձանագրության առաջին տողերը դժվարությամբ են ընթերցվում ցածից, մանավանդ, որ նրանցից մի քանիսի վերջերը քայքայված են կամ ծածկված աղաշերտով։ Այս պատճառով էլ առաջին հրատարակիչները հիմնականում առաջնորդվել են Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությամբ, որն էլ առաջին նախադասության վերջին մասը ներկայացնում է ոչ ճիշտ. «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵԻ ՄԵԾ ԱՐՁԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԹԱԳԱՒՈՐ ԵԻ Ի ՅՕՔՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԴԻ»[1]։ Հ. Օրբելին ուշադրությամբ կարդացել է բնագիրը, տեսել, որ ընդօրինակություններում բառեր են պակասում, կան նաև այլ կարգի աղավաղումներ։ Վերը մեջբերված հատվածում նա կար-

[1] Մատենադարանի ձեռ. № 9923, էջ 5ա, նաև՝ հրատարակիչների վերը նշված էջերը։

դացել է «ԻՆՔՆԱԿԱԼ ԽԱՆԲԵՐԴԻ ՅԱՒՔՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՒՔ»։ Այսպիսով, նախ, հրաժարվել է «ԵՒ Ի» անիմաստ կապակցությունից և «Յաւքնասահման նահանգաւք»-ը կապել մի տեղանվան հետ ու իմաստավորել։ Այլ հարց է, որ այդ տեղանունն էլ Օրբելու մոտ է պակասավոր։ Դժբախտաբար նրա օրոք ևս 3-րդ տողի վերջը՝ 9 տառի տեղ անընթեռնելի է եղել, իսկ հաջորդ տողում, հենց տողի սկզբին կարդալով «Խանբերդի»՝ գիտնականը հենց այդքանով էլ բավարարվել է, առանց վերականգնելու տեղանվան ամբողջական պատկերը, որ է «Խոխանաբերդ» («ԽԱԻԽԱՆԱԲԵՐԴ»)[1]։ «Թագաւոր» քայքայված բառի տեղ էլ Հ. Օրբելին վերականգնել է «ինքնակալ»՝ հավանաբար հենվելով միայն Թ-ի կամ Ի-ի պահպանված առաջին ճյուղի վրա։

Մենք թողնում ենք առաջին հրատարակիչների «Թագաւոր»-ը՝ նկատի առնելով, որ Նսայի կաթողիկոսը, ըստ երևույթին, այն արտագրել է, երբ արձանագրությունն անխաթար է եղել։ Հաշվի ենք առնում նաև, որ արձանագրության հեղինակը չէր կարող երկու «ինքնակալ» («ինքնակալ բարձր», «ինքնակալ Խաչխանաբերդի») իրար կողքի դնել։ Դա անհարիր կլիներ սույն վիմագրի կուռ կառուցվածքի և լեզվաոճական բարձր մակարդակի հետ։

Երրորդ ու շատ կարևոր հանգամանքը՝ Հասան-Ջալալը հայ և օտար աղբյուրներում բազմիցս կոչված է «Թագավոր», «արքա»[2]։ Չէր կարող պատահել, որ նրա այդքան ընդարձակ արձանագրության մեջ բացակայեր նման էական տիտղոսը։

Բնագրից շեղումներ են եղել նաև արձանագրության մյուս մասերում. աղավաղվել են որոշ անուններ, կրճատվել են ուրիշ, իբր, ոչ

[1] Կիրակոս, էջ 269, 270, 313։

[2] 1229 թ. ոմն Տիրածայր Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցում փորագրած իր արձանագրության մեջ հիշում է «Բարեպաշտ արքային Ջալալին» («Արարատ», 1896, էջ 81)։ Մի այլ արձանագրության մեջ, որ գրել են Հայոց Արևելից կողմանց իշխանները, Հասանը կոչված է «Արքայ Ջալալ Դալայ» (Բարխուտարյանց, Արցախ, էջ 189, «Արարատ», 1896, էջ 234)։ Հեջուրի որդի Սմբատը Մեծառանից Ս. Հակոբա վանքում արձանագրել է, թե իր ընծաները տալիս է «Թագաւոր Ջալալայ Դօվլին հրամանով» («Բանասէր», 1901, հ., պրակ Բ և Գ, էջ 135)։ Պարսիկ մի անանուն ժամանակագիր՝ Հասան- Ջալալի անմիջական ժամանակակիցը, խոսելով Խաչենի մասին, գրել է, թե «Այնտեղ հայեր են բնակվում, և Արխազի մարդիկ նրանց փադիշահին կոչում են թագավոր» (Миклухо-Маклай Н. Д., Географическое сочинение XIII в. на персидском языке. «Ученые записки института Востоковедения АН СССР», т. IX, Л., 1954, стр. 204).

կարևոր արտահայտություններ։ Դրանք բոլորն էլ ստուգված ու ճշտված են Հ. Օրբելու կողմից, բացի երկու տողից, որոնք կարոտ են վերջնական ճշգրտման։ Օրինակ, Հ. Օրբելու ընդօրինակության մեջ թվարկվում են վանքին նվիրաբերված գյուղերը, ապա. «:Ա: ԼՈՒԾ ԽԱՉԻՆԱՁՈՐՆ ԱՇԻՆԿԱՆ) ԳԵՏՆ ԱՅԳԵՍՏԱՆՍ ԵՂԳ[Ը]ՆԳՆԻ ՁՈՐ ԻՄ ՀԱՅՐՆ Է ՏՎԵԼ...»։ Մինչդեռ սույն հատվածը բնագրում հետևյալ պատկերն ունի. «:Ա: ԼՈՒԾԽԱՉԻՆԱՁՈՐՆՈՐԱՇԻՆԿԱՆԳԵՏՆԱՅԳԵՍՏԱՆՍԵՂԳԸՆԳԵՆԻՁՈՐ ԻՄՀԱՅՐՆԷՏՎԵԼ...», կարծում ենք, պետք է կարդալ և բառանջատել այսպես. «:Ա: ԼՈՒԾ Ի ԽԱՉԻՆԱՁՈՐ, ՆՈՐԱՇԻՆԿԱՆ ԳԵՏՆ, ԱՅԳԵՍՏԱՆՍ ԵՂԳԸՆԳԵՆԻ, ՁՈՐ ԻՄ ՀԱՅՐՆ Է ՏՎԵԼ...»։

Այս արձանագրությունն օգնում է պարզելու ոչ միայն վանքի տաճարի շինարարության հանգամանքները և Ներքին Խաչենի իշխանական տան ու նրա հովանավորության ներքո գտնվող վանական կենտրոնի իրավական, տնտեսական փոխհարաբերությունները, այլև վերացնում է Խոխանաբերդի տեր Վախտանգի ժառանգների մասին աղբյուրներում եղած թյուրիմացությունները։

Բանն այն է, որ աղբյուրները Վախտանգի զավակների թվի առթիվ հակասական տեղեկություններ են հաղորդում. մի տեղ նրանք երկուսն են[1], մյուսում՝ երեք[2], նույնիսկ չորս[3] կամ վեց[4]։ Այդ պատճառով էլ պատմագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են պաշտպանվել, որոնք, սակայն, մինչև օրս էլ հարցը թողել են մութ։

Այս կապակցությամբ չի կարելի անտեսել Վախտանգի հիշատակարանը՝ գրված 1212 թ., ուր Վախտանգն ու կողակից Խորիշահը հաղորդում են, թե «ծնաք երիս ուստերս եւ երիս դստերս՝ ժառանգ մարմնաւոր եւ յիշատակ հոգեւոր»[5]։ «Երիս ուստերս» հաստատվում են նաև ուրիշ աղբյուրներով[6]։

Մ. Բրոսսեն, տարբեր աղբյուրներին հավատ ընծայելով հավասարապես, մեկ Վախտանգի զավակներ է ճանաչում երկուսին՝ Ջալալին ու Զաքարեին[7], մեկ էլ չորսին՝ Ջալալին, Զաքարեին, Իվանեին և Մարինին[8]։

[1] Վարդան Վարդապետ, էջ 140։

[2] Կիրակոս, էջ 268։

[3] Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 148։

[4] Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Ա, էջ 142։

[5] Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 759։

[6] Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ, էջ 216։

[7] M. Brosset, Hist. Siouni, II, p. 34.

[8] M. Brosset, Additions..., ple la Georgie, s. Petersb., 1851, p. 344.

Հ. Օրբելին անվերապահորեն հավատում է Վախտանգի ու Խորիշահի հիշատակարանին, գտնելով, որ նրանք ունեցել են միայն երեք տղա և, իբր, մեծ արձանագրության մեջ հիշվող Դավլան էլ Զաքարեի մականունն է[1]։

Սակայն այս արձանագրությունն այդպիսի եզրակացության հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ այնտեղ մեկ առ մեկ հիշվում են՝ «իմ եղբայր Զաքարէի... իմ եղբայր Դաւլին... իմ քուէրն Մարինայ... իմ եղբայրն Իւանէին»։

Ամենայն հավանականությամբ Հասան-Ջալալն իր եղբայրներին հիշել է ըստ տարիքի, իսկ հոր ու մոր հիշատակարանում Դավլան չի հիշատակվել, որովհետև 1212-ին վախճանված է եղել։

Նվիրատվությունների շարքում հիշվող Մաշեղ ու Հարջանտուս (15-րդ տող— «գեղորայս Մաշեղ, Հարջանտուս բոլորքոջն») գյուղանուններն այժմ չկան, և դժվար է որոշել, թե այդ անուններով գյուղերը որտեղ են գտնվել։

17-րդ տողի՝ «որ ես տվի խաչաք, գրանաք, մասամբ նշխարաք...» շարքում «գրանաք» ձևը «գրեանք» (գրքեր, մատյաններ) հոգնակիի գործիական հոլովն է, որի ե-ն ընկել է՝ երևի Ղարաբաղի բարբառի ազդեցությամբ, որի հոգնակին ուղղական հոլովով լինում է կյրանք։

Վիմագրում հիշատակվող բոլոր անձնանունները Հասան-Ջալալի հարազատներինն են, բացի «Յովասաբ միակեցից», որը, ինչպես վերը նշվել է արդեն, Հրաչյա Աճառյանի կարծիքով՝ արձանագրությունը հորինողի անունն է։

2. ՄԻՆՉԵՎ 1240 թ.

Քանդակազարդ բեմառաջքի ամբողջ լայնությամբ, քիվի տակ, խոշոր, գեղաքանդակ տառերով, մեկ տող։

ՈՐՔ ԵՐԿԻՐՊԱԳԱՆԷՔ ԱԵԱՋԱՐԴ ՍՐԲՈ ՍԵՂԱՆՈՅՍ, ԶՀԱՍԱՆ ԶՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ ՅԻՇԵՑԷՔ Ի ՍԲ ՅԱՂԱՒԹՍ ՁԵՐ ԱՂԱՋԵՄՔ։

ՀՐԱՏ. Օրբելի, 1։

ԾԱՆ.— Փորագրվել է շինարարության ընթացքում, համենայն դեպս՝ բեմի քանդակազարդերի հասակակիցն է։

[1] Հ. Օրբելի, նշված աշխ., էջ 148—149։

3. 2Ժ (1261) թ.

Տաճարի արևմտյան պատի, արևելյան մասում, արտաքուստ մուտքից աջ, կամարազարդ որմնախորշի ամբողջ տարածությամբ մեկ, խոշոր, գեղեցիկ տառերով, որոնց մի զգալի մասն արդեն քայքայված է։ Սակայն արձանագրությունն ընթերցվում է առանց դժվարության։ 17 տող։

ԹԻՒՆ : ՉԺ : Է։

ԿԱՄԱՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ Ա՜Ց ԵՍ Զ-
[ԱԼԱԼ ԴԱՒԻ] ԱՅՍ, ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ, ԿՈՂՄՆԱԿԱԼ Ա-
ՐՅԱԽԱՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՄՔԱՆ՝ ԹՈՌՆ ԲԱՂՈՒՅ
ԹԱԳԱՒՈՐ[ԻՆ] ԵՒ ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՆ ԻՄ ԱԹԱԲԱԿ ԻՒԱ-
ՆԷ ՅԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՀԻՄՆԱՐԿԵՑԱՔ ԶԺԱՄԱՏ-
ՈՒՆ[Մ] ԵՒ ԲԱՁՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՒԱՐՏԵՑԱՒ, ԶՈՐ Ա՜Ի
ՀԱՅՑԵՄ ԱՆՄՈՐ[ԱՑ]ՅԻՇԵԼ ՅԱՂԱՒԹՍ ՁԵՐ։ ՓՈՔՐ ԸՆԵԼ ՏՎԻ
ԶՄՈՒՌՏԵՂՆ Ի[ՒՐ] ՁԱՐԵՔԴԱՐՈՎՆ, ԶՃՌԱՆՑ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎ։
ԴԱՐՁԵԱԼ ԵՒ ԵՍ ԱԹԱԲԱԿՍ ԸՆԵԱԵՑԻ ՅԱՒԺԱՐՈՒԹԵԱՄԲ
ՈՍԿԵՏՈՒՓ ԱՒԵՏԱՐԱՆ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ Ս՜Բ ՆՇԱՆ ԶՔՐԻՍՏԱ-
ՓՈՐՆ ԵՒ
ԶՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱՒԱԿՈՌՆ, ԶԲԼՐԻՆ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ։ ԵՒ
ՍԱ-
ՀՄԱՆԵՑԻ ԶԽԱՉԻ : Ը : ԱՒՐԷՔՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ՜Ս։ ԵՒ ԹԷ ՔՐԻՍ-
ՏՈՍԱԴԱՒ
ԱՆ ՈՔ ՀԱՆԵԼ ՁԱՆԱ, Ի ՓԱՌԱՅՆ Ա՜Ց ՄԱՀՈՎ ԵՒ ԿԵՆԱՒՔ ՆԶՈՎԱԾ
Է ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐԱ ՄԻ ՅԻՇԵՍՅԻ ԱՌԱՋԻ Ա՜Ց։ ԵՒ ԹԷ ՄԱՀ-
ՄԵԴԱԿ-
ԱՆ ՈՔ ԶՀՈՂՆ ՀԱՆԷ ՅԱՅՍ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ԱՌՀԱՍԱՐԱԿ ՆԶՈՎԱԾ
Է Ա՜Ց
ՄԱՐԳԱՐԷԻՅՆ։

Հրատ.—Շահխաթունեանց, Բ, 372—373, Ջալալեան, Ա, 186, Բարխուտարեանց, 174—175, Օրբելի, 5—6։

Ծան.— Հրատարակվել է սխալներով։ Թվականը մեկ «ՉՇԵ» (1306) է կարդացվել (Շահխաթունյանց, Ջալալյանց), մեկ «ՉԺԵ» (1266) (Բարխուտարյանց)[1]։ Լրիվ չի կարդացվել Հասան-Ջալալի որ-

[1] ՉԺԵ է նաև Մատենադարանի № 9923 ձեռագրում (տե՛ս էջ 6 ա)։

դու կրկնակ անունը՝ Աթաբակ-Իվանե։ Հ. Օրբելին ուղղել է թվականը՝ «Զժէ» (1261), սակայն «Աթաբակ-Իւանէ»-ն սխալմամբ ընդօրինակել «Աթաբակ եւ Աննա»։ Աղավաղված են ընդօրինակվել նաև արձանագրության մեջ հիշատակվող մի շարք անուններ և արտահայտություններ (զՄուռտեղ, չարեքդար, զՀարաւակոռն, Բլրին և այլն)։

Հասան-Ջալալի կին Մամքանը վախճանվել է 1261 թ.[1]։ Նույն տարում էլ նահատակվել է ինքը՝ Հասան-Ջալալը[2]։ Ուրեմն, սույն արձանագրությունը նրանք գրել են իրենց կյանքի վերջին տարում, հավանաբար՝ երբ գավիթը հիմնարկված է եղել, բայց ո՛չ ավարտված։

Արձանագրության երկրորդ մասը (սկսած 10-րդ տողից) Աթաբակն է գրել միայնակ, երբ ծնողները չկային, ինքն էր իշխանությունը վարում և արդեն ավարտել էր գավթի կառուցումը։

Վիմագրի առաջին մասում հիշվող Մուռտեղն, ամենայն հավանականությամբ, գյուղի անուն է, իսկ Ճռանցը (զՃռանց)՝ դաշտի կամ հանդամասի։ Առաջինը ընծայաբերված է «իւր չարեքդարովն», երկրորդը՝ «սահմանով»։

«Չարեքդարի» հիմքը պարսկ. «չարյաքն» է, որ նշանակում է «չորսից մեկ»-մեկ քառորդ։ Չարեքդար-չարեկտարը Ստ. Մալխասյանցը բացատրել է. «Հնումը կալված կամ արտ, որի վարձողը տիրոջը բահրա էր տալիս բերքի մի քառորդը» («Հայերեն բացատրական բառարան», հ. IV, էջ 15)։

Սահմանովը, ինչպես վիմագրի առաջին մասում, այնպես էլ երկրորդ մասի Հարաւակոռն և Բլրին դաշտանունների հետ, պիտի նշանակի ամբողջությամբ, այսինքն՝ դաշտն ամփոփող շրջագծով։

4. ՉԻԹ (1280) թ.

Տաճարի վրա, արևմտյան պատի հյուսիսային մասում, մուտքից ձախ, կամարազարդ որմնախորշի տարածության վերին կիսով մեկ, 8 տողով։ Ձախ մասը, հատկապես առաջին տողի կեսը, քայքայված է։ Իսկ մնացած տողերը խիստ վնասվել են գռեհիկ մարդկանց ձեռքերով, որոնք ամբողջ որմնախորշն աղտոտել են իրենց այլանդակ ինքնագիր-ինքնառեկլամներով։

[1] Մատենադարանի ձեռ. № 378, էջ 8բ։

[2] Կիրակոս, էջ 391—392։

[ՅԱՆՈՒՆ ՍԲ ԵՐՐՈՐԴ] ՈՒԹԵԱՆ ՀԱՒՐ ԵՒ ՈՐ-
ԴՈ ԵՒ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈ ԵՍ ՆՈՒԱՍՏ ԱՂԱԽԻՆ ՔԻ ՄԱՄԱԽԱԹՈՒ-
ՆՍ, ԴՈՒՍՏՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՋԱԼԱԼԱ ԴԱՒԼԱ
ՀԱՍԱՆ[Ա]
ՏՆ ԽԱՋԻՆՈ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՒՐ ԻՄՈ ՄԱՄՔԱՆԻՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆՈ
[ՊԱ]-
ՐՈՆԻՆ ՈՒՄԵԿԻՆ, ԵԿԻ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ Ի ՍԲ ՈՒԽՏԱ ԳԱՆՁԱՍԱՐԱ
ԵՍ ԵՒ
ՈՐԴԻ ԻՄ [ՎԱ]-
ԽՏԱՆԳ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՐԲՈՅՍ ԵՒ ՍՈՔԱ ԽՈՍՏԱՅԱՆ ԺԱՄ ՁՎԱՐ-
ԴԱՎԱՌԻՆ ՏԱՒՆԻՆ ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑ[ԻՔՍ]
ՊԱՏԱՐԱԳՆ ՔԱՆԻ ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ՝ ՁԺԱՄՆ ԻՄ ՀԱՒՐՆ ԵՒ ԻՄ
ՄԱՒՐՆ
ԿԱՏԱՐԵՆ ԵՒ ՅԵՏ Ի-
Մ ՓՈԽՄԱՆ՝ ԻՆՁ ԿԱՏԱՐԵՆ։ ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ։ ԹՎԻՄ
: ՁԻԹ : Է։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 373, Ջալալեանց, Ա, 186, Օրբելի, 6։

Ծան.—«Միաբանեցաք սրբոցս» մոռացել են և հետո տողից վեր քանդակել։

Շահխաթունյանցն ու Ջալալյանցը հետևել են Եսայի կաթողիկոսին՝ սկսելով այսպես. «Անուն երրորդության և միածութեան»։ Ճիշտ է, արձանագրության սկիզբը քայքայված է, սակայն պահպանվում է «ութե հաւր եւ որդոյ եւ հոգոյն», որը ոչ մի կապ չունի հրատարակվածի հետ։ Եվ միանգամայն իրավացի է եղել Հ. Օրբելին, երբ մի կողմ է թողել հրապարակվածը՝ արձանագրությունն սկսելով Գանձասարի վիմագրերում շատ ընդունված «Յանուն սբ երրորդութեան»-ով։

Արձանագրությունը փորագրել տված Մամախաթունը՝ Հասան-Ջալալի ու Մամքանի դուստրը, երկրորդ կինն էր հայտնի վաճառական Ումեկի, որը ծնունդով մանազկերտցի, Հասան-Ջալալին փեսայանալիս արդեն Տփղիսի բնակիչ էր, մեծ նվերներով թաթար-մոնղոլների հովանավոր բարեկամությունը շահած մի «պարոն»[1]։

[1] Պարոն-պատրոն Ումեկի մասին հանգամանորեն տե՛ս Կիրակոս, Պատմություն Հայոց, էջ 362—363 և հտգ., «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին Ս. Ավագյան և Հ. Ջանփոլադյան, Ե., 1977, էջ 18—19, 71—72, 105, նաև՝ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 219—225։

Վախտանգը՝ պատրոն Ումեկի ու Մամախաթունի որդին, դրպրություն ու գիտություն սիրող մարդ է եղել՝ սերտ բարեկամությամբ կապված ժամանակի հայ մշակույթի խոշոր գործիչ Հովհաննես Երզընկացու հետ[1]։

5. ՉԿԵ (1516) թ.

Տաճարի արևմտյան պատի հյուսիսային անկյան մոտ, վարից, գեղեցիկ խաչերի տակ, 6 տող.

ԹՎ : ՉԿԵ :
ԵՍ ԿՈՒԼՄԷԼ-
ԻՔ՝ ԱՄՈՒՍԻՆ ԽՈՃԱՅ
ՄՍՐՇԻՆ ԿԱՆԿՆԵՑԻ
ՉԽԱՉԵՐՍ ԻՆՉ ԵՒ
ՉԱՒԱԿԱՅ ՄԵՐՈՅ։

Հրատ. Օրբելի, 7։

Ծան.—Հ. Օրբելին «Կուլմէլիք»-ի փոխարեն կարդացել է «Կուլմէլ», իսկ «Խոճայ Մսրշին»-ի փխ. «Խոճայ Արշին»։

6. Անթվական

Տաճարի արևմտյան պատին (դրսից), մուտքից ձախ, խաչերի մոտ, 2 տող.

ԽԱՉԵՐՍ ՊԵՏՐՈՍ
ԷՐԻՑԻՆ Է։

7. Անթվական

Տաճարի արևմտյան պատին (դրսից), հյուսիսային մասում, մուտքից ձախ, խաչի մոտ, 3 տող։

ԽԱՉՍ Ս-
ԱՏԱԹԻՆ
Է։

[1] Վախտանգի մասին հանգամանորեն տե՛ս Գար. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա և նորա տոհմը. «Նյութեր և ուսումնասիրություններ», Ա, էջ 1—5, Բ. Ոլոբաբյան, նշված գիրքը, էջ 221, 223, 225։

Դմբերի արևմտյան հատվածը և տաճարի արևմտյան նակատի վերնամասը։

Տաճարի հյուսիսային ճակատից մի հատված:



Դմբեթի հյուսիս-արևմտյան հատվածը:

Հին ռոտոնդայի խոյակը:



Գմբեթի կտիտորական քանդակներից (հարավ-արևմտյան նիստը)։

Գմբեթի կտիտորական քանդակներից (հարավ-արևմտյան նիստը)։

Դմբեթի հարավային ճակատը:



Տաճարի արևմտյան ճակատի խաչահանդակի ստորին հատվածը:

Դմբեթի հարավային ճակատի բարձրահանդակներից:

Գավթի ռոտոնդան:

Գավթի հին ռոտոնդայի խոյակներից:



Տաճարի արևմտյան ճակատի խաչաձևաձևակը՝ գմբեթի հարավ-արևմտյան ճակատի հետ միասին:

Դմբեի արևմտյան նակատի վերնամասի քանդակները:



Դմբեի արևմտյան մասը:

Տաճարի արևմտյան նակատի խաչաքանդակը:

Խաչաքանդակից մի դրվագ:

Գավթի հյուսիսային մուտքի ձախակողմյան բարձրաքանդակը:



Գավթի ռոտոնդայի հին խոյակներից:

Գավթի ռոտոնդային հին խոյակներից:

Վանական համալիրը հարավ-արևմուտքից:

Տանարի արտաքին մասի բարձրաքանդակներից:

8. Անթվական

Նույն պատի հարավային մասում, տաճարի մուտքից աջ, մի գեղեցիկ խաչի տակ, մեկ տող։

ԽԱՉՍ ՈՎԱՆԻՍԻՆ Ե։

—

9. Անթվական

Նույն պատին, ավելի ճիշտ՝ նրա և գավթի հյուսիսային պատի անկյունում. մանը խաչերի տակ, 4 տող.

ԽԱՉԵՐ-
Ս ՄԱՄԻ
ԿՈՆ ԵՐ-
ԵՑԻՆ Է։

—

10. Անթվական

Տաճարի բեմի աջ կողմի երկրորդ հարկի ավանդատան պատին (հյուսիսային), մեկ տող.

ԳՐԻԳՈՐՈ։

ՏԱՃԱՐԻ ԴՐՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. ՉԻ (1471) թ.

Հյուսիսային պատի արևմտյան մասում, մեկ քարի վրա, 9 տողով.

ԵՍ ՊԱՍՏԱՄ
ՈՐԴԻ ՄԵԾԻՆ
ՉԱԼԱԼԻՆ ՏՎ-
Ի ԿՈՒՆՃԻ ՀՈՂ-
ԻՆ ԿԱԼԷՆ ՎԷՐՆ
Ի ՍԲ ՈՒԽՏԻՍ
ԳԱՆՁԱՍԱՐԱՅ ԱՌ-
ԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ
ՏՐ ՆԵՐՍԻՍԻ։ ԹՎ : ՉԻ :

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 375, Չալալեանց, Ա, 185, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 7։

Սան.— 5-րդ տողի «Վէր»-ը քանդակված է պատվով, որ պետք է նշանակեր որևէ տառի կրճատում։ Այդ պատճառով էլ ավելացնում ենք որոշիչ հոդ։ Ստացվում է աշխարհաբար շարադասությամբ ու բառաձևերով մի նախադասություն, որի մեջ կարծես պատահաբար տեղ է գտել միայն գրաբարյան մեկ ավելորդ նախդիր՝ 3 (7-րդ տողում)։

«Վէր»-ին Ն է ավելացված նաև Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակության մեջ։ Սակայն այնտեղ «Ներսիսի» և Թվականի արանքում կա անեծք՝ «Ով զհողն հանէ յուխտէս, ՅԺԸ հ՝ յրպոցն նզովված է», որը, ինչպես պարզ երևում է լուսանկարում, արձանագրության բնագրում չկա։

Պաստամը Հասան-Ջալալի թոռնթոռ Ջալալ Մեծ կոչված իշխանի որդին է և նշանավոր իշխան Տուրսունի հայրը։ Նրա մասին հիշատակություններ են պահպանվել 15-րդ դարի 70-ական թվականներից[1]։

«Կունճի հողին կալէն վերն» հիշվում է իբրև ընծայաբերված հողամաս։ Կունճի հողը, պարզ է, որ հանդի անուն է։ Այնտեղ եղել է կալ, որից վերև տարածված հողամասն էլ ընծայաբերվել է վանքին։

12. ՋԺԶ (1467) թ.

Տաճարի հյուսիսային պատի արևմտյան մասում, 5 տողով։ Հողմնահարված է և ծածկված վերևից հոսած կրաշրով։ Ընթերցվում է դժվարությամբ։ Չընթերցվող գրերը վերականգնել ենք լուսանկարի օգնությամբ, որը, բարեբախտաբար, հաղիվ նկատելի ստվերագրծերի պատկերով ներկայացնում է նաև արձանագրության քայքայված մասերը։

ԿԱՄԱԻՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ Ա՝Ց ԵՍ [ՏՐ ԵՂ] ԻԱՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԳԱՆՁԱՍԱՐԱՅ ՏՎԻ ՋԻՄ ՀՈԳՈՅ ԱՐԴԻՒՆՍ՝ :Ա:ԱՅՍՄԱՒՈՒՐՔ, : Ա : ՏԱՐԷԳԻՐՔ, : Ա : ԳԱՆՁԱՐԱՆ, : Ա : ՇՈՒՌՋԱՌ, ԱՐԴԱԽԱՅ : Գ : ՍՏԱԿՆ։ ՈՎ ՁԱՅՍ ԳՐ[Ե]ԱՆՔՍ ԿԱՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ ՀԱՆԷ ՍԲ ՈՎԱՆԻՍԻՍ, : ՅԺԸ : ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ՆԶՈՎԱՍ Է։ ԹՎ : ՋԺԶ : ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ. 374, Ջալալեանց, Ա, 187, Օրբելի, 8։

[1] Տե՛ս Բ. Ուղուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 308—309, 311, հատկապես գրքին կցված «Հասան-Ջալալյանների տոհմածառը»։

Սան.—«ՏՐ Եղիայ» լավ չի ընթերցվում, լուսանկարի վրա էլ մշուշոտ երևում է միայն «իայ»-ը։ Վերականգնում ենք՝ նկատի առնելով, որ այդ ժամանակ Եղիան է եղել վանքի առաջնորդը (տե՛ս արձ. 83, 1443 թ.), նաև՝ որ չընթերցվող հատվածում միայն 4 տառ կարելի է տեղավորել, և, ամենակարևորը, Եսայի կաթողիկոսի վիմագրական տետրակի ընդօրինակության մեջ ևս «Եղիայ» է[1], իսկ նրա ժամանակ, ամենայն հավանականությամբ, արձանագրությունն անխաթար է եղել։

Հ. Օրբելին 3-րդ տողի «գանձարան»-ի տեղ ունի «գանձ», իսկ «Ադախայ»-ն ընդօրինակելուց հետո ոչինչ չի ընթերցել, հավանաբար այն համարելով անիմաստ տառախումբ։

«Ադախայ» է նաև Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակության մեջ։ Սակայն մենք դնում ենք «Արդախայ», քանի որ արձանագրության լուսանկարում պարզ երևում է Ր-ն՝ կցագրված Ա-ի հետ և ապա՝ նկատի ունենք այդ տեղանվան (ավանի կամ գյուղի) վկայված հին ձևը[2]։

«Ստակն» այստեղ օգտագործված է ոչ իր դրամական նշանակությամբ[3], այլ այս բառի հետ ևս տեղի է ունեցել այն իմաստափոխությունը, ինչ որ վաղուց նկատվել է դանգ–դանկ–դենկ բառի գործածություններում։

Դանգը կամ դանկը, որ սկզբնապես դրամի ու կշռի միավոր է եղել, հետագա իմաստավորմամբ դարձել է նաև «վեցերորդ մասն ամենայն իրաց»[4]։ Հայկական վիմագրերում, հիմնականում հենց այս իմաստային գործածությամբ, միշտ էլ այն նշանակում է բերքի, եկամտի, տուրքի և այլնի մեկ-վեցերորդ մասը։ Եվ եթե կենտրոնական Հայաստանի կամ Անիի վիմագրերում տիրական է դանկ–դանգ բառը, ապա Հայոց արևելից կողմանց համանման հուշարձաններում նույն իմաստն արտահայտվում է ստակ տերմինով։ Տվյալ դեպքում Գանձասարի միաբանությանը, թվարկված ձեռագիր մատյանների ու

[1] Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 9923, էջ 7բ։

[2] Ստ. Օրբելեան, էջ 278. Անանիա կաթողիկոսը «հասեալ ի գաւառն Խաչենոյ... ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս և զեպիսկոպոսունս և զվանականս ի տեղին, որ Արդախն կոչի»։

[3] «Ստակ»-ի դրամական կիրառությունների մասին տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Ե., 1969, էջ 342, ծան. 6։

[4] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 539, Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, Ա, էջ 485, Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Ե., 1978, էջ 63—66։

շուրջառի հետ միասին, ընծայաբերվել է նաև «Արդախայ:Գ:ստակն», այսինքն՝ Արդախ ավանի թե գյուղի եկամուտների երեք-վեցերորդը։

13. ԹՃԺԶ (1467) թ.

Տաճարի հյուսիսային պատի կենտրոնական մասում, մեծ կամարի ներքո, 7 տող.

ԿԱՄԱԻՆ Ա՜Յ ԵՍ ՍԱՅՏՈՒՆՍ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱՂԲԱՍՏԻՆ
ՏՎԻ [Ի]Մ ՀԱՅՐԵՆԱՅՆ ՉՏԱՆԾԱՁՈՐ Ի Ս՜Ր
ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹ՜Ր
Տ՜Ր ԵՂՅԻՆ։ ՍԱՔԱ ԵՏՈՒՆ ՏԱՐԱՆ : Գ : ԺԱՄ։ ՈՎ ՉԱՅՍ
ՀԱՐԵՆԻՔՍ ՀԱՆՅՐԷ ԵՂԵՅՈՒՍ, : ԳՃԺԸ : ՀԱՅՐԱՊ-
ԵՏԱՅ ՆՁՈՎԱՍ Է։
ԹՎԻՍ : ԹՃԺԶ :։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 375, Ջալալեանց, Ա, 185—186, Բարխուտարեանց, 177, Օրբելի, 10։

Ծան.— 4-րդ տողի «Եղյին»-ը «Եղիային»-ի բարբառային ձևն է և «իա»-ի կրճատման համար պատվի նշան չունի։

5-րդ տողում գրիչը «Հայրենիքս». քանդակել է առանց Յ-ի՝ բարբառի ազդեցությամբ և, հավանաբար, «հայրենիք»-ի ազդեցությամբ էլ «հանէ»-ի մեջ մտցրել է մի ավելորդ «յր»։

«ՍՈՔԱ»-ի փխ. փորագրված է ՍԱՔ (ԱՔ— Ս և Ա կցագրումով)։

Շահխաթունյանցը (ինչպես նաև Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունը) շեղումներ ունի բնագրից, նույնիսկ անեծքի մեջ ավելացրել է «և սբ Ովանէսիս կապած»։ Ջալալյանցը «զՏանծաձոր»-ի փոխարեն գրել է «զտան ծաղոր»։ Բարխուտարյանցը համարյա ճիշտ ընդօրինակել է արձանագրությունը, սակայն դրել սխալ թվական՝ ԹՃԾԶ (1507 փրկչ թվին)»։ Մինչդեռ Եղիան մահացել է 1507-ից շատ առաջ. նրան հաջորդած առաջնորդ Ներսեսի մասին տեղեկություն ունենք դեռևս 1471 թվականից (տե՛ս արձ. № 97)։

14. 1864 թ.

Տաճարի հյուսիսային պատի կենտրոնական մասում, մեծ կամարի ներքո, 11 տող.

ԵՍ ՆԱՁԼՈՒ ԱՅՐԻ ԿԻՆ ՇՈՒՇՎԱ ՔԱՂԱՔԱՅԻ ՀԱՆԳՈՒՅՇԵԱԼ
ՊՐԱՊՕՐՁԻԿ ԵՒ ԱՍՊԵՏ ՊՕՂՕՍ ԲԵԿԻ ՁԱՂԱԼԵԱՆՑ,
ԴՈՒ[Ս]ՏՐ ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐ ՄԿՐՏՉԻ ԹԱՌՈՒՄԵԱՆՑ,
ԳՐԵԱԼ Ի ԿՏԱԿԱԳՐԻ ԻՄՈՅ ՅԱՐԹԵԱՆ ԵՏՈՒ Ի ՆՈՒԷՐ
Ի ՔԻ-ՄԵՂԱՅ ԻՄՈՅ, ԱՌՆ ԻՄՈՅ ՊՕՂՕՍ ԲԵԿԻ
ԵՒ ՁԱՒԱԿԱՅՍ ՍՐԲՈՅ ՎԱՆԱՅ ԳԱՆՁԱՍԱՐՈՒ։ ԱՅՍ ԳՈՒՄԱՐ ՊԱՐՏԻ
ՄՆԱԼ ՄՇՏԱՊԷՍ ԸՆԴ ՏԵՍ ՁԵՐԱՄԲ ԿՏԱԿԱԿԱՏԱՐԱՅ,
ՈՐՔ ՊԱՐՏԻՆ ՏԱԼ ՏՈԿՈՍԱՄԲ ԵՒ ՁՏՈԿՈՍՆ ՁԱՅՆ ՏԱԼ
ՍՐԲՈՅՆ ՆՈՅՆ ՎԱՆԻՑ ՎԱՍՆ ՄԱՏՈՒՅՑԵԼՈՅ ԱՐԻԱՐԻ Ջ՜Ր ՊԱՏԱ-
ՐԱԳ ՅԱՒՈՒՐՆ ՆԱՎԱԿԱՏԻԿԱՅ ԵՐԵՒՄԱՆ՝ՍԲՈՅ ԽԱՉԻՆ Ի ՏԱՃԱՐԻ
ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԳԱՆՁԱՍԱՐՈՒ։ : Զ : ՕԳՈՍՏՈՍԻ 1864 ԱՄԻ։

Ծան.— Որքան էլ քանդակելուց առաջ մաքրել են քարերի երեսները, նրանց մաշված լինելն զգացնել է տալիս. կարծես արձանագրությունը քանդակված է չեչաքարի վրա։ Դժվար է ընթերցվում նաև այն պատճառով, որ շատ բարձր է քանդակված։

Կրճատման նշաններն այստեղ յուրահատուկ ձև ունեն՝ գիծ-կետ-գիծ (—.—)։ Կցագրությունների մեջ ևս քանդակողն իր ինքնահատուկ ձևն է դրել «ԵՒ»-ի փոխարեն, օրինակ, դնում է միայն Ե՝ վերջինիս հորիզոնական լեզվակն ալիքաձև երկարացնում (Ե)։ Հետաքրքիր է, որ կցագրելիս Ա-ն միացնում է ուղղահայաց գծեր չունեցող Տ-ի, Յ-ի հետ՝ վերջիններիս ներքևի աջ կողմից ավելացնելով մեծատառ Ա-ի աջակողմյան փոքրիկ ճյուղը։

15. 1854 թ.

Նախորդից աջ, մեկ քարի վրա, 5 տող.

Ք՜Ի Ա՜Յ ՄԻՐ-
ՁԱՋԱՆ ԵՒ
ԱՂԱՋԱՆ
ԲԱՂԴԱԹ-
ԵԱՆՅ։ 1854։

Ծան.— Յ-րդ տողի Ջ-ն գլխիվայր է քանդակված։

16. 1907 թ.

Նախորդից վեր, կամարատակի կենտրոնից դեպի ձախ, մեկ տող, (Թվականը՝ խոշոր).

1907 Թ ՆՈՐՈԳՈԵՑ։

17. 1907 թ.

Նախորդից վերև, դեպի աջ, լուսամուտի տակ, 4 տող.

ՀՈՔԱՅՊԱՐՅՈՒԹԵԱՄԲ ՆԵՐՍԷՍ ՄԷԼԻՔ-ՓԱՇԱԵ[Ա]ՆՑԻ,
ՎԱՐՊԵՏ ԽՈՍՐՈՎ ՆԱԼՅԵ[Ա]ՆՑ,
ՎԱՐՊԵՏ ԱՐԹՈՒՆ ԳՐՅՔՈՒՐԵ[Ա]ՆՑ
ՍԱՎԱՏ ԼԱԼԱԵ[Ա]ՆՑ-ՏՈԼԿԱՐ։

Ծան.— Կարծում ենք, որ այս անունները 1907 թ. նորոգման վարպետներինն են։

«Տոլկար» նշանակում է հյուսն։

18. 1854 թ.

Նախորդից վար, մեկ քարի վրա, 4 տող.

ՔԻ ԾՅ ԸՍՏԵ-
ՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ-
ԵԱՆ— ՋԱԼԱԼԵԱՆՑ։
1854։

19. ՋԻ (1471) թ.

Տաճարի հյուսիսային պատի արևելյան մասում, 3 տող, հիմնականում 3 քարի վրա, միայն 2-րդ տողի-վերջին մեկ տառը 4-րդ քարին անցած։

ԵՍ ՍՄՊԱՏ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՓԻՐՀԱՄՋԻՆ ՏՎԻ
ԲԵՄԻՆ ՀՈՂՆ ԻՄ ՊԱՊԵՑ ՀՈԳՈՅՆ ՍԲ ՈՒԽՏՍ
ԳԱՆՁԱՍԱՐԱ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՏՐ ՆԵՐՍԷՍԻ։ ԹՎ : ՋԻ : ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ. 375, Ջալալեանց, Ա, 185, Օրբելի, 11։

Ծան.— Այժմ թվականը չի ընթերցվում, քայքայված է։ Օրբելին է դրել թվականը՝ մտածելով, սակայն, թե հնարավոր է, որ եղած լինի նաև թվականի միավորը, որի տեղը «ծածկված է աղաշերտով»։

Պետք է կարծել, որ «Բեմին հողն» հանդամասի անուն է։

20. ՋԽԴ (1495) թ.

Տաճարի հյուսիսային պատի արևելյան մասում, վերջին կամարի կիսասյան և պատեզրի արանքում, վարից, 7 տողով.

ՎԱԽՄՍ ԱԹԱՊԱԿԻՆ Է։
ԵՍ ԱՅՏԻՆՍ, ԽԻՄՇԷՍ՝
ՈՐԴԻ ԱԹԱՊԱԿԻՆ, ՏՎ-
ԱՔ ԱԼՄԱՃԱՅ ՏԱԲԻ ՀՈՂՆ
Ի ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱՅ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ ՏՐ ՆԵՍԷՍԻ։
ԹՎ : ՋԽԴ : ԴԹԻ

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 375, Ջալալեանց, Ա, 185, Բարխուտարեանց, 177, Օրբելի, 11։

Ծան.— «Աթապակին» քանդակված է կցագրերով, որոնցում «ԱԹԱ»-ի փոխարեն ստացվել է Թ-, իսկ Կ-ի փոխարեն՝ Վ։ Առաջինի Ա-ն շրջված է և պետք է կարդալ երկու անգամ։

«ԴԹԻ»-ն հավանաբար գրիչ-փորագրողի ստորագրությունն է։

Շահխաթունյանցը տառասխալներ ունի, ինչպես նաև՝ մի երկար անեծք, որ չկա բնագրում, բաց է թողել «Վախմս Աթապակին է»-ն։ Եվ թվական է դրել ՋԺՋ (1467)։ Նույն սխալներն առկա են նաև Ջալալյանցի ընդօրինակության մեջ։ Երկուսի հիմքն էլ Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունն է։

Բարխուտարյանցն ամեն ինչ ճիշտ է ընդօրինակել՝ բաց թողնելով միայն «Վախմս Աթապակին է»-ն։

«Վախմ» արաբերեն «վակուֆ»-«վախուֆ» բառն է, որը նշանակում է ընծա, նվիրաբերություն և XI—XII դարերից սկսած հայոց լեզվում փոխարինել է «յիշատակ», «հոգեցատուր» բառերին։ Վիմական արձանագրություններում ու ձեռագրերում առկա են «վախմի» տարբեր ձևերը՝ «ոխմ», «վախֆ», «ոխֆ», «ոխվ», «ոխու», «ոխուս», «ողվ», վերջինից էլ՝ «ողբ», որ ոչ մի կապ չունի մեր ողբ (լաց, կոծ) բառի հետ[1]։

«Ալմաճա տաբը» հանդամասի անուն է. «տաբ»-«տափ» Ղարաբաղի բարբառում նշանակում է հող, հանդամաս, դաշտ։

[1] «Վախմ» տերմինի քննությունը տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Ա., 1969, էջ 431, ծան. 32։

21. ՉԽԲ (1493) թ.

Հյուսիսային պատի կենտրոնական կամարի տակ, 2 քարի վրա, 8 տող։

ԵՍ ՏՈՒՐՍՈՒՆ
ԹՈՌՆ ՄԵԾԻՆ
ՋԱՎԱԼԻՆ ՏՎԻ
ՄՍԵՐՇԻՆ ՀՈՂՆ Ի
ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁ-
ԱՍԱՐԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ
ՏՐ ՆԵՐՍԻՍԻ։
ԹՎ ։ՉԽԲ։ Դ

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 375, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 8։

Ծան.— Դ-ն նախորդ բնագրի գրիչ-փորագրողի ինքնագրի սկզբնատառն է։

22. ՊԺ (1361) թ.

Նույն պատի կենտրոնական կամարի ներքո, 4 քարի վրա, 4 տող.

ԹՎ ՊԺ։ ԻՇԽԱՆՈՒ-
ԹԲ ՄԵԾԻՆ ԻՒԱՆԷԻ ԵՍ ՏՐ ԿՕՍՏ-
ԱՆԴ ՄԵԾ ՓԱՓԱՔԱՆԱՒՔ ԳՆԵՑԻ
ՁՁԱՆԿԱԿԱՆԻՍ, ՍԲ ՈՒԽՏՍ ԲԵՐԻ ԻՄ...

Հրատ. Բարխուտարեանց, 177—178, Օրբելի, 9։

Ծան.— Արձանագրությունն անավարտ է։ Նրա տակ մանր տառերով քանդակված է «Պետրոս», որ հետագայի գործ է։

23. ՉԿ (1499) թ.

Նախորդից վերև, դեպի աջ, մեկ տող.

ԹՎ ։ՉԿ։

Հրատ. Օրբելի, 10։

Ծան.— Փակագիրը բացելու փորձ ոչ ոք չի արել։

24. Անթվական

Նախորդից ձախ, 3 տող.

ԵՍ ՏՐ ԵՂԻՇԱՅ
ԳԻՐԵՑԻ ԱԹՈՌՈՒՄՍ։
ԱՄԷՆ։

25. ՌՃ (1651) թ.

Նախորդից ձախ, 3 տող.

ԵՍ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵԿԻ
ԹՎ ։ՌՃ ։

26. Անթվական

Նախորդից աջ և վերև, 3 տող.

ԵՍ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵԿԻ ԳԱՆՁԱՍԱՐ
ԸՎ ՁԱ...

Ծան.— Վերջին տողերի գրերը կարող են և այլ ձևով ընթերցվել։

27. ՉՂԵ (1546) թ.

Տաճարի հյուսիսային պատի կենտրոնում, մեծ կամարի ներքո, թվականը զարդանախշ գրերով, 9 տող.

ԹՎ ։ ՉՂԵ ։
ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՍԱՐԳԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈՐԴԻ ՀԱՏԻ-
Ր ՄԷԼԻՔԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻՆ ՍԱՅՏՈՒՆԻՆ ԵՒ
ԳՆԵՑԻ ՁՀԱՅՐԵՆԻՔՆ ԿԱՍՐԱՅ ։Զ։ ՍՏԱԿՆ, ՄԵ-
ՆԱԿ ՏԱՆ ։Դ։ ԸՍՏԱԿՆ ՈՒ ԿԷՍ, ԱՌԱՏՈՒՆՈՅ ։Բ։ ԸՍՏ-
ԱԿՆ, ԿՈՌԱԼԱՆԱՅ ։Դ։ ԸՍՏԱԿՆ, ՏՎԻ ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱ-
ՆՁԱՅՍԱՐԱՅ։ ՈՎ ՁԱՅՍ ՀԱՅՐԵՆԻՔՍ ՀԱՆԷ Ի

ՍԲ ԵՂԵՑՈՅՍ, : ԳՃԺԸ : ՀԱՐԱՊԵՏԱՅՆ ՆՀՈ-
ՎԱՆ Է, ՍԲ ՈՎԱՆԻՍԻՍ ԿԱՊԱՏ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 373—374, Ջալալեանց, Ա, 187, Բարխուտարեանց, 177, Օրբելի, 9։

Ծան.— Շահխաթունյանցն ու Բարխուտարյանցը ճիշտ են հրատարակել, իսկ Ս. Ջալալյանցի ընդօրինակության մէջ անուններն աղավաղված են՝ «ՀԱԴԻ ՄԷԼԻՔԻՆ ԹՈՌՆ ՄԵԾԻՆ , ԱՅԴՈՒՆԻՆ»։

Ստակի մասին տե՛ս արձանագր. № 12-ի ծանոթությունը։

Ուշադրության արժանի է «:Դ: ըստակն ու կեսը», քանի որ սա ինքնին հավաստում է, թե ստակը եղել է «ամենայն իրաց» մեկ-վեցերորդից ո՛չ ավելին։

Թվարկված «Կասրայ», «Առատունոյ», «Կոռալանայ»-ը հանդամասերի անուններ են (սեռական հոլովով), իսկ Մենակ տունը՝ գուցե թե հյուրանոց կամ իջևանատուն, որի հասույթի «:Դ: ըստակն ու կէսն» էր ընծայաբերվում, այսինքն՝ հասույթի չորս ու կես-վեցերորդական մասը։

Որ թվարկված «Կասրայ, Առատունոյ և Կոռոլանայ»-ը հողամասերի, արտատեղերի անուններ են, այդ երևում է ՌՀ (1621) թ. կազմված մի փաստաթղթից, որի ստորագրողները Կուռալանը (և ոչ թե Կոռալանը) ներկայացնում են որպես հանդամաս, որը գտնվում է Քարագլխի (այժմ՝ Ստեփանակերտի շրջանի Քարագլուխ գյուղ) մոտ, բայց քարագլխեցիները, սկսած ապուպապերից, չեն վարել, որովհետև «Կուռալան Գանձասարա վախմ ա»։ Սույն փաստաթղթին, իբրև վկա, ստորագրել է նաև «Յովհաննէս վարդապետ Ծայրեցին»[1]։

28. 1854 թ.

Տաճարի հյուսիսային պատի կենտրոնում, լուսամուտից ներքև, 3 տող.

ՔԻ ԾՅ ՄԻՐԶԱ-
ՋԱՆ ՊԱՏՎԱ-
ԿԱՆՈՎ։ 1854։

[1] Տե՛ս Հ. Թոփչյան, Ցուցակ ձեռագրաց Խ. Վ. Դաղեան, Բ, էջ 24բ։

29. ՉԿԹ (1520) թ.

Տաճարի հյուսիսային պատի կենտրոնում, ներքևից, 4 տող.

ԹՎ : ՉԿԹ :
ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՇԵՑԻՆ ԵՒ
ՁՏՐ ՍՏԵՓԱՆՈՍՆ
ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ։

30. ՌԺ (1561) թ.

Նույն պատի արևելյան մասում, խաչի կողքին, մանրատառ, 4 տող.

ՄԵԼՔՈՒՄ
ՔԱՍՊԱՐ
ԹՎ : ՌԺ :
ՋՈՒՂԵՑԻ։

31. Անթվական

Նույն պատի արևելյան մասում, 3 տող.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԴԱՒԻԹ ԱԲԵՂԱՍ
ԱՄԱՐԱՍԱՅ՝ ՍԲ ՈՒԽՏՍ ԵԿԱՔ
ՊԱՅԱՆԴՈՒՐ ՊԷԿՆ, ԽՁՆ, ԳՁ։

Ծան.— Հավանաբար փորագրվել է նախորդից հետո, քանի որ վերջին տողի անունները տեղավորելու համար անհարմար ու անսովոր կրճատումներ են կատարել մինչև նախորդ արձանագրությունն ընկած հատվածում։

32. ՌԽ (1591) թ.

Նախորդի մոտ, 3 տող, մանրատառ.

ԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ ՄՈԿԱ-
ՑԻ
ԹՎ : ՌԽ :

33. ՌԽԱ (1592) թ.

Տաճարի հյուսիսային պատի արևելյան մասում, 5 տող, մանրատառ.

ԵՍ ԸՄՊԱՐ-
ԱՔՍ ՕՇԵՑԱ
Ի ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ
ՋՈՒՂԵՑԻ
ԹՎ : ՌԽԱ :

Սան.— *Տողերն իրար են խառնված։*

34. Անթվական

Նույն պատի արևմտյան մասում, ոճավորված մի խաչի ձախ կողմին, 2 տող.

ԽԱՉՍ ՀՌՈՒՄ-
ՍԻՄԻՆ Է։

35. ՌԻԲ (1573) թ.

Տաճարի արևելյան պատի աջակողմյան կամարի ներքո, 5 տող.

ԹՎ : ՌԻԲ :
|ԻՇԽԱՆՍ
ՈՐԴԻ ՄԵ-
ԼԻՔԻՆ
ՆՋ ԳՐԻ...

Սան.— *Մելիքը հավանաբար Հասան-Ջալալյան Հատիր-Մելիքն է, և նրա որդին է արձանագրողը։*
Արձանագրությունը կիսատ է։

36. ՌԽԴ (1595) թ.

Նույն կամարի ներքո, որմնասյան աջ կողմում, 10 տող.
ՄԱ|ՐԿ|ՈՍ|ՍԱ|ՐԿԱ\ԻԱ|ԳՍ|ԳՐԵՑԻ|Թ : Ռ|ԽԴ :

37. ՌԽԶ (1597) թ.

Պատի կենտրոնական մասում, 3 տող.

ԹՎ : ՌԽԶ : ԳԱՆՁԱՍԱՐԻ
ԱՇԿԵՐՏ
ԳԱՆՃՑԻ։

38. ՌՄԵ (1756) թ.

Նախորդի կողքին, 5 տող.

Ա Ռ Զ Զ Զ Զ
ԵՍ ՄԻ-
ՐՁԱ-
ՊԷԿՍ
ԳՐԵՑԻ : ՌՄԳ : Թվ։

Հրատ. *Օրբելի, 12։*

Սան.— *Պարզ երևում է, որ տեղում արձանագրություն է եղել, քերել են, տեղը քանդակել այս նորը։ Հնից պահպանվել են գրերի հետքեր։ Իսկ առաջին տողի անիմաստ տառաշարը ոչ մի կապ չունի ո՛չ այս և ո՛չ էլ հին արձանագրության հետ։ Հավանական է, գրիչ-փորագրողն է ձեռքը վարժեցրել։ Առհասարակ նման վարժությունների հետքեր շատ կան տաճարի արևելյան պատին։*

Լինելով տաճարի ու գավթի մուտքերից հեռու, այսինքն՝ մարդկանց հայացքներին անհաղորդ, այս պատը քիչ արձանագրություններ ունի, և այդ քիչն էլ զուրկ է պատմական խիստ կարևոր նշանակությունից ու չի վերաբերում ո՛չ Ներքին Խաչենի իշխանական տան ներկայացուցիչներին, ո՛չ էլ նույնիսկ վանական ուխտին միաբանած ազդեցիկ եկվորներին։ Այստեղ մեծ մասամբ իրենց անուններն են քանդակել վանքի տիրացուներն ու ցածրաստիճան մյուս սպասավորները։ Նույնիսկ հիմք կա մտածելու, որ ինչպես այս, այնպես էլ արևելյան պատին, հատկապես գետնախարիսխներին վանքի տիրացուներն իրենց ձեռքերն են վարժեցրել՝ սովորել գիր քանդակելու արվեստը։ Դրա ապացույց կարող են ծառայել նաև շատ արձանագրությունների կողքերին քանդակված այն ծուռ ու մուռ տառերը, որոնք վերաբերում են հենց այդ արձանագրություններին։

39. ՌՄՂ (1841) թ.

Տաճարի արևելյան պատի կենտրոնում, 3 տող.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ՏԻՐԱՑՈՒ
ՍԱՐԳԻՍՍ ՋԱԼԱԼՈՎ
ԹՆ ։ՌՄՂ։-ԻՆ։

40. Անթվական

Նույնի մոտ, 3 տող.

ԵՍ ՏԻՐԱՑՈՒ ԻՍՐԱԷԼՍ
ԳՐԵՑԻ, ՈՐ ԵՄ ՈՐԴԻ
ՏՐ ԳՐԻԳՈՐԻ։

41. 1818 թ.

Նույն պատի հարավային որմնախորշի աջ նիստին, 4 տող.

1818 ԱՄԻ ԱՅ ԾԱ
ՆԻԿՈԼ ԱԻԵՏԻՍ-
ԵԱՆ-ԱԽՎԵՐ-
ԴԵԱՆՑ։

42. Անթվական

Նախորդից ցած, 3 տող.

ԻԻԱՆ ՄԱՀՏԵՍԻ
ՂՈՒԼԵԱՆ-ԱԻԱՆ
ԵՍՈՎ։

Սան.— *Հավանաբար նախորդի հետ միաժամանակ է գրվել։*

43. 1854 թ.

Նախորդից աջ, 3 տող.

ՔԻ ԾՅ ԱԻԱՆ
ԱԻԱՆ-ԻԻՋԲԱՇ-
ՈՎ 1854։

44. ՌԽԲ (1593) թ.

Նախորդի տակ, 3 տող.

ԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԹՎ ։ՌԽԲ։

45. Անթվական

Նախորդի մոտ, աջից փակագիր։

ՄԽԻԹԱՐ

46. ՌԻ (1571) թ.

Նույն պատի հիմնախարիսխի քարերից մեկի վրա, 3 տող.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ՏԻՐԱ-
ՑՈՒ ՄԱՐՏԻՐՈՍ ԵԿԻ Ի ՍԲ
ԱԹՈՌՍ ՍԱԿՍ... ՍԵ ։ՌԻ։ ԱՄԻ...

Սան.— *Անավարտ է։ Վստահ չենք «ԱԹՈՌՍ»-ից հետո եղած տառաշարի մեր ընթերցանության վրա։*

47. Անթվական

Նախորդից ձախ, 2 տող.

ԵՍ ԴԱՆ-
ԻԵԼՍ ԳՐ[ԵՑ]Ի։

48. Անթվական

Նախորդից ցած, կցագրով, ապա նույնը տառերով.

ԵՍ ՄԽԻԹԱՐՍ։

49. Անթվական

Նախորդից աջ, մեկ տող.

ԵՍ ՏԻՐԱՅՈՒ ԿԱԼՈՒՍՍՍ։

50. Անթվական

Նախորդի տակ, դեպի աջ, 2 տող.

ԵՍ ՀՕՀԱՆՍ
ԳՐԵՑԻ։

51. Անթվական

Նույն պատի հյուսիսային մասում, 6 տող.

ԵՍ ԱՆԱՐԺ/ԱՆ ՏԻՐ/ԱՅՈՒ ՍՈ/ՂՈՄՈՆՍ/ԵԿԻ Ի ՍԲ ԱԹ/ՈՌՍ ԳԱՆՁԱՍԱՐ։

52. Անթվական

Նույն պատի հարավային մասում, 2 տող.

ԵՍ ՏԻՐԱՅՈՒ
ԱԲՐԱՀԱՄՍ։

Հրատ. Օրբելի, էջ 12։

53. Անթվական

Նախորդից աջ, կիսատ, 2 տող.

ԵՍ ՏԻՐԱՅՈՒ
ԵՍՍ...

54. ՌՄԳ (1754) թ.

Վերը հիշատակված փակագրի տեր Մխիթարը (վիմագիր № 45) նույն արևելյան պատին ունի նաև 3 տողանի արձանագրություն.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԱՄԵՆԻՑ ԾԱՌԱ
ՄԽԻԹԱՐՍ ՌՄԳ Թ[ՎԻՆ] ԳՆԱՑԻ
ՍԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ։

55. ՋԻԹ (1480) թ.

Տաճարի հարավային պատին, կենտրոնական մասում, 2 քարի վրա։ Առաջին տողի վերջին «ՔՍ»-ն անցել է հաջորդ քարը, որի վրա արձանագրություն քանդակողը անջատման 4 կետեր է դրել և նոր միայն սկսել իր գիրը, 5 տող.

ԿԱՄԱԻՆ Ա՛Յ ԵՍ՝ ՎԷԼԻՃԱՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՔՍ
ԻՄ՝ ՈՐԴԻ ՍԱՅՏՈՒՆԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻՆ ԱՂ-
ՊԱՍՏՈՒ Տ՚Ր՚Ն ԽԱՉԻՆՈՒ ՏՈՒԱՔ ԱՇՄԱ-
ՆԱՅ ԻԻՐ :Դ: ՍԱՀՄԱՆԱՒՆ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱՅ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ Տ՚Ր՚ ՆԵՐՍԷՍԻ։ ԹՎ՚ : ՋԻԹ :

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 374, Ջալալեանց, Ա, 187; Բարխուտարեանց, 179, Օրբելի, 12։

Ծան.—Շահխաթունյանցի գրքում «Աշմանայ»-ի փոխարեն «Ալմանայ» է, «սահմանաւն»-ի փոխարեն՝ «սահրատովն», թվականն էլ՝ ՋԽԹ (1500)։ Ջալալյանցը թվական է արտագրել ՋԽ (1491)։ Բարխուտարյանցն ընդօրինակել է սխալ։

«Աշմանա» հողամասի անուն է՝ վկայված նաև այլ աղբյուրներում։ Վերը հիշատակված (տես արձ. № 27)՝ քարագլխեցիների կողմից կազմված փաստաթղթում այն ներկայացված է որպես Քարագլուխ գյուղի տարածքում գտնվող արտատեղ, որը «Գանձասարա վախմ ա»։ Փաստաթղթի ընդօրինակողն «Աշմանա»-ն սխալմամբ կարդացել է «յալմանա», «յալմանէ»[1]։

«: Դ : սահմանաւն», որ բառացի լինում է «չորս սահմանով», ամենայն հավանականությամբ պետք է նշանակեր հանդամասն ամբողջությամբ, առանց մնացորդի։

56. ՋԽԸ (1499) թ.

Նախորդին կից, աջ կողմում, 8 տող.

ԿԱՄԱԻՆ Ա՛Յ ԵՍ ՄԵԼԻ-
ՔՍ՝ ՈՐԴԻ ՍԱՅՏՈՒՆԻՆ,
ԹՈՌՆ ՄԵԾԻՆ ԱՂՊԱ-
ՍՏՈՒ ՏՎԻՇՈՐՋԱՐ, ԸՍԿԻ

[1] Տե՛ս Հ. Թոփչյան, Ցուցակ Խ. Վ. Դաղեան, Բ, էջ 24բ։

ՈՒ ԱՅԼ ԸՆԾԱՅ՝ ԿԱԿԱՉԱՆՑ,
ՓՈՒՏՈՒՌԱՆՈՒՑ, ԾԱՂԿԱ-
ՎԱՆՑ ։Բ։ ԸՍՏԱԿՆ ԳՆԵՑԻ, ՏՎԻ ՍԲ
ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐ։ ԹՎԻՍ : ՁԽԸ :

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 374, Ջալալեանց, Ա, 184—185, Բարխուտարեանց, 179, Օրբելի, 13։

Ծան.— Շահխաթունյանցը դարձյալ մի երկար անեծք ունի, որ վիմագրի մեջ չկա, սակայն առկա է Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրության մեջ։ Ըստ երևույթին, Գանձասարի կաթողիկոսն իր ժամանակ լայն տարածում գտած՝ վանքապատկան հողերի ու սեփականության կողոպուտների դեմ չի գտել այլ միջոց, քան հին նվիրատվական վիմագրերին ահեղ անեծքներ ավելացնելը։

Ջալալյանցն այդ անեծքն էլ ունի, «Աղպաստու»-ն էլ դարձրել է «Հախպատու»։

Բարխուտարյանցը դուրս է թողել «տվի», «Բ ըստակն», թվականը, չնայած դրանք բոլորն էլ պարզ երևում են բնագրում։

Առաջին անգամ անթերի ընդօրինակել է Հ. Օրբելին։

Վիմագրի հեղինակը կամ փորագրողը մի շարք սխալներ է կատարել. շուրջառի փխ. «շորջար», «սկիհ»-ի (եկեղեցական արծաթյա անոթ) փխ. «ըսկի»։

Կակաչանց, Փուտուռանուց, Ծաղկավանց գյուղերը թե՞ հանդամասերը (ավելի ճիշտ՝ նրանց հասույթները) Գանձասարի միաբանությանն են նվիրաբերվել իրենց Բ ստակի չափով (երկու-վեցերորդական մասով)[1]։

57. ՌԺԲ (1563) թ.

Տաճարի հարավային պատի արևմտյան մասում, մեծ կամարի ձախ որմնասյան տակ, 6 տող.

ԹՎ : ՌԺԲ :
ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԱՂԱԲԷԿԻ՝
ՈՐԴԻ ՄԷԼԻՔ[Ի], ԱՄԻՐԻՆ ՀՈՂՆ ԻՄ
ՀԱՅՐԵՆԻՔ ԷՐ, ԼԻ ՍՐՏՈՎ ՏՎԻ
ՍԲ ՈՒԽՏՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ
ԻՄՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ...

[1] Ստակի մասին տե՛ս № 27 արձ. ծանոթագրությունը։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 376, Օրբելի, 13։

Ծան.—Շահխաթունյանցը, ինչպես նաև նրա աղբյուրը՝ Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունը, «Ամիրին»-ի փոխարեն ունեն «Միրին»։ Հ. Օրբելին նկատել է, որ բնագրում բառն սկսվում է Ա-ով և տեղանունը կարդացել է «ԱԻՐԻՆ»։ Այս դեպքում նա չի նկատել, որ Ա-ն կցագրված է Մ-ի հետ։ Կարծում ենք կցագրի բացումով ավելի ճիշտ կլինի կարդալ «ԱՄԻՐԻՆ», քան թե, ասենք, «ՄԱԻՐԻՆ»։

3-րդ տողում արձանագրողի հայրանունը լրիվ չի ընթերցվում։ Պարզ երևում են Մ, Լ տառերը և անորոշ՝ Է, Ի։ Հավանաբար հստակ չի երևացել նաև Եսայի կաթողիկոսի ժամանակ։ Կամ թերևս նա ուշադիր չի ընթերցել արձանագրությունը։ Այս կասկածի համար հիմք է տալիս այն հանգամանքը, որ նա չի նկատել Ա.-ի ցայտուն կցագիրը։ Այսուհանդերձ, Եսայի կաթողիկոսը գրել է «Աղաբեկի՝ որդի Սմբատա», և Շահխաթունյանցն էլ «Սմբատա» է հրատարակել։ Երևի ավանդույթի ուժով էլ «Սմբատա» է կարդացել Հ. Օրբելին, չնայած կենտրոնում շատ լավ երևացող Լ-ն նրան պետք է զգուշացներ նման ընթերցումից։

Մենք դարձնում ենք, «Աղաբեկի՝ որդի Մէլիքի», նկատի առնելով բնագրում որոշակիորեն երևացող Մ, Լ տառերը, ապա նաև՝ որ 16-րդ դարում և առհասարակ Խաչենի իշխանության ժամանակներում հայտնի իշխանազուն միակ Աղաբեկ (+ի)-ն այն Մելիքի որդին է եղել, որը հայտնի էր նաև Հատիր-Մելիք անունով։ Վերջինիս որդի Եղիշե աբեղան աստանդական է եղել և Թոխատում ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում հիշել է իր եղբայրներին, այսինքն՝ Մելիքի որդիներին՝ «Աղայպակին և Աղայպաստին և Սէտիպակն»[1]։

«Ամիրին հողն» հանդամասի անուն է՝ հավանաբար իր նախկին տեր Ամիրից այդպես կոչված։

58. ՌՄԻԸ (1779) թ.

Տաճարի հարավային պատի արևմտյան մասում, 4 տող.

[1] Մատենադարանի ձեռ. № 6644, էջ 166բ։

Հատիր-Մելիքի որդիներ Աղբաստին ու Սեյտիին (Սեյտիբեկ) չպետք է շփոթել նույն անուններով հայտնի իշխանների հետ, որոնցից առաջինը Հատիր-Մելիքի պապն է եղել, երկրորդը՝ հայրը։ Հատիր-Մելիքն ընտանիքի ավագ տղան չի եղել, որի պատճառով էլ ո՛չ ինքն է իշխանության աթոռին բազմել, ո՛չ էլ իր տղաներից որևէ մեկը։

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ
ԱՄԵՆԻՑ ԾԱ-
ՌԱ ՅԱԿՈԲՍ
ԳՐԵՑԻ Թ[ՎԻՆ] ՌՄԻԸ։

59. ՌՄԽԵ (1796) թ.

Նույն պատի ստորին մասում, հիմնախարիսխի վերին շարքի քարին, ձախից երկրորդ կամարի ներքո, 4 տող.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ
ԱՄԵՆԻՑ ԾԱ-
ՌԱՅ ԱԿՕԲՍ
ԳՐԵՑԻ ԹՎԻՆ : ՌՄԽԵ :

Ծան.— Թվականի տասնավորն ու միավորը պարզ չեն երևում։ Երևի այս և նախորդ արձանագրությունները նույն մարդուն են վերաբերում, եթե նա չգիտե իր իսկ անվան ուղղագրությունը։

60. Անթվական

Նույն կամարի ներքո, աջ կողմում, մեկ տող.

ԵՍ ՏԻՐԱՅՈՒ ՄՈՒՔԱՅԵԼ։

61. Անթվական

Նախորդից աջ, արևելյան որմնասյան ներքո, հիմնախարիսխի երկրորդ շարքի քարի վրա, մի փոքրիկ գեղեցիկ խաչի տակ, երկու տող.

ԵՍ ՏՐ ԵՂ-
ԻԱՋԱՐ։

62. ՊԿ (1411) թ.

Գավթի ներսում, հյուսիսային որմնասյան արևմտյան մույթի վրա, մուտքից արևելք, խաչերի տակ, 8 տող.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՋԱՆԻԿՍ ԿԱՆԿՆ-
ԵՑԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ-
Ո ԻՄՈ ԵՒ ՁԱՒԱԿԱՅ ԻՄՈՅ՝
ՔՈՋԲԵԿԻՆ ԵՒ ՈՒԳԱՐԻՆ ԵՒ ՁԱ-

ՆԻԲԷԿԻՆ, ՋԱԼԱԼԲԷԿԻՆ, ՁԱ-
ՁԻՁԽԱԹՈՒՆԻՆ . . .
ԱՐՈՒՁԻՆ ԵՒ ԿԱ... ՅԻՇԵՑԵՔ Ի
ՔՍ։ Թվ : ՊԿ :

Հրատ. Օրբելի, 28։

Ծան.— Արձանագրության աջ մասը դեռևս Հ. Օրբելու ժամանակ խիստ վնասված է եղել։ Այժմ դժվարությամբ է ընթերցվում։ Օգտվել ենք Օրբելու ընդօրինակությունից։

63. 13-րդ դ.

Գավթի ներսում, խաչվող կամարների հենակ հանդիսացող արևելյան որմնասյուներից աջակողմյանի խոյակից վեր առաջին քարի վրա մեծ ու գեղաքանդակ խաչ կա, որից վերև արձանագրությունն է, 2 տող.

ՌՁՈՒԴԱՆ-
ԻՆ Է ԽԱՉ։

Ծան.— Անկասկած Հասան-Ջալալի դուստր և Բորա-Նոյինի կին Ռուզուդանին է վերաբերում։ Վանքի հովանավորները միայն նրան կարող էին հատկացնել նման փառավոր տեղը։ Խաչանախշն ու նրա արձանագրությունը իշխում են գավթի վրա և, գտնվելով տաճարի մուտքից վեր, հանդիսանում են նաև նրա ամենակարևոր զարդերից մեկը։

64. 13-րդ դ.

Ձախակողմյան որմնասյան խոյակից վեր ևս համանման խաչ կա՝ դարձյալ երկտող, խոշորատառ արձանագրությամբ, որը դժվարությամբ է ընթերցվում, որովհետև առաստաղից իջնող անձրևաջրերը ծածկել են կրաշերտով.

ՈՒԼՈՒԽԱԹ-
ՈՒՆԻՆ Է ԽԱՉ։

Ծան.— Ընթերցվող տառերի տեղը կարող է լինել «Մինա»՝ Հասան-Ջալալի երրորդ աղջկա անունը։

Հայտնի է, որ Հասան-Ջալալն ունեցել է մեկ արու զավակ Աթաբակ-Իվանե անունով և երեք դուստր՝ Մամախաթուն (Ամեկի կինը),

Ռզուքան (Բորա-Նոյինի կինը) և Մինախաթուն (Տարսայիճ Օրբելյանի կինը)։ Աթաբակ-Իվանեի արձանագրությունը քանդակված է տաճարի մուտքի աջակողմյան որմնախորշում, Մամախաթունինը՝ նույն մուտքի ձախակողմյան որմնախորշում, իսկ Ռզուքանինը, ինչպես տեսանք, աջակողմյան որմնասյան խոյակից վեր։ Բոլորն էլ՝ տաճարի ամենապատվավոր տեղերում։ Վանքի հովանավորի ժառանգներից միայն մնում էր Մինախաթունը, որին էլ, հավանաբար, պետք է հատկացնեին մյուս որմնասյան խոյակից վերևը։

65. Անթվական

Գավթի ներսում, հարավային պատի կենտրոնական մասում, լուսամուտի ներքո, խորանավոր խաչերի տակ, հինգ տող.

ՍԲ ԽԱՉԵՐՍ ԲԱՐԵԽԱԻՍ
ՊՈՂՈՍԻՆ, ՇՀ-
ԱՂԱՄԻՆ,
ՈՐԴՈՅ ԵՒ ԴՍՏԵ-
ԵՐԱՅՆ։

66. 16-րդ դ. երկրորդ կես

Գավթի ներսում, հարավային պատի կենտրոնական մասում, լուսամուտի տակ, ձախից, խաչի մոտ, երկու տող.

ՍԻՄԷՈՆ
ՄԷՐՀԱՊ։

Ման.— Կարծում ենք՝ վերաբերում է Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչներին։ Այս անունով իշխանազուններ են ապրել (միաժամանակ) 16-րդ դ. երկրորդ կեսին և 17-րդի սկզբին։ Մերհաբը կամ Մեհրաբ(բեկ)ը Ջալալ իշխանի որդին է եղել։ Իսկ Սիմեոնը, որ կաթողիկոսական աթոռն զբաղեցրել է կարճ ժամանակով և մահացել է 1616 թ., հավանաբար, Մեհրաբ բեկի եղբայրն է եղել։ Մերհապ ձևը գրական Մեհրաբ անվան տեղական արտասանությունն է՝ Հ, Բ հընչյունների դրափոխությամբ։

Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, մնում է եզրակացնել, որ նրանք արձանագրությունը փորագրել են երիտասարդ հասակում, առանց տիտղոսների։

67. 17-րդ դ. սկիզբ

Գավթի ներսում, հարավային պատի կենտրոնական մասում, խորանավոր խաչից վերև, 7 տող.

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ
ՓՐԿՈՒ-
ԹԵԱՆ
ՀՈԳ
ՈՅ Ի-
ՄՈՅ

Ման.—Ինչպես նշվել է նախորդ արձանագրության առթիվ, Սիմեոն կաթողիկոսը մահացել է 1616 թ.։

68. Անթվական

Գավթի ներսում, արևմտյան պատի արևելյան մասում երեք խաչ, յուրաքանչյուրի տակ՝ մեկ անուն.

ՏՐ ԱԿՈԲ, ԱՀԱՐՈՆ, ՄԱՆՎԵԼ։

69. Անթվական

Գավթի ներսում, հարավային պատի որմնասյան արևմտյան երեսին, չորս խաչերի տակ, երկու տող.

ԹԱՄԹԱ ԽԱԹՈՒՆԷՆ
Է ԽԱՉՍ։

70. Անթվական

Գավթի ներսում, հարավային պատի որմնասյան մույթի ուռուցիկ մասի վրա, մեկ տող.

ՊԵՏՐՈՍ ԾԱՌԱՅ Ա՛Յ։

71. ՋԿԳ (1514) թ.

Գավթի ներսում, արևմտյան պատի կենտրոնում, մուտքից ձախ, խաչերի աջ կողմին, ութ տող.

ԽԱՉԵՐՍ ԱԿ-
ՈԲԱՅ ՈՐԴՈՅ՝
ԵՍԱՅԻՆ ԱՒ-
ՄԵՐՀԱՅ,
ՈՒԼՈՒՂ-
ԱՆԻՆ
Թվ
: ՉԿԴ :

72. Անթվական

Գավթի ներսում, գավթի շինարարական արձանագրության տակ, փորած խաչերի արանքում, 3 տող.

ԽԱՉՍ | ՍԱՐԳ | ԱԻԱ...

73. Ջ... թ.

Գավթի արևելյան պատի հյուսիսային մասում, խաչերի տակ, երեք տող.

Թվ Ջ...
ԽԱՉԵՐՍ ՊԵՏՐՈՍ
ԻՐԻՑԻՆ Է։

Սան.— *Թվականի մնացած մասը քայքայված է, չի ընթերցվում։*

74. Անթվական

Գավթի ներսում, հյուսիսային պատի արևելյան մասում, վարից, երեք խաչերի տակ, 2 տող.

ԽԱՉՍ ԲԵՍՈՒՐԱԹԻՆ,
ՓԱՇԱՄԷԼԻՔԻՆ Է, ԲԱԽՏԻԵԱՐԻՆ Է։

75. ՌՄԼ (1781) թ.

Գավթի հյուսիսային պատի կենտրոնական մասում (դրսից), մուտքից ձախ, մեկ քարի վրա, 10 տող.

Ի : ՌՄԼ : ԹՈՒԻՍ ԿԱՄԱԻՆ ԱՅ, ՁԵՌԱՄԲ ՏՆ
ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՍ ԱՊԱԻ ՈՒՉԲԱՇԻ

ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ՅՈՎՍԵՓԱ ԹԱԼԻՇՈՒ ԵՒ
ԻՄ ԿԵՆԱԿԻՑ ՀԵՐԻՔՆԱՁ ԵՒ ՈՐԴԻՔ ՄԷԼԻՔ ՊԷԿԼ-
ԱՐ ԵՒ ՄԷԼԻՔ ԱԲԱՒ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ՇԻՆԵՑ-
ԱՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԳԱՆՁԱՍԱՐՈՒ ԵՐԿՈՒ-
Յ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՏԱՆԻՍՆ ԵՒ ԽԱԽՏԻԵԱԼ ՈՐՄՈՒՆՍ ԲԱՁՄԱՒ
ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՁ ԵՒ ՆՆՁԵՑԵԼՈՅ ՄԵՐՈՅ։
ՆԱ ԵՒ ՄԷԼԻՔ ԲԷԿԼԱՐԻ ԿԵՆԱԿԻՑ ՄԱՐԻԵ-
ԱՄՆ ՅԻՇԵՑԷՔ։

Հրատ. *Ջալալեանց, Ա, 192, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 18։*

Սան.— *Արձանագրությունը քանդակելուց առաջ նրա համար ուղղանկյուն շրջանակով հարթություն է փորվել։ Վերջին երկու տողը շրջանակից դուրս է, որ նշանակում է՝ հետո են հիշել ու ավելացրել։*

Տառերն ու կցագրերը քանդակված են բարձր արվեստով, որ լուսանկարի մեջ համարյա չի արտացոլվում, քանի որ արձանագրությունը ոչ միայն հյուսիսային պատին է՝ վատ լուսավորված, այլև շրջանակի մեջ առնված լինելու պատճառով միշտ էլ ստվերի տակ է լինում։

Ս. Ջալալյանցը թվական է արտագրել ՌՃՁ, տառասխալներ ունի և վերջին նախադասությունն էլ չի արտագրել։ Մ. Բարխուտարյանցը ևս չունի վերջին նախադասությունը և թվականին ավելացրել է մի ավելորդ Թ(ՌՄԼԹ)։ Հ. Օրբելին ճիշտ է արտագրել շրջանակի ներսը, բացի մեկ բառից («բազմաւ»-ը կարդացել է «բաղում»), սակայն վերջին նախադասության «Մէլիք Բէկլարի»-ն դարձրել է «Ողոքբէկ նա եւ»։

76. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևմտյան մասում, դրսից, 7 տող.

[ՅՈՒՍՈՎ] ԱՆՄԱՀԻՆ ԱՅ ԵՍ [ԳԵ-
ՐԳ ՁԱՐ] ԱԲԵՐԴԵՑԻ ԱՆԱՐԺ-
[ԱՆ ՔԱ] ՀԱՆԱ ՈՐԴԻ ԾԵՐԱ-
[ԲՆՈՒԱ] ՆԱ ՏՎԻ ՁԻՄ Հ[ՈԳՈ
ԲԱԺԻՆ] Ի ՄԲ ՈՒԽՏՍ։ ՍՈՔԱ : [Բ : Ժ-
[ԱՄ ՏԵԱՌՆԸՆԴԱ] ՌԱՁԻՆ ՏՎԻՆ ԻՆՁ Ե[Ի...
...ԿԱՏԱՐԻՁՔՆ ԱՒՐՀՆԻ[Ն ՅԱՅ]։

Հրատ. Ջալալեանց, Ա, 191, Օրբելի, 20։

Ծան.— Քայքայված տառերը վերականգնում ենք ըստ Հ. Օրբելու կարդացածի։

77. ՊՂԲ (1443) թ.

Գավթի հյուսիսային պատի արևմտյան անկյունում, ստորին մասի անկյունաքարի վրա, 5 տող.

ԿԱՅԱԻՆ Ա՛Յ ԵՍ Տ՚Ր ՎԱՐԴԱՆ ՈՐԴԻ ՋԱԼ-
ԱԼԻՆ ՏՎԻ ԾԱԿ ԽԱՉԻՆ ՀՈՂՆ Ի Ս՚Բ ՈՒԽ-
ՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲՆ
ԱՂՊԱՍՏՈՒ, ԱՌԱՋՆՈ[ՐԴՈՒ] ԹԵԱՄԲ Տ՚Ր ԵՂԻԱՅԻ։ ՍՈՔԱ ՏՎԻՆ
:Բ:ԺԱՄ... Թվ:ՊՂԲ:

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 376, Ջալալեանց, Ա, 188, Օրբելի, 21։

Ծան.— Դժվարությամբ է ընթերցվում։ Սակայն լուսանկարում կան բոլոր տառերի ուրվագծերը, որոնք և հեշտությամբ վերականգնվում են։

Հ. Օրբելին չունի 4-րդ տողի «սոքա»-ն, որ կցագիր է։ Հավանաբար նա պատվի տակ առնված «Ս՚Ք»-ն ընդունել է իբրև «Եղիայի» վերջին երկու տառը՝ «ԱԻ»։ Մինչդեռ առաջնորդի անունը ևս կցագրված է՝ «ԵՂԻ»։

«Ծակխաչին» էլ, որ պարզ երևում է, նա կարդացել է «ԽՉԵՆ»։

Շահխաթունյանցն ու Ջալալյանցն ունեն «Բ օր ժամ» և սրանից հետո էլ՝ անեծք, որոնք բնագրում չկան, սակայն առկա են Եսայի կաթողիկոսի ընդօրինակության մեջ[1]։

Արձանագրությունը փորագրել տվող տեր Վարդանը Հասան-Ջալալյան տոհմի պայազատներից է, XIII դարի վերջին ու XIV դարի սկզբին Խաչենի իշխանությունը վարած Ջալալ Մեծի որդին։ Աղբաստն էլ Վարդանի եղբայրն է ու Ջալալ Մեծի որդին, չնայած այդ մասին արձանագրության մեջ ակնարկ անգամ չկա։ Աղբաստի ինքնությունը պարզվում է ձեռագիր մի փաստաթղթից (գրված 1456 թ.), որը նրան ներկայացնում է որպես «Աղբաստ՝ որդի Ճալալին»[2]։

1 Մատենադարանի ձեռագիր № 9923, էջ 8ա։

2 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 187։

Այս Աղբաստի հետ չպետք է շփոթել նույն տոհմի ներկայացուցիչ Հատիր-Մելիքի որդի Աղբաստին, որն ապրել է մեկ դար հետո[1]։

78. ՁԻ (1271) թ.

Գավթի հյուսիսային մուտքի կամարի ներքո, կիսակլոր ճակատակալին, 9 տող.

ԹԻՒ:ՁԻ:
ԿԱՄԱՒՆ Ա՛Յ ԵՍ ՅՈՀԱՆՆԷՍ
ՈՐԴԻ ԻՒԱՆԷԻ ԱՌԱՋՆՈՐԴ Ս՚Բ ՈՒ-
ԽՏԻՍ ԳԱՆՁԱՍԱՐԱ ՀՐԱՄԱՆԱՒ ՏՆ ԽԱՉ-
ԻՆՈ ԱԹԱԲԱԿԻՆ Ի ՅԻՄ ՀԱՎԱՎ ԱՐԴԵԱՆՑ ԳՆԵՑ-
Ի ՁՎԱՐԴԱՆԱԹԱՂՍ, ՄԻՆ ՁՈՐԵՑԵՁՆ ԵՒ ԱՅԼ ԸՆԴ-
ԷՔ, ՏՎԻ Ի Ս՚Բ ԿԱԹՈՂԻԿԷՍ։ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ ՁՈՀԱՆՈՒ Ձ-
ԱԿՈԲԱ ՏԱՒՆՆ ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԻՆՁ ՊԱՏԱՐԱԳ։ ՈՎ ԽԱ-
ՓԱՆԷ, ԴԱՏԻ ՅԱ՛Յ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 376, Ջալալեանց, Ա, 188, Բարխուտարեանց, 177, Օրբելի, 19։

Ծան.— Հովհաննեսը Հասան-Ջալալի եղբայր Իվանեի որդին է և Գանձասարի առաջնորդական աթոռի վրա հաջորդել է տեր Վարդանին։ Առաջնորդ է հիշվում 13-րդ դ. կեսից։

Շահխաթունյանցը թվական է արտագրել ՃԻ, սակայն փակագծի ներսում ճշտել՝ 1271։ Նրա ու Ջալալյանցի մոտ «չորեցեղն» դարձել է «չորից եղն»։ Մ. Բարխուտարյանցն այն կարդացել է «չորից և զնա»։

«Չորեցեղն» արորն է՝ երկու լուծով և չորս եղով։

Վարդանաթաղը գյուղի կամ հանդամասի անուն է։

79. ՁԻ (1271) թ.

Գավթի հյուսիսային պատի արևմտյան մասում, մեկ քարի վրա, միայն թվականն անցած հաջորդ քարին, 7 տող.

1 Հատիր-Մելիքի որդի Աղբաստի մասին տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 351, 353—354։

ՅԱՆՈՒՆ Ա՛Յ ԵՍ՝ ՍԱՄՆԱՅՍ ՀԱՆԴԱԲԵՐԴԵՅԻ
ԵԿԻ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ Ի՛ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱ
ԻՇԽԱՆՈՒԹԲ ԱԹԱԲԱԿԻՆ, ԶԻՄ ՀՈԳՈ ԱՐԴԻԻ-
ՆՔՆ Ի ԿԱԹՈՂԻԿԷՍ ՏՎԻ, ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ
ԶԾԱՌԶԱՐԴԱՐՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ Ի-
ՆՁ ՊԱՏԱՐԱԳ : Բ : ԺԱՄ ԻՄ ԿԵՆԱԿՑԻՆ ՄԱ-
ՀԱՆ [ԻՆ] : ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵՂԱՅՍ ՊԱՐՏԱԿԱՆ Է: :ՁԻ: ԹԻ

Հրատ. Ջալալեանց, Ա, 189—190, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 21։

Ծան.— Թվականի Ձ-ն քայքայված է, սակայն վերականգնելի, քանի հայտնի է, որ Հասան Ջալալի որդի Աթաբակ-Իվանեն իշխանությունը վարել է 1261—1287 թթ.։

«Ծառզարդարն» տեղում պարզ երևում է, սակայն Ջալալյանցն ու Բարխուտարյանցն ընդօրինակել են «ՁԾառզարդն»։

Հ. Օրբելին ընդօրինակել է անթերի։

80. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, մեկ քարի վրա, 6 տող.

ԿԱՄԱՒՒՆ Ա՛Յ ԵՍ ՍԱՐ-
ԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՄԻԱԲԱ-
ՆԵՑԱ Ս՛Բ ՈՒԽՏԻՍ
ՈՐԴԻ ԳԵՐԳԱ ՏՎԻ
ԸՆԵԱ։ ՍՈՔԱ ՏՎԻՆ
: Ա : ԺԱՄ Ս՛Բ ՍԱՐԳՍԻ ԿԻՐԱ [ԿԻՆ]...

Հրատ. Օրբելի, 17։

Ծան.— Արձանագրությունն անավարտ է։ Քանդակողը տողերը խառնել է՝ ետ գցելով «որդի Գերգա» տեղեկությունը։

Սարգիս քահանային և Գերգին վերաբերող մյուս արձանագրությունների տվյալներից պարզվում է սույն արձանագրության ժամանակը՝ XIV դարի սկիզբը (տե՛ս արձ. 110)։

81. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևմտյան մասում, 5 տող, թերի.

ԿԱՄԱՒՒՆ Ա՛Յ [ԵՍ ՍԱՐԳ]-
ԻՍ ՔԱՀԱՆԱ...
ՄԻԱԲԱՆԵ [ՅԱ Ս՛Բ ՈՒԽՏ]-
ԻՍ ԵՒ ՍՈՔԱ [ՏՎԻՆ]
ՁԱՏԿԻՆ Ո...

Հրատ. Օրբելի, 19։

Ծան.— Արձանագրության աջ մասը (հավանաբար կեսը) վերանորոգման ժամանակ ոչնչացել է. աջակողմյան քարը փոխել են։

Ո՞վ է Սարգիս քահանան, ո՞ր ժամանակից։ Վանքի մյուս արձանագրություններում նույն անունով հիշատակվում են երկուսը՝ «Սարգիս քահանա որդի Պետրոսա» (արձ. 111) և «Սարգիս քահանա որդի Գերգա» (արձ. 80)։ Նրանց վերաբերող տվյալները հաստատում են, որ երկուսն էլ ապրել են 14-րդ դարի առաջին կեսում՝ Աթաբակի որդի Ջալալի իշխանության օրերում։

82. ՁԾԸ (1309) թ.

Գավթի հյուսիսային պատի արևմտյան մասում, երկու քարի վրա, 6 տող.

ՅՈՒՍՈՎՆ Ա՛Յ ԵՍ՝ ԵՍՈՒԳՆԱՍ՝ ԴՈՒ-
ՍՏՐ ՄԵԾԻՆ ԱՄԻՐ ՀԱՍԱՆԱ ՅԵՏ Մ-
ԱՀՈՒԱՆ ԾԻԾԻՆ ԻՄՈՅ ՄԻԱԲԱՆԵՑԻ ՁՆ-
Ա Ս՛Բ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԻ ԸՆԾԱ։ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ ԵՒ ՄԻ-
ԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ : Բ : ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՔԱՌԱՍՆԻՑՆ։ Կ-
ԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՆ ԴԱՏԻ։ ԹՎ : ՁԾԸ : ։

Հրատ. Ջալալեանց, Ա, 189, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 20։

Ծան.— Անծանոթ են Եսուգնա և Ծիծ անունները։ Թանատի վանքի Ս. Ստեփաննոս եկեղեցու արձանագրություններից մեկում վկայված է Էսուկան անուն[1]։ Եթե մեր արձանագրության մեջ հիշատակված Ամիր-Հասանը խաղբակյան տոհմի ներկայացուցիչն է (Ամիր-Հասան Ա), որն ապրել է 13-րդ դ. երկրորդ կեսում[2], ապա հնարավոր է, որ

[1] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 83։

[2] Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք կամ Պռոշյանք, էջ 10, 54 և հտգ.։

նրա դուստր Էսուգնան էլ 1309 թ. իր նախնիների տիրույթները եկած լինի՝ միաբանելու այնտեղի ամենանշանավոր ուխտին։

Ամիր-Հասան է եղել, իհարկե, նաև Հասան-Ջալալյան տոհմում։ Նա որդին էր 1431 թ. վախճանված Ջալալի և 1456-ին վկա է գրվել Խաչենում կատարված հողային մի կարևոր գործարքի[1]։ Բայց այս Ամիր-Հասանը չէր կարող հայրը լինել 1309-ին Գանձասարի վանքին ընծաներ տված Եսուգնայի։

83. 15-րդ դ. առաջ

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, 6 տող.

ԿԱՄԱԻՆ Ա՛Յ ԵՍ՝ ԲՈՒ-
Տ ՈՐԴԻ ՀԱՄԱՄԱ ՄԻ-
ԱԲԱՆԵՅԱ ՄԲ ՈՒ-
ԽՏԻՍ, ՏՎԻ ԸՆՁԻ-
Ց ԻՄՈՅ։ ՍՈՔԱ ՏՎ-
ԻՆ : Բ : ԺԱՄ ՇՈՂԱԿԱԹԻ ՏԱԻՆԻՆ։

Հրատ. Ջալալեանց, Ա, 191, Օրբելի, 15։

Մեկ.—Կարծում ենք, որ հաջորդ (1495 թ.) արձանագրությունից շատ ավելի հին է, քանի որ սրա «Շողակաթի տաւնին»-ի քայքայված մասի տակ է, որ քանդակվել է հաջորդը։

Հ. Օրբելին «Համամա»-ն ընդօրինակել է «Ծամամա», երևի նրկատի առնելով, որ այդ անվան առաջին տառի վերին մասը քայքայված է, իսկ պահպանվող ստորին մասը կիսաշրջանի ձև ունի և կարող է լինել Ծ-ի մաս։ Սակայն անկախ այն հանգամանքից, որ Ծամամ անունն անսովոր է, հետևապես և քիչ ընդունելի, չի կարելի մոռանալ, որ ցածի կիսաշրջանաձև մասով է քանդակվել նաև Հ-ն։ Դրա մեջ համոզվելու համար բավական է նայել թեկուզ հենց այս արձանագրության տակ Իսուբի քանդակած Հ-ն («Հ՝»), որի համապատասխան մասին շատ է նման այն, ինչ Օրբելին ընդունել է իբրև Ծ։

84. ՋԽԴ (1495) թ.

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, 7 տող.

ԵՍ՝ ԻՍՈՒԲ ՏՎԻ ԲԱՋ-
ՄԱՅՏՎԵՅ ՆՈՎ-

1 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 187։

ԵՐԵՆ ՀՈՂՆ Ի ՄԲ ՈՒԽՏՍ
ԳԱՆՁԱՍԱՐ ԱՌԱՋՆՈՐԴ-
ՈՒԹԵԱՄԲ ՏՐ ՆԵՐ-
ՍԻՍԻ ԹՎ
: ՋԽԴ : ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 375, Օրբելի, 15։

Մեկ.—Շահխաթունյանցն ու նրա աղբյուրը «Իսուբ»-ի փոխարեն ունեն «Ուսուպ» և այլ տառասխալներ, ինչպես և մի ավելորդ անեծք։

«Բազմայտվեց Նովերեն հողն» կապակցության մեջ Նովերեն հողը հանդամաս է՝ իր անունն առած Նով-ից, որը Ղարաբաղի բարբառում նշանակում է աղբյուրի ակնի վրա քարից փորված կամ փայտից սարքված ջրավազան, որից ջուր են խմում անասունները։

«Բազմայտվեց» բառ չկա։ Հավանաբար փորագրողի ինքնահնար բարդությունն է՝ կազմված «բազում» ու «տալ» բառերից և պիտի նշանակի բազմատու, բազմարդյուն, բերրի։

85. 15-րդ դ. երկրորդ կես

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, 4 տող, անավարտ.

ԵՍ՝ ԱԼԹՈՒՆ ՈՐԴԻ
ՃՀԱՆՇԻ, ԹՈՌՆ ՇԵՐ-
ԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ
ՏՐ ՆԵՐՍԻՍԻ ՏՎԻ...

Հրատ. Օրբելի, 17։

Մեկ.—Առաջին պակաս մասը, որ այժմ քայքայված է, վերականգնում ենք ըստ Հ. Օրբելու ընթերցման։ «Շրկան» համառոտությունը Օրբելին կարդացել է «Շերկան», «Ճհանշին» էլ դարձրել է «Ճանհաշի»։

Ժամանակը որոշվում է տեր Ներսեսի առաջնորդությամբ, որը եղել է 15-րդ դ. երկրորդ կեսին, սկսած 1471-ից մինչև դարի վերջը։

86. ՌԻԶ (1577) թ.

Գավթի հյուսիսային պատի արևմտյան մասում, երկու խաչերի տակ, 3 տող.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՎՐԹԱՆԷՍ
ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵԻ ԳՈՒԼՊՀԱՐ-
ԻՆ։ ԹՎ : ՌԻԶ : ։

87. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, այժմ խիստ քայքայված։ Ներկայացնում ենք նախորդ ընդօրինակողների ընթերցածը, 3 տող.

ԵՍ՝-ՇԱՀԱՆՇԷՍ ՈՐԴԻ ԱՂ-
ՊՈՒՂԻՆ ՎԵՐԻՆ ՆՈՎԵՐԻՆ ՀՈՂՆ ՏՎԻ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱ։
ՈՎ ՀՈՂՆ ՀԱՆԷ, ՍԲ ՈՎԱՆԷՍԻՍ ԿԱՊԱԾ Է։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 376, Ջալալեանց, Ա, 189, Օրբելի, 15։

Վերին Նովերին ճողը հանդամասի անուն է։ «Նովերին»-ի մասին տե՛ս № 85 արձանագրության ծանոթագրությունը։

88. 15-րդ դ.

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, 8 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ՝ ՀԱՅՐԱՊԵ-
Տ ՈՐԴԻ ԳԵՐԳԱ ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ, ՏՎԻ
ՁԻՄ ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆՍ։
ՍՈՔԱ ՏՎԻՆ : Ա : ԺԱՄ
ՓՈԽՄԱՆ ԱԾԱԾՆԻՆ ԵՐԵ-
ՔՇԱԲԱԹ ԱԻՐ։ ԿԱՏԱՐԻՁՔ ԱԻՐՀՆ-
ԻՆ ՅԱՅ։

Հրատ. Օրբելի, 16։

Սան.—Ժամանակը կարելի է որոշել մի քանի հանգամանքներով։ Նախ՝ գրվել է № 85 (1495 թ.)-ից առաջ, քանի որ վերջինս իր մեջ է առել նրա քարը։ Ապա՝ Հայրապետի հայր Գերգը 1318 թ. արձանագրություն է քանդակել (նրա հոր անունն էլ Գերգ էր) իր կին Մինախաթունի հետ միասին (տե՛ս արձ. 110)։ Նշանակում է՝ որդին էլ կարող էր արձանագրած լինել ամենաուշը նույն դարի վերջին։



Ամադի խաչքարը (հյուս. պատի տակ)։

Վանքը հյուսիս-արևմուտքից:

Տաճարի արևելյան (արտաքին) որմնախորշերից մի հատված:



Տաճարի արևելյան որմնազարդերը:



Տաճարի արևելյան որմնազարդերից մի հատված:

Տաճարի հյուսիսային պատի վերնամասը:

Տաճարի հյուսիսային լուսամուտի զարդանախշը:

Շրջապարսպի հարավային դարպասը (դրսից):

Գավթի առաստաղի արևմտյան հատվածի քանդակազարդերից:



Բեմա[illegible]
քան[illegible]արդերից:

Դավթի արևմտյան շքամուտքը:

Տաճարի ներսի հյուսիս-արևմտյան անկյունները:



Գավթի առաստաղի խաչվող կամարները:



Գավթի առաստաղի:
սալաքիտիոնները:

Տաճարի բեմը:



Տաճարի առաստաղից մի հատված։



Բեմառաջի
ձախակողմյան հատվածը։



Տաճարի արևմտյան շքամուտքը։



Գմբեթն ու զավթի ռոտոնդան հարավ-արևմուտքից:



Տաճարի հյուսիսային պատի կենտրոն ա՛ռան մասը:



Տաճարի հարավային պատի խաչաքանդակը:



Խաչքարը հարավ-արևմուտքից։

89. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, 8 տող.

...ՍԲՈԴՍ...
...ՀԱՎԱՎ ԱՐԴԵԱՆ...
...ՆԵԱ ԵՒ ՍՈՔԱ...
...ԱՄ ՀԱՒՐ ԻՄՈ ԳՐ...
...ՄԱՒՐ ԻՄՈ Թ...
...ՆՅ ՏԱՒՆԻՆ Ի...
...ՍՔ ԻՆՁ ԵՒ ՄԻ...
...ՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ...

Հրատ. Օրբելի, 16։

Մաս.— Արձանագրությունը փորագրված է եղել 3 քարի վրա։ Նորոգման ժամանակ եզրերի քարերը փոխել են, մնացել է կենտրոնինը։

90. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևմտյան մասում, մուտքից աջ, այնքան քայքայված, որ լրիվ վերականգնելն անհնար է։

...ԻՄ ԵՂԲԱՅՐ
...ՄԱՂԱՄ...
ՁԱՍԲՍ... ....ՍՈՔԱ
ՏՎԻՆ : Բ : ԺԱՄ ՓՈԿԱՍ-
ՈՒ ՏԱՒՆԻՆ ՁԻՄ ԱՂԲԱՒՐ
ՀԱՒԱԴԵՂԻ ԿԱԹՈՂԻԿԷ...

Հրատ. Օրբելի, 18։

91. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևելյան մասում, 7 տող.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԻԳ-
ՆԱԹԻՈՍ ՄԻԱԲԱՆԵ-
ՅԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ, ՍՈՔԱ
ՏՎԻՆ : Ա : ՊԱՏ-

ԱՐԱԳ ԳԵՈՐԳԱ ՏԱՒ-
ՆԻՆ։ ԿԱՏԱՐԻՉՔ-
Ն ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ։

Հրատ. Օրբելի, 17։

92. Անթվական

Գավթի հյուսիսային պատի արևելյան եզրին, յոթ խաչի հետ, 2 տող.

ԱՏ ՈՂՈՐՄԻ ԱՋԱՐԻԱՅԻՆ,
ԽԱԹՈՒՆ ՓԱՇԻՆ։

Հրատ. Օրբելի, 14։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ՎԱԿԱԳՐԵՐ

93. Հյուսիսային պատի արևելյան որմնախորշից աջ, ցածի քարի վրա.



94. Հյուսիսային պատի կենտրոնական կամարի ներքո, լուսամուտից աջ, նրա վարի եզրի ուղղությամբ.

95. Նույն կամարի տակ, ավելի վարում, աջ որմնապուներից դեպի արևելք.

96. ՉԻ (1471) թ.

Գավթի արևելյան պատի հյուսիսային անկյունում (դրսից), տաճարից դուրս եկած մասում, 8 տող.

Ի ԹՎՍ։ ՉԻ։ ԵՍ՝ ՊՈՒՏԱՂՍ Ո-
Ի ՎԱԽՏԱՆԳՍ ԵՒ ԱՅԼ ԵՂԲ-
ԱՐՔՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՈՒ
ՏՈՒԱՔ ՓՏՈՒՌԱՆՑ, ԿԱԿ-
ԱՋԱՆՑ, ԾԱՂԿԱՅՎ-
ԱՆՑ ։Գ։ ԸՍՏԱԿՆ ՏՈՒԱՔ
Ի ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐ ՅԱՌ-
ԱՋՆՈՐԴՈՒԹԲ ՏՐ ՆԵՐՍԷՍԻ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 374, Ջալալեանց, Ա, 187—188, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 14։

Ծան.—Պուտաղն ու Վախտանգն, ամենայն հավանականությամբ, Հասան-Ջալալյան տոհմից են, քանի որ նվեր են տալիս այդ տոհմին պատկանող (տե՛ս արձ. № 56) գյուղերի «։Գ։ ըստակն»։ Դժբախտաբար, առկա նյութերը հնարավորություն չեն տալիս պարզել, թե նրանք տոհմաշղթայի ո՞ր օղակն են կազմում։

Արձանագրության մեջ հիշվող «Փտուռանց, Կակաշանց, Ծաղկայվանց» գյուղերի Գ ստակը կլինի այդ գյուղերի հասույթի կամ եկամտի կեսը, քանի որ, ինչպես ենթադրել ենք վերը, ստակն էլ, դանգ-դանկի պես, պետք է նշանակեր մեկ-վեցերորդն «ամենայն իրաց»։ Ուշագրավ է, որ հենց նույն գյուղերի (մի փոքր այլ տառադարձությամբ) Բ ստակն էլ, այսինքն՝ երկու-վեցերորդականը, շուրջ երեք տասնամյակ հետո (1499 թ.) Սայտունի որդի Հատիր-Մելիքն է գնել ու նվիրել վանքի միաբանությանը (տե՛ս արձ. № 56)։

97. Անթվական

Նախորդից վար հինգ խաչերի արանքներում, 3 տող.

ԽԱՉՍ ԴԱԻԹԻՆ
ԿԵՆԱԿԻՑ ԱՂՓԻ-
ՐԻՆ.

Ծան.—«Կենակից» ենք ընթերցել ենթադրաբար. քանդակված է կցագրով։

98. Անթվական

Գավթի արևելյան պատի հյուսիսային անկյունում, խաչի արանքներում, 2 տող.

ԽԱՉՍ ԴՈՎԼԱԹԻՆ ԵՒ ԱՂՓԻՐ-
ԻՆ։

99. Անթվական

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում (դրսից), խորանավոր խաչի կողքին, 3 տող.

ԽԱՉՍ ԱԹ-
ԱՆԷՍ ԱԲ-
ԵՂԻՆ է։

100. Անթվական

Նրանից աջ, դարձյալ խորանավոր խաչի կողքին, աջ կողմից, 3 տող.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱ-
ՐԵԽԱԻՍ ՅՈՀ-
ԱՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ։

101. Անթվական

Նույն տեղում, շքամուտքից ձախ երկու փոքրիկ խաչեր շրջանակների մեջ, նրանցից ներքև, մեկ տող.

ՀԵԿԱՋ, ՈՒՔԱՆ։

102. 1851 թ.

Գմբեթի թմբուկի հյուսիսային կողմի վրա, հյուսիս-արևելյան նիստին, արծվաքանդակից վերև.

ՕՍՏԱ ՄԵԼ-
ՔՈՆ։
1851։

Ծան.— Հավանաբար նորոգողներից մեկն է ինքնագիր դրել։

103. 13-րդ դ.

Գմբեթի թմբուկի վրա, արևմտյան լուսամուտից վեր, Ադամի և Եվայի գլխավերևներում, կենաց ծառի երկու կողմերին, 2 տող,

ԱԴԱՄ ԵՒԱ
ՕՁՆ է։

Ծան.— Արձանագրությունը շինարարության և քանդակների հասակակիցն է։

104. 2ԺԷ (1268) թ.

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, 6 տող.

ԱՆՈՒԱՄԲՆ Ա՛Յ Ե[Մ] ՄԱՄԱԽԱԹՈՒՆ ԵՒ
ՊԱՏՐՈՆ ՃԱՐՍ [ՄԻ]ԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽ-
ՏԻՍ ԳԱՆՁԱՍԱՐԱ ԵՒ ՍՈՔԱ ՏՎԻՆ ԱՒԱԳ : Ե : ՇԱԲԹԻ
ԱՒՐ ՁԱՄԷՆ ԵԿԵՂԵՑ[ԻՔՍ] ՊԱՏԱՐԱԳ ՊԱՏՐՈՆ ՈՒՄ-
ԵԿԻՆ։ ԿԱՏԱՐՈՂՆ ԱՒՐՀՆԻ Յ՛Ա՛Յ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՆ
ԴԱՏԻ։ ԳՐԵՑԱՒ ԹՎԻ[Ն] : ՁԺԷ : ։

Հրատ. Ջալալեանց, Ա, 191, Օրբելի, 24։

Ծան.—Արձանագրությունը երկու քարի վրա է։ Առաջին քարի աջ կողմը քայքայված է, գրերի մեծ մասը՝ թափված։

Ջալալյանցը վերջին նախադասությունը չի ընդօրինակել։

Հ. Օրբելին «Ճարս» կարդացել է «Ծարս»։ Սակայն, չնայած բառը այժմ տեղում չի ընթերցվում, առկա է Եսայի կաթողիկոսի տեսակի ընդօրինակությունը՝ «Ճարս»։ Եվ, բացի դրանից, հայտնի է, որ արձանագրության տերերը Հասան-Ջալալի դուստր Մամախաթունն ու նրա պատրոն (կեսրայր) Ճարն են։ Երկրորդը XIII դ. հայ իրականության հայտնի անուններից է. հայրն էր խոշոր վաճառական, Վրաց արքունիքում ազդեցիկ անուն ունեցած Ումեկի (Մամախաթունի ամուսնու)։ Ումեկն էր «հայր անուանեալ թագաւորին Վրաց Դավթի և մեծարեալ ի (մոնղոլ) ղանէն գրով, և յամենայն աւագանւոյն»[1]։

[1] Կիրակոս, էջ 363, Գարեգին կաթողիկոս, խաղբակյանք, էջ 190։

Ճար էր կոչվում նաև Ումեկի ավագ որդին՝ ո՛չ Մամախաթունից, այլ առաջին կնոջից[1]։

Սույն արձանագրության մեջ «պատրոն» բառն օգտագործված է երկու իմաստով՝ կեսրայր (Ղարաբաղի բարբառով) և պարոն, հովանավոր- իշխանավոր։

Մամախաթունի, նրա ամուսին Ումեկի ու որդի Վախտանգի մասին տե՛ս № 4 արձ. ծանոթագրությունը։

105. ՀԻԵ (1276) թ.

Գավթի արևմտյան պատի հարավային մասում, 7 տող.

ԿԱՄԱՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ Ա՛Յ, ՀՐԱՄԱՆԱՒ ԱԹԱԲԱԿ-
ԻՆ Տ՛Ն ԽԱՉԻՆՈ ԵՍ ԲԱՐՍԵՂ՝ ՈՐԴԻ ԱԲԱՋՈՒՐ ԻՐԻՑՈՒ, ԱՄ-
ՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՄԱՔ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ս՛Բ ՈՒԽՏԻՍ ԵՒ ԻՄ ՀԱԼ-
ԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԳՆԵՑԻ ՁՏՆԿԻՆ ԵՐԿԻՐՆ, ՏՎԻ Ի ԿԱԹՈՂ-
ԻԿԷՍ։ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ : Դ : ԱՒՐ ԺԱՄ ԱՒԵՏԵԱՑ ԱՇԱՇ-
ՆԻՆ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Յ՛ԱՅ, ԽԱՓԱՆՈՂՆ ԴԱՏԻ,
ԹՎ : ՁԻԵ : ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 376, Ջալալեանց, Ա, 188—189, Օրբելի, 28։

Ծան.— Տողերի սկզբները թեթևակի վնասված են, սակայն արձանագրությունը լրիվ ընթերցվում է։

Շահխաթունյանցը և Ջալալյանցը ունեն «Կամաւն այ ամենակալին», որով կրկնում են Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունը և ո՛չ թե արձանագրության բնագիրը։

Տնկին երկիրը, հավանաբար, հանդամասի անուն է՝ առաջացած տնկի բառից, ինչպես Մատաղիսը և Նորքը, որոնցից առաջինը վկայված է Խաչենի մի այլ հոգևոր կենտրոնի՝ Խաթրավանքի զույգ վիմագրերում, երկրորդը՝ հայտնի իբրև հին գյուղ Շահապոնքում, ապա դարձած Երևանի արվարձանը[2]։

106. ՁԼԸ (1289) թ.

Գավթի արևմտյան պատի հարավային մասում, նախորդի տակ, 7 տող.

[ԵՍ ԱԲՐ] ԱՀԱՄ ՈՐԴԻ ՀԱՄԱՄԱ ՄԻ-
[ԱԲԱՆԵՑԱ Ս՛Բ ՈՒԽՏԻՍ, ՏՎԻ ՁԻՄ Տ-
.....Տ՛Ր ԳԷՈՐԳ ԵՒ ԱՅԼ
[ՄԻԱԲԱՆՔ]Ս ԵՏՈՒՆ ՁԱՏ-
[ԿԻՆ ՃՐԱ]ԳԼՈՒՑԻՆ : Դ : ԺԱՄ,
ՄԻՆ՝ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈՅ։ ԿԱՏ-
ԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Յ՛ԱՅ : ՁԼԸ : ։

Հրատ. Օրբելի, 27։

Ծան.— Առաջին հինգ տողերի սկզբներն այլ քարի վրա են եղել։ Նորոգման ժամանակ այն փոխվել է, սակայն բոլոր տառերն էլ վերականգնվում են։

Հ. Օրբելին արձանագրողի հայրանունը կարդացել է «Համամտին», որ ճիշտ չէ։ Առաջին տողի վերջում «Համամ»-ը կցագրված է, ապա կա մի Ա, որից հետո՝ «մի» (և ո՛չ թե «տի»), որը «միաբանեցա»-յի սկիզբն է։ Օրբելին «մի»-ն «տի» է կարծել՝ դուրս թողնելով «Համամ»-ից հետո եղած Ա-ն։ Ճիշտ նույնպիսի տողադարձ կա նաև № 84 արձանագրության մեջ, որը գրել է Երևի նույն Համամի մյուս որդի Բուտը։

107. ՁԼԱ (1282) թ.

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, 6 տող.

ԿԱՄԱՒՆ Ա՛Յ ԵՍ Տ՛Ր ՆԵՐՍԷՍ ԱՄԱՐԱՍԱ ԵՊԻ-
ՍԿՈՊՈՍ [ԵԿ]Ի ՄԵԾ ՈՒՍՈՎ Ի Ս՛Բ ՈՒԽՏԻՍ ԻՇ-
ԽԱՆՈՒԹԵ ԱԹԱԲԱԿԻՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱ, ՏՎԻ ՁԻՄ ՀՈ-
ԳՈ ԱՐԴԻՒՆՍ։ ՍՈՔԱ ԵՏՈՒՆ : Ե : ԱՒՐ ԺԱՄ, ՈՐ-
Ո ԱՆՈՒՆ Ի Տ[ԱՒ]ՆԻ Ս՛Բ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ՆԻԿԻԱ
Ս՛Բ ԺՈՂՈՎՈՅՆ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Յ՛ԱՅ։ : ՁԼԱ : ։

Հրատ. Ջալալեանց, Ա, 190, Բարխուտարեանց, 178, Օրբելի, 23։

Ծան.—Արձանագրությունը մեկ քարի վրա է, որի առաջին մասը վերից վար ճաք է տվել, մի նեղ շերտով թափվել։ Սակայն դա չի խանգարում, որպեսզի ամբողջն ընթերցվի անթերի։

Ս. Ջալալյանցն ու Մ. Բարխուտարյանցը բացթողումներով են ընդօրինակել։ Հ. Օրբելին է, որ անսխալ է կարդացել։

[1] Գարեգին կաթողիկոս, նույն տեղում։

[2] Թադ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 317, ծան. 31։

108. ՉԿ (1311) թ.

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, 7 տող.

[ԿԱՄԱՒՆ Ա]Յ ԵՍ՝ ԱԲՈՒՔԱՆ ԵՒ ԱՄՈՒՍ[ԻՆ ԻՄ ՄԻՆԱ]-
[ԽԱԹՈՒՆ] ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԻՇ[ԽԱՆՈՒ]-
[ԹԲ Զ]ԱԼԱԼԻՆ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒ-
ԹԲ ՅՈՀԱՆԷՍԻ, ՏՈՒԱՔ ՁԱՐԵՔԴԱՐ ԵՒ ԱՅԼ Ը[ՆԾ]-
Ա։ ՏԷՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ : Դ : ՊԱՏԱՐԱԳ ԱՇ-
ԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ. : Բ : ԻՆՁ, : Բ : ՄԻՆ-
ԱԽԱԹՈՒՆԻՆ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ։ ԹՎ : ՉԿ : ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 376, Զալալեանց, Ա, 190, Օրբելի, 24։

Ծան.— Վերին 3 տողերի ծայրերի գրերը չկան. աջից քայքայվել-թափվել են, իսկ ձախից նորոգողներն են քարի մասը փոխել։

Ս. Զալալյանցն արտագրել է պակասավոր, նույնիսկ առանց թվականի։

«Զարեքդարի» համար տե՛ս № 3 արձանագրության ծանոթագրությունը։

109. ՉԿԷ (1318) թ.

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, 6 տող (բավականին քայքայված, որ դժվարությամբ է վերականգնվում).

ԿԱՄԱՒՆ Ա՛Յ ԵՍ՝ ԳԵՐԳ [ՈՐԴԻ ՀԱ]-
ՅՐԱՊԵՏԱՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԻ[ՆԱ ԻՇԽԱՆՈՒ]-
ԹԵԱՆ ԶԱԼԱԼԻՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒ[ԽՏԻՍ, ՏՎԱՔ]
ԸՆԾԱ։ ՏԲ ՅՈՀԱՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Տ[ՎԻՆ Պ]ԱՏԱՐԱ[Գ]
ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ, ԽԱՓԱՆ-
ՈՂՆ ԴԱՏԻ։ ԹՎ : ՉԿԷ : ։

Հրատ. Օրբելի, 25։

Ծան.—Հ. Օրբելին, ըստ իր խոստովանության, տողերի աջակողմյան ծայրերի քայքայված գրերը վերականգնել է Երմակովի կատարած լուսանկարով։

110. 14-րդ դ. սկիզբ

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, 6 տող.

ՅՈՒՍՈՎՆ Ա՛Յ ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ ՔԱՀ-
ԱՆԱՅ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԱՅ ԵԿԻ [Ի] ՍԲ
ՈՒԽՏՍ ԻՇԽԱՆՈՒԹԲ ԶԱԼԱԼԻՆ,
ՄԻԱԲԱՆԵՑԱՅ, ՏՎԻ : Բ : ԳԻՐՔ ԵՒ ԱՅ-
Լ ԸՆԾԱՅ։ ՍՈՔԱ ԵՏՈՒՆ : Բ : ԺԱՄ
[Մ]ՈՒ[Ր]Բ ՍԱՐԳ[ՍԻՆ]...

Հրատ. Զալալեանց, Ա, 190, Օրբելի, 22։

Ծան.— Ս. Զալալյանցն ունի նաև «Կատարիչքն աւրհնին յաստուծոյ»։ Թերևս նրա ժամանակ արձանագրության վերջն անխաթար է եղել, չնայած գիտենք, որ քիչ չեն և նրա անտեղի հավելումները։

111. ՊԾԱ (1402) թ.

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, խաչերի մոտ, 6 տող.

ԵՍ՝ ԳԻՇՄԱՐԴՍ ՄԻԱ-
ՅՆԱԿԵԱՅՍ ԿԱՆԿ-
ՆԵՑԻ ԶԽԱՉՍ
Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈ-
ԳՈ ԻՄՈ։ ԹՎ
: ՊԾԱ : ։

Հրատ. Օրբելի, 25։

112. ՊԺ (1361) թ.

Գավթի արևմտյան պատի հարավային մասում, խաչերի շուրջը, 5 տող.

ԹՎ : ՊԺ :
ԵՍ՝ ԽԵՐԱՆՇԱՅ ԵՒ
ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԱՆԱՅ-
ԽԱԹՈՒՆ ԿԱՆԿՆԵՑ-
ԱՔ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ...

Հրատ. Օրբելի, 26։

Ծան.—Հ. Օրբելին թվականը չի արտագրել։

113. ՊԾԶ (1407) թ.

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, 7 տող.

ԿԱՄԱԻՆ Ա̅Յ ԵՍ՝ ՈՒԼՈՒԲԷԿՍ, ՈՐԴԻ Մ[Է]ԶԼ[Ի]ՍԻՆ ՏՈ[ԻԻ]
ՁԻՄ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՆ՝ ԶՈՒՂՏԱՆՈՍԻ ԿՏՈՒ[ՐՆ],
ՈՐ Ի ՎԱՐԴԱԲԵՐԱՆՑ Է, ԻՒՐ ՍԱՐՀԱՏՈՎՆ Ի Ս̅Բ̅ ՈՒ[ԽՏՍ]
ԳԱՆՁԱՍԱՐԱ ԻՄ ՀՈԳՈՅՍ ՅԻՇԱՏԱԿ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱԹԷ ՎԱՐ-
ԴԱՊԵՏԻՆ ԵԻ Ի [ՏԷՐՈՒԹԵԱՆ]
ՁԱՁԻՆ։ ԱՐԴ ՈՐՔ ՁՀՈՂՆ ՀԱՆԵԼ ՁԱՆԱՆ Ի Ս̅Բ̅ ՈՒԽՏԷՍ, ՄԵՐ ՄԵՂԱ-
Յ[Ս] ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՆԵՆ ԱՌԱՋԻ Ք̅Ս̅Ի ԵԻ ՄԱՍՆ ՁՅՈՒԴԱՅԻՆ ԱՌՅԵՆ
ԵԻ ՄԻԱԲԱՆՔ ՅԻՇԵՍՅԷՆ [ՁՄԵԶ]
ՅԻՒՐԵԱՆՑ ԱՂԱՒԹՍՆ։ Ի ԹՎԻՆ : ՊԾԶ : ։

Հրատ. Շահխաթունեանց, Բ, 374—375, Օրբելի, 23։

Ծան.— Հ. Շահխաթունյանցը 3-րդ տողի «Վարդաբերանց է»-ի փոխարեն ունի «Վարդան բերանցէ»։ Այդ սխալ ընթերցվածքն է նաև նրա աղբյուրում[1]։

Ուլուբեկը թոռն էր 1431 թ. վախճանված Ջալալի[2]։

Դեռևս Հ. Օրբելու ժամանակ (1909 թ.) արձանագրությունը բավականին վնասված է եղել, ընդօրինակվել է դժվարությամբ, տեղ-տեղ՝ ենթադրությամբ։ 3-րդ տողի «սարհատովն» Օրբելին ընթերցել է «ձարհատովն» կամ «չարհատովն», երկու դեպքում էլ՝ անիմաստ։ Մինչդեռ «սարհատ»-ը «սահման»-ն է. երկու ձևն էլ ընդունված են հենց նույն Գանձասարի վիմագրերում։

Ուղտանոսի կտուրը հողամաս է, ինչպես նշված է, Հասան-Ջալալյան տոհմի պայազատ Ուլուբեկի կամ Ուլուպապի արձանագրության մեջ («զիմ հայրենի հողն՝ զՈւղտանոսի կտուրն»)։ Կարելի է կարծել, թե Վարդաբերանքը գյուղ է կամ ավելի մեծ մի տարածք, ուր Ուղտանոսի կտուր հողամասն է գտնվել։ Ամեն պարագայի՝ երկուսն էլ պետք է տեղադրել Խաչենագետի աջ ափին, այժմյան Ուլուբաբ-Ուլուպապ գյուղի շրջակայքում, որովհետև այստեղ էր գտնվում իշխանազուն Ուլուբեկ-Ուլուպապի հայրենական տիրույթը, որի կենտրոնում նա կառուցեց իր նստավայր-բերդամրոցը, որ հետագայում իր անունով պիտի կոչվեր Ուլուպապ[1]։

[1] Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 187։

[2] Մատենադարանի ձեռ. № 9923, էջ 7ա։

114. Անթվական

Գավթի արևմտյան պատի աջ մասում, մեկ քարի վրա, 6 տող.

[ԿԱՄԱԻՆ] Ա̅Յ ԵՍ՝ ԱՇՈՏ ԻՌԻՅՈՐԴԻ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս̅Բ̅
ՈՒԽՏԻՍ, ՏՎԻ ԸՆՁԻՑ ԻՄՈՅ ԸՆԾԱ ԵԻ ՅԵՏԻՆ
ՁՅԻՇԱՏԱԿ [ԿԱԹ]ՈՂԻԿԷՍ ԼԻՆԻ։ ՍՈՔԱ Խ-
ՈՍՏԱՅԱՆ ՁԱՌԱՋԱՒՈՐ ԿԻՐԱԿԷՆ : Գ : ԺԱՄ՝
ՈՐՁԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ, ԾՆ[ՈՂ]ԱՅ ԻՄՈՅ, ՅԵՏ ԵԼԻՅ
ԻՆՁ ԱՌՆԵՆ։ ԿԱՏԱՐԻՁՔՆ ԱԻՐՀՆԻ[Ն] Յ̅Ա̅Յ։

Հրատ. Օրբելի, 27։

Ծան.— Քարն աջից ձախ ամբողջ երկարությամբ ճեղք է տվել, և արձանագրության 3, 4, 5-րդ տողերի առանձին մասեր թափվել են։ Պահպանված տառերի մի զգալի մասն էլ ծածկված է աղաշերտով։ Այսուամենայնիվ, արձանագրությունը վերականգնվում է լրիվ ու անսխալ։

115. Անթվական

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, մեկ քարի վրա, 6 տող, անավարտ.

ԿԱՄԱԻՆ Ա̅Յ ԵՍ՝ ԱԻԳԵՐՍ, ԱՄՈ-
ՒՍԻՆ ԻՄ ԱԻՏԱՐՏԻԿԻՆ ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱ Ս̅Բ̅ ՈՒԽՏԻՍ, ՏՎԻ ԸՆՁԻ-
Յ ԻՄՈՅ։ ՍՈՔԱ ՏՎԻՆ : Դ :
ԺԱՄ ԿՐԿԻՆ ՎԱՐԴԷՎԱՐԻՆ։
ԿԱՏԱՐԻՁՔՆ ԱԻՐՀ[ՆԻՆ Յ̅Ա̅Յ] ։

Հրատ. Ջալալեանց, Ա, 190, Օրբելի, 22։

Ծան.— Ս. Ջալալյանցն աղավաղել է անունները. «Աւագեր»-ի փոխարեն՝ «Աւագեր», «Ատար տիկին»-ի փխ.՝ «Ատարդկին»։

[1] Ուլուբեկ-Ուլուպապի մասին տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 305—309 և հտգ.։

116. Անթվական

Գավթի արևմտյան պատի հարավային մասում, հիմնախարիսխի առաջին շարքի վերջին մեկ քարի վրա, 3 տող.

ԱՆ ՈՂՈՐՄԵԱՑ ՍՏԵՓԱՆՆԻ-
ՈՍԻ ՓԱԿԱԿԱԼԻ ՍԲ ԿԱԹՈՂԻԿ-
ԻՍ ԵՒ ԳԵՐԳԱ ԻՒՐ ՓՈՔԵՐՆ։ ԱՄԷՆ։

Հրատ. *Օրբելի, 25։*

Ծան.—*Հ. Օրբելին առաջին տողի վերջում կարդացել է մի Ու, որը չկա։ Այստեղ գրիչը փորձել է քանդակել հաջորդ տառը, մեկ էլ ջնջել է ու անցել։*

Արձանագրությունը թվական չունի, սակայն դժվար չէ այն մոտավորապես վերականգնել Թեկուզ և այս եկեղեցում պահպանված այն վիմագրերի հիման վրա, որոնցում առկա է այս արձանագրության մեջ հիշատակված «փոքր» Գերգի (երևի փակակալի օգնական, փոքրավոր) անունը։ Գերգը հիշվում է XIII դարի երկրորդ կեսի ու XIV-ի սկզբի առումով։ Ուրեմն, Ստեփաննոսն էլ փակակալ կլիներ XIII-ի երկրորդ կեսին։ Այս ենթադրությունը հաստատվում է Ստեփաննոսի մի արձանագրությունից՝ փորագրված ՉԺԲ (1263) թ. Սանահնի վանքում, որտեղ նա ներկայանում է իբրև «Ստեփաննոս քահանա՝ փակակալ սբ ուխտիս Գանձասարա»[1]։

117. ՊԺԷ (1368) թ.

Գավթի արևմտյան պատի հարավային մասում, հիմնախարիսխի առաջին շարքի մեկ քարի վրա, 5 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ՝ ՅԱԿՈԲ ՄԻՋՆԱՅՇԻՆԵՑԻ ՄԻ-
ԱԲԱՆԵՑԱՑ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԻ ԸՆԾԱՅ
Ի ՍԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ։ ՍՈՔԱՅ ՏՎԻՆ Ի ՏԱՐՈՒՄՆ ։Բ։ ԺԱՄ
ՍԲ ՅԱԿՈԲԻ ՏԱՒՆԻՆ՝ ՈՐՋԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՍ՝ ԻՄ ՀԱՒՐՆ։
ԹՎ ։ՊԺԷ։։

Հրատ. *Ջալալեանց, Ա, 191, Օրբելի, 26։*

Ծան.—*Թվականը քանդակված է հիմնախարիսխի երկրորդ շարքի քարի վրա, որի պատճառով էլ նախորդ ընդօրինակողները չեն նկատել։*

[1] Ղաֆադարյան Կ., *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 155։*

118. Ու (1551) թ.

Գավթի արևմտյան պատի հարավային մասում, նախորդի կողքին, 7 մանր խաչերի տակ, 5 տող.

։Ու։։
ԱՅ ՈՂՈՐՄԵԱ ՏՐ ՂԱԶ-
ԱՐ ՔԱՅԱՆԱՅԻ ԽՈ-
ՐԱՆԱՅՇԱՏԵՑՈՅՆ։
ԱՄԷՆ։

Հրատ. *Օրբելի, 26։*

Ծան.—*«Տր»-ը և Ու-ն քանդակված են խաչերի արանքում, բայց անպայման վերաբերում են այս արձանագրությանը։*

119. Անթվական

Գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, խաչերի արանքում, 2 տող.

ԽԱՉՍ ԱՐ-
ԱՆԷՍ ԱԲԵՂԻՆ Է։ ԳՈՒԼՎԱՐԴ։

ԳԱՎԹԻ ՆԵՐՍԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ԵՎ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

120. ՌԾԱ (1202) թ.

Խաչքարի ստորին մաս՝ օգտագործված իբրև հատակը ծածկելու քար։ Գտնվում է գավթի հարավ-արևելյան մասում, գիրը՝ 6 տող.

ԵՍ՝ ՎԱԽՏԱՆ-
Գ ՈՐԴԻ ՀԱՍԱ-
ՆԱ ԿԱՆԳՆԵՑ-
Ի ՁԽԱՉՍ Ի ՏԱ-
ՊԱՆԻ ՈՐԴՈՅ ԻՄՈՅ։ ԱՂ-
ԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ։ Թ ։ ՌԾԱ։։

Հրատ. *Օրբելի, 30։*

Ծան.— *Թվականի տասնավորը պարզ չի երևում։*

«Վախտանգ որդի Հասանա»՝ աղբյուրներում կոչված նաև Վախտանգ-Տանգիկ, Գանձասարի համալիրի շինարարության հովանավոր Հասան-Ջալալի հայրն է, Ներքին Խաչենի տերը, որ, ըստ շինարարական արձանագրության (№ 1), «ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց...զի շինեսցուք եկեղեցի ի գերեզմանատան հարց մերոց ի Գանձասար...», վախճանվել է 1214 թ.։ Դրանից երկու տարի առաջ շքեղ մի Ավետարան էր ընդօրինակվել «Հրամանաւ և ծախիւք բարեսէր և աստուածահաճո առն Վախտանգայ՝ որդւոյ Հասանա, որդւոյ Վախտանգայ»[1]։

Վախտանգ Մեծը Ներքին Խաչենի իշխանությունը վարել է XII դ. առաջին կեսում, հավանաբար մինչև դարակեսը, որովհետև դարի 60-ական թվականներից Խոխանաբերդի տեր ու Ներքին Խաչենի իշխան է հիշվում նրա որդի՝ Հասանը՝ Վախտանգ-Տանգիկի հայրը, որից վիմագրեր ունենք նաև 1174 թ. (արձ. № 147) և 1181 թ. (արձ. № 148) առումով։

Քննության առարկա վիմագիրը Վախտանգ-Տանգիկի անունից հայտնի առաջին վկայությունն է։ Սակայն պետք է մտածել, որ 1202-ին նա արդեն հասուն մարդ է եղել, որովհետև խոսքը գնում է այդ տարում վախճանված նրա որդու մասին, որը, հավանաբար, № 1 արձ. մեջ հիշատակված Դավլան է, ապա ունեցել է նրանից ավագ որդի՝ Հասան-Ջալալը (Խաչենի իշխանական տներում հաստատուն ավանդույթով ավագ որդուն էին տալիս պապի անունը)։

Ուրեմն, ասվածից կարելի է կազմել Ներքին Խաչենի իշխանության աթոռակալների տոհմաշղթայի հետևյալ հատվածը. Վախտանգ Մեծ (XII դ. I կես) → Հասան Մեծ (1167, 1181) → Վախտանգ-Տանգիկ (1202, 1212, 1214) → Հասան-Ջալալ (իշխանավարել է 1214—1261 թթ.)[2]։

121. ՈԿԶ (1217) թ.

Խաչքարի ստորին մաս՝ օգտագործված իբրև հատակը սալելու քար՝ չորս տող գրով.

---

[1] Մատենադարան, ձեռ. № 378, էջ 308ա։

[2] Վախտանգ Մեծի, Հասան Մեծի, Վախտանգ-Տանգիկի ու Հասան-Ջալալի մասին հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 136—144 և հդ.։

ԹԻՒՆ : ՈԿԶ :
ԵՍ՝ ԱՒՇԱՔ Կ-
ԱՆԳՆԵՑԻ Զ-
ԽԱՉՍ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՑ Հ[ԱՍԱՆԱ]։

Հրատ. Օրբելի, 31։

Մաս.—«ՀԱՍԱՆԱ»-ի միայն Հ-ն է երևում, քարը կոտրված է, վերին մեկ տողի գրերը՝ քայքայված։

«Աւշաքը» ևս ենթադրաբար ու երկմտությամբ ենք դնում, որովհետև, նախ, այս անունն անսովոր ու տարակուսելի է, ապա անվան սկզբնատառը՝ Ա-ն կարող է նաև ընթերցվել իբրև կցագիր (Նա կամ ան), քանի որ Ա-ի առաջին ճյուղի վերևում ն-ի գլխիկ է փորագրված։

122. ՊԶ (1431) թ.

Տապանաքար սպիտակ մարմարից, երիզված պարանաձև զարդով, երեսին (երկու ծայրերին և կենտրոնում)՝ երեք քանդակազարդ վարդյակներ, կենտրոնականի մեջ՝ հավերժության խորհրդանշան։ Կոտրված է, բաժանված 3 մասի (հավանաբար գանձախույզներն են գերեզմանը քանդելիս կոտրել), նորից կտորները դրված իրար կողքի։ Գտնվում է գավթի արևելյան մասում, տաճարի մուտքի դիմաց, ունի 3 տող գիր.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԵԾԻՆ
ՋԱԼԱԼԻՆ։ ԱՂԱԻԹՍ
ՅԻՇԵՑԷՔ։ ԹՎ : ՊԶ : ։

Հրատ. Բարխուտարեանց, 176, Օրբելի, 29։

Աղբյուրներում Ջալալ Մեծ անվամբ հայտնի իշխանը (Ներքին Խաչենի տեր) Հասան-Ջալալի թոռնթոռն է, XIII դ. վերջում և XIV-ի սկզբին ապրած Ջալալի (Հասան-Ջալալի որդի Իվանե-Աթաբակի որդու) թոռը։ Ջալալ Մեծի մասին, խնդրո առարկա տապանագրից բացի, հիշատակություններ կան 1383, 1386, 1417 թվականներից։ Վերջինը մի հիշատակարան է, որով արձանագրվում է Ջալալի ու տոհմակիցների կախումն օտար բռնակալներից. «...Ջալալն և որդիք նորին...ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան»[1]։

---

[1] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Ա, Երևան, 1955, էջ 194։

123. ՌՃՀԷ (1728) թ.

Խոշոր տապանաքար ճերմակ մարմարից, երիզված պարանահյուս զարդաքանդակներով, որոնց ներսում՝ երկրաչափական գեղեցիկ նախշեր, կենտրոնում՝ հովվապետի գավազանի քանդակ։ Գտնվում է գավթի արևելյան մասում, նախորդից հյուսիս, երկու տող գրով.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՍԱԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՈՐ Է ԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ։ : ՌՃՀԷ : ԹՈՒԻՆ։

Հրատ. *Բարխուտարեանց, 176, Օրբելի, 30։*

124. ՌՃԽԹ (1700) թ.

Տապանաքար սև որձաքարից, երիզված պարանահյուս քանդակներով, որոնց ներսում զարդաքանդակներ և հովվապետի գավազանի քանդակ։ Գտնվում է նախորդի կողքին՝ հյուսիսից, երկու տող գրով.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՐԵՄԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՅԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ։ : ՌՃԽԹ : ԹՈՒԻՆ։

Հրատ. *Բարխուտարեանց, 176, Օրբելի, 30։*

125. ՌՅԳ (1854) թ.

Տապանաքար՝ տափակ, երիզված նրբահյուս երկրաչափական քանդակներով, որոնց ներսում՝ գավազան քանդակված։ Գտնվում է գավթի արևելյան մասում, Ջալալ Մեծի տապանաքարի կողքին՝ դեպի հարավ, 6 տող գրով.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵՏՐԱՊՕԼՏԻՆ
ԲԱՂՏԱՍԱՐԱՅ ՄԵԾԻ ԱՐՀԻՆ
ԿԱՅՍԵՐՊՍԱԿ ՀՈՎԱՊԵՏԻՆ
ՏԱՆՍ ԱՂՈՒԱՆԻՑ ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ,
ՅԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ՄԵԾ ԻՇԽԱՆԻՆ
ՏՆ ԱՐՅԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ։ ԹՎ : ՌՅԳ :, 1854, ՅՈՒԼԻՍԻ։

Հրատ. *Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), «Փորձ», 1880, Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1959, էջ 338, ծան. 2, Բարխուտարեանց, 176։*

126. ՌՄԼԵ (1786) թ.

Տապանաքար նախորդին կից (հարավային կողմից)՝ հովվապետական գավազանի քանդակով և 3 տող գրով։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂՈՒԱՆԻՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ՈՐ Է ՅԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ։
ԹՎ : ՌՄԼԵ :-ԻՆ։

Հրատ. *Բարխուտարեանց, 176, Օրբելի, 29։*

127. ՌՄՀԷ (1828) թ.

Տապանաքար նախորդի մոտ (հարավից)՝ նախշաքանդակ երիզով, որի ներսում՝ վարդյակներ և կաթողիկոսական գավազանի քանդակ, գիրը 3 տող։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ՈՐ Է ՅԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕ-
ԼԻՆ։ ԹՎ : ՌՄՀԷ :-ԻՆ։

Հրատ. *Բարխուտարեանց, 176, Օրբելի, 29։*

Ման.—*Սարգիսը կաթողիկոս է եղել մինչև 1815 թվականը, երբ Ամենայն հայոց կաթողիկոսության միջնորդությամբ Ռուսական արքունիքը հատուկ հրաման արձակեց Գանձասարի կաթողիկոսությունը վերացնելու և նրա տեղ միտրոպոլիտություն ստեղծելու մասին։ Սարգիսը Ղարաբաղի թեմի միտրապոլիտն է եղել 1815—1828 թթ.։*

128. 1574 թ.

Կոտրված տապանաքար՝ երկու տող ծուռումուռ գրով.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՈՐԴԻ ԲԱՂ-
ՏԱՍԱՐ ՊԷԿԻՆ։

Հրատ. *Բարխուտարեանց, 176, Օրբելի, 29։*

Ման.—*Տապանաքարի վրա Դավիթ կաթողիկոսի մահվան թվականը չի նշված։ Դրանից կարելի է եզրակացնել, որ քարը հետո է դցվել, մանավանդ, եթե նկատի առնենք Դավիթ կաթողիկոսի անվան հետ կապված մի միջադեպ։ Հայտնի է, որ Դավիթը՝ Հասան-Ջալալյան Բաղդասար-բեկի որդին, հաջորդել է Պարսից արքունիքի սպառնալիքի տակ քրիստոնեությունն ուրացած Գրիգորիսին՝ Մեհրաբ-բե-*

կի որդուն, աթոռակալել մեկ տարի, ապա հենց կաթողիկոսարանում սպանվել անհայտ մարդկանց ձեռքով։ Ուրացությունը կատարվել է 1573 թ.[1]։ Հետևապես Դավիթն սպանվել է 1574-ին։

129. Անթվական

Տապանաքար գորշ որձաքարից, առանց նախշերի, գավթի հյուսիս-արևելյան անկյունում, մեկ տող գրով, գրից վերև՝ գմբեթի և խաչի գծաքանդակ.

ՅՈՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

Հրատ. Բարխուտարեանց, 176, Օրբելի, 30։

Ման.— Գանձասարում Հովհաննես անունով մի քանի կաթողիկոսներ են եղել։ Լրացուցիչ տվյալներ չկան պարզելու, թե նրանցից որի՞ն է վերաբերում սույն տապանաքարը։

130. ՌԺԲ (1653) թ.

Մ. Բարխուտարյանցի տեսած ու նկարագրած մի տապանաքար (այն չի տեսել նաև Հ. Օրբելին), որի գիրն է եղել.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԱՂՈՒԱՆԻՑ։ Ի : ՌԺԲ : ԹՈՒԻՆ։

Հրատ. Բարխուտարեանց, 176, Օրբելի, 30։

131. ՉԾԶ (1507) թ.

Գեղաքանդակ խաչքար գավթի հարավ-արևելյան անկյունում, հենած արևելյան պատին, ճակատին ու խաչի տակ 4 տող գիր.

Ի ԹՎԻՆ : ՉԾԶ :
ԿԱՄԱՒՆ Ա՛Յ ԵՍ՝ ՎԷԼԻՃԱՆՍ՝ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՍԵ-
ԻԴԱՅ, ԹՈՌՆ ԱՂԲԱՍՏԱՅ ԿԱՆԿՆ-
ԵՅԱՔ ՉԽԱՉՍ։

[1] Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դաղեան, Ա, էջ 89. «Տէր Գրիգոր որդի Մելրամ-բէկին տեառն Խաչենոյ... Սա ուրացաւ զՔրիստոս ՌԻԲ (1573)-ին»։

Հրատ. Օրբելի, 31։

Ման.— Հ. Օրբելին թվական է կարդացել ՉԾԶ (1307), իսկ արձանագրողի ինքնահորջորջումը՝ «Վէլան»։ Սակայն ինչպես վիմագրում, այնպես էլ նրա լուսանկարում պարզ երևում է «Վէլիճան»-ը՝ Ի-ն կցագրված Լ-ի հետ, Ճ-ն էլ առանձին, հարևան տառերից ավելի խոշոր։

Աղբաստի Թոռ և Սեյտիի (կոչված նաև Սայտուն, Սէյտիբէկ) որդի Վելիճանը չէր կարող արձանագրությամբ հանդես գալ 1307 թ., որովհետև նրա առաջին արձանագրությունը 1480 թվականից է (տե՛ս արձ. № 55), իսկ ձեռագրական առաջին հիշատակությունը՝ 1473-ից։ Այս թվականին Խաչենաձորի Գետամիջի Ս. Աստվածածին վանքում ընդօրինակված Ավետարանի գրիչն իր ժամանակը նշել է «ի տէրութեան տեղւոյս պարոն Վէլիջանին»[1]։

132. ՌԺԲ (1563) թ.

Խաչքար նախորդի կողքին՝ հանդամանորեն նկարագրված, մանրամասները մեկնաբանված Հ. Օրբելու կողմից[2]։ Խաչից ներքև քանդակված է հեծյալ, որը ձեռքին երկար գավազան ունի, ծայրին՝ խաչ, իսկ դեմը կանգնած է մի մարդ՝ ձեռքին գինու կուլա։ Արձանագրության երկու տողը գտնվում է խաչից վերև, իսկ մնացածը, ավելի մանր տառերով, շրջանակում է խաչը։

ԿԱՄԱՒՆ Ա՛Յ ԵՍ՝ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՆԳ-
ՆԵՑԻ Զ՛ՍԲ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՒՐ ԻՄՈՅ։
Ս՛Բ ԽԱՉՍ
ՓՐԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՈՆ ՄԵՀՐԱՊԻՆ Ի ԿՈՉ-
ՄԱՆ ԱՒՈՒՐՆ։

Հրատ. Օրբելի, 31, И. Орбели, Избранные труды, стр. 199.

Ման.— Թվականը պարզ երևում է։ Սակայն Հ. Օրբելին չի նկա-

[1] Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 247, Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ, Ե., 1958, էջ 344։

Բարխուտարյանցը թվական է արտագրել ՉԽԲ (1493)։ Լ. Խաչիկյանն ուղղել է ՉԻԲ (1473)՝ իրավամբ նկատի առնելով, որ հիշատակարանում խոսվում է Ուղունի-Հասանի ու Արիստակես կաթողիկոսի մասին իբրև ապրողների, իսկ նրանք այդ ժամանակ արդեն մահացած էին։

[2] **И. А. Орбели,** Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII—XIII веков. Избранные труды, стр. 199—203.

տել և խաչքարի հանգամանքները քննելով 12—13-րդ դդ. համանման հուշարձանների հետ, այնուամենայնիվ, ենթադրությամբ կարծել է, որ այս խաչքարն ուշ ժամանակի գործ է։ Նա միաժամանակ հնարավոր էր համարում, որ «Մեհրաբը» ոչ թե հատուկ անուն լինի, այլ Գրիգոր կաթողիկոսի հոր զբաղմունքը հատկանշող բառ («մեհրաբ»— «ջրաբաշխ»)[1]։

Ճշմարտությունն այն է, որ Մեհրաբը (աղբյուրներում կոչված նաև Մեհրաբբէկ, Մեյրամպէկ) Վելիջանի որդին է և Գրիգորիս ու Հովհաննես կաթողիկոսների, Ջալալ իշխանի ու Բաղդասար-բեկի (Դավիթ կաթողիկոսի հոր) հայրը։ Նրա մասին հիշատակություն կա 1560 թվականից։ Հովհաննես աբեղան Մաշտոց է արտագրել «...ի յերկիրս Խաչէն, ի գիւղս, որ կոչի Խանձք, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի... և իշխանաւոր տեղւոյս Մէհրապ պէկին և աշխարհակալ շահ Դահմանին ի թվիս հայոց ՌԹ» (1560)[2]։ Իսկ Խաչենի Ս. Հակոբա վանքում ընդօրինակված մի Ավետարանի հիշատակագրողն «ի թուաբերութեան հայկազեան տումարիս ՌԺԸ» (1569)-ին հիշել է իր ժամանակի կաթողիկոս «տեառն Գրիգորիսին՝ որդի Մեհրապ պէկին»[3]։

Վերն արդեն նշվել է, որ Գրիգորիս կաթողիկոսը Պարսից շահի հարկադրանքով քրիստոնեությունն ուրացել է 1573 թ.։ Նշանակում է՝ խնդրո առարկա խաչքարը կանգնեցվել և արձանագրությունն էլ փորագրվել է 1560—1573 թվականների արանքում, իսկ առավել ճիշտ՝ 1563-ին։

133. 1852 թ.

Գավթի կենտրոնում հատակի հետ հավասար, լայն ու երկար, զարդաքանդակ տապանաքար։ Առանձնակի ուշադրության են արժանի խաչի քանդակը և նրանից վեր, արևմտյան երկու անկյուններում քանդակված հրեշտակների պատկերները։ Արձանագրությունը երկու լեզվով է՝ հայերեն (8 տող) և ռուսերեն (8 տող)։

[1] Անդ, էջ 203։

[2] Մ. Բարխուդարեանց, Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 177։

[3] Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, հ. Բ, «Անտոնյան հավաքածու», Վիեննա, 1971, էջ 51։

ԱՄՓՈՓԻ Ի ՏԱՊԱՆԻ ԲԱ-
ՐԵՊԱՇՏՕՆ ԱԶՆՈՒՈՒՀԻ
ԱՆՆԱՅՆ ՍԻՄՕՆՈՎՆԱՅ
ԱՍԼԱՆԲԷԿԵԱՆՑ ԹԻՓԼԻԶ-
ԵՑԻ, ՈՐ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ Ի
ԽԱՆԲԷՆԴԻ 60 ԱՄԱՅ
Ի 1852 ԱՄԻ 9 ԵՒ ԹԱՂԵՑ-
ԱՒ ԱՍՏԷ 13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ։

Ռուսերենը ևս նույն բովանդակությունն ունի։

ՎԱՆՔԻ ՍԵՂԱՆԱՏԱՆ ԵՎ ԽՈՒՅԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

134. ՈՒԳ (1174) Թ.

Սեղանատնից դեպի նրան կից (արևելյան կողմում) կառուցված մթերանոցը տանող դռան վրա իբրև բարավոր օգտագործված գեղեցկանախշ խաչքար, որի վրա քանդակված է նիզակավոր հեծյալ։ Խաչքարը երեսով դեպի մթերանոցն է, ունի մանրատառ արձանագրություն երկշար կարճ տողերով, որոնցից ընթերցվում է հետևյալը.

ԹԻՒՆ
։ ՈՒԳ ։ ԷՐ։ Վ-
ԱԽՏԱՆԳ Տ-
Ր ԽԱՉԻՆՈ
ՅԵՐԻՏԱՍ-
ԱՐԴ ՀԱՍ-
ԱԿԻ ՓՈԽ-
ԵՑԱՒ Ի
ՔՍ։

ԵՍ՝ ՆՐՉԻՍ,
ԴՈՒՍՏՐ Հ-
ԱՍԱՆԱ, ԹՈՌ-
Ն ԱԲԱՍԱ Թ-
ԱԳԱՒՈՐԻՆ
ՆԻ ԿԱՆ-
ԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ...

Հրատ. Օրբելի, 33։

Ծան.—Հ. Օրբելին, որ ճիշտ է արտագրել, գրում է, թե արձանագրությունը երեսն ի վայր է դրված։ Մինչդեռ այն դրված է կողքի, երեսով դեպի արևելք՝ մթերանոցի կողմը։

1174 թ. արձանագրությամբ Խաչենի տեր համարված այս Վախտանգի մասին այլուստ ոչ մի տեղեկություն չունենք։ Այս թվականին Ներքին Խաչենի տերն է եղել Հասան Մեծը՝ Հասան-Ջալալի պապը։ Իսկ կենտրոնական Խաչենում կամ Հաթերքում իշխում էր նշանավոր այն Հասանը, որը 1182-ին պիտի կրոնավորելու գնար Դաղիվանք՝ իշխանությունը հանձնելով իր որդի Վախտանգին (վախճ. 1214 թ.)։ Կարելի է մտածել, թե 1174 թ. մահացած Վախտանգը Խաչենի իշխանության երկրորդական ճյուղերից մեկի ներկայացուցիչն է եղել։ Այս դեպքում էլ նա չէր կարող թաղված լինել Գանձասարում՝ գահերեց տերերի տապանատանը։ Իսկ եթե մտածենք, որ արձանագրության թվականն է սխալ ընթերցվել՝ ՈԻԳ փխ. ՈԿԳ-ի, որ կլինի Վախտանգ-Տանգիկի մահվան տարին, այս դեպքում էլ տարակուսելի է խաչը կանգնեցնող Նրջիսի առկայությունը. ո՞վ է նա, ի՞նչ առնչություն ուներ Վախտանգ-Տանգիկի ու նրա տոհմի հետ։ Մեզ հայտնի աղբյուրները չեն պատասխանում այս հարցին։

135. ՌՃԼԸ (1689) թ.

Սեղանատան հյուսիսային պատի կենտրոնում, ներքուստ, որմնասյան մեկ քարի վրա, 3 տող.

ԵՐԵՄԻԱ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇԻՆԵՑ
Ի ԹՎ : ՌԼԸ : :

Ծան.—Երեմիա կաթողիկոսը (Եսայի կաթողիկոսի հորեղբայրը) վախճանվել է 1700 թ. (տե՛ս արձ. № 125)։

136. Անթվական

Սեղանատան արևմտյան պատի հարավային եզրին.

ՏՐ ՄՈՍԷՍ։

137. Անթվական

Սեղանատան հարավային պատի արևմտյան անկյան մոտ, արտաքուստ, կցագիր, որ հավանաբար, կառուցող վարպետի նշանն է.

ՎՐ։

138. ՌՄ (1751) թ.

Սեղանատան կողքի (դեպի արևմուտք) խուցի դռան ձախակողմյան երկու քարի վրա մաշված-քայքայված արձանագրություն, որից ընթերցվում է.

... ՈՈՒ...
Թ : ՌՄ :
ՌԱ
ԵՍ ՍԱՓԵՐՆ։

139. Անթվական

Սեղանատնից ձախ (դեպի արևմուտք), երկրորդ խուցի դռան ձախ կողմի քարի վրա փակագիր.

140. 1551 թ.

Խուցերից մեկում Հ. Օրբելու ժամանակ մի քարաբեկորի վրա արձանագրության 4 տողանոց հատված (մենք այդ քարը չենք գտել).

ՆՈՐՈԳԵՑԱՒ
ՋԵՌԱՄԲ ՍԱՐԳԻՍ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՈՐ Է
ՅԱՋԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ։

Հրատ. Օրբելի, 33։

Ծան.— Հ. Օրբելին թվականը և մյուս հանգամանքները չի պարզել։ Մինչդեռ օժանդակ նյութերով պարզվում են թվականը, Սարգսի ո՛վ լինելը, ի՛նչ նորոգելը և այլն։

Սարգիսը՝ Հատիր-Մելիքի որդին, կաթողիկոսական աթոռն ըզբաղեցրել է XVI դարում։ Նրա՝ մեզ հասած առաջին արձանագրությունը 1546-ից է և պատմում է հովվապետի նվիրատվությունները վանքին (արձ. 27)։ Վերջին դեպքում խոսքը Գանձասարի վանքի վե-

բանորոգմանն է վերաբերում։ Այդ առթիվ արժանահավատ վկայություն կա Մեծառանից Ս. Հակոբա վանքում ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում։ Գրիչ Հայրապետը հայտնում է, որ ինքն Ավետարանն արտագրել է «ի դառն և ի նեղ ժամանակիս, (երբ) վասն մահուն ուրացան մայրն զորդիս իւրեանց», և ահա այսպիսի մի ժամանակ՝ «ի թուականութեան հայ տումարիս Ռ(1551) Աղվանից կաթողիկոս Սարգիսը «եւ նորոգել ի մեծայհանդէս եկեղեցիս Գանձասար»[1]։

Սարգիս կաթողիկոսի մահվան թվականի մասին ստույգ տեղեկություն չունենք։ Մ. Բարխուտարյանցը, առանց աղբյուր նշելու, նրա մահվան տարի է համարում 1555 թվականը[1]։ Սա կարող է ճիշտ լինել, քանի որ Սարգսին հաջորդած Գրիգորիսի կաթողիկոսության մասին վկայություն ունենք 1559 թվականից[2]։

141. 1855 թ.

Խուցերի մոտ ընկած փոքրիկ մի խաչքարի վրա 4 տողով.

ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՆԵՐՍԷՍ
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ։
Ի 1855 ԱՄԻ։

Ծան.—1965 թ. այս խաչքարը կորել է, այժմ չկա։

142. 1837 թ.

Սեղանատնից դեպի արևմուտք, երրորդ խուցի լուսամուտի աջ եզրին, մի քարի վրա.

ՅԻՇԱՏԱԿ Է
ՆԵՐՍԷՍ
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
Ի 18ԼԷ ԱՄԻ։

Ծան.—3-րդ տողում «Վրդպին» է, որ կարելի է կարդալ նաև «վարդպետին» (քարգործ-վարդպետ)։

Հետաքրքիր է թվականը՝ երկու թվանշան, երկու տառանշան։

Անկասկած այս և նախորդ արձանագրությունները նույն մարդուն են վերաբերում։

[1] Մատենադարանի ձեռ. № 6513, էջ 280բ—281ա։
[2] «Ցուցակ հայ. ձեռ. Զմմառի վանքի մատենադարանի», Բ, էջ 51։

143. 18-րդ դար

Նույն խուցի ներսում, բուխարիկի կամարի կիսաշրջանի վրա։

ՅԱԿՈԲՍ ԳՐԵՑԻ։

144. ՌՄԷ (1758) թ.

Բուխարիկի կիսաշրջանի աջ կողմի վրա.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ
ԱՄԵՆԻՑ՝ ՅԱԿՈԲ
: ՌՄԷ : ԹՎԻՆ։

145. ՌՄԷ (1758) թ.

Կամարի տակդիր քարի վրա հորիզոնական, 2 տողով.

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ
ՅԱԿՈԲՍ ԳՐԵՑԻ : ՌՄԷ :

146. Անթվական

Վերջին (արևմտյան-եզրային) խուցի դռան աջ կողմին մեկ քարի վրա կիսեղծ արձանագրություն.

ԹՎԻՆ
ԱՐ...
ԱՐՓ...
ԲԱՆ...
ԿԱՄԲ...

ՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԵՎ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

147. ՈՒԳ (1174) թ.

Խաչքարի ներքևի մաս՝ ընկած գավթի հյուսիսային պատի տակ, հյուսիս-արևմտյան անկյան մոտ, 3 տող գրով.

ԹԻՒՆ : Ո-
ՒԳ : ԵՍ՝ ՀԱ-
ՍԱՆ ԿԱՆԳՆ [ԵՑԻ ՉԽԱՉՍ]...

Հրատ. Օրբելի, 32։

Ման.— Կարծում ենք՝ արձանագրողը Հասան-Ջալալի պապ Հասան Մեծն է։

148. ՈԼ (1181) թ.

Խաչքար գեղաքանդակ, երկու մետր բարձրությամբ, տնկված հողի մեջ՝ տաճարի հյուսիսային պատի տակ, գիրը խաչից ներքև.

: ՈԼ : ԹԻՒՆ ԷՐ։
ԵՍ՝ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ ՎԱԽՏԱ-
ՆԳԱ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՏԱՊԱՆ-
Ի ԴՍՏԵՐ ԻՄՈ ԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ՄԱՒՐ Ի-
ՒՐ ԹԱԳՈՒՀՈՒ՝ ԴՍՏԵՐ ԹԱԳՎՈՐԻՆ ԲԱՂԱՑ։

Հրատ. Օրբելի, 32, նաև՝ Избранные труды, стр. 199.

Ման.— Արձանագրողը Խաչենի տեր Վախտանգի որդի Հասանն է, Հասան-Ջալալի պապը։ Խաչքար է կանգնեցրել իր դուստր Խաթունի և դստեր մոր (ՄԱՒՐ ԻՒՐ), այսինքն՝ իր կին Թագուհու տապանին։ Պարզվում է, որ Հասանի կին Թագուհին եղել է Բաղաց թագավորի դուստրը։

Ո՞վ էր այս Բաղաց թագավորը։

Սույն արձանագրությունը կարող է բանալի դառնալ Խաչենի իշխանության ու Բաղաց Կապանի թագավորության առնչակցություններին վերաբերող մինչև այժմ մութ մնացած մի կարևոր հարցի համար։

Հայտնի է, որ 12-րդ դ. կեսին գահաժառանգ չունեցող Բաղաց թագավոր Գրիգորը, ինքն էլ ծագումով Խաչենցի (Սենեքերիմի որդին էր), «ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաքարեցեացն և ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնութիւն»։

Բաղքի համար ծանր ժամանակներ էին։ Գրիգորը վախճանվել էր 1166 թ.։ Թուրքերը պաշարեցին Բաղաց Կապանը և «մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր, և զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն եանց, գնաց ի գաւառ իւր և ի տուն ի Խաչէն»[1]։

Պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել այս

[1] Ստ. Օրբելեան, էջ 336—337։

Հասանի տոհմական պատկանելության մասին։ Նրան համարել են Հաթերքի տերերից մեկը, նաև՝ Ծարա իշխանազուններից[1]։

Առավել հիմնավոր է ճանաչվում Գարեգին Հովսեփյանի կարծիքը, որի համաձայն՝ Հասանը պետք է լիներ Գեռաքարի տեր Խաղբակյաններից, և նրա արձանագրություններն էլ պահպանվել են Գեռաքարի կողմերում՝ նրան ներկայացնելով իբրև Խաղբակյան Ջաջուռի եղբոր և Խաղբակի որդու[2]։

Սակայն հիշյալ վարկածներից և ոչ մեկը չի հիմնավորվում աղբյուրագիտական ստույգ նյութերով։ Եվ ահա այս խաչքարի արձանագրությունը գալիս է հաստատելու, որ Բաղաց Կապան թագավոր գնացած-վերադարձածը,— որն ամուսնացել էր Բաղաց թագավորի դստեր հետ,— եղել է Խոխանաբերդի տեր Վախտանգի որդի Հասանը։ Ստ. Օրբելյանի կողմից նրան տված «գեռաքարեցի» որոշիչը չի խանգարում մեր տեսակետին, քանի որ Գեռաքարը գտնվում է Խոխանաբերդի մոտ և մտնում էր Խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի իշխանության տիրույթների մեջ։

Զարմանալի չէ նաև Ստ. Օրբելյանի կողմից Թագուհուն տրված Կատա անունը։ Պետք է մտածել, որ կամ Բաղաց թագավորի դուստրն ունեցել է կրկնակ անուն, կամ էլ պատմիչն է անունը շփոթել։ Ուրիշ կերպ չի կարող լինել, որովհետև նույն Օրբելյան պատմիչի մյուս տեղեկություններից գիտենք, որ միայն Գրիգոր թագավորի միակ դուստրն է ամուսնացել Խաչենի իշխանազունի հետ, որի անունն էլ եղել է Հասան։ Ըստ այսմ թյուրիմացություն պիտի համարել Հասան Մեծի կնոջ Մամքան անունը[3]։

149. ՈԾԱ (1202) թ.

Միջին մեծության գեղեցիկ խաչքար՝ վերևից ու ներքևից կտրատված։ Գտնվում է գավթի հյուսիսային պատի տակ (դրսից), պատին հենած.

[1] Մ. Բարխուդարեանց, Պատմություն Աղվանից, Ա, էջ 139։
[2] Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 16, 41։
[3] Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 85 և «Ա-ռանշահիկների տոհմածառը»։

ԹԻ : ՈՍ
ԻՆ Ա : :
ԵՍ՝ ՎԱԽՏԱՆ-
Գ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆ-
Ա ԿԱՆԳՆԵՑԻ Զ-
ԽԱՉՍ Ի ՏԱՊԱՆ-
[Ի].....ԽԱ....

Հրատ. Բարխուտարեանց, 179։

150. ՈՂԴ (1245) թ.

Գեղեցկաքանդակ խաչքար, վերևից ու ներքևից կոտրատված։ Հենված է գավթի արևելյան պատի հյուսիսային եզրին։ Արձանագրության թվականի միավորը պարզ չի երևում.

: ՈՂԴ :
ԵՍ ԱՄԱԴ ԿԱՆ-
ԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի
ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ
ԻՄՈՅ։ ՈՐ ԿԱՐԴԱՔ,
ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ։

Հրատ. Բարխուտարեանց, 179, Օրբելի, 32։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

151. ՌՃԼԳ (1684) թ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՈՐ Է
ԵՂԲԱՅՐ ԵՐԵՄԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ։ : ՌՃԼԳ : ԹՈՒԻՆ։

Հրատ. Բարխուտարեանց, 179, Օրբելի, 33։

152. ՌՃՀԱ (1722) թ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌԱՔԱՔՈՐԵՑԻ ՏՐ
ԳՐԻԳՈՐԻՆ ՈՐԴԻ ՏՐ ԵՍԱՅԻՆ, ՈՐ Է ՀԱՅՐ
ՏՐ ԴԱՒԹԻՆ։ Ի : ՌՃՀԱ : ԹՎԻՆ, ԱՊՐԻԼԻ Ը։

153. ՌՃՀԳ (1724) թ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԿՈՒՅԵԱԼ ՄԻՆԱՍ ԱՇԱԲ-
ԱՆ ՎԱՐԹԱՊԵՏԻՆ, ՈՐ Է ԿԵՂՋԷՆ ՊՏՐԵՑՈՒՅ։
ԹՎԻՆ : ՌՃՀԳ : :

154. ՌՃՂԷ (1748) թ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,
ՈՐ Է ԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ։ ԹՎ : ՌՃՂԷ : :

Հրատ. Բարխուտարեանց, 179։

155. ՌՄԵ (1756) թ.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳՍԻՆ՝ ՈՐԴԻ ԱՊՐԱՒԻՆ ԵՒ
ԹՈՌՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՂԲԱ-
ՅՐ ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆԻՆ։ : ՌՄԵ : ԹՎԻՆ Է՝Ր։

156. 1849 թ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՈՍԷՍ ԽԱՉԱԿԻՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,
ՈՐ Է ԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ,
ՈՐ Է ՈՐԴԻ ՄԷԼԻՔ ԱԼԱՎԵՐՏԻՆ
ԵՒ ԵՂԲԱՐ ԽԱՉԱԿԻՐ ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԻՆ։
1849 ԹՎ։

157. ՌՅԺԲ (1863) թ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՈՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,
ՈՐ Է ՅԱԶԳԷՆ ՋԱԼԱԼ ՄԵԾ ԻՇԽԱՆԻՆ,
ՈՐԴԻ ԻՍՐԱՅԷԼ ԲԷԿԻՆ։ ԹՎ : ՌՅԺԲ : :

Հրատ. Բարխուտարեանց, 179. «Յովսէփ վարդապետ Իսրայէլ-Բէկյան Ջալալեանց ԹՎ ՌՅԺԲ»։

158. 1899 թ.

ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՄԱՐՄԻՆ ԲԱԶՄԱ-
ՇԽԱԴ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ

ՋԱԼԱԼԵԱՆՑ՝ ՓԱՅԼԵԱԼ ՍՐԲԱԿՐՕՆ
ԵՒ ՄԱՐԴԱՍԷՐ։ ՎԽՃ. 1899 ԱՄԻ։

159. Անթվական

ՅՈՎՍԷՓ ԳԻՏՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԷՐ ԱՒ-
ԱԳԱՆՑ ԱՐՅԱԽՈՅ։ ՊԵՐՃ ՏԱՊԱՆ, ՈՐՊԷՍ ԿԱՐԵՍ
ՀԱՆԴՈՒՐԺԵՍ ՄԵԾՆ ՎԱՐԺԱՊԵՏՆ Ի ՔԵԶ ԿՐԵԱԼ ՉԵՏԵՂԵՍ ՉՀԻՆԱՒՈՒՐՑ
ԵՐԱԽՏԱՌՐՆ ԱՄՓՈՓ-
ԵՍ ՉԱՆԽՕՍ ՄԱՆԿՈՒՆՍ Ի ՍՈՒՐԲ ՀՕՐԷՆ ՈՐԲ ԹՈՂԵՍ։
ՉՀՈՐՍ ՄԱՀ ՅՈՐԴ ԱՐՏԱՍՈՒՕՔ ՈՂԲԱՄՅՈՒՔ
ԵԹԷ ՀԻՍՈՒՍ
ՉԻՒՐ ՂԱՋ-
ԱՐՈՍ ԱՐՏԱՍՈՒԵՑ։

Հրատ. Բարխուտարեանց, 179. 5-րդ տողից առաջ դրել է՝ «եկայք ընկեր, ո՞ դուք մուղայք սիրասունք»։

Ծան.—Տապանաքարը անվանի վարդապետ ու փիլիսոփա Հովսեփ Արցախեցունն է։

ՎԱՆՔԻ ՇՐՋԱՊԱՐՍՊԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

160. ՌԺԲ (1563) թ.

Շրջապարսպի արևելյան մուտքի համար իբրև բարավոր դրված տապանաքարի վրա, 2 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՋԱՏԻՆ, ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ։
Թվ : ՌԺԲ : ։

161. Անթվական

Նույն մուտքի բարավորի տակ, պատի լայնությամբ դրված քարի վրա, կողքերից պակաս տառերով.

ՅՈՀ....
ԽԱՉ-
Ս ՀԱԲՐ....
ԻՄՈ Ե-

Ի ԻՆՁ՝ Գ-
ԵՐԳԱ
ԲԱՐԵ-
ԽԱԻ-
Ս ԱՐ...

162. 13-րդ դ. երկրորդ կես

Նույն մուտքի կամարի աջ կողմին պատի մեջ հորիզոնական դրված քար՝ մի կողմից կոտրված։ Առկա են 4 տողի մնացորդներ.

ԹԻԻՆ : Ջ...
ԱԲԱԿԻ...
...ԼԱԼԻՆ
...ՔԱՆՆ։

Ծան.—Երևի եղել է «Ցիշխանութեամբ Աթաբակի՝ որդւոյ Ջալալին»։ Իսկ Աթաբակի իշխանությունը եղել է 1261—1287 թթ.։

163. ՈՂԳ (1244) թ.

Շրջապարսպի հարավային մուտքի պատին ագուցված մի սրբատաշ քարի վրա, 9 տող.

ԹԻԻՆ : ՈՂԳ :
ԵՍ՝ ՏՐ ՆԵՐՍԷ-
Ս ՄԻԱԲԱՆԵՑԱ
ՍԲ ՈՒԽՏԻՍ։ ՏՐ ՎԱՐԴԱՆ ԵՒ ՄԻԱԲ-
ԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ : Բ :
ԺԱՄ Ի ՏԱՐՈՒՄՆ ՅՈ-
ՎԱՆՈՒ ՏԱՒՆԻՆ, ՍԲ
ԽԱՉԻՆ ԲԱՐԻԿԵՆԴԱՆԻ։

164. Անթվական

Շրջապարսպի հարավային պատին ագուցված (դրսից) մի քարի վրա, 3 տող.

ԵՍ՝ ՈՎԱՆԷՍ ԱՆԱՐԺԱՆ ՔԱՀԱ-
ՆԱՅ.....ՆՈՐԻՈԳ-
ԵՑԱՔ ՉՏՈՒՆՍ։ ՅԻՇԵՑԷՔ ԱԾ Ի ՋՍ։

165. 13-րդ դ.

Շրջապարսպի հարավային մուտքի կամարի մեջ՝ արևելյան կողմից դրված մի քար, որը տեղում հարմարեցնելու համար կտրել են մի մասը, հետն էլ՝ արձանագրության տողերի սկզբները.

[ԿԱՄԱԻՆ Ա̅Յ Ե]Ս՝ ՎԱՍԱԿ ՈՐԴԻ ԻՒԱՆԷԻ, ԹՈՌՆ
[ՎԱԽՏԱՆ]ԳԱ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս̅Բ ՈՒ-
[ԽՏԻՍ, ՏՎԻ] ԶԲԱՐՈՒՏԱՆՑ ԱՅԳԻՆ, ԶՀԵԹ...
.....Ի ՄԵՐ ՏԱՊԱՆԱՏՈՒՆՍ։ ՍՈ[ՔԱ
ՏՎԻՆ..... ԺԱՄ Դ]ԱՒԹԻ ԶԱԿՈԲ[Ա ՏԱՒՆԻՆ]...

Հրատ. *Օրբելի, 34։*

166. Անթվական

Հարավային մուտքի պատին մի քարաբեկորի վրա արձանագրության 2 տողանոց մնացորդ.

....ՔԱՐ ԵՒ ԻՆՁ
ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ...

Հրատ. *Օրբելի, 34։*

167. Անթվական

Հարավային մուտքի մոտ ագուցված պատին մի այլ քարի վրա 10 տողերի հետևյալ բեկորները.

...ՏԷՐ ՍԱ
ՍՐԱՈԵ...
ԲԵ ԿԻԻՐԿԻ
ՏԱՒ ՀԱ...
ՍԱՆԱ Տ-
ԱՆՆ ՔՐԻ-
ՍՏՈՆԷ...
ՄԵԼԱՒ
...ՈԽԵ...

Ծան.— *Հնարավոր է, որ վերջին տողի տառերը թվականը լինեն։*

168. Անթվական

Շրջապարսպի արևմտյան մուտքի առաջ ընկած (Օրբելու ժամանակ, այժմ չկա) մի քարի վրա, 3 տողով.

Ք̅Ս Ա̅Ծ ՈՂՈՐՄԻ
ՀՈԳՈՅՆ ՀՈՎԱ-
ԴԵՂԱ...ՈՂ...

Հրատ. *Օրբելի, 34։*

169. Անթվական

Շրջապարսպի արևելյան մուտքի միջանցքի պատին ագուցված մի քարի վրա, 5 տող.

ԵՍ ՊԱՔՈՒՏ-
ԱՅ ԿԱՆԳՆԵՑ-
Ի ԽԱՉՍ ՀԱՒ-
Ր ԻՄՈՅ ՍԷՒ-
ԴԻ։ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ։

Պաքուտա անունն այլուստ անհայտ է։

Սէդին ևս անծանոթ անուն է, եթե նույնական չէ Սևադայի (Սևադա-Սեւդա, այստեղից էլ՝ Սեւդի) կամ Սեյտիի հետ։

ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ՀԱՐԱՎ (ՎԱՆՔԻՆ ԿԻՑ) ՏԱՐԱԾՎԱԾ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

170. ՌՃԿԵ (1716) թ.

Գերեզմանատան հարավ-արևելյան մասում կիսով չափ գետնի մեջ թաղված շիրմաքարի վրա.

Վերևից. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄՈՒԼՔԻՊԷԿԻ, ՈՐ Է ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՊԱ-
ՂՏԱՅՍԱՐԻՆ, ՈՐ Է ԵՂԲԱՐ ԵՐԵՄԻԵԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ՈՐ Է

Հյուսիսա-
յին երեսին,
վերից. ՈՐ Է ՀԱՅՐ ՄԷԼԻՔ ԳՐԻԳՈՐԻՆ։ ։ ՌՃԿԵ ։ ։ Ի ՎԵՑԻՆ Ի ԺԱ-

Աջ կողքին՝
վերից վար. ՄԱՆԱԿՍ ՄԱՀԴԱՐԱՅ-

Արևմտյան
կողին. ԺԱՄԻՆ ՍԱՅ ՓՈԽԵԱՅ Ի Ռ՝ ՏՐ ԿԵՆԴԱՆԻՆ։

Ձախ կողքին՝
վարից վեր. ԱԶԳԻՆ ՋԱԼԱԼ ԴՕԼԻՆ։

171. ՌՄԻԷ (1778) թ.

Նախորդից հյուսիս-արևմուտք ընկած գերեզմանաքարի վրա.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՓԱՐԻԶԱ-
ՏԻՆ, ՈՐ Է ԴՈՒՍՏՐ ԴԱՒԹԻ ԵՒ
ԱՄՈՒՍԻՆ.....ԷԼԻՔՊԷ-
ԿԻՆ։ : ՌՄԻԷ : ԹՎԻՆ։

172. ՈԾ (1201) թ.

Փոքր գեղեցիկ խաչքար նախորդի կողքին՝ հավանաբար հետագայում տեղափոխած ու կանգնեցված մի գերեզմանի վրա.

Թ ։ՈԾ։
ԵՍ՝ ՎԱՐԴԱՆԷՍՍ Կ-
ԱՆԳՆԵՑԻ ՁԽԱ-
ՁՍ ՀԱՒՐ ԻՄՈՅ։ ԱԾ
ՈՂՈՐՄԻ։

173. ՌՃՀ (1721) թ.

Նախորդից հարավ, մի մեծ գերեզմանաքարի վերևի կողին, 2 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՎԷԼԻՋԱՆԻ ՈՐԴԻ ԱՅՏԻՆԻՆ, ՈՐ Է
ԵՂԲԱՅՐ ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ։ ԹԻԻՆ : ՌՃՀ : ԷՐ։

Ծան.— Պարզվում է, որ Եսայի կաթողիկոսի հոր անունը Վելիջան է եղել, որ հայտնի չէ այլուստ։

174. ՌՃԼԹ (1730) թ.

Նախորդից արևմուտք, գետնի մեջ խրված բարակ-երկար գերեզմանաքարի վերևի կողմին, 2 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՍ... ՏՐ ՄԷԼԻՔՍԷԹԻՆ ՈՐԴԻ ՈՒՀԱՆԻՆ։
ԹՎ : ՌՃԼԹ : ։

175. ՌՃՀԴ (1725) թ.

Նախորդից դեպի հյուսիս՝ մեծ ու երկար տապանաքարի վրա, 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԻՐՎԱՆԵՑԻ ԿՈՂԵՐԱՆՑ
ՎԷԼԻՋԱՆԻ ՈՐԴԻ ՍԻՄԷՈՆ ՈՒՋԲԱՇՈ-
ՒՆ։ Ի : ՌՃՀԴ : ԹՎԻՆ։

Ծան.— Սիմեոն յուզբաշին (հարյուրապետ) մեկն է եղել 1720-ական թվականներին Շիրվանից Ղարաբաղ տեղափոխված այն զինվորական գործիչներից, որոնք տեղացիների հետ միասին Թուրք ու պարսիկ բռնագրավիչների դեմ հերոսաբար կռվում էին Ղարաբաղի սղնախներում[1]։

176. ՌՃԼԷ (1688) թ.

Նախորդի մոտ գետնին կողքի պառկած տապանաքարի վրա, 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՈՐԴԻ ՎԷԼԻ-
ՋԱՆԻՆ՝ ԵՂԲՈՐ ԵՐԵՄԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ։
Ի : ՌՃԼԷ : ԹՈՒԻՆ։

Ծան.— Եսայի Հասան-Ջալալյան բազմերախտ կաթողիկոսի հայր Վելիջանի տապանագիրն է։

---

[1] Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Աշ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, հատ. Բ, Ե., 1959, էջ 607—609։

177. Ռ... թ.

Գեղեցկաքանդակ շիրմաքար՝ մեջքի վրա ընկած, երևսին 4 տողսկզբներից ու վերջերից քայքայված.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄՈՒԼՍՈՒՆ ՄՕՐ ՅԱՒ-
.....Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՎԱՆԻՑ ԿԵՆ...
ԴԱՒԻԹՊԷԿԻՆ ԵՒ ԴՍՏԵՐ ՍԱՐԳ-
ՍԻ ԽԱՆԻՆՈՒՄԻ։ ԹԻՒՆ ՄԱՒՍԻ : Ռ...

Ծան.— Թվականի Ռ-ն է երևում, մնացածը քայքայված է։

178. Անթվական

Նախորդի կողքին մի մաշված շիրմաքարի վրա 4 տող՝ կիսով չափ մաշված.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ.....ՈՒՆ
.....ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
.....ՈՐԴԻ ԴԱՆԻԷԼԻՆ։
.....ԹՎԻՆ.....

179. ՈՀԳ (1224) թ.

Խաչքար, որ ընկած է գերեզմանոցի հյուսիսային մասում, խաչթևերի արանքում և խաչից ներքև ունի 10 տող գիր.

Թվ : ՈՀԳ : է։
ԵՍ՝ ՏՐ ԲԱՐ-
ՍԵՂ ՈՐԴԻ ԱՍԽԱԹԱՆ-
ԱՅ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲՈ
ՈՒԽՏԻՍ ԳԱՆՁԱՍԱՐ-
ԱՅ, ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁՍ Ի
ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ
ԻՄՈՅ։ ՈՐ ԵՐԿԻՐՊԱԳԱՆԷՔ, ՅԱՂԱՒԹՍ [ՅԻՇԵՑԷՔ]։

Հրատ.— Օրբելի, 35։

180. Անթվական

Գերեզմանատան հարավ-արևմտյան ծայրին, վանքի շրջապարսպի հարավային մուտքի մոտ՝ հին թաղածածկ շինություն, որը,

թեպետ լրիվ կանգուն, մուտքի կողմից ավերված է։ Պատերում կան խաչքարերի մասեր՝ գրերի մնացորդներով։ Քանդված մուտքի վերին քարերից մեկի վրա (խաչքարի մաս) վարից ընթերցվում է.

ԱՏ|ՈՒՄ|ԿԱ|ԿԱՆ|ԿՆԵՑԻ|ՍԲ ԽԱՁՍ։

181. XIII դար

Գերեզմանատան արևելյան կողմում, շուրջ 150 մ. հեռավորության վրա, ճանապարհի մոտ, «Դերին խաչ» կոչվող վայրում գտնվող գեղաքանդակ խաչքար, որը կոտրատված է, և մնում են 7 տողանոց արձանագրության հիմնական մասերը.

...ՆԵՍ....ԲԱԿԻՆ ՈՐԴ.....ԱՆ...ՏՆ ԽԱ...
ՂԵԻ ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՆԱ ՏՆ ԽԱՁԻՆՈ ԵՒ ԱՄՈ-
ԻՍՆՈ ԻՒՐ ՄԱՄՔԱՆԱ ԵՍ ՏՐ ՎԱՐԴԱՆ ՄԵԾ-
ԱԿՈՂՄԱՆՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԵԿԻ ՍԲ ՈՒԽՏՍ
ԳԱՆՁԱՍԱՐԱ, ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁՍ
Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈ ԻՄՈ ԱՌ ՔՍ։

Հրատ. Օրբելի, 35։

Ծան.— Հ. Օրբելին առաջին տողի մնացորդներից կազմել է այսպիսի կապակցություն. «Աթաբակին՝ որդո Հասանա տն Խաչինո», որ անհավանական է, քանի որ հոր կենդանության օրոք երբեք առաջինը չէին հիշատակի որդու անունը։

Հնարավոր է, որ արձանագրողը Խաղբակյան տոհմից որևէ մեկն է եղել, և առկա տառերը նրա անվանն են վերաբերում։

Ժամանակը որոշվում է Հասան-Ջալալի իշխանությամբ (1216—1261 թթ.)։ Դժբախտաբար Մեծկողմանց վանքի (Խաթրավանք) արձանագրություններում ոչինչ չի պահպանվել, որ հիշեցնի այս եպիսկոպոս Վարդանին։ Նրանցում միայն մեկ Վրդանես է հիշվում, այն էլ իբրև «Ամարասա եպիսկոպոս» (ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏԷՐ ՎՐԴԱՆԻՍԻ ԱՄԱՐԱՍԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ։ ԹՎ : ՉԸ : —1259)։ Սակայն որովհետև տապանագիր է, որ գտնվում է վանքի գլխավոր եկեղեցու մեջ, հնարավոր ենք համարում, որ հենց այս Վրդանեսն էլ առաջնորդած լինի տեղում՝ Ամարասյան առաջնորդությունից հետո։ Շիրմաքարի վրա Խաթրավանքի առաջնորդությունը կարող էր չփորագրվել միայն մեկ պատճառով. նրա ժառանգորդները Դոփյան իշխանազուններն էին։

182. Անթվական

Նույն «Դերին խաչ» վայրում գտնվող փոքրիկ խաչքարի վրա.

ԱԾ ՈՂ-
ՈՐՄԻ
ԱՐԵԻՏԻԿ-
ՆՈՂ։

Հրատ. Օրբելի, 34։

Սրանք են, ահա, Գանձասարի պատմաճարտարապետական համալիրի որմերին և շրջակայքի խաչքարերի ու գերեզմանաքարերի վրա պահպանված արձանագրությունները։ Անկասկած եղել են նաև ուրիշները, որոնք զոհ են գնացել ժամանակի, բնության տարերքի և մասամբ էլ անհասկացող մարդու ավերիչ ուժին։ Հավանաբար պեղումների միջոցով հնարավոր կդառնա արևերես հանել այնպիսիները, որոնք գտնվում են այժմ արդեն հողի տակ անցած տապանաքարերի վրա։

Ցավոք, չկարողացանք վիմագրերը տպագրել իրենց լուսապատճենների հետ միասին, որը և հնարավորություն պիտի տար գաղափար կազմելու նրանց հնագրական վիճակի մասին։

Սակայն հրապարակվող սույն հավաքածուն էլ, որ ներկայացնում է Գանձասարի համալիրում պահպանված բոլոր մեծ ու փոքր արձանագրությունները, կարծում ենք, իր նպաստը կբերի միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային հարցերի հետազոտության գործին։ Մանավանդ, որ այստեղ ընդգրկված նյութն իր զգալի մասով անմիջապես վերաբերում է եմոնդոլական շրջանի Հայաստանում գոյատևած միակ վարչաքաղաքական միավորի՝ Խաչենի իշխանության և նրա բնից ճյուղավորված մելիքական տների գործունեությանը։

ՑԱՆԿ

Երկու խոսք 3

Մատենագրական տեղեկություններ Գանձասարի մասին 7
Գանձասարի վանքի ճարտարապետությունը 21
ա) Տաճարի ճարտարապետությունը և հարդարանքը 24
բ) Տաճարի ճակատակալ խաչարձանը 38
գ) Գմբեթը 39
դ) Գավիթը 56
Համալիրի վերանորոգումները 70
Վանքի արձանագրությունները 76
ա) Վիմագրերից մի քանիսի լուսանկարները 85
բ) Արձանագրությունների բնագրերը 87

522

Ղլուրաբյան Բագրատ Արշակի

ԳԱՆՁԱՍԱՐ

(Պատմական ուսումնասիրություն, վիմական արձանագրություններ, լուսանկարներ)

Улубабян Баграт Аршакович

ГАНДЗАСАР

(Историческое исследование, надписи на камнях, фотоснимки)
(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван — 1981

Խմբագիր՝ Ս. Վ. Մարտիրոսյան
Նկարիչ՝ Յ. Ս. Ֆիդանյան
Լուսանկարները՝ Զ. Ա. Սարգսյանի, Ռ. Աբգարյանի
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Վ. Դանիելյան

ИБ 1196

Հանձնված է շարվածքի 21. 05. 81 թ.:
Ստորագրված է տպագրության 18. 12. 81 թ.:
Ֆորմատ՝ 60×84¹/₁₆: Թուղթ՝ տպ. № 2 Տառատեսակ՝ Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 10,81 պայմ. տպագր. մամ., հրատ. 7,23 մամ.+18 ներդիր: Պատվեր՝ 761: ՎՖ 08024: Տպաքանակ՝ 5000: Գինը՝ 1 ռ. 70 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.